



ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

ՀՀՇՆ 21-01.01-2024

ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐ.

ԱՎՏՈՄԱՏ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԵՎ
ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՄԱՆ
ԿԱՅԱՆՔՆԵՐ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ

Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության կոմիտե

ԵՐԵՎԱՆ - 2024

ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

**ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ.**

**ԱՎՏՈՄԱՏ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ
ԱԶԴԱՆՇԱՆՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ**

ՀՀՇՆ 21-01.01-2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԲԱՆ

1. **Մշակվել է** ԳՐԻՄԱՆ ՍՊԸ-ի կողմից:
2. **Առաջադրվել է** ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից:
3. **Հաստատվել և գործողության մեջ է դրվել** ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից, հրաման N 10-Ն, 22 փետրվարի 2024թ.:
4. **Փոխարեն** ՀՀ ՇՆ II-8.04.02-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ	
1.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	
1.1.1 ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ	1
1.1.2. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ	2
1.1.3. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ	13
1.1.4. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	22
1.1.5. ՀԱԿԱՐԴԵՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ	23
2. ՀԱԿԱՐԴԵՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ	
2.1. ՀՐԴԵՀԻ ԱՋԴԱՆՇԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ	
2.1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ	30
2.1.2. ՀՐԴԵՀԻ ԱՋԴԱՍԱՐՔԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ	46
2.1.3. ՀՐԴԵՀԻ ԱՋԴԱՆՇԱՆՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ	50
2.1.4. ՀՐԴԵՀԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ	51
2.1.5. ԿԵՂԾ ԳՈՐԾԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՌՈՒՄԸ	53
2.1.6. ՀՐԴԵՀԻ ԱՋԴԱՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ	54
2.2. ՀՐԴԵՀԻ ՏԵՂԵԿԱՅՄԱՆ ԵՎ ՏԱՐՀԱՆՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ	
2.2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ	65
2.2.2. ՀՐԴԵՀԻ ԴԵՊՔՈՒՄ ՁԱՅՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՔՍԱՅԻՆ ԱՋԴԱՐԱՐՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՐՀԱՆՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.	80
2.2.3. ՀՐԴԵՀԻ ԴԵՊՔՈՒՄ ԼՈՒՍԱՅԻՆ ԱՋԴԱՐԱՐՈՒՄԸ	82
2.2.4. ՀՐԴԵՀԻ ՖՈՏՈԼՅՈՒՄԻՆԵՍՅԵՆՏԱՅԻՆ ԱՋԴԱՐԱՐԻՉՆԵՐ.....	84

2.3. ՀԱԿԱՐԴԵՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ.	
2.3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ	84
2.3.2. ՀՐԴԵՀԻ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ՏԱՐՀԱՆՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ	87
2.3.3. ՆԵՐՔԻՆ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԶՐՄՈՒՂԻ ԵՎ ՍՊՐԻՆԿԼԵՐԱՅԻՆ Ու ՑԱԾՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ	88
2.3.4. ԳԱԶԱՅԻՆ, ՓՈՇԵ, ՓՈՇԵԳԱԶԱՅԻՆ, ՕԴԱԿԱԽՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ	89
2.3.5. ՀԱԿԱԾԽԱՅԻՆ ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ	92
3. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԱՍ	
3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	93
3.2. ԶՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	
3.2.1. ԶՐՈՎ, ՑԱԾՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՈՒՐՈՎ ԿԱՅԱՆՔՆԵՐ. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	108
3.2.2. ՍՊՐԻՆԿԼԵՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	118
3.2.3. ԴՐԵՆՉԵՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	122
3.2.4. ՆՐԲԱՋՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	124
3.2.5. ՀԱՐԿԱԴԻՐ ԳՈՐԾԱՐԿՄԱՄԲ ՍՊՐԻՆԿԼԵՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	127
3.2.6. ՍՊՐԻՆԿԼԵՐ-ԴՐԵՆՉԵՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	129
3.2.7. ԶՐՈՎ, ՑԱԾՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՈՒՐՈՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	130
3.2.8. ՄԵՏԱՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ	135
3.2.9. ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ	137
3.2.10. ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՆԵՐԿՈՒՄՆ ՈՒ ՄԱԿՆՇՈՒՄԸ	138
3.2.11. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ	139
3.2.12. ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ	141
3.2.13. ՊՈՄՊԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ, ՊՈՄՊԱԿԱՅԱՆՆԵՐ	145
3.2.14. ԲԱՐՁՐ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՐԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	152

3.2.15. ՌՈՐՈՏԱՑՎԱԾ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	155
3.3. ԳԱԶԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	
3.3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	158
3.3.2. ԾԱՎԱԼԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	161
3.3.3. ՀՐԱՄԱՐԻՉ ՆՅՈՒԹԻ ՔԱՆԱԿԸ, ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ	164
3.3.4. ՀՐԱՄԱՐԻՉ ԳԱԶԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ԱՆՈՒԹՆԵՐ	165
3.3.5. ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐ, ԴՐԴԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ԳԼԽԱԴԻՐՆԵՐ	167
3.3.6. ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ, ՏԵՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՍԱՐՔԵՐ	170
3.3.7. ՊԱՇՏՊԱՆՎՈՂ ՍԵՆՔԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	172
3.3.8. ՏԵՂԱՅԻՆ ԾԱՎԱԼԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	173
3.3.9. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	173
3.4. ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՏԻՊԻ ՓՈՇԵ ԵՎ ՓՈՇԵԳԱԶԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	
3.4.1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ	174
3.4.2. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	175
3.5. ՕԴԱԿԱԽՈՒՅԹԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ	
3.5.1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ	179
3.5.2 ՆԱԽԱԳԾՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	181
3.6. ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ	
3.6.1. ԶՐՈՎ ԵՎ ՑԱԾՐ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՈՒՐՈՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ	186
3.6.2. ՄԻՋԻՆ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՈՒՐՈՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ	195
3.6.3. ԲԱՐՁՐ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՈՒՐՈՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ	200
3.6.4. ԳԱԶԱՅԻՆ, ՓՈՇԵ, ՓՈՇԵԳԱԶԱՅԻՆ ԵՎ ՕԴԱԿԱԽՈՒՅԹԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ	201
4. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՍԵՆՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՅԹՅՈՒՆԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ	202

Հավելված

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2024 թվականի փետրվարի 22-ի N 10-Ն հրամանի

**ՀՀՇՆ 21-01.01-2024 «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ. ԱՎՏՈՄԱՏ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ
ԱԶԴԱՆՇԱՆՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.1 ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն նորմերը տարածվում են նոր կառուցվող, վերակառուցվող և տեխնիկապես վերասարքավորվող շենքերի և առանձին որոշ սենքերի (այսուհետ՝ օբյեկտներ) հակահրդեհային ավտոմատ (ինքնաշխատ) համակարգերի նախագծման, հավաքակցման ու շահագործման վրա:

2. Հակահրդեհային համակարգերի նախագծումն ու տեղադրումը պարտադիր է սույն շինարարական նորմերով և այլ գործող նորմատիվային փաստաթղթերով նախատեսված դեպքերում:

3. Սույն նորմերը չեն տարածվում ներքոգրյալ օբյեկտների ինքնաշխատ հրդեհաշիջման համակարգերի նախագծման աշխատանքների վրա, որոնց առանձնահատկությունները հաշվի առնող հակահրդեհային պահանջների նկատմամբ այլ շինարարական նորմերի առկայության դեպքում պետք է ղեկավարվել դրանցով, իսկ բացակայության դեպքում՝ հատուկ տեխնիկական առաջադրանքով.

- 1) հատուկ նորմերով նախագծվող օբյեկտների,
- 2) շենքից դուրս տեղաբաշխված տեխնոլոգիական կայանքների,
- 3) շարժական դարակաշարերով պահեստային շենքերի,
- 4) օդակախույթային փաթեթավորմամբ արտադրանքի պահեստավորման շենքերի,

- 5) 5.5մ ավելի բարձրությամբ բեռների պահեստավորման պահեստային շենքերի,
- 6) հեղուկացված այրելի գազերի պահման շենքերի, շինությունների և սենքերի,
- 7) նավթամբարների:

4. Սույն նորմերը չեն տարածվում նաև ըստ ԳՕՍՏ 27331-87-ի D և C դասերի հրդեհների, ինչպես նաև քիմիապես ակտիվ նյութերի հրդեհաշիջման համար կիրառվող կայանքների նախագծման աշխատանքների վրա, այդ թվում.

- 1) հրամարիչ նյութի հետ պայթյունով փոխազդող (այլումինատրոպանական միացություններ, ալկալիական մետաղներ և այլն),
- 2) հրամարիչ նյութի հետ փոխազդեցությունից քայքայվող և այրելի գազեր անջատող (լիթիումտրոպանական միացություններ, կապարի ազիդ, այլումինի, ցինկի և մագնեզիումի հիդրիդներ և այլն),
- 3) հրամարիչ նյութի փոխազդեցությունից ուժեղ ջերմանջատիչ արդյունք ունեցող (ծծմբաթթու, տիտանի քլորիդ, թերմիտ և այլն),
- 4) ինքնաբռնկվող նյութեր (նատրիումի հիդրոսուլֆիտ և այլն),
- 5) սույն շինարարական նորմերի առանձին բաժիններում նշված այլ նյութերի վրա:

1.1.2. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ

5. Սույն շինարարական նորմերում կատարված են հղումներ հետևյալ նորմատիվային փաստաթղթերին.

1)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի N 83-Ն հրաման	ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում»
2)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրաման	ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»
3)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 56-Ն հրաման	ՀՀՇՆ 22-03-2017«Արհեստական և բնական լուսավորում»

4)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 31-ի N 93-Ն հրաման	ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. Մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր»
5)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի նոյեմբերի 7-ի N 27-Ն հրաման	ՀՀՇՆ 31-02-2022 «Բնակելի շենքեր. Մաս II. Անհատական բնակելի տներ»
6)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրաման	ՀՀՇՆ 31-03-2020 «Հասարակական շենքեր և շինություններ»
7)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի N103-Ն հրաման	ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր»
8)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2022 թվականի ապրիլի 4-ի N 06-Ն հրաման	ՀՀՇՆ 31-03.02-2022 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ»
9)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 29-ի N 14-Ն հրաման	ՀՀՇՆ 31-03.03-2022 «Վարչական և կենցաղային շենքեր»
10)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի N 25-Ն հրաման	ՀՀՇՆ 31-03.04-2022 «Նախադպրոցական հաստատությունների շենքեր. Նախագծման նորմեր»
11)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի նոյեմբերի 1-ի N 12-Ն հրաման	ՀՀՇՆ 32-06-2023 «Մետրոպոլիտեններ»
12)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 80-Ն հրաման	ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում»

13)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 103-Ն հրաման	ՀՀՇՆ 40-01.02-2020 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»
14)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն	ՄՆԻՊ 2.11.06-91 «Փայտանյութերի պահեստներ. Նախագծման հակահրդեհային նորմեր»
15)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն	ՄՆԻՊ 3.05.05-84 «Տեխնոլոգիական սարքավորումներ և տեխնոլոգիական խողովակաշարեր»
16)	ԳՕՍՍ 12.0.001-82	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Հիմնական դրույթներ»
17)	ԳՕՍՍ 12.1.004-91	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Հրդեհային անվտանգություն. Ընդհանուր պահանջներ»
18)	ԳՕՍՍ 12.1.005-88	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Աշխատանքային գոտու օդի նկատմամբ ընդհանուր սանիտարահիգիենիկ պահանջները»
19)	ԳՕՍՍ 12.1.019-2017	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Էլեկտրաանվտանգություն. Ընդհանուր պահանջներն ու պաշտպանության տեսակների անվանացանկը»
20)	ԳՕՍՍ 12.1.044-2018	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Նյութերի հրդեհապայթյունանվտանգավորությունը. Ցուցանիշների անվանացանկը և որոշման մեթոդները»

21)	ԳՕՍ 12.2.003-91	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Արտադրական սարքավորանք. Անվտանգության ընդհանուր պահանջներ»
22)	ԳՕՍ 12.2.037-78	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Հրդեհային տեխնիկա. Անվտանգության պահանջներ»
23)	ԳՕՍ 12.2.072-98	«Արդյունաբերական ոռոգոտներ. Ռոբոտիզացված տեխնոլոգիական համալիրներ. Անվտանգության պահանջներ և փորձարկման մեթոդներ»
24)	ԳՕՍ 12.3.046-91	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ»
25)	ԳՕՍ 12.4.009-83	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Հրդեհային տեխնիկա օբյեկտների պաշտպանության համար. Հիմնական միջոցները. Տեղակայումն ու սպասարկումը»
26)	ԳՕՍ 12.4.026-2015	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Գույներ ազդանշանային, նշաններ անվտանգության և գծանշում ազդանշանային. Նշանակումը և կիրառման կանոնները. Ընդհանուր տեխնիկական պահանջներ և բնութագրեր. Փորձարկման մեթոդներ»
27)	ԳՕՍ 3262-75	«Խողովակներ ջրագազամուղային. Տեխնիկական պայմաններ»
28)	ԳՕՍ 8732-78	«Խողովակներ պողպատե անկար տաք ձևափոխված. Տեսականի»
29)	ԳՕՍ 8734-75	«Խողովակներ պողպատե անկար սառը ձևափոխված. Տեսականի»

30)	ԳՕՍ 9293-74	«Ազոտ գազային և հեղուկ. Տեխնիկական պայմաններ»
31)	ԳՕՍ 10704-91	«Խողովակներ պողպատե, էլեկտրատեղակցված, ուղղակար. Տեսականի»
32)	ԳՕՍ 10706-76	«Խողովակներ պողպատե, էլեկտրատեղակցված, ուղղակար. Տեխնիկական պայմաններ»
33)	ԳՕՍ 14202-69	«Արդյունաբերական կազմակերպությունների խողովակազծեր: Տարբերիչ գունավորում, նախազգուշացնող նշաններ և մակնշման վահանակներ»
34)	ԳՕՍ 15150-69	«Մեքենաներ, սարքեր և այլ տեխնիկական սարքվածքներ. Տարբեր կլիմայական շրջանների համար նախատեսում: Կատեգորիաներ, շահագործման, պահման և տեղափոխման պայմաններ կլիմայի ազդեցության մասով»
35)	ԳՕՍ 17433-80	«Արտադրական մաքրություն. Սեղմված օդ. Աղտոտվածության դասերը»
36)	ԳՕՍ 21130-75	«Էլեկտրատեխնիկական սարքվածքներ. Հողանցող սեղմակներ և հողանցման նշաններ. Կառուցվածքը և չափերը»
37)	ԳՕՍ 27331-87	«Հրդեհային տեխնիկա. Հրդեհների դասը»
38)	ԳՕՍ 28130-89	«Հրդեհային տեխնիկա. Կրակմարիչներ, հրդեհաշիջման կայանքներ և հրդեհի ազդանշանման համակարգեր. Պայմանական գծագրական նշաններ»
39)	ԳՕՍ 31565-2012	«Մալուխային արտադրանք. Հրդեհային անվտանգության պահանջներ»

40)	ԳՕՍՍ 32388-2013	«Տեխնոլոգիական խողովակաշարեր. Ամրության, թրթռման և սեյսմիկ ազդեցության նորմեր և հաշվարկման մեթոդներ»
41)	ԳՕՍՍ 32528-2013	«Խողովակներ պողպատե, անկար, շիկաձևափոխված. Տեխնիկական պայմաններ»
42)	ԳՕՍՍ 32678-2014	«Խողովակներ պողպատե, ընդհանուր նշանակության անկար և եռակցված սառը ձևափոխված. Տեխնիկական պայմաններ»
43)	ԳՕՍՍ 34428-2018	«Տարհանման համակարգեր լուսալյումինեսցենտային. Ընդհանուր տեխնիկական պայմաններ»
44)	ԳՕՍՍ 34635-2020	«Հրշեջ տեխնիկա. Հրաշիջման (կրակմարիչ) աերոզոլների գեներատորներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
45)	ԳՕՍՍ 34698-2020	«Ազդասարքեր հրդեհի. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
46)	ԳՕՍՍ 34699-2020	«Հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման ազդարարիչներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
47)	ԳՕՍՍ Ռ 51057-2001	«Հրդեհային տեխնիկա. Դյուրակիր կրակմարիչներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
48)	ՀՍՍ 2.601-2014	«Կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգ. Շահագործման փաստաթղթեր»
49)	ՀՍՍ ԳՕՍՍ Ռ 12.3.047-2023	«Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Տեխնոլոգիական գործընթացների հրդեհային անվտանգություն. Ընդհանուր պահանջներ. Ստուգման մեթոդներ»

50)	ՀՍ ՔՕՍ Ռ 50588-2021	«Փրփրաբերներ հրդեհի մարման համար. Ընդհանուր տեխնիկական պահանջներ և փորձարկման մեթոդներ»
51)	ՀՍ ՔՕՍ Ռ 50680-2023	«Ջրային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
52)	ՀՍ ՔՕՍ Ռ 50800-2023	«Փրփրային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
53)	ՀՍ ՔՕՍ Ռ 50969-2023	«Գազային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
54)	ՀՍ ՔՕՍ Ռ 51043-2023	«Ջրային և փրփրային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ. Ոռոգիչներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
55)	ՀՍ ՔՕՍ Ռ 51052-2023	«Ջրային և փրփրային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ. Կառավարման հանգույցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
56)	ՀՍ ՔՕՍ Ռ 51844-2021	«Հրշեջ տեխնիկա. Հրդեհային պահարաններ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
57)	ՀՍ ՔՕՍ Ռ 53279-2021	«Հրշեջ տեխնիկա. Միակցման գլխիկներ հրդեհաշիջման. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
58)	ՀՍ ՔՕՍ Ռ 53280.1-2022	«Հրդեհաշիջման կայանքներ ավտոմատ. Կրակմարիչ նյութեր. Մաս 1. Փրփրաբերներ վերևից մղվող, ջրում լուծվող այրվող հեղուկների

		հրդեհաշիջման համար. Ընդհանուր տեխնիկական պահանջներ և փորձարկման մեթոդներ»
59)	ՀՍ ԳՕՍ Ռ 53280.2-2021	«Հրդեհաշիջման կայանքներ ավտոմատ. Կրակմարիչ նյութեր. Մաս 2. Փրփրաբերներ նավթի և նավթամթերքի ռեզերվուարներում ենթաշերտային հրդեհաշիջման համար: Ընդհանուր տեխնիկական պահանջներ և փորձարկման մեթոդներ»
60)	ՀՍ ԳՕՍ Ռ 53280.3-2022	«Հրդեհաշիջման կայանքներ ավտոմատ. Կրակմարիչ նյութեր. Մաս 3. Հրդեհաշիջման նյութեր գազային. Փորձարկման մեթոդներ»
61)	ՀՍ ԳՕՍ Ռ 53280.4-2022	«Հրդեհաշիջման կայանքներ ավտոմատ. Կրակմարիչ նյութեր. Մաս 4. Ընդհանուր նշանակության հրդեհաշիջման փոշիներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ և փորձարկման մեթոդներ»
62)	ՀՍ ԳՕՍ Ռ 53280.5-2022	«Հրդեհաշիջման կայանքներ ավտոմատ. Կրակմարիչ նյութեր. Մաս 5. Հատուկ նշանակության հրդեհաշիջման փոշիներ. Դասակարգում, ընդհանուր տեխնիկական պահանջներ և փորձարկման մեթոդներ»
63)	ՀՍ ԳՕՍ Ռ 51091-2023	«Փոշեշիջման ինքնաշխատ կայանքներ. Տիպեր և հիմնական հարաչափեր»
64)	ՀՍ ԳՕՍ Ռ 51115-2023	«Հրդեհային տեխնիկա. Փողակներ հրդեհային հարթակային համակցված. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
65)	ՀՍ ԳՕՍ Ռ 51737-2023	«Ջրային և փրփրային հրդեհաշիջման կայանքներ ինքնաշխատ. Կցորդիչներ խողովակաշարային

		բաժանվող. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
66)	ՀՍ ԳՕՍ Ռ 52283-2023	«Հրդեհային տեխնիկա. Հրդեհային պոմպեր կենտրոնախույս. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
67)	ՀՍ ԳՕՍ Ռ 53252-2023	«Տեխնիկա հրշեջ. Փրփրախառնիչներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
68)	ՀՍ ԳՕՍ Ռ 53256-2023	«Հրդեհային տեխնիկա. Շնչառության փակ ցիկլով սեղմված թթվածնով շնչառական ապարատներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
69)	ՀՍ ԳՕՍ Ռ 53259-2023	«Հրդեհային տեխնիկա. Հրդեհային մեկուսիչ փրկադիմակներ սեղմված օդով հրդեհի ժամանակ ծխոտված տարածքներից տարհանելիս այրման թունավոր արգասիքներից մարդկանց պաշտպանելու համար. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
70)	ՀՍ ԳՕՍ Ռ 53278-2023	«Հրդեհային տեխնիկա. Փականներ հրդեհային փակիչ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
71)	ՀՍ ԳՕՍ Ռ 53281-2023	«Գազային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ. Մոդուլներ և մարտկոցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
72)	ՀՍ ԳՕՍ Ռ 53282-2023	«Գազային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ. Գազամբարներ հավասարաչեղմային հրդեհային. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»

73)	ՀՍ ԳՕՍ Ռ 53283-2023	«Գազային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ. Բաշխիչ սարքեր. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
74)	ՀՍ ԳՕՍ Ռ 53286-2023	«Հրդեհային տեխնիկա. Փոշեշիջման ինքնաշխատ կայանքներ. Մոդուլներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
75)	ՀՍ ԳՕՍ Ռ 53288-2023	«Ջրային և փրփրային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ. Նրբափոշիացված ջրով հրդեհաշիջման մոդուլային ինքնաշխատ կայանքներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
76)	ՀՍ ԳՕՍ Ռ 53301-2023	«Կափույրներ հակահրդեհային, օդափոխության համակարգերի. Հրակայունության փորձարկումների մեթոդներ»
77)	ՀՍ ԳՕՍ Ռ 53325-2023	«Տեխնիկա հրշեջ. Հրդեհային ավտոմատիկայի տեխնիկական միջոցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ և փորձարկման մեթոդներ»
78)	ՀՍ ԳՕՍ Ռ 53326-2023	«Տեխնիկա հրշեջ. Կայանքներ՝ հրդեհաշիջման, ռոբոտացված. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
79)	ՀՍ ԳՕՍ Ռ 53331-2023	«Տեխնիկա հրշեջ. Փողակներ հրդեհային, ձեռքի. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
80)	ՀՍ ԳՕՍ Ռ 55149-2023	«Տեխնիկա հրշեջ. Ազդարարներ՝ հրդեհային, անհատական. Ընդհանուր տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ»
81)	ՀՍ ԳՕՍ Ռ 56028-2023	«Տեխնիկա հրշեջ. Կայանքներ եւ մոդուլներ՝ փոշեգազային հրդեհաշիջման, ինքնաշխատ.

		Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկման մեթոդներ»
82)	ՀՍ ԳՕՍՍ Ռ 57552-2023	«Տեխնիկա հրշեջ. Ազդասարքեր՝ հրդեհի, բազմաչափանիշային. Ընդհանուր տեխնիկական պահանջներ եւ փորձարկման մեթոդներ»
83)	Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 768 որոշում	ՄՄ ՏԿ 004/2011 «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
84)	Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 878 որոշում	ՄՄ ՏԿ 019/2011 «Անհատական պաշտպանության միջոցների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ
85)	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշում	ԵԱՏՄ ՏԿ 043/2017 «Հրդեհային անվտանգության և հրդեհի մարման ապահովման միջոցների պահանջների մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգ
86)	2001 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-176 ՀՀ օրենք	«Հրդեհային անվտանգության մասին»
87)	ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 592-Ն որոշում	«Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոնները»
88)	ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրաման	«Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»
89)	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների	«Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության

<p>Նախարարի 2015թվականի հունիսի 18-ի N 595-Ն հրաման</p>	<p>արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի N 263-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»</p>
---	---

1.1.3. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

6. Սույն նորմերում կիրառվում են հետևյալ հասկացությունները՝ համապատասխան սահմանումներով.

1) **ազդանշաններ իրավիճակի մասին**՝ տեղային հրդեհի ազդանշանման համակարգից երեք ազդանշաններ՝ «ՆՈՐՄԱ», «ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆ» և «ՀՐԴԵՀ», որոնք պետք է փոխանցվեն վերին մակարդակի համակարգին,

2) **ազդասարք հրդեհի, ինքնաշխատ**՝ պաշտպանվող միջավայրում հրդեհի արգասիքների (ջերմություն, ծուխ, ճառագայթում, գազեր և այլն) տարբեր մեթոդներով հայտնաբերմամբ հրդեհի առկայության մասին ազդանշան կազմավորող սարքվածք,

3) **ազդասարք հրդեհի, ինքնավար**՝ հրդեհի ազդասարք, որի պատյանում միավորված են սնուցման աղբյուրը, հրդեհի հայտնաբերման ու տեղում ազդարարման (հնարավոր է նաև ազդանշանի փոխանցման) համար բոլոր բաղադրիչները,

4) **ազդասարք հրդեհի, կետային/գծային**՝ ազդասարք, որը հրդեհի արգասիքներին արձագանքում է որոշակի ուղղաձիգ գլանային/երկայնական պրիզմայաձև գոտում,

5) **ազդասարք հրդեհի, համակցված**՝ պաշտպանվող միջավայրում հրդեհի առնվազն երկու արգասիքների հայտնաբերմամբ ազդասարք,

6) **ազդասարք հրդեհի, հասցեական**՝ ազդասարք, որը հրդեհի առկայության (մեկ ընդհանրացված) և/կամ հսկվող արգասիքների մասին (մանրամասն) ազդանշանի հետ համատեղ հասցեական ընդունող հսկիչ սարքին հայտնում է նաև իր հասցեանիշը (համարը),

7) **ազդասարք հրդեհի, ձեռքի**՝ սարքվածք հրդեհային տազնապի ազդանշանը ձեռքով միացնելու համար,

8) **ազդասարք հրդեհի, սատելիտային**՝ հրդեհի ինքնաշխատ ազդասարք, որում ներկառուցված է հարկադիր գործարկմամբ սպրինկլերի ղեկավարման սարք,

9) **ազդարարիչ հրդեհի**՝ լուսային (կարմիր գույնի թարթող), ձայնային (շչակային՝ փոփոխական տոնայնությամբ կամ տեքստային հաղորդումներով), լուսաշչակային կամ մարդու զգայարանների վրա այլ ազդեցությամբ հրդեհի առկայության, տարիանման ճանա-

պարհների և միջոցների մասին մարդկանց տեղեկացնող սարք,

10) **ազդարարիչ հրդեհի տեքստային**՝ հատուկ տեքստի հաղորդմամբ հրդեհի առկայության, տարհանման ճանապարհների և միջոցների մասին մարդկանց տեղեկացնող բարձրախոս,

11) **արտադրիչ հրամարիչ օդակախույթի**՝ պահանջվող հարաչափերով հրամարիչ օդակախույթ ստանալու և այն պաշտպանվող սենքին մատուցելու համար նախատեսված սարքվածք,

12) **արտածիչ օդի**՝ օդալցված ջրային հրդեհաշիջման կայանքներում սպրինկլերային ազդա նշանային կափույրի կամ սպրինկլերի գործարկման դեպքերում սնիչ և/կամ բաշխիչ խողովակաշարերից սեղմված օդի ակտիվ արտածումը ապահովող սարքվածք,

13) **բաժնավորիչ**՝ փրփրային հրդեհաշիջման կայանքներում ջրի և փրփրարարի (հավելանյութերի) բաժնավորման և անհրաժեշտ խտությամբ փրփրաջրի ստացման համար նախատեսված սարքվածք,

14) **գլխադիր**՝ գազային, փոշե կամ փոշեգազային հրամարիչ նյութի արձակման և բաշխման համար նախատեսված սարքվածք,

15) **գրաֆիկ ոռոգման**՝ ոռոգիչում առկա ճնշումից ոռոգման սաստկության կամ ոռոգիչի տեսակարար ծախսի կախվածությունը պատկերող կորագիծ,

16) **գոտի հրդեհի ազդանշանման**՝ տարածք կամ օբյեկտի մի մասը, որը վերահսկվում է խմբավորված ու հրդեհի առաջացման վայրը որոշող հրդեհի ազդասարքերի միջոցով և որոնց ազդանշանից գործարկվում են հակահրդեհային պաշտպանության այլ համակարգերը,

17) **գոտի հրդեհի տեղեկացման**՝ տարածք, օբյեկտի կամ շինության մի հատված, որում իրականացվում է հրդեհի մասին մարդկանց միաժամանակյա տեղեկացում,

18) **գոտի (ուղղություն) հրդեհաշիջման**՝ տարածք, օբյեկտի կամ շինության մի հատված, որում հրդեհաշիջումն իրականացվում է միաժամանակ և այլ հատվածներից անկախ,

19) **գոտի հակածխային օդափոխության**՝ տարածք, օբյեկտի կամ շինության մի հատված, որում օդի դիմհար մատուցումը կամ ծխահեռացումն իրականացվում է միաժամանակ և այլ տարածքներից անկախ,

20) **դիտակետ հրդեհային**՝ շենքում շուրջօրյա հերթապահ աշխատողներով հատուկ սենք՝ սարքավորված հակահրդեհային ավտոմատիկայի տեխնիկական միջոցների վիճակի

հսկման և կառավարման սարքերով,

21) **դիրքի տվիչ**՝ հրդեհաշիջման կայանքների գործարկման կամ փակիչ սարքվածքների լրիվ բաց և/կամ լրիվ փակ դիրքերի մասին ազդանշան կազմավորող սարքվածք,

22) **դրդիչ (համակարգ)**՝ ջրով, ջրալուծույթով, սեղմած օդով լցված սպրինկլերներով խողովակաշար կամ այլ սարքվածքներ, նախատեսված ջրային և փրփրային դրենչերային, գազային և փոշով հրդեհաշիջման կայանքների ինքնաշխատ կամ հեռավար գործարկման համար,

23) **դրենչեր (դրենչերային ոռոգիչ)**՝ բաց ելքային անցք ունեցող ոռոգիչ,

24) **ինտեղիոնություն կայանքի**՝ ժամանակահատված, որը հաշվվում է հրդեհի հսկվող արգասիքի սահմանային արժեքին հասնելու ակնթարթից մինչև պաշտպանվող գոտի նախատեսված սաստկությամբ հրամարիչ նյութի մատուցման պահը: Հրդեհաշիջման այն կայանքների համար, որոնցում նախատեսված է հրդեհաշիջման նյութի մատուցման հապաղում պաշտպանվող տարածքից մարդկանց անվտանգ տարհանման և/կամ տեխնոլոգիական սարքավորումների կառավարման նպատակով, հապաղման ժամանակը ներառվում է կայանքի ինտեղիոնության հաշվարկում,

25) **խողովակաշար առբերիչ**՝ խողովակաշար, որը ջրասնիչը միացնում է կառավարման հանգույցին,

26) **խողովակաշար բաշխիչ**՝ խողովակաշար, որին միացվող ոռոգիչ շարքերի ու ճյուղերի վրա տեղակայվում են ոռոգիչներ, հեղուկացիրներ կամ գլխադիրներ պաշտպանվող գոտում հրամարիչ նյութի բաշխման համար,

27) **խողովակաշար մայրուղային**՝ գազյին հրդեհաշիջման կայանքի փակիչ-թողարկիչ, բաշխիչ սարքվածքները կամ հավաքիչը (առկայության դեպքում) հրամարիչ նյութի բաժանման հանգույցին միացնող խողովակաշար,

28) **խողովակաշար ներածման**՝ ջրի (փրփուրի) աղբյուրը ջրասնիչին (պոմպերին) միացնող խողովակաշար,

29) **խողովակաշար սնիչ**՝ կառավարման հանգույցը բաշխիչ խողովակաշարերին միացնող խողովակաշար,

30) **խտություն հրդեհաշիջման, նորմատիվային**՝ հրամարիչ նյութի անհրաժեշտ խտությունը պաշտպանվող ծավալում ըստ նորմատիվային փաստաթղթերի,

31) **խցիկ հապաղման**՝ սարքվածք, որը տեղադրվում է ճնշման ազդարարիչի գծի վրա

և նախատեսված է ջրամատակարարման աղբյուրի ճնշման կտրուկ տատանումների պատճառով ազդանշանային կափույրի աննշան բացման ժամանակ առաջացող տագնապի կեղծ ազդանշանների հավանականությունը նվազագույնի հասցնելու համար,

32) **ծախս տեսակարար, ջրային վարագույրի՝** ջրի ծախսը մեկ գծամետր ջրային վարագույրի համար,

33) **ծորակ հրդեհային, փոքր ելքով՝** 1,5 լ/վրկ-ից ոչ ավելի ելքով հրդեհային ծորակ, նախատեսված, մինչև մասնագիտացված հրշեջ ստորաբաժանման ժամանումը, բնակիչների կամ աշխատակիցների ուժերով հրդեհի առաջացման սկզբնական փուլում հրդեհաշիջման համար,

34) **կայան հրդեհաշիջման՝** հատուկ սենք հրդեհաշիջման կայանքի հրամարիչ նյութով անոթների, բաշխիչ սարքվածքների (առկայության դեպքում) և այլ տեխնիկական միջոցների տեղակայման համար,

35) **կայանք հրդեհաշիջման՝** անշարժ տեխնիկական միջոցների ամբողջություն՝ հրամարիչ նյութի արտանետմամբ հրդեհը մարելու համար,

36) **կայանք հրդեհաշիջման, գազային, կենտրոնացված՝** հրդեհաշիջման կայանում տեղակայված և մի քանի ուղղությունների (շենքերի, սենքերի, գոտիների) պաշտպանության համար նախատեսված գազային հրդեհաշիջման կայանք,

37) **կայանք հրդեհաշիջման, մոդուլային՝** պաշտպանվող սենքում կամ նրա կողքին տեղակայված առանձին հրդեհաշիջման ինքնաշխատ կայանք, կազմված մեկ կամ մի քանի մոդուլներից և հրդեհի ազդանշանման ու հրդեհաշիջման կառավարման սեփական անկախ համակարգից, որն ընդունակ է ինքնուրույն իրականացնել հրդեհաշիջում,

38) **կայանք հրդեհաշիջման, դրենչերային՝** դրենչերներով սարքավորված հրդեհաշիջման կայանք, որի գործարկման դեպքում հրամարիչ նյութը՝ ջուրը կամ ջրալուծույթը մատուցվում է կայանքի կամ առանձին հատվածամասի բոլոր դրենչերներից միաժամանակ,

39) **կայանք հրդեհաշիջման, ծավալային՝** պաշտպանվող օբյեկտի ծավալում այրմանը չօժանդակող միջավայր ստեղծող հրդեհաշիջման կայանք,

40) **կայանք հրդեհաշիջման, մակերևութային՝** այրվող մակերևույթի վրա ներգործող հրդեհաշիջման կայանք,

41) **կայանք հրդեհաշիջման, ռոբոտային՝** ինքնաշխատ հրդեհաշիջման կայանք՝ բաղկացած կառավարման և հրդեհի հայտնաբերման ընդհանուր համակարգով մի քանի

ռոբոտացված ստացիոնար հրդեհային ջրանետիչներից,

42) **կայանք հրդեհաշիջման, սպրինկլերային՝** սպրինկլերներով սարքավորված հրդեհաշիջման կայանք, որի գործարկման դեպքում հրամարիչ նյութը՝ ջուրը կամ ջրալուծույթը մատուցվում է կայանքի սպրինկլերներից հաջորդաբար՝ հրդեհի օջախից ջերմության ազդեցության հետևանքով կամ որոշակի ալգորիթմով՝ հարկադիր գործարկմամբ սպրինկլերների դեպքում.

ա. **ջրալցված՝** բոլոր խողովակաշարերը ջրով (ջրալուծույթով) լցված սպրինկլերային հրդեհաշիջման կայանք (սենքում +5°C և ավելի բարձր ջերմաստիճանների դեպքում),

բ. **օդալցված՝** առբերիչ խողովակաշարը ջրով (ջրալուծույթով), իսկ կառավարման հանգույցից վերև՝ ճնշման տակ գտնվող օդով լցված սպրինկլերային հրդեհաշիջման կայանք (սենքում +5°C -ից ցածր ջերմաստիճանների դեպքում),

43) **կայանք հրդեհաշիջման, սպրինկլեր-դրենչերային՝** հրդեհաշիջման ինքնաշխատ կայանք, որում հրամարիչ նյութը մատուցվում է միայն սպրինկլերի և դրենչերային կառավարման հանգույցը գործարկող մեկ այլ տեխնիկական միջոցի գործարկման դեպքում՝ «ԵՎ» (&) տրամաբանությամբ,

44) **կայանք հրդեհաշիջման, տեղային ծավալային՝** սենքի և/կամ առանձին տեխնոլոգիական սարքավորանքի ծավալի մի մասի վրա ներգործող ծավալային հրդեհաշիջման կայանք,

45) **կայանք հրդեհաշիջման, տեղայնամակերևութային՝** սենքի և/կամ առանձին տեխնոլոգիական սարքավորանքի մակերևութի մի մասի վրա ներգործող մակերևութային հրդեհաշիջման կայանք,

46) **կայանքի հեռավար միացում (գործարկում)՝** գործարկվող տարրերի միացում (գործարկում) ձեռքով, որն իրականացվում է պաշտպանվող սենքերի ներսում կամ դրսում՝ դռան մոտ, հրդեհաշիջման կայանում, հրդեհային դիտակետում կամ կարգավարական սենքում տեղակայված, հրդեհաշիջման կառավարման սարքավորանքին միացված կամ էլ անմիջականորեն նրա վրա տեղակայված ձեռքի էլեկտրական գործարկիչով,

47) **կայանք պոմպային, հրդեհային, մոդուլային՝** բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցները մեկ ընդհանուր շրջանակի վրա հավաքված պոմպային կայանք,

48) **կայանքի տեղային միացում (գործարկում)՝** կայանքի գործարկում (գործարկում) ձեռքով, որն իրականացվում է անմիջապես հրդեհաշիջման կայանքի մոդուլների,

կառավարման հանգույցների կամ բաշխիչ սարքվածքների վրա տեղադրված գործարկման մեխանիկական տարրերից,

49) **կափույր ազդանշանային՝** կառավարման հանգույցում նորմալ փակ փակիչով սարքվածք՝ նախատեսված սպրինկլերի կամ հրդեհի ազդասարքի գործարկման դեպքում կառավարման ազդանշան տալու և հրամարիչ նյութի մատուցման համար,

50) **համակարգ հրդեհի ազդանշանման՝** հրդեհի հայտնաբերման, ազդանշանման և հակահրդեհային ավտոմատիկայի տեխնիկական միջոցներին ու այլ ինժեներական ու տեխնոլոգիական համակարգերին համապատասխան ազդանշան տալու համար նախատեսված սարքերի համախումբ, որը հավաքակցված է մեկ օբյեկտում և վերահսկվում է ընդհանուր հրդեհային դիտակետից,

51) **համակարգ հակահրդեհային ավտոմատիկայի՝** իրար հետ փոխգործող, ինքնաշխատ կերպով մարդկանց անվտանգության և օբյեկտի հրդեհային անվտանգության ապահովման նպատակով հրդեհի ազդանշանման, «ՀՐԴԵՀ» ազդանշանի փոխանցման, մարդկանց տեղեկացման և տարհանման, օդափոխության և հակաձխային պաշտպանության համակարգերի, հրդեհաշիջման կայանքների և հակահրդեհային գործառնություններով այլ ճարտարագիտական սարքերի ու համակարգերի ամբողջություն,

52) **հանգույց կառավարման՝** ջրային ու փրփրային հրդեհաշիջման կայանքների առբերիչ ու սնիչ խողովակաշարերի միջև տեղաբաշխված, փակիչ և ազդանշանման սարքվածքների (խողովակներ, փակող, ազդանշանային, չափիչ, արագարար կամ դանդաղարար և այլ սարքվածքների) ամբողջություն, նախատեսված նրանց գործարկման ու աշխատունակության վերահսկման, ինչպես նաև հրամարիչ նյութի մատուցման, հակահրդեհային ավտոմատիկայի այլ տեխնիկական համակարգերին ազդանշան տալու համար,

53) **հատվածամաս հրդեհաշիջման կայանքի՝** ջրային կամ փրփրային հրդեհաշիջման կայանքի բաղկացուցիչ մաս՝ կառավարման հանգույցով և նրանից հետո տեղակայված հիդրավլիկական և այլ սարքվածքներով, սնիչ ու բաշխիչ խողովակաշարերով, նախատեսված պաշտպանվող գոտի հրամարիչ նյութի մատուցման համար,

54) **հեղուկացիր՝** սարքվածք՝ նախատեսված ջրի կամ ջրալուծույթների փոշիացման (150 մկմ և փոքր միջին թվաբանական տրամագծով) համար,

55) **հրամարիչ խտություն՝** ծավալի ներսում հրամարիչ նյութի խտություն, որը ստեղ-

ծում է այրմանը չօժանդակող միջավայր,

56) **հրամարիչ նյութի հաշվարկային քանակություն**՝ հրամարիչ նյութի կամ դրա պատրաստման համար անհրաժեշտ բաղադրամասերի քանակություն, որը որոշված է նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան,

57) **հրամարիչ նյութի հիմնական քանակություն**՝ հրամարիչ նյութի հաշվարկային քանակություն, որը պահվում է հրդեհաշիջման կայանքում հրդեհի առաջացման դեպքում անմիջապես օգտագործման համար պատրաստ վիճակում,

58) **հրամարիչ նյութի մատուցման սաստկություն**՝ հրամարիչ նյութի քանակը, որը միավոր ժամանակում մատուցվում է միավոր երկարության, մակերեսի վրա կամ ծավալում,

59) **հրամարիչ նյութի պահուստային քանակություն**՝ հրամարիչ նյութի հաշվարկային քանակություն, որը հիմնական քանակության մատուցման անհաջողության կամ կրկնակի բոցավառման դեպքերում պատրաստ է անմիջապես կիրառման,

60) **հրամարիչ նյութի պաշար**՝ հրամարիչ նյութի կամ դրա պատրաստման համար անհրաժեշտ բաղադրամասերի քանակություն, որը պահվում է օբյեկտում կամ պայմանագրային հիմունքներով՝ սպասարկող կազմակերպությունում և նախատեսված է հրամարիչ նյութի օգտագործված հիմնական և/կամ պահուստային քանակությունները արագ վերականգնման համար,

61) **հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման համակարգ**՝ հրդեհի բռնկման, տարհանման անհրաժեշտության և ուղղությունների, ինչպես նաև հաջորդակա-նության մասին մարդկանց ժամանակին տեղեկացնելու համար նախատեսված տեխնիկական միջոցների համալիր,

62) **ճյուղ բաշխիչ խողովակաշարի**՝ բաշխիչ խողովակաշարի շարքի հատված, որը գտնվում է նրա մի կողմում,

63) **մակերես ոռոգման, նորմատիվային**՝ պաշտպանվող նվազագույն հաշվարկային մակերեսը, որի վրա նորմատիվային ժամանակահատվածում պետք է ապահովվի ոռոգման նորմատիվային սաստկությունը (նորմատիվային հարաչափերը՝ համաձայն սույն շինարարական նորմերի),

64) **մարտկոց հրդեհաշիջման**՝ հրդեհաշիջման մոդուլների խումբ, որոնք միավորված են ընդհանուր հավաքիչով,

65) **մոդուլ հրդեհաշիջման**՝ փակիչ-թողարկիչ սարքվածքով անոթ, որը նախատեսված

66) է հրամարիչ նյութի պահման և գործարկման ազդանշանով թողարկելու համար,

67) **մոդուլ հրդեհաշիջման իմպուլսային**՝ մինչև 1 վրկ-ի ընթացքում հրամարիչ նյութը մատուցող հրդեհաշիջման մոդուլ,

68) **մոդուլ հավասարաջերմային**՝ ջերմամեկուսացված անոթ՝ փակիչ-թողարկիչ սարքվածքով, հսկիչ ու չափիչ սարքերով, ներսում հաստատուն ջերմաստիճան ապահովող ագրեգատով, նախատեսված հրամարիչ նյութի պահպանման և գործարկման ազդանշանով թողարկելու համար,

69) **նյութ հրամարիչ**՝ նյութ, որի ֆիզիկաքիմիական հատկությունները թույլ են տալիս այրումը դադարեցնելու համար պայմաններ ստեղծել,

70) **նյութ հրամարիչ փոշեգազային**՝ հրամարիչ փոշու և հրամարիչ գազի խառնուրդ,

71) **շարք բաշխիչ խողովակաշարի**՝ սնիչ խողովակաշարի երկու կողմերում և մի գծի վրա գտնվող ճյուղերի ընդհանրություն,

72) **շլեյֆ (գիծ կապի)**՝ հակահրդեհային ավտոմատիկայի ավարտուն սարքերի միջև լարային և անլար կապուղիներ ազդանշաններ փոխանցելու (լարայինի դեպքում՝ նաև էլեկտրասնուցման) համար,

73) **ռոռգիչ**՝ սարքվածք, նախատեսված ջրի և/կամ ջրալուծույթների ջրցողմամբ պաշտպանվող մակերեսում հրդեհի մարման, տեղայնացման կամ արգելափակման համար,

74) **ռոռգիչ (հեղուկացիր) թելադրող**՝ ամենաբարձր և ջրասնիչից հիդրավլիկորեն ամենահեռու տեղակայված ռոռգիչ (**հեղուկացիր**), որի պատճառով խողովակաշարում հիդրավլիկ կորուստները սկսած ջրասնիչից ունեն առավելագույն արժեք,

75) **պատիկություն փրփուրի**՝ փրփուրի և նրա ստանալու համար ծախսված փրփրաջրի ծավալների հարաբերությունը. տարբերակվում է ցածր (5-20), միջին (21-200) և բարձր (ավելի քան 200) պատիկությամբ փրփուր,

76) **ջերմային փական**՝ ջերմազգայուն փակիչ տարր որը բացվում է ջերմաստիճանի որոշակի արժեքի դեպքում,

77) **ջրանետիչ հրդեհային, ռոբոտային, ստացիոնար**՝ հրդեհի տեղայնացման, շիջման կամ տեխնոլոգիական սարքավորանքի ու շինարարական կառուցվածքատարրերի հովացման համար նախատեսված, ստացիոնար տեղակայված, շարժման մի քանի աստիճանով, շարժաբեռներով ու ծրագրային կառավարման սարքով հրդեհային ինքնաշխատ ջրանետիչ,

78) **ջրասնիչ ինքնաշխատ**՝ տարբեր անհրաժեշտ սարքավորումներով հավաքված կամ

պատրաստի հանգույց, որը հերթապահ գործելակարգում խողովակաշարերում և կառավարման հանգույցներում ինքնաշխատ կերպով ապահովում է ջրի և/կամ ջրալուծույթի անհրաժեշտ ճնշում, իսկ հրդեհաշիջման ընթացքում՝ հաշվարկային ծախս ու ճնշում,

79) **ջուր նրբափոշիացված՝** 150 մկմ և ավելի փոքր միջին թվաբանական տրամագծով ջրային կաթիլների միջավայր, որը ստացվում է հեղուկացիրով հոծ ջրի մանրացման՝ կաթիլների վերածման արդյունքում,

80) **սարքվածք բաշխիչ՝** խողովակաշարի վրա տեղակայված փակիչ սարքվածք, որն ապահովում է հրամարիչ նյութի բացթողումը որոշակի մայրուղային խողովակաշարի մեջ,

81) **սարք հրդեհային ընդունիչ-հսկիչ՝** սարքվածք, որը նախատեսված է հրդեհի ազդասարքերի էլեկտրասնուցման, դրանցից ազդանշանների ընդունման, ազդարարիչներին և կենտրոնացված դիտարկման վահանակներին տեղեկատվություն տալու, ինչպես նաև հրդեհի կառավարման սարքի գործարկման մեկնարկային ազդակի կազմավորման համար,

82) **սարք հրդեհային ընդունիչ-հսկիչ և կառավարման՝** սարքվածք, որն իր մեջ համատեղում է հրդեհային ընդունիչ-հսկիչ սարքի և հրդեհաշիջման կառավարման սարքի գործառույթները,

83) **սարք հրդեհային կառավարման՝** սարքվածք, որը նախատեսված է հրդեհաշիջման գործընթացի կառավարման, նրան միացված շլեյֆների վիճակի վերահսկման, լուսատախտակներին, հակահրդեհային այլ ինժեներական համակարգերին ազդանշանի կազմավորման համար,

84) **սենքի անհերմետիկության աստիճան՝** մշտապես բաց բացվածքների գումարային մակերեսի և սենքի պատերի ընդհանուր մակերեսի հարաբերությունը՝ արտահայտված տոկոսներով,

85) **սենքի անհերմետիկության հարաչափ՝** մշտապես բաց բացվածքների գումարային մակերեսի և սենքի ծավալի հարաբերությունը մ⁻¹ չափողականությամբ,

86) **սպրինկլեր՝** ելքային անցքում ջերմային փակիչով ոռոգիչ,

87) **սպրինկլեր հարկադիր գործարկմամբ՝** ինչպես ջերմության ազդեցությամբ, այնպես էլ արտաքին ղեկավարող ազդակով գործարկվող սպրինկլեր,

88) **սպրինկլեր գործարկման հսկողությամբ՝** ջերմային փակիչի հեռացման մասին ազդանշան հաղորդող սպրինկլեր,

89) **սպրինկլեր հարկադիր գործարկմամբ և հսկողությամբ՝** սպրինկլեր երկու գործառույթների համատեղմամբ,

90) **ուրվագիծ (էսյուր) ոռոգման՝** ջրի բաշխման գծապատկերը ուղղաձիգ կամ հորիզոնական հարթությունում,

91) **փակիչ-թողարկիչ սարքվածք՝** գազային հրդեհաշիջման անոթի վրա անմիջականորեն տեղադրվող, հերթապահ գործելակարգում հրամարիչ նյութերի ելքը արգելափակող և միայն հրդեհի դեպքում գործարկման ազդանշանով կամ ձեռքով այն խողովակաշար թողարկող սարքվածք,

92) **փոխհատուցիչ օդային՝** սպրինկլերային և սպրինկլեր-դրենչերային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքների սնիչ/բաշխիչ խողովակաշարերից սեղմված օդի հոսակորուստների պատճառով ազդանշանային փականի կեղծ գործարկումների հավանականությունը նվազագույնի հասցնելու նպատակով որոշակի անցքով սարքվածք,

93) **փրփրաջուր (լուծույթ աշխատանքային)՝** փրփրարար հավելանյութի խիստ որոշակի (0.5%, 1%, 3%, 6% կամ այլ՝ ըստ տեխնիկական բնութագրի) ծավալային բաղադրությամբ ջրի լուծույթ, որից փրփրարտադրիչներում ստացվող հրամարիչ փրփուրը ապահովում է երաշխավորված հրդեհաշիջում,

94) **փրփրարար (հրդեհաշիջման նպատակով)՝** այրման տարբեր արգելակիչներով ջրի հավելանյութ, որի շնորհիվ ստացվող լուծույթը՝ փրփրաջուրը, փրփրարտադրիչներում վերածվում է հրդեհաշիջող փրփուրի,

95) **փրփուր հրամարիչ՝** համակցված հրամարիչ նյութ՝ դիսպերսիոն համակարգ, բաղկացած հեղուկի թաղանթով իրարից բաժանված և օդով լցված բջիջներից,

96) **օդակախույթ հրամարիչ՝** օդակախույթաստեղծ բաղադրության այրման արգասիքներ, որոնք հրդեհի օջախի վրա ունենում են հրամարիչ ազդեցություն:

1.1.4. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

7. Սույն նորմերում կիրառվում են հետևյալ հապավումները.

- 1) ՀԱՀ – հրդեհի ազդանշանման համակարգ,
- 2) ՀԱՎՀ – հակահրդեհային ավտոմատիկայի համակարգ,
- 3) ՀԳՍ – հարկադիր գործարկմամբ սպրինկլերային (հրդեհաշիջման ինքնավար

կայանք),

- 4) ՀՇԻԿ – հրդեհաշիջման ինքնաշխատ կայանք,
- 5) ՀՏՏԿՀ - հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման համակարգ,
- 6) ՆՓՋ (ՅՃ կամ ԲՃ)- նրբաջրային (ցածր ճնշման կամ բարձր ճնշման),
- 7) ՆՓ – նորմատիվային փաստաթղթեր,
- 8) ՏՓ – տեխնիկական փաստաթղթեր:

1.1.5. ՀԱՎԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

8. Օբյեկտներում ՀԱՎՀ-երի նախագծման ու տեղակայման անհրաժեշտությունը որոշվում է սույն շինարարական նորմերով և այլ գործող ՆՓ-ով:

9. ՀԱՎՀ-ի տեխնիկական միջոցները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգին (ՀՍ ԳՕՍ Ռ- 53325-2023) և կիրառվեն դրանց ՏՓ-ի պահանջներին համաձայն, բայց ոչ սույն շինարարական նորմերի խախտումով, հաշվի առնելով դրանց կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև նրանց տեղակայման վայրում մեխանիկական, էլեկտրամագնիսական և այլ գործոնների հնարավոր ազդեցությունը: Սարքերը պետք է կայուն լինեն ըստ ՀՍ ԳՕՍ Ռ- 53325-2023 «Տեխնիկա հրշեջ. Հրդեհային ավտոմատիկայի տեխնիկական միջոցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ և փորձարկման մեթոդներ» ստնդարտի երկրորդ աստիճանի կոշտությունից ոչ պակաս արտաքին խանգարումների ազդեցությունների նկատմամբ:


10. Պայթյունավտանգ գոտիներում տեղակայվող տեխնիկական միջոցները պետք է ունենան այդ պայմաններին համապատասխանող կառուցվածք և բնութագրեր:

11. Հնարավոր ազդեցությունների որոշման անհնարինության դեպքերում դրանք կարող են ընդունվել ըստ տեխնիկական առաջադրանքի:

12. Պաշտպանվող օբյեկտի ՀԱՎՀ-երը պետք է նախագծվեն՝ ելնելով նրա կազմում ընդգրկված հակահրդեհային բոլոր համակարգերի համագործության սկզբունքից, ապահովելով նրանց միասնականությունը: Տարբեր արտադրության սարքերի կիրառումը թույլատրվում է միայն դրանց էլեկտրական և տեղեկատվական համատեղելիության, ինչպես նաև միմյանց միջև շլեյֆների ինքնաշխատ հսկողության դեպքում: Նման սարքերի

ՏՓ-ում պետք է նշված լինեն մուտքի և ելքի բնութագրերը, տվյալների փոխանցման ձևաչափերն ու սարքերի համատեղ աշխատանքի հնարավորությունը որոշելու համար այլ անհրաժեշտ տեղեկությունները:


13. Հակահրդեհային համակարգը պետք է նախագծվի այնպես, որ պաշտպանության մի գոտում միավոր անսարքության դեպքում պահպանվի կամ ինքնաշխատ, կամ էլ ձեռքով ազդանշան ձևավորելու հնարավորությունը՝ առանց ազդելու մյուս գոտիների աշխատանքի վրա (Նկար 1, 2):



Նկար 1. Հրդեհի ազդանշանման անհասցե համակարգի պաշտպանության մի գոտում միավոր անսարքության դեպքում չի պահպանվում (վերևում) և պահպանվում է (ներքևում) կամ ինքնաշխատ, կամ էլ ձեռքով ազդանշան ձևավորելու հնարավորությունը՝ առանց ազդելու մյուս գոտիների աշխատունակության վրա

14. Այն դեպքերում, երբ պաշտպանության ենթակա են հրդեհային հատվածամասերի բաժանված կամ առանձին (այդ թվում միմյանց հետ անցումներով կապված) մասնաշենքերով օբյեկտներ, մի հատվածում ՀԱՎՀ-ի կամ նրա շլեյֆերի անսարքությունները

չպետք է ազդեն մյուս հատվածներում ՀԱՎՀ-ի աշխատանքի վրա և այդ անսարքությունները պետք է ազդանշանվեն հրդեհային դիտակետում:



կար 2. Հրդեհի ազդանշանման հասցեային համակարգի պաշտպանության մի գոտում միավոր անսարքության դեպքում չի պահպանվում (վերևում) և պահպանվում է (ներքևում) կամ ինքնաշխատ, կամ էլ ձեռքով ազդանշան ձևավորելու հնարավորությունը՝ առանց ազդելու մյուս գոտիների աշխատունակության վրա

15. ՀԱՎՀ-ի սարքերը պետք է ապահովեն նրանց ՏՓ-ում նշված բոլոր իրազեկումները համակարգում հոսանքի սպառման ամբողջ միջակայքում:

16. ՀԱՎՀ-ում թույլատրվում է կիրառել միայն մեխանիկական կամ էլեկտրատեխնիկական լրամշակումներ չպահանջող տեխնիկական միջոցներ:

17. ՀԱՎՀ-ում թույլատրվում է կիրառել առանձին հանգույցներով մատակարարվող և տեղակայման ընթացքում հավաքվող տեխնիկական միջոցներ, լրացուցիչ սարքվածքներ, արկղեր, տուփեր, պիտույքներ և այլն, ինչպես նաև կատարել մեխանիկական կամ էլեկտրատեխնիկական լրամշակումներ, եթե դրանք նախատեսված են ՏՓ-ով:

18. ՀԱՎՀ-ի էլեկտրական սարքավորումները պետք է բավարարեն ՀՀ կառավարության 2023թվականի ապրիլի 21-ի N 592-Ն որոշման և սույն շինարարական նորմերի պահանջներին:

19. էլեկտրական և օպտիկական մալուխների ընտրությունը, դրանց անցկացումը և հողանցումը պետք է իրականացնել ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 592-Ն որոշման, դրանց ՏՓ-ի և սույն շինարարական նորմերի պահանջների համաձայն, այն է.

1) ՀԱՎՀ-ի շլեյֆները պետք է նախատեսել պղնձե ջիղեր ունեցող, հրակայուն ինքնուրույն հաղորդալարերով և մալուխներով, հնարավորության դեպքում առանց կցվանքների, իսկ դրա անհնարինության դեպքում՝ կցվանքները պետք է իրականացնել հատուկ դրա համար նախատեսված սարքվածքներով կամ զոդմամամբ՝ հրակայուն և արտաքին միջամտությունը բացառող տուփերի մեջ,

2) հաղորդալարերի և մալուխների պղնձե ջղերի տրամագծերը պետք է որոշվեն ելնելով լարման թույլատրելի անկման հաշվարկից, բայց 0.5 մմ ոչ պակաս,

3) ՀԱՎՀ-ի ղեկավարման սարքերի էլեկտրասնուցման գծերը, ինչպես նաև ինքնաշխատ կայանքների ու մյուս համակարգերի միացման գծերը պետք է նախատեսել ինքնուրույն հաղորդալարերով և մալուխներով,

4) չի թույլատրվում նրանց տարանցիկ տեղակայումը պայթավտանգ և հրդեհավտանգ սենքերում (գոտիներում): Հիմնավորման դեպքում, թույլատրվում է այդ գծերի տեղակայումը պայթավտանգ և հրդեհավտանգ սենքերում (գոտիներում)՝ մետաղական խողովակներում, ինչպես նաև 40 դասի շինարարական կոնստրուկցիաների խոռոչներում,

5) ՀԱՎՀ-ի շլեյֆների և կապի գծերը էլեկտրամագնիսական մակաձումներից պաշտպանելու անհրաժեշտության դեպքում պետք է կիրառել պտտալարեր, էկրանացված մալուխներ կամ մալուխներ մետաղական խողովակներում կամ ուղետարներում: Ընդ որում, էկրանացնող տարրերը պետք է հողակցվեն մեկ կետում՝ ՀԱՀ-ի գլխավոր սարքերում,

6) չի թույլատրվում մինչև 60Վ լարումով շլեյֆների և կապի գծերի համատեղ տեղակայումը 110Վ և ավելի լարումով մալուխների հետ մեկ սակառում, խողովակում, քուղում, շինարարական կոնստրուկցիաների պարփակ անցքում կամ մեկ վաքում: Նշված գծերի համատեղ տեղակայումը թույլատրվում է սակառների և վաքերի տարբեր հատվածներում, որոնք ունեն չայրելի նյութից 0.25 ժ հրակայունության սահմանով երկայնական հոծ միջնապատեր,

7) ՀԱՎՀ-ի մինչև 60 Վ լարվումով հաղորդալարերի ու մալուխների հեռավորությունն 110Վ և ավելի լարումով մալուխներից, բաց զուգահեռ տեղադրման դեպքում պետք է լինի 0.5 մ ոչ պակաս: Թույլատրվում է նշված հաղորդալարերի և մալուխների տեղակայումը ուժային և լուսավորության մալուխներից 0.5 մ պակաս հեռավորության վրա, նրանց էլեկտրամագնիսական մակաձումից էկրանավորման պայմանով,

8) թույլատրվում է ներսենյակային լուսավորման հաղորդալարերի մալուխներից հեռավորությունը ՀԱՎՀ-ի առանց մակաձումից պաշտպանված շլեյֆների հաղորդալարերից, մալուխներից և կապի գծերից դրանց մինչև 10մ բաց զուգահեռ տեղադրման դեպքում պակասեցնել մինչև 0.25 մ,

9) ՀԱՎՀ-ի շլեյֆներն ու կապի գծերը պետք է պաշտպանված լինեն մակաձումից նաև այն տեղերում, որտեղ էլեկտրամագնիսական դաշտերը և մակաձումները գերազանցում են էլեկտրասարքվածքներից առաջացած և ստանդարտով սահմանված ռադիոխանգարումների մակարդակը,

10) ՀԱՎՀ-ի արտաքին շլեյֆներն ու կապի գծերը պետք է տեղակայվեն գետնի մեջ կամ արտաքին կապուղիներում՝ շենքերի և շինությունների արտաքին պատերի վրայով, ծածկարանների տակով, փողոցից և ճանապարհից դուրս շենքերի միջև հենարանների և ճոպանների վրա,

11) ՀԱՎՀ-ի էլեկտրասնուցման հիմնական և պահուստային գծերը պետք է անցկացվեն տարբեր ուղեգծերով, ինչը կբացառի հրդեհի դեպքում պաշտպանվող օբյեկտում նրանց միաժամանակյա շարքից դուրս գալու հնարավորությունը: Այդպիսի գծերի անցկացումը պետք է կատարել մալուխային տարբեր շինությունների, սարքվածքների միջով: Թույլատրվում է նշված մալուխային գծերի համատեղ անցկացումը պայմանով, որ նրանցից թեկուզ մեկը անցնի 0.75 ժ հրակայունության սահմանով չայրվող նյութերից իրականացված մալուխատարի (սակառի, խողովակի) միջով,

12) թույլատրվում է էլեկտրասնուցման հիմնական և պահուստային գծերի զուգահեռ տեղադրումը պատերի վրայով, եթե նրանց հեռավորությունը առլույս 1մ պակաս չէ:

20. Անլար տեխնիկական միջոցների կիրառման հնարավորությունը որոշվում է ելնելով պաշտպանվող օբյեկտի և կիրառվելիք տեխնիկական միջոցների տեխնիկական բնութագրերից:

21. Օբյեկտը պետք է բաժանվի հակահրդեհային պաշտպանության (ազդանշանման,

ազդարարման, հրդեհաշիջման և այլն) գոտիների համաձայն սույն շինարարական նորմերի և հակահրդեհային պաշտպանության միջոցներին ներկայացվող համապատասխան ՆՓ-ի:

22. Հրդեհային ընդունիչ-հսկիչ, կառավարման, ցուցանշող, անխափան էլեկտրասնուցման սարքերն ու այլ մոդուլները պետք է տեղակայվեն հրդեհային դիտակետում: Թույլատրվում է դրանց տեղակայումը այլ սենքերում ներքոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) դրանք 2-րդ կարգի թույլտվություն (օբյեկտի հրդեհային անվտանգության պատասխանատուներ՝ տեխնիկական միջոցների գործելակարգի փոփոխման իրավունք ունեցող անձինք) և 3-րդ կարգի թույլտվություն (օբյեկտի հակահրդեհային տեխնիկական միջոցների սպասարկման և կարգաբերման իրավունք ունեցող անձինք) պահանջող սարքեր են,

2) ապահովված է այդ սարքերի բոլոր հնարավոր հաղորդագրությունների փոխանցումը օբյեկտի հրդեհային դիտակետ և այնտեղ դրանց արտահայտումը լուսային և/կամ ձայնային ազդանշանումով, ինչպես նաև հնարավոր է այնտեղից այդ սարքերի կառավարումը ձեռքով 1-ին կարգի թույլտվությամբ պատասխանատուների կողմից՝ համաձայն նրանց ծառայողական պարտականությունների:

23. Օբյեկտում շուրջօրյա հերթապահության բացակայության դեպքում հրդեհային դիտակետին ներկայացվող պահանջներն առնչվում են միայն սենքին և նրանում սարքավորումների տեղակայմանը:

24. Հրդեհային դիտակետում սարքերը պետք է տեղակայվեն այնպես, որ հնարավոր լինի դրանց դիտարկումը, ղեկավարումն ու տեխնիկական սպասարկումը: Ղեկավարման և ցուցանշման օրգանների բարձրությունը գետնից պետք է լինի 0,75-ից մինչև 1,8մ: Հրդեհային դիտակետից դուրս գտնվող և ղեկավարման ու ցուցանշման օրգաններ չունեցող սարքերը պետք է տեղակայվեն այնպես, որ դրանց ներքևի եզրը գտնվի գետնից ոչ պակաս քան 2.5 մ բարձրության վրա:

25. Հրդեհային ընդունիչ-հսկիչ, կառավարման, ցուցանշող, անխափան էլեկտրասնուցման սարքերն ու այլ մոդուլները պետք է տեղակայվեն պատերի, միջնապատերի և չայրելի նյութից այլ կառուցվածքատարրերի վրա: Երբ մի քանի սարքեր, ֆունկցիոնալ մոդուլներ տեղակայվում են հարևանությամբ, դրանք պետք է տեղադրվեն ՏՓ-

ի համաձայն: Եթե պահանջվող տվյալները նշված չեն ՏՓ-ում, ապա դրանց միջև հորիզոնական և ուղղահայաց հեռավորությունները պետք է լինեն առնվազն 50 մմ:

26. Հրդեհային դիտակետը, դրա առկայության դեպքում, պետք է տեղակայվի օբյեկտի 1-ին կամ կիսանկուղային հարկում և ունենա հետևյալ բնութագրերը.

1) մուտքի դռան հեռավորությունը մինչև օբյեկտից ելքը՝ ոչ ավելի քան 25 մ,

2) մակերեսը՝ ոչ պակաս քան 15 մ²,

3) ջերմասիճանը՝ +18...+25°C մինչև 80% խոնավության դեպքում,

4) բնական (ոչ պակաս քան 100 լյուքս), արհեստական (ոչ պակաս քան 150 լյուքս), և վթարային (ոչ պակաս քան 50 լյուքս) լուսավորության առկայություն,

5) վթարային լուսավորության ինքնաշխատ միացում հիմնական լուսավորության խափանման դեպքում,

6) բնական և արհեստական օդափոխության առկայություն,

7) հեռախոսային և այլ կապի միջոցներ,

8) բացի հերմետիկ էլեկտրական մարտկոցներից պետք է բացառվի այլ տիպի մարտկոցների առկայությունը:

27. Հրդեհային դիտակետը կարող է տեղակայվել նաև նմանատիպ այլ սենքերում, օրինակ կարգավարական կամ այլ ճարտարագիտական համակարգերի հսկման սենքում, պայմանով, որ ապահովվեն հրդեհային դիտակետին ներկայացվող բոլոր պահանջները:

28. ՀԱՎՀ-ի շլեյֆների, ինչպես նաև օբյեկտի ճարտարագիտական համակարգերին ղեկավարման ազդանշանների փոխանցման կապի գծերի աշխատունակությունը պետք է հսկվի ինքնաշխատ կերպով ՀԱՎՀ-ի սարքերի կողմից շուրջօրյա գործելակարգով:

29. Կեղծ առաստաղների վերևում մալուխների անցկացման դեպքում դրանք պետք է ամրացվեն պատերին և/կամ հիմնական առաստաղին ու ըստ անհրաժեշտության իջեցվեն կեղծ առաստաղ: Չի թույլատրվում մալուխները փռել կեղծ առաստաղի մակերեսին:

30. Հրդեհային ընդունիչ-հսկիչ սարքերում անհրաժեշտ է նախատեսել մուտքային շլեյֆների ու հասցեների պաշար ոչ պակաս քան 20%՝ հետագայում հատակագծային փոփոխությունների դեպքում լրացուցիչ սարքերի միացման համար (եթե տեխնիկական առաջադրանքում այլ բան նախատեսված չէ), և 100 %՝ եթե հատակագիծը վերջնական չէ և սենքերում հնարավոր են կեղծ առաստաղների և հատակների առկայություն:

31. ՀԱՎՀ-ը չպետք է իրականացնեն հակահրդեհային պաշտպանության հետ

չկապված այլ գործառույթներ, բացառությամբ ընդհանուր կատարողական սարքեր պահանջող ներդրյալ գործառույթների.

- 1) արտակարգ իրավիճակներին և քաղաքացիական պաշտպանությանը վերաբերվող հայտարարություններ,
- 2) ֆոնային երաժշտություն, գովազդային և տեղեկատվական հայտարարություններ,
- 3) օբյեկտի ջրամատակարարում,
- 4) օբյեկտի բնական և ընդհանուր օդափոխություն:

32. Կետ 31-ի պահանջը չի տարածվում անհատական բնակելի տներում, բազմաբնակարան կամ բազմաֆունկցիոնալ շենքերում գտնվող, սեփականության իրավունքով այլ անձանց պատկանող բնակարաններում և սույն նորմերի Աղյուսակ 1-3-ի համաձայն մինչև 150 մ² մակերեսով առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների տարածքներում տեղակայված համակարգերի վրա, որոնք կարող են լինել նշված օբյեկտներում տեղակայված անվտանգության մեկ ընդհանուր համակարգի ենթահամակարգերից մեկը: Բայց նույնիսկ այդ դեպքերում դրանք պետք է հրդեհային իրավիճակի հսկողությունն իրականացնեն շուքօրյա գործելակարգով և ապահովեն իրավիճակի մասին ազդանշանների փոխանցումը շենքերի հրդեհի ազդանշանման ընդհանուր համակարգերին:

2. ՀԱԿԱՐԴԵՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ. ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ

2.1. ՀՐԴԵՀԻ ԱԶԴԱՆՇԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

2.1.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

33. Օբյեկտները ՀԱՀ-երով պետք է սարքավորել ըստ Աղյուսակներ 1, 2 և 3-ի պահանջների.

34. Աղյուսակ 1-3 ում.

- 1) տարածքի մակերեսը և հարկայնությունը որոշվում են ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03-2020 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերի,
- 2) սենքերի պայթյունահրդեհային վտանգավորության կարգերը որոշվում են ըստ սույն շինարարական նորմերի 4-րդ բաժնի,
- 3) մեկ հարկանի առանձնացված, դեպի դուրս անմիջական ելքով ավտոտնակներով

ավտոկայանատեղիներում թույլատրվում է չտեղակայել ՀԱՀ, եթե յուրաքանչյուր

4) ավտոտնակում կայանում է միայն 1 ավտոմեքենա,

5) անհասցե համակարգը թույլատրվում է փոխարինել հասցեային համակարգով առանց սահմանափակումների, իսկ հասցեայինը անհասցեով՝ միայն մեկ հասցեային ազդասարքը մի շլեյֆում 2-ից ոչ պակաս անհասցե ազդասարքերով փոխարինելու պայմանով,

6) հասցեային համակարգում թույլատրվում է կիրառել 10%-ից ոչ ավելի քանակով անհսցե ազդասարքեր, դրանք միացնելով հասցեային կետի միջոցով՝ մեկ հասցեային կետին 2-ից ոչ ավելի անհասցե ազդասարք սկզբունքով:

Աղյուսակ 1. Անհատական և հասարակական օբյեկտները հրդեհի ազդանշանման համակարգերով սարքավորման պահանջները

Հ/Հ	Օբյեկտի անվանումը, խումբը	Հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգը
1. Բնակելի նշանակության շենքեր և սենքեր		
1)	Անհատական բնակելի տներ՝ անկախ մակերեսից	Միջանցքներում՝ ծխային, խոհանոցներում՝ ջերմային հրդեհի ինքնավար ազդասարքեր:
2)	Բազմաբնակարան կամ բազմաֆունկցիոնալ շենքերի բնակարաններ,	Միջանցքներում՝ ծխային, խոհանոցներում՝ ջերմային ազդասարքեր՝ միացված շենքի ընդհանուր համակարգին: Շենքում անհասցե համակարգի դեպքում՝ որպես առանձին շլեյֆ (նկար 3), հասցեայինի դեպքում՝ հասցեային կետի (նկար 4) կամ մեկուսիչի միջոցով (նկար 5): Բնակարաններում առանձին ՀԱՀ-երի առկայության դեպքում՝ իրավիճակի մասին ազդանշանների փոխանցում շենքի ընդհանուր համակարգին (նկար 6):

3)	Բազմաբնակարան բնակելի շենք	Ընդհանուր միջանցքներում ծխային ազդասարքեր: Մեկ մուտքով 1-3 հարկ՝ անհասցե, 4 և ավելի հարկ՝ հասցեային: Երկու և ավելի մուտքերով, անկախ հարկայնությունից՝ հասցեային:
4)	Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքեր	Տես սույն Աղյուսակի 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը

2. Հասարակական նշանակության շենքեր և սենքեր

1)	Բազմաֆունկցիոնալ շենքերում հասարակական նշանակության տարածքներ (այդ թվում վարձակալության տրամադրված)	Ծխային և ջերմային (խոհանոցային և նմանատիպ այլ տաք հատվածներում) ազդասարքեր՝ միացված ընդհանուր շենքի համակարգին: Շենքում անհասցե համակարգի դեպքում՝ որպես առանձին շլեյֆ (նկար 3): Հասցեայինի դեպքում՝ հասցեային կետի (նկար 4) կամ մեկուսիչի միջոցով (նկար 5): Տարածքներում առանձին ՀԱՀ-երի առկայության դեպքում՝ իրավիճակի մասին ազդանշանների փոխանցում շենքի ընդհանուր համակարգին (նկար 6):
2)	Հյուրանոցներ, հանրակացարաններ բնակարանային տիպի	Տես սույն աղյուսակի 1-ին կետի 2-րդ ենթակետը
3)	Հանգստյան տներ, հանգստի և զբոսաշրջային բազաներ, երիտասարդական ճամբարներ, մոթելներ, քեմփինգներ և	1-2 հարկանի կամ մինչև 1500 մ ² - անհասցե, 2 հարկից կամ 1500մ ² ավելի - հասցեային


	մարդկանց ժամանակավոր բնակության այլ նմանատիպ կացարաններ	
4)	Նախադպրոցական հաստատություններ՝ առանձին կամ շենքերում տեղակայված	Մինչև 800 մ ² - անհասցե, 800 մ ² և ավելի - հասցեային
5)	Մանկական խաղասրահներ (բացի նախադպրոցական հաստատություններում գտնվողների), Գ2-Գ4 խմբերի այրելիությամբ նյութերի կիրառմամբ	Հասցեային. բուն խաղասենյակներում ջերմային, միջանցքներում՝ ծխային ազդասարքեր
6)	Դպրոցական ճամբարներ և նման այլ մանկական օբյեկտներ գիշերակացով	Մինչև 800 մ ² -անհասցե, 800 մ ² և ավելի – հասցեային
7)	Դպրոցների շենքեր (տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական)	Մինչև 1000 մ ² – անհասցե, 1000 մ ² և ավելի – հասցեային
8)	Նախնական մասնագիտական ուսումնարաններ, մասնագիտական, լրացուցիչ կրթության (այդ թվում՝ արտադպրոցական), բարձրագույն ուսումնական հաստատություններ	Մինչև 1500 մ ² - անհասցե, 1500 մ ² և ավելի – հասցեային
9)	Հիվանդանոցներ, ծննդատներ, հոսպիտալներ, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ	Մինչև 800 մ ² – անհասցե, Ավելի 800 մ ² - հասցեային
10)	Պոլիկլինիկաներ, առողջարաններ, պրոֆիլակտորիաներ, վերականգնողական ախտորոշման կենտրոններ	Մինչև 1500 մ ² - անհասցե, 1500 մ ² և ավելի – հասցեային
11)	Ամբուլատորիաներ, շտապ բժշկական օգնության կայաններ, կաթնային խոհանոցներ, դեղատներ,	Անհասցե

12)	Գիտական, գիտահետազոտական, կոնստրուկտորական, նախագծային գործունեություն ծավալող կազմակերպություններ	Մինչև 1500 մ ² - անհասցե, 1500 մ ² և ավելի – հասցեային
13)	Գրադարաններ, թանգարաններ, ցուցասրահներ, պատկերասրահներ	1-2 հարկանի կամ մինչև 1000 մ ² - անհասցե, 3 հարկից կամ 1000մ ² ավելի – հասցեային
14)	Թատրոններ, կինոթատրոններ, հանգստի կենտրոններ, համերգային և մարզահամերգային դահլիճներ ու համալիրներ, ակումբներ, մշակույթի տներ, կրկեսներ և նման այլ շենքեր,	Հասցեային
15)	Արվեստանոցներ	Անհասցե
16)	Կինո և հեռուստատեսային նկարահանումների ստուդիաներ, ռադիո և հեռուստաընկերությունների շենքեր,	Մինչև 1000 մ ² – անհասցե, 1000 մ ² և ավելի – հասցեային
17)	Լրատվական կենտրոններ, հրատարակչություններ, տպարաններ	1-2 հարկանի կամ մինչև 1500 մ ² - անհասցե, 3 հարկից կամ 1500մ ² ավելի – հասցեային
18)	Բաց մարզադաշտերի (ֆուտբոլի, թենիսի դաշտերի, ձիարշավարանների, լողավազանների, հրաձգարանների, ավտոարշավարանների և այլն), տրիբունաների տակ գտնվող սենքեր՝ սպորտային հանդերձարաններ, վարչական տարածքներ, միջանցքներ և այլ սենքեր	Մինչև 1000 մ ² – անհասցե, 1000 մ ² և ավելի – հասցեային
19)	Սպորտային նշանակության փակ շենքեր՝ մարզադահլիճներ, դրանց հանդերձարաններ, վարչական տարածքներ, միջանցքներ և այլ սենքեր	Մինչև 800 մ ² – անհասցե, 800 մ ² և ավելի – հասցեային


20)	Գիշերային ակումբներ, ատրակցիոններ և ավտոմատ խաղերի դահլիճներ, խաղատներ	Մինչև 500մ ² - անհասցե, 500մ ² և ավելի - հասցեային
21)	Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, վարչական հիմնարկներ, հասարակական կազմակերպություններ, տարբեր նշանակության գրասենյակներ, բացի հատուկ նշվածներից	Մինչև 3 հարկ կամ մինչև 1500 մ ² - անհասցե, 3 հարկից կամ 1500մ ² ավելի – հասցեային
22)	Կրոնական, պաշտամունքային շենքեր և համալիրներ, բացի առանձին և մեկ սենքից կազմված շենքից	Բնակելի, դահլիճատիպ, պահեստային, պահոցների և այլ օբյեկտները՝ տես սույն Աղյուսակի համապատասխան կետերում
23)	Բանկեր, տարածքային դրամարկղային կենտրոններ, վարկային, ապահովագրա- կան կազմակերպություններ, գրավատներ, փոխանակման կետեր	1-2 հարկանի կամ մինչև 1000 մ ² - անհասցե, 2 հարկից կամ 1000մ ² և ավելի – հասցեային, Պահոցներում առանձին համակարգերի դեպքում՝ իրավիճակի մասին ազդանշանների փոխանցում շենքի ընդհանուր համակարգին:
24)	Բժշկական, գիտական և այլ կազմակեր- պություններում տեղակայված թանկարժեք, հազվագյուտ և/կամ հատուկ սարքավո- րումների սենքեր, գրադարաններում, թան- գարաններում, պատկերասրահներում, ար- խիվներում, հրատարակչություններում և այլ կազմակերպություններում նմուշների, ձեռագրերի, հաշվետվությունների, արխիվ-	Վարչական հատվածներում՝ տես սույն Աղյուսակի 2-րդ կետի 21-րդ ենթակետը: Պահոցներում (սենքերում)՝ առանձին համակարգեր և դրանց իրավիճակի մասին ազդանշանների փոխանցում շենքի ընդհանուր համակարգին:

	ների, քարտացուցակների, ֆոտո, կինո և ձայնային ժապավենների, փաստաթղթերի, նախագծերի, էլեկտրոնային կրիչների, հատուկ արժևորության այլ ոչ նյութական արժեքների պահպանման հատուկ սենքեր (պահոցներ), բանկերի, տարածքային դրամարկղային կենտրոնների, գրավատների, փոխանակման կետերի, կանխիկ դրամի, թանկարժեք մետաղների և քարերի, նյութական այլ արժեքների պահպանման հատուկ սենքեր (պահոցներ), սերվերների, տվյալների կենտրոնների (տվյալների բազաների), չթվարկված այլ նյութական և ոչ նյութական արժեքների պահպանման հատուկ սենքեր (պահոցներ)։	
25)	Առևտրի կենտրոններ, տոնավաճառներ, խանութներ, կրպակներ և տաղավարներ, փակ շուկաներ	1-2 հարկանի կամ մինչև 1500 մ ² - անհասցե, 2 հարկից կամ 1500մ ² ավելի – հասցեային
26)	Խանութներ, առևտրի կրպակներ և տաղավարներ այլ նշանակության շենքերում ներկառուցված (կամ կցակառույց)	500մ ² – անհասցե, 500մ ² և ավելի – հասցեային
27)	Հասարակական սննդի կետեր՝ ռեստորաններ, բարեր, ճաշարաններ, սրճարաններ	1-2 հարկանի կամ մինչև 1000 մ ² - անհասցե, 2 հարկից կամ 1000մ ² ավելի – հասցեային
28)	Հարսանյաց տներ, սգո սրահներ	մինչև 800 մ ² -անհասցե, 800մ ² ավելի – հասցեային
29)	Լուսանկարչատներ, քիմիական մաքրման կետեր, կոշիկի և կարի անհատական	1 հարկանի կամ մինչև 1000 մ ² - անհասցե,


	պատվերների սրահներ, վարսավիրանոցներ, լվացքատներ, ներկատներ	բազմահարկ կամ 1000 մ ² ավելի – հասցեային
30)	Բաղնիքներ, սաունաներ	Հանդերձարաններում – տես սույն Աղյուսակի 2-րդ կետի 19-րդ ենթակետը: Սաունաների շոգեխցերում անկախ մակերեսից՝ 150-180°C ջերմային ազդասարքեր:
31)	Դյուրաբոցավառ և այրելի հեղուկների վաճառքի մասնագիտացված առևտրի ձեռնարկությունների շենքեր	1 հարկանի կամ մինչև 500 մ ² – անհասցե, բազմահարկ կամ 500 մ ² ավելի – հասցեային
32)	Շարժական տնակներ մարդկանց ժամանակավոր բնակության կամ աշխատանքի կազմակերպման համար (շինարարական կենցաղային վագոնիկներ)	Ինքնավար ազդասարքերով
33)	Հասարակական նշանակության այլ շենքեր և սենքեր	1-2 հարկանի կամ մինչև 1500 մ ² – անհասցե, 2 հարկից կամ 1500մ ² ավելի – հասցեային: Շենքի բոլոր տարածքներում՝ ծխային, խոհանոցներում կամ նման տաք տարածքներում՝ ջերմային ազդասարքեր: Սեփականության կամ վարձակալության իրավունքով տրամադրված տարածքներում առանձին ՀԱՀ-երի առկայության դեպքում՝ իրավիճակի մասին շենքի ընդհանուր համակարգին ազդանշանների փոխանցում (նկար 6):




Նկար 3. Բազմաբնակարան շենքի հրդեհի ազդանշանման անհասցե համակարգին բնակարանների հրդեհի անհասցե ազդասարքերի համակցումը որպես առանձին շլեյֆ



Նկար 4. Բազմաբնակարան շենքի հրդեհի ազդանշանման հասցեային համակարգին բնակարանների հրդեհի անհասցե ազդասարքերի համակցումը հասցեային կետի (<4) միջոցով



Նկար 5. Բազմաբնակարան շենքի հրդեհի ազդանշանման հասցեային համակարգին բնակարանների հրդեհի հասցեային ազդասարքերի համակցումը հասցեային մեկուսիչի (Մ) միջոցով



Նկար 6. Տարածքներում առանձին ՀԱՀ-երից իրավիճակի մասին ազդանշանների փոխանցումը շենքի ընդհանուր համակարգին

Աղյուսակ 2. Արտադրական և պահեստային շենքերը, սենքերը հրդեհի ազդանշանման համակարգերով սարքավորման պահանջները

Հ/Հ	Օբյեկտի անվանումը, խումբը	Հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգը
1.	Գիտահետազոտական, արդյունաբերական կամ գյուղատնտեսական կազմակերպությունների տեխնոլոգիական սարքավորումների շենքեր, արտադրամասեր, արհեստանոցներ, կոմբինատներ, լեռնահանքային արտադրություններ և այլն	1-2 հարկանի կամ մինչև 1500 մ ² -անհասցե, 2 հարկից կամ 1500մ ² և ավելի – հասցեային
2.	Առողջապահական, գիտահետազոտական, արդյունաբերական կամ գյուղատնտեսական կազմակերպություններում. 1) քիմիական նյութերի ժամանակավոր կամ մշտական պահման շենքեր և սենքեր 2) դեղամիջոցների, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների պահոցեր	Մինչև 500 մ ² -անհասցե, 500մ ² և ավելի – հասցեային: Առանձին ՀԱՀ-եր և դրանց իրավիճակի մասին ազդանշանների փոխանցում շենքի ընդհանուր համակարգին:
3.	Հրդեհապայթումավտանգավորության «Ա» և «Բ» կարգերի օբյեկտներ (բացառությամբ հացահատիկի պահպանման և վերամշակման շենքերում և շինություններում գտնվող, սույն Աղյուսակի 11-րդ կետում թվարկված սենքերի), որտեղ շրջանառվում են դյուրաբոցավառ և այրելի հեղուկներ (բացի նավթի և	Մինչև 300 մ ² -անհասցե, 300 մ ² և ավելի- հասցեային: Բոցի արագագործ (կայծից) պայթունանվտանգ ազդարարիչներ:

	նավթամթերքների), այրելի հեղուկացված գազեր, այրելի փոշիներ և թելքեր	
4.	Հրդեհապայթումանվտանգավորության «Ա» կարգի սենքեր, որտեղ շրջանառվում են միայն այրելի գազեր (բացառությամբ հեղուկացված գազերի) այլ հրդեհային բեռի բացակայության դեպքում	Մինչև 500 մ ² – անհասցե, 500 մ ² և ավելի – հասցեային, Բոցի արագագործ (կայծից) պայթումանվտանգ ազդարարիչներ
5.	Հրատեխնիկական արտադրատեսակների, ոչ ռազմական նշանակության զենքերի, զինամթերքի և պայթուցիկ նյութերի, լուցկու, ավկալիական մետաղների արտադրության, մշտական կամ ժամանակավոր պահպանման սենքեր	Մինչև 500 մ ² -անհասցե, 500 մ ² ավելի – հասցեային, Բոցի արագագործ (կայծից) պայթումանվտանգ ազդարարիչներ
6.	Կաուչուկի, ցելուլոզի և դրանից պատրաստված արտադրատեսակների արտադրության և պահպանման սենքեր	Մինչև 1000 մ ² -անհասցե, 1000 մ ² ավելի- հասցեային Բոցի արագագործ (կայծից), ծխային և/կամ ջերմային կետային, ձեռքի պայթումանվտանգ ազդարարիչներ
7.	Բրդի, մորթու, ցելյուլոզայե և դրանից պատրաստված արտադրատեսակների, 3 կգ/մ ³ -ից փոքր լցման խտությամբ այրելի նյութերի պահման սենքեր	Մինչև 1000 մ ² - անհասցե, 1000 մ ² ավելի - հասցեային
8.	Հրդեհային վտանգավորության Վ1 կարգի (բացառությամբ սույն Աղյուսակի 6-րդ և 7-րդ կետերում նշվածների և հացահատիկի պահպանման և վերամշակման շենքերում տեղակայված) սենքեր.	Մինչև 1000 մ ² - անհասցե, 1000 մ ² ավելի - հասցեային

9.	Հրդեհային վտանգավորության Վ2-Վ3 կարգի (բացառությամբ սույն Աղյուսակի 6-րդ և 7-րդ, 10 - 13-րդ կետերում նշվածների և հացահատիկի պահպանման և վերամշակման շենքերում տեղակայված) սենքեր	Մինչև 1500 մ ² -անհասցե, 1500 մ ² ավելի- հասցեային
10.	Այլումինի փոշուց կախույթների, ռետինե սոսինձների, դյուրաբոցավառ և այրելի հիմքով լաքերի, ներկերի, սոսինձների, մածիկների և տոգորման բաղադրությունների պատրաստման սենքեր, ներկման, սինթետիկ կաուչուկի պոլիմերացման, գազատուրբինային շարժիչներով ճնշակասրահների, նավթի կրակային տաքացուցիչների, հեղուկ վառելիքով աշխատող շարժիչներով գեներատորների սենքեր	Մինչև 500 մ ² -անհասցե, 500 մ ² ավելի- հասցեային, Պայթուցանվտանգ սարքեր
11.	Մխման յուղային տարաներով սենքեր	Մխման տարայի 3 մ ³ ավելի ծավալի դեպքում,
12.	Բարձրավոլտ փորձարկումների սրահներ և սենքեր, այրելի նյութերով էկրանավորված սենքեր	Մինչև 500 մ ² -անհասցե, 500 մ ² ավելի- հասցեային
13.	Հացահատիկի պահպանման և վերամշակման համար շենքեր	Անկախ մակերեսից – հասցեային
14.	Հացաթխման, հացաբուլկեղենի արտադրամասեր	Անկախ մակերեսից – անհասցե
15.	Տեխնոլոգիական գործընթացների ինքնաշխատ կառավարման համակարգերի սարքավորումներ, որոնց խափանումը կհանգեցնի այդ գործընթացների	Մինչև 100 մ ² -անհասցե, 100 մ ² ավելի- հասցեային

	անթույլատրելի կանգառի, ինչպես նաև կարող է վտանգ ներկայացնել մարդկանց համար:	
16.	Հրդեհային անվտանգության «Վ» կարգի պահեստային շենքեր. 1) 1 հարկանի, 5,5 մետր և ավելի բարձրությամբ դարակաշարերով, 2) բազմահարկ, անկախ դարակաշարերի բարձրությունից	Մինչև 3000 մ ² – անհասցե, 3000մ ² և ավելի–հասցեային
17.	5,5 մետր և ավելի բարձրությամբ դարակաշարեր այրելի նյութերի, կամ այրելի նյութերով փաթեթավորված ոչ այրելի նյութերի պահպանման համար	Անկախ մակերեսից – հասցեային
18.	Անտառանյութի տեղափոխման ուղեհարթակներ, փակ սրահներ	Մինչև 100 մ ² -անհասցե, 100 մ ² ավելի- հասցեային
19.	Սառնարանային խցեր մարդկանց հնարավոր ներկայությամբ՝ տեղակայված շենքերում և շինություններում	50 մ ² և ավելի՝ հասցեային

Աղյուսակ 3. Տրանսպորտի և կապի ենթակառուցվածքի օբյեկտները հրդեհի ազդանշանման համակարգերով սարքավորման պահանջները

Հ/Հ	Օբյեկտի անվանումը, խումբը	Հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգը
1.	Տրանսպորտային օբյեկտների վարչական նշանակության շենքեր և սենքեր	Տես Աղյուսակ 1-ի 2-րդ կետի 21-րդ ենթակետը
2.	Ավտոկայաններ, օդանավակայաններ, երկաթուղային կայարաններ	Մինչև 1000 մ ² -անհասցե, 1000 մ ² ավելի- հասցեային
3.	Ձեռքի ծանրոցների պահպանման սենքեր (խցեր)	Անհասցե

4.	Թունելներ երկաթուղային և ավտոճանապարհային	ՀՀՇՆ 32-04-2024 շինարարական նորմերի համաձայն
5.	Ավտոլցավորման և գազալցման կայանների լցավորման աշտարակներ	Անհասցե
6.	Ավտոտեխսպասարկման կայաններ, նորոգման արհեստանոցներ	Անհասցե
7.	Ստորգետնյա և վերգետնյա փակ ավտոկայանատեղիներ, (բացառությամբ անհատական բնակելի տներում)	Մինչև 25 կայանատեղ – անհասցե, 26 և ավելի՝ հասցեային
8.	Մետրոպոլիտենի թունելներ և կայարաններ	ՀՀՇՆ 32-06-2023 շինարարական նորմերի համաձայն
9.	Օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության կառավարման հսկիչ-կարգավարական կետեր	Անհասցե
10.	Օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտի հաղորդումների ավտոմատացված միացումների, հեռու և մոտակա մոտեցման ռադիոկայանների և ռադիոնիշերի սենքեր	Անհասցե՝ հսկիչ-կարգավարական կետերին իրավիճակի մասին ազդանշանների հաղորդումով
11.	Օդային և երկաթուղային տրանսպորտային միջոցների կայանման, դրանց, կամ դրանց առանձին հանգույցների արտադրության կամ նորոգման սենքեր	Մինչև 500 մ ² -անհասցե, 500 մ ² ավելի- հասցեային
12.	Հաղորդիչ և ընդունիչ ռադիոկայաններ, տիեզերական կապի անշարժ, հեռուստատեսային հաղորդիչ և վերահաղորդիչ, հեռախոսային, ռադիոռելեային միջանկյալ կայաններ, հաղորդիչ և ընդունիչ	1 հարկանի կամ մինչև 500 մ ² -անհասցե, 2 հարկից կամ 500մ ² ավելի – հասցեային

	ռադիոկենտրոններ, էլեկտրոնային կապի միացումների հանգուցային կետեր	
13.	Ծանրոցների, նամակների, պարբերական հրատարակչության, ապահովագրական փոստի տեսակավորման, մշակման, պահպանման և առաքման սենքեր	Մինչև 1000 մ ² -անհասցե, 1000 մ ² ավելի- հասցեային

35. ՀԱՀ-երը պետք է նախագծվեն հետևյալ հիմնական գործառույթների իրականացման համար.

- 1) հրդեհի ժամանակին և հավաստի հայտնաբերում,
- 2) հավաստի տվյալների հավաքագրում, մշակում և ճշգրիտ ներկայացում պատասխանատուներին,
- 3) այլ հակահրդեհային և ճարտարագիտական համակարգերի (նրանց առկայության դեպքում) գործարկման համար անհրաժեշտ ազդանշանների ձևավորում:

36. Հրդեհի ժամանակին հայտնաբերումը և հավաստիությունն ապահովվում է.

- 1) ազդասարքերի ճիշտ ընտրությամբ,
- 2) սույն շինարարական նորմերի ու սարքերի ՏՓ-ի պահանջներին համապատասխան դրանց տեղակայմամբ,
- 3) հրդեհի մասին որոշման ընդունման ալգորիթմի ընտրությամբ,
- 4) կեղծ գործարկումների բացառմամբ:

37. Աշխատակազմին ներկայացվող տեղեկությունները ու նաև հակահրդեհային ու ճարտարագիտական համակարգերի գործարկման համար անհրաժեշտ ազդանշանների ձևավորումը պետք է իրականացվեն հրդեհային ընդունիչ-հսկիչ կամ հրդեհային ընդունիչ-հսկիչ և կառավարման սարքերով, որոնց ընտրությունը կախված է կոնկրետ օբյեկտի բնութագրերից, նրա պաշտպանության համար անհրաժեշտ շլեյֆների, հրդեհի ազդանշանման, տեղեկացման, հակաձխային օդափոխության ու հրդեհաշիջման գոտիների քանակներից, այլ համակարգերի գործարկման համար անհրաժեշտ ազդանշանների և հերթապահ աշխատակազմին անհրաժեշտ տեղեկատվության ներկայացման ձևից:

38. Մեկ հասցեային ընդունիչ-հսկիչ սարքին միացվող ազդասարքերի ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 512-ը, իսկ նրանցով հսկվող տարածքի ընդհանուր մակերեսը՝ 12 000 մ²-ը: 12 000 մ²-ից ավելի տարածքը կարող է վերահսկվել միայն ընդհանուր ցանցում

ներառված և սույն նորմերի 28-րդ կետի պահանջներին բավարարող մի քանի ընդունիչ-հսկիչ սարքերի միջոցով:

39. Մեկ անհասցե ընդունիչ-հսկիչ սարքին միացվող ազդասարքերի ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 192-ը, իսկ նրանցով հսկվող տարածքի ընդհանուր մակերեսը՝ 3000 մ²:

40. ՀԱՀ-երի նախագծերի բացատրական մասում պարտադիր պետք է ներկայացվեն.

1) օբյեկտի բնութագիրը հրդեհային վտանգավորության իմաստով,

2) ընդունված լուծումների հիմնավորումը,

3) ընդունիչ-հսկիչ սարքերի, ազդասարքերի և այլ տեխնիկական միջոցների ընտրության հիմնավորումները, դրանց հիմնական տեխնիկական բնութագրերը,

4) պահուստային էլեկտրական սնուցումը էլեկտրական մարտկոցներով ապահովելու դեպքում նրանց անհրաժեշտ ունակության հաշվարկը՝ ելնելով ունակության 50%-ով 24 ժամ հերթապահ, ու ևս 1 ժամ տագնապի գործելակարգերում ՀԱՀ-ի աշխատունակությունը ապահովելու պայմանից,

5) տեղակայման, շահագործման և սպասարկման ընթացքում անհրաժեշտ պահանջ-պահանջները:

41. ՀԱՀ-երի նախագծերի գծագրական մասում ԳՕՍՏ 28130-89-ի պահանջներով պարտադիր պետք է ներկայացվեն.

1) ազդասարքերի ճշգրիտ դիրքերը չափերով՝ պատերից և միմյանց նկատմամբ, յուրաքանչյուրի հսկողության գոտին ըստ դրանց ՏՓ-ի և սույն շինարարական նորմերի՝ թույլ ուրվագծերով՝ հատակագծերում, ինչպես նաև դրանց տեղակայումը կառուցվածքատարրերի վրա,

2) ընդունիչ-հսկիչ սարքերի և նախատեսվող մնացած տեխնիկական միջոցների պայմանական դիրքերը՝ հատակագծերում,

3) հրդեհային դիտակետում և/կամ կարգավարական կայանում սարքերի ճշգրիտ դիրքերը չափերով՝ պատի վրա կամ տարածական:

2.1.2. ՀՐԴԵՀԻ ԱԶԴԱՍԱՐՔԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

42. Հրդեհի ազդանշանման հասցեային կամ անհասցե համակարգերի ընտրությունը պետք է կատարել համաձայն Աղյուսակ 1-3-ի, իսկ սարքավորումները պետք է

համապատասխան են Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգին (ՀՍ ԳՕՍ Ռ 53325-2023, ՀՍ ԳՕՍ Ռ 55149-2023 և ԳՕՍ 34698-2020) կամ, պատվիրատուի պահանջով տեխնիկական առաջադրանքում նշված լինելու դեպքում՝ միջազգային կամ եվրոպական համապատասխան ստանդարտներին, որոնց պահանջները չեն կարող ավելի ցածր լինել ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի պահանջներից:

43. Հրդեհի ազդասարքերի ընտրությունը պետք է կատարել ելնելով պաշտպանվող տարածքում այրելի նյութերի տեսակից, հնարավոր հրդեհի սկզբնական փուլում նրա արգասիքներից գերակշռողի կամ շուտ հայտնաբերվողի տիպից, ինչպես նաև սույն նորմերի 44-65-րդ կետերի պահանջներից:

44. Հրդեհի ջերմային ազդասարքերը՝ կետային, գծային, կամ էլ դրանց համակցությամբ, պետք է կիրառել, երբ հրդեհի սկզբնական փուլում գերակշռող կամ առաջնային գործոն է հանդիսանալու ջերմությունը:

45. Ջերմային ազդասարքի ընտրությունը պետք է կատարել հաշվի առնելով ազդասարքի հսկման գոտում պայմանական նորմալ և առավելագույն նորմալ ջերմաստիճանները:

46. Ազդասարքի հսկման գոտում առավելագույն նորմալ ջերմաստիճանն ընդունվում է հետևյալ դեպքերում առավելագույն ջերմաստիճանը.

1) տեխնոլոգիական նորմալ գործընթացի ժամանակ կամ վթարային իրավիճակում հնարավոր առավելագույն ջերմաստիճանը,

2) արևի ազդեցությամբ պաշտպանվող տարածքի ծածկի տաքացման հնարավոր առավելագույն ջերմաստիճանը:

47. Խորհուրդ չի տրվում կիրառել հրդեհի ջերմային ազդասարքեր այն դեպքերում, երբ հրդեհի հետևանքով ազդասարքերի մոտ ջերմաստիճանը հնարավոր է, որ չհասնի կամ ուշ հասնի դրանց գործարկման ջերմաստիճանին, օրինակ՝ մխացող հրդեհային բեռի ժամանակ, ինչպես նաև այն դեպքերում, երբ ազդասարքի հսկման գոտում հնարավոր են հրդեհի հետ չկապված ջերմաստիճանների կտրուկ տատանումներ:

48. Հրդեհի գծային ջերմային ազդասարքերը հնարավորության դեպքում պետք է տեղակայել հրդեհի բեռնվածքի հետ անմիջական շփմամբ:

49. Հրդեհի ծխային ազդասարքերը պետք է կիրառել այն դեպքերում, երբ նրանց

ազդեցության գոտում հրդեհի սկզբնական փուլերն ուղեկցվում են առավելապես ծխի անջատմամբ: Ընդ որում պետք է հաշվի առնել այսպես կոչված «սպիտակ» կամ «սև» ծխի առաջացումը:

50. Մեծամասամբ հրդեհների ժամանակ թղթի, կտորի, փայտի այրման ժամանակ անջատվում է բաց գույնի «սպիտակ» ծուխ, և այդ դեպքերում պետք է կիրառել ծխի կետային, գծային օպտիկաէլեկտրոնային կամ ասպիրացիոն ազդասարքեր:

51. «Սև» ծուխն առաջանում է առավելապես նավթամթերքների, ռետինատեխնիկական իրերի այրման ժամանակ, և նրա հայտնաբերման համար անհրաժեշտ է կիրառել ծխի կետային իոնիզացիոն, էլեկտրաինդուկցիոն, գծային, կամ ասպիրացիոն ազդասարքեր:

52. Իոնիզացիոն և էլեկտրաինդուկցիոն ազդասարքերի կիրառումը թույլատրվում է միայն մարդկանց ոչ մշտական ներկայությամբ տարածքներում՝ օրինակ պահեստներում, արտադրամասերում:

53. Բոցի ազդասարքերի, հատկապես կայծի նկատմամբ զգայունների կիրառումը նպատակահարմար է այն տարածքներում, որտեղ հրդեհի սկզբնական փուլում առավել հնարավոր է բաց կրակի կամ գերտաքացած (600°C և ավելի) մակերեսների առաջանալը, ինչպես օրինակ այրելի և դյուրավառ հեղուկների, գազերի, մետաղների այրումը:

54. Հրատեխնիկական և պայթուցիկ նյութերով սենքերի պաշտպանության համար պետք է կիրառել հատկապես կայծի նկատմամբ զգայուն, պայթյունանվտանգ բոցի ազդասարքեր:

55. Հրդեհի գազային ազդասարքերը հարկավոր է կիրառել, երբ հրդեհի սկզբնական փուլը բնութագրվում է առավելապես գազային արգասիքների առաջացմամբ: Գազային ազդասարքի տիպը պետք է ընտրել ելնելով պաշտպանվող սենքում հնարավոր հրդեհի ժամանակ առաջացող գազային արգասիքներում գերակշռող գազից: Ելնելով այն հանգամանքից, որ օրգանական միացությունները հանդիսանում են ամենատարածված հրդեհային բեռը, առավելապես նապատակահարմար է ածխախնի մոնօքսիդի (CO) նկատմամբ զգայուն գազային ազդասարքերի կիրառումը: Այս ազդասարքերի կիրառումը խորհուրդ չի տրվում այրելի և դյուրավառ, ինչպես նաև պոլիմերային նյութերի այրման դեպքում:

56. Տեսապատկերով հրդեհի հայտնաբերման ազդասարքերը կիրառվում են այն դեպքերում, երբ հսկողության գոտում հրդեհի սկզբնական փուլն ուղեկցվում է բաց կրակով

կամ ծխի առաջացմամբ այնպես, ինչպես բոցի կամ ծխի այլ ազդասարքերի դեպքում, ինչպես նաև բաց կամ մեծ մակերեսով տարածքների հսկման դեպքերում:

57. Այն դեպքերում, երբ հրդեհի հիմնական արգասիքը դժվար կամ անհնար է որոշել, ինչպես նաև երբ մի արգասիքը կարող է արգելափակել մյուս արգասիքի հայտնաբերմամբ աշխատող ազդասարքին (օրինակ՝ ծուխը ուլտրամանուշակագույն ճառագայթմամբ բոցի ազդասարքին), խորհուրդ է տրվում միաժամանակ կիրառել այդ արգասիքների նկատմամբ տարբեր ազդասարքեր (օրինակ՝ ծխային և բոցի), կամ մեկ համակցված ազդասարք (օրինակ՝ ծխային և ջերմային) ըստ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի (ՀՍ ԳՕՍ Ռ 57552-2023):

58. Հրդեհի ձեռքի ազդասարքերը կիրառվում են մարդկանց կողմից ակնհայտ հրդեհի հայտնաբերման դեպքում, ինքնաշխատ ազդասարքերից անկախ, ձեռքով հրդեհային տագնապ ազդարարելու համար:

59. ՀԱՀ-երում պետք է կիրառվեն միայն նվազագույնը 2 գործելակարգերի՝ հերթապահ և տագնապի ցուցիչով ինքնաշխատ ազդասարքեր: Գործելակարգի ցուցիչը պետք է լինի տեսողական՝ ներկառուցված կամ արտաքին: Պայթյունավտանգ միջավայրերում սույն պահանջը պարտադիր չէ:

60. Հրդեհի ինքնավար ազդասարքերը տագնապի տեսողական ցուցիչից բացի պետք է ապահովեն նաև ձայնային ազդանշան:

61. Փակ հատվածամասերում՝ կեղծ առաստաղներից վեր, կեղծ հատակների տակ, տեխնոլոգիական սարքավորանքի, օդատարների մեջ և այլն, տեղակայվող ազդասարքերը պետք է կամ միացվեն առանձին շլեյֆի, կամ ունենան բաց տարածքում տեսանելի արտաքին լուսային ցուցիչ, կամ էլ լինեն հասցեային:

62. Ասպիրացիոն ազդասարքերի օդահավաք խողովակները փակ տարածքներում տեղակայվելու դեպքում այդ տարածքները պետք է հսկվեն ազդասարքերի առանձին մուտքով, իսկ մեկ մուտքանի ասպիրացիոն ազդասարքերի կիրառման դեպքում՝ առանձին ազդասարքերով:

63. Բազմաբնակարան և բազմաֆունկցիոնալ շենքերում բնակարանների նախամուտքերում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ բնակարանի ներսում, մուտքի դռնից 1 մ-ից ոչ հեռու, պետք է տեղակայվեն ծխային, իսկ խոհանոցում կամ խոհանոցային

հատվածում՝ սալօջախից/ներից 1,5 մ ոչ մոտիկ հրդեհի ջերմային ազդասարքեր: Այդ շենքերի վերելակների դիմացի ու միջբնակարանային միջանցքներում պետք է տեղակայվեն հրդեհի ծխային և ձեռքի ազդասարքեր:

64. Անհատական բնակելի տներում, անկախ շենքի հարկայնությունից, վերին հարկի միջանցքում պետք է տեղակայել հրդեհի ծխային, իսկ խոհանոցում կամ խոհանոցային հատվածում՝ սալօջախից 1,5 մ ոչ մոտիկ՝ ջերմային ինքնավար ազդասարքեր:

65. Հրդեհային անվտանգության ՆՓ-ով սենքում հրդեհի ինքնավար ազդասարքի պահանջի դեպքում դրանք կարող են փոխարինվել ներկառուցված ազդարարիչներով հրդեհի ինքնաշխատ ազդասարքերով, կամ առանց ներկառուցված ազդարարիչների, եթե այդ սենքում տեղակայվում է տեղեկացման ու տարհանման համակարգի առանձին ազդարարիչ:

2.1.3. ՀՐԴԵՀԻ ԱԶԴԱՆՇԱՆՄԱՆ ԳՈՏԻՆԵՐԸ

66. Հրդեհի բռնկման տեղորոշման, շլեյֆներում անսարքությունների հետևանքները նվազեցնելու ու հրդեհային ընդունիչ-հսկիչ սարքերի միջոցով այլ ճարտարագիտական ու տեխնոլոգիական սարքավորանքներին ազդանշան ուղարկելու համար օբյեկտները կարող են բաժանվել հրդեհի ազդանշանման գոտիների:

67. Գոտիների բաժանումը պետք է կատարվի հաշվի առնելով օբյեկտի չափերը, սույն նորմերով մեկ շլեյֆում կամ մեկ հասցեային օղակում հրդեհի ազդասարքերի առավելագույն թույլատրելի քանակը, ինչպես նաև հակահրդեհային պաշտպանության այլ գոտիների (հրդեհաշիջման, տեղեկացման և այլն) կազմակերպման անհրաժեշտությունը:

68. Պաշտպանության գոտիների բացակայության դեպքերում, օրինակ՝ երբ հատակագծային լուծումները վերջնական չեն կամ այդ գոտիները դեռ նախագծված չեն, ՀԱՀ գոտիների ձևավորումը պետք է իրականացնել ձգտելով դրանց առավելագույն քանակությանը:

69. Սույն շինարարական նորմերով ներքոգրյալ սենքերն ու տարածքները շենքի հրդեհի ազդանշանման ընդհանուր համակարգում ընդգրկելու պահանջի դեպքերում պետք է ընդգրկել առանձին գոտիներում:

1) բնակարանները, հյուրանոցային համարները և այն տարածքները, որոնք սեփականության իրավունքով կամ ժամանակավորապես պատկանում են ֆիզիկական կամ

իրավաբանական անձանց,

2) աստիճանավանդակները, մալուխային, վերելակային և աղբատար հորանները ու այլ տարածքները, որոնք ընդգրկում են 2 և ավելի հարկեր,

3) տարհանման (անվտանգության) միջանցքները, դեպի որոնց ելքեր կան տարբեր հրդեհային հատվածամասերից,

4) կեղծ առաստաղներից վեր և կեղծ հատակներից ներքև գտնվող ծավալները:

70. Անհասցե համակարգի դեպքում հրդեհի ազդանշանման գոտին կարող է ձևավորվել միայն մեկից ավելի անհասցե շվեյֆներով:

71. Հրդեհի ազդանշանման գոտիները անկախ հասցեային կամ անհասցե համակարգերի կիրառումից պետք է միաժամանակ բավարարեն ներքոգրյալ պայմաններին.

1) սույն շինարարական նորմերի 10-րդ կետի պահանջին,

2) մեկ գոտու տարածքը չպետք է գերազանցի 750 մ²,

3) մեկ գոտին պետք է վերահսկվի 32-ից ոչ ավելի հրդեհի ազդասարքերով,

4) մեկ գոտում ընդգրկված, մեկ հարկում ու մեկ հրդեհային հատվածամասում գտնվող մեկուսացված և հարակից սենյակների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 5-ը, իսկ մակերեսը՝ 500 մ², ընդ որում մեկուսացված սենյակները պետք է ունենան ելք դեպի ընդհանուր միջանցք, սպասասրահ կամ նախասրահ:

2.1.4. ՀՐԴԵՀԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ

72. Հրդեհի փաստի հաստատումը և հրդեհի ազդարարումը հրդեհային ընդունիչ-հսկիչ սարքերի կողմից պետք է իրականացվի ներքոգրյալ A, B, իսկ հրդեհաշիջման և մարդկանց տարհանման իրականացումը՝ նաև հրդեհային ընդունիչ-հսկիչ և կառավարող սարքերի կողմից՝ C ալգորիթմներով: Միևնույն շենքի տարբեր սենյակներում կարող են կիրառվել տարբեր ալգորիթմներ:

73. A ալգորիթմի դեպքում հրդեհի ազդարարումը կատարվում է մեկ ազդասարքի գործարկման դեպքում, առանց վերահարցման: Այս դեպքում կարող են կիրառվել ցանկացած տիպի հրդեհային ընդունիչ-հսկիչ սարքեր և ազդասարքեր, բայց գերադասելի է ձեռքի ազդասարքերի կիրառումը:

74. B ալգորիթմի դեպքում համակարգում կարող են կիրառվել ցանկացած տիպի հրդե-

հային ընդունիչ-հսկիչ սարքեր և ազդասարքեր՝ պայմանով, որ դրանք ապահովում են հրդեհի ազդարարումը դեպքերի ներքոգրյալ հաջորդականության վերջում.

1) հրդեհի ինքնաշխատ առաջին ազդասարքի գործարկում,

2) հրդեհի ընդունիչ-հսկիչ սարքի, կամ հենց այդ ազդասարքի կողմից ինքնաշխատ կերպով վերահարցում,

3) վերահարցման պահից սկսած 60 վայրկյանի ընթացքում այդ նույն կամ նույն հրդեհային գոտում գտնվող մեկ այլ ազդասարքի գործարկում,

4) «ՀՐԴԵՀ» ազդանշանի ձևավորում:

75. C ալգորիթմի դեպքում հրդեհի ազդարարումը, հրդեհաշիջումը և մարդկանց տարհանումը կատարվում է դեպքերի հետևյալ հաջորդականության վերջում.

1) հրդեհի ինքնաշխատ առաջին ազդասարքի գործարկում,

2) հրդեհային ընդունիչ-հսկիչ սարքի (կամ հենց այդ ազդասարքի) կողմից ինքնաշխատ կերպով վերահարցում,

3) վերահարցման պահից սկսած 60 վայրկյանի ընթացքում այդ նույն, կամ նույն սենքում գտնվող մեկ այլ ազդասարքի գործարկում,

4) «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ազդանշանի ձևավորում,

5) անկախ ժամանակի տևողությունից նույն սենքում գտնվող երկրորդ ազդասարքի գործարկում,

6) «ՀՐԴԵՀ» ազդանշանի ձևավորում,

7) հրամարիչ նյութի թողարկման հապաղման ժամանակի հաշվարկ,

8) հրամարիչ նյութի թողարկում:

76. C ալգորիթմ նախատեսված լինելու, բայց.

1) սենքում գտնվող մեկ կամ մի քանի հասցեային ազդասարքերից անսարքության ազդանշան ստանալու դեպքում թույլատրվում է «ՀՐԴԵՀ» ազդանշանի ձևավորումը այդ նույն

սենքից մեկ աշխատունակ հասցեային ազդասարքի B ալգորիթմով գործարկմամբ,

2) անհասցե ազդասարքերի դեպքում նույն սենքում և մեկ հրդեհային գոտում գտնվող մեկ կամ մի քանի շլեյֆներից անսարքության ազդանշան ստանալիս թույլատրվում է հրդեհի ազդարարումը այդ նույն սենքից այլ աշխատունակ շլեյֆով մեկ անհասցե ազդասարքի B ալգորիթմով գործարկմամբ:

77. A և B ալգորիթմները կարող են օգտագործվել միայն այն հրդեհային գոտիներում, որտեղից չի ձևավորվում ազդանշան հրդեհաշիջման, ինչպես նաև սույն շինարարական նորմերի Աղյուսակ 9-ի համաձայն 4-րդ և 5-րդ տիպի տեղեկացման ու տարհանման համակարգերին:

78. A ալգորիթմով հրդեհային գոտուց հրդեհաշիջման, ինչպես նաև սույն շինարարական նորմերի Աղյուսակ 9-ի համաձայն 4-րդ և 5-րդ տիպի տեղեկացման ու տարհանման, հակահրդեհային ավտոմատիկայի և ճարտարագիտական այլ համակարգերին ազդանշաններ կարող են ձևավորվել, եթե տվյալ այդ հրդեհային գոտում տեղակայված են միայն պատահական սեղմումներից պաշտպանված, կնքված և տեսահսկման համակարգերով վերահսկվող տարածքում տեղակայված հրդեհի ձեռքի ազդասարքեր:

2.1.5. ԿԵՂԾ ԳՈՐԾԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՌՈՒՄԸ

79. Կեղծ գործարկումները բացառվում են հետևյալ միջոցառումների առանձին, կամ դրանց համակցության կիրառմամբ.

1) ազդասարքերի ճիշտ ընտրություն,

2) այնպիսի ազդասարքերի կիրառում, որոնք չեն արձագանքում նորմալ վիճակում շրջապատում առկա, հրդեհի արգասիքներին նման, բայց հրդեհի հետ կապված նմանատիպ ազդակներին՝ փոշուն, գոլորշուն, ջերմաստիճանի կտրուկ տատանմանը (օրինակ՝ հնոցի դուռը բացելիս), բեմական ծխին, արևային լույսին, եռակցման ժամանակ ճառագայթմանը և այն,

3) հրդեհի համակցված ազդասարքերի կիրառում,

4) էկրանացված լարերի, պտտալարերի կամ օպտիկաթելային մալուխների կիրառում,

5) հրդեհի ազդանշանման B կամ C ալգորիթմների կիրառում:

80. Արգելվում է ջերմային ազդասարքերը տեղակայել ջերմության աղբյուրներին (ջերմափոխանակիչներ, նորմալ վիճակում տաք ագրեգատներ), ինչպես նաև դեպի տաք սենքեր բացվող դռների մոտ (խոհանոցներ, ջերմային խցեր, սաունաներ):

81. Գազային ազդասարքերը չպետք է տեղակայել այն սենքերում, որտեղ նորմալ վիճակում առկա է գազի այնպիսի խտություն, որը կարող է գործարկել ազդասարքը, կամ էլ առկա է բաց կրակով սարքավորանք:

82. Հրդեհի ձեռքի ազդասարքերը պետք է ունենան թափանցիկ կափարիչ պատահական սեղմումները բացառելու համար: Առանց կափարիչի ձեռքի ազդասարքերի կիրառումն ազելվում է:

2.1.6. ՀՐԴԵՀԻ ԱԶԴԱՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ

83. A և B ալգորիթմների դեպքում պաշտպանվող սենքը պետք է հսկվի.

1) առնվազն երկու անհասցե ազդասարքերով բայց ոչ պակաս, քան պահանջվում է ազդասարքերի տեխնիկական բնութագրերով և սույն շինարարական նորմերով,

2) մեկ հասցեային ազդասարքով բայց ոչ պակաս, քան պահանջվում է ազդասարքերի տեխնիկական բնութագրերով և սույն շինարարական նորմերով,

84. C ալգորիթմի դեպքում պաշտպանվող սենքը պետք է հսկվի առնվազն երկու ազդասարքերով պայմանով, որ մակերեսի յուրաքանչյուր կետ հսկվի երկու ազդասարքով բայց ոչ պակաս, քան պահանջվում է ազդասարքերի տեխնիկական բնութագրերով և սույն շինարարական նորմերով, և որ դրանք բաշխված լինեն առնվազն 2 ազդանշանման գոտիներում:

85. Ցանկացած ալգորիթմի դեպքում ինքնաշխատ ազդասարքերի հետ միասին, ըստ սույն շինարարական նորմերի պահանջների, կարող են տեղակայվել հրդեհի ձեռքի ազդասարքեր, և այդ դեպքում հրդեհի ազդարարման համար բավական է ձեռքի ազդասարքերից միայն մեկի գործարկումը:

86. Օբյեկտի սեփականատիրոջ հետ համաձայնեցված համակարգի հուսալիությունը բարձրացնելու նպատակով կարող են տեղակայվել սույն նորմերով և ազդասարքերի տեխնիկական բնութագրերով պահանջվող քանակությունից ավելի ազդասարքեր, ինչը նպատակահարմար է հատկապես մուտքի սահմանափակումներով տարածքներում (օրինակ՝ հատուկ գործելակարգով օբյեկտներում, բնակելի շենքերի բնակարաններում):



87. Անհասցե համակարգերի դեպքում մեկ շլեյֆի վրա տեղակայվող ազդասարքերի քանակը չպետք է գերազանցի 16-ը:

88. Հասցեային համակարգի դեպքում մեկ օղակաձև հասցեալարի վրա տեղակայվող հասցեային սարքերի (ազդասարքեր, մեկուսիչներ, հասցեային կետեր և այլն) քանակը չպետք է գերազանցի 256-ը և առնվազն ամեն 16-րդ սարքից հետո պետք է տեղակայվի հասցեալարի մեկուսիչ սարք: Փակուղային հասցեալարի վրա կարող են տեղակայվել

ընդունիչ-հսկիչ սարքի ՏՓ-ով նախատեսված քանակով հասցեային սարքեր, բայց ոչ ավելի քան 16 հասցե, իսկ ճյուղավորումը օղակաձև հասցեալարից պետք է իրականացվի բացառապես հասցեալարի մեկուսիչ սարքի միջոցով:



89. Սենքը համարվում է հրդեհի ազդասարքերով լիովին վերահսկվող, եթե նրա եզրաչափերով պարփակված ամբողջ մակերեսը հորիզոնական հարթության վրա գտնվում է ազդասարքերի հսկողության գոտում:

90. Կետային ազդասարքերի դեպքում հսկողության գոտին շրջանաձև է (նկար 7):



Անկանոն ձևի սենքի պաշտպանությունը

Երկար միջանցքի պաշտպանությունը



Ազդասարքերի շախմատաձև (ձախից) և եռանկյունաձև (աջից) դասավորությունները

Նկար 7. Հրդեհի կետային ազդասարքերի տեղակայումը պաշտպանվող սենքերում

91. Ասպիրացիոն ազդասարքերի դեպքում օդահավաք խողովակի յուրաքանչյուր անցքը հավասարվում է մեկ կետային առանձին ծխային ազդասարքին՝ նրան համապատասխան հսկողության գոտիով, իսկ ազդասարքի ընդհանուր հսկողության գոտին՝ օդահավաք անցքերի հսկողության գոտիների հանրագումարին:

92. Ասպիրացիոն ազդասարքերին 90-րդ կետի պահանջը վերաբերվում է միայն օդահավաք խողովակի յուրաքանչյուր անցքին համաձայն 91-րդ կետի: Մնացած պահանջների՝ հրդեհաշիջման, հրդեհի ազդարարման և տարհանման կառավարման ու այլ համա-

կարգերի գործարկման համար C ալգորիթմով ազդանշան ձևավորելու իմաստով, մեկ ասպիրացիոն ազդասարքը իր օդահավաք խողովակի բոլոր անցքերով միասին ընդունվում է որպես մեկ հրդեհի ազդասարք:

93. Մեկ կետը 2 ազդասարքերով հսկելու պահանջի դեպքում ազդասարքերը պետք է տեղակայել իրարից առավելագույնը 0.25 մ հեռավորության վրա՝ պահպանելով սույն նորմերի պահանջները: Ասպիրացիոն ազդասարքերի դեպքում այս պահանջը տարածվում է տարբեր ազդասարքերի օդահավաք խողովակների անցքերի տեղաբաշխմանը:

94. Գծային ազդասարքերի համար հսկողության գոտի է համարվում հորիզոնական հարթության վրա պաշտպանվող մակերեսի պրոյեկցիան.

1) ջերմային ազդասարքերի դեպքում՝ Աղյուսակ 4-ում բերված 2 շառավիղների լայնությամբ երկայնական հատվածը,

2) ջերմային բազմակետային գծային ազդասարքերի դեպքում՝ Աղյուսակ 4-ի և 90-րդ կետի նմանակմամբ առանձին կետային ազդասարքերի հսկման գոտիների ամբողջությունը,

3) ծխային ազդասարքերի դեպքում՝ հորիզոնական հարթության վրա 110–ից 112-րդ կետերով որոշված միջառանցքային չափին հավասար լայնությամբ, և ըստ տեխնիկական բնութագրի՝ երկարությամբ երկայնական հատվածը:

95. Բոցի և տեսապատկերով հրդեհի հայտնաբերման ազդասարքերի հսկման գոտու մակերեսն ու ձևը որոշվում է կախված դրանց տեխնիկական բնութագրերում նշված դիտարկման անկյունից ու հեռավորությունից: Կայանքների, ագրեգատների և այլ սարքավորումների տեղային հրդեհի ազդանշանման համար այս ազդասարքերի կիրառման դեպքերում սենքերի յուրաքանչյուր կետը հսկող ազդասարքերի քանակի ու տեղակայման նկատմամբ պահանջները չեն գործում:

96. Հրդեհի կետային ազդասարքերը առավելապես պետք է տեղակայել ծածկերի, առանց ծակոտկենության կեղծ առաստաղների և կեղծ հատակների տակ:

97. Հրդեհի կետային ազդասարքերը կարող են տեղակայվել կեղծ առաստաղների մեջ այդ ազդասարքերի համար ՏՓ-ով նախատեսված հատուկ հարմարանքների կիրառմամբ:

98. Հրդեհի կետային ազդասարքերը կարող են տեղակայվել նաև ծակոտկեն կեղծ առաստաղներից վերև, անմիջապես հիմնական ծածկի տակ, եթե միանգամից ապահովվում են հետևյալ պայմանները.

- 1) կեղծ առաստաղի ծակոտկեն հատվածի հորիզոնական պրոյեկցիան պակաս չէ

հսկման գոտու մակերեսի 75 տոկոսից,

2) ամենափոքր անցքի չափը պակաս չէ 10 մմ-ից,

3) անցքերի երկարությունը (կեղծ առաստաղի հաստությունը) չի գերազանցում նվազագույն անցքի տրամագծի եռապատիկը,

4) ապահովված է ազդասարքերի սպասարկման հնարավորությունը:

99. Ձգվող առաստաղների վրա հրդեհի կետային ազդասարքերը տեղակայվում են ծածկին ամրացվող և համապատասխան երկարությամբ կանգնակների օգնությամբ:

100. Անմիջապես ծածկերի տակ ազդասարքերի տեղադրման անհնարինության դեպքում դրանք կարող են.

1) կախվել ճոպաններից՝ ապահովելով ազդասարքերի տեխնիկական պահանջներին համապատասխան կայուն տարածական դիրք,

2) տեղադրվել սյուների՝ պատերի՝ պահպանելով ազդասարքի կենտրոնի հեռավորությունը պատերի միջև անկյունից նվազագույնը 500մմ, իսկ ծածկից առավելագույնը 150մմ,

3) տեղադրվել ճարտարագիտական համակարգերի սարքավորումների վրա այդ սարքավորումների ՏՓ-ով թույլատրելիության դեպքում:

101. Թույլատրվում է ասպիրացիոն ազդասարքերի օդահավաք խողովակների տեղադրումը շինարարական կառուցվածքատարրերի կամ սենքերի հարդարման դետալների մեջ, կեղծ առաստաղից վերև և կեղծ հատակից ներքև, ապահովելով օդի ներքաշումը ազդասարքերի ՏՓ-ով նախատեսված լրացուցիչ օդահավաք մազախողովակներով անմիջապես հսկվող գոտուց և դրանց սպասարկման հնարավորությունը:

102. Ասպիրացիոն ազդասարքի էլեկտրոնային սարքը պետք է տեղակայվի հսկվող սենքի հիմնական ծավալում, որտեղ և նրան է միացվում է օդահավաք խողովակը:

103. Ասպիրացիոն ազդասարքի էլեկտրոնային սարքը պաշտպանվող սենքից դուրս տեղակայելու դեպքում անհրաժեշտ է նմուշառված օդը վերադարձնել պաշտպանվող սենք:

104. Ասպիրացիոն ազդասարքի օդահավաք անցքի նվազագույն հեռավորությունը ծածկից, կեղծ կամ ձգված առաստաղից, կեղծ հատակից ցած չի նորմայավորվում, իսկ առավելագույն հեռավորությունը՝ ոչ ավելի քան 0,9մ:

105. Սատելիտային ազդասարքերը թույլատրվում է տեղակայել դրանց ՏՓ-ով նախատեսված հարմարանքների ու շինվածքների կիրառմամբ, անմիջապես հրդեհաշիջման

խողովակաշարերի վրա այնպես, որ նրանց կողմից հրդեհի հսկման գոտու կենտրոնի և նրանց հետ համակցված հարկադիր գործարկմամբ սպրինկլերի միջև հեռավորությունը չգերազանցի 0.5մ-ը, և ծածկից առավելագույն հեռավորության պահանջին համապատասխան: Ընդ որում պետք է ապահովվի ինչպես դրա անհրաժեշտ տարածական դիրքը, այնպես էլ ապահովությունը հրամարիչ նյութի կաթիլներից ու ցայտերից:

106. Հրդեհի ազդասարքերը տեղակայելիս պետք է բոլոր դեպքերում ապահովվի նրանց սպասարկման և փոխարինման հնարավորությունը:

107. Հրդեհի ջերմային կետային ազդասարքերը պետք է տեղակայվեն համաձայն դրանց տեխնիկական բնութագրերի, 90-րդ կետի պահանջների և Աղյուսակ 4-ի:

Աղյուսակ 4. Հրդեհի ջերմային կետային ազդասարքերի տեղակայումը

Հ/Հ	Հսկվող գոտում սենքի բարձրությունը, մ	Հսկվող գոտու շառավիղը ($\pm 5\%$), մ
1.	Մինչև 3,50 մ	3,55
2.	3,51 – 6,00	3,20
3.	6,01-9,00	2,85

108. Հրդեհի ծխային կետային ազդասարքերը պետք է տեղակայվեն համաձայն դրանց տեխնիկական բնութագրերի, 90-րդ կետի պահանջների և Աղյուսակ 5-ի:

Աղյուսակ 5. Հրդեհի ծխային կետային ազդասարքերի տեղակայումը

Հ/Հ	Հսկվող գոտում սենքի բարձրությունը, մ	Հսկվող գոտու շառավիղը ($\pm 5\%$), մ
1.	Մինչև 3,50 մ	6,40
2.	3,51 – 6,00	6,05
3.	6,01 - 10,0	5,70
4.	10,01 -12,0	5,35

109. Հրդեհի բազմակետային ջերմային գծային ազդասարքերի տեղակայման պահանջները համանման են կետային ազդասարքերին: Դարակաշարերի լրացուցիչ պաշտպանության անհրաժեշտության դեպքում թույլատրվում է լրացուցիչ գծային ազդասարքերի տեղակայումը ամեն շարի վերևում:

110. Հրդեհի ծխային գծային ազդասարքերը թույլատրվում է տեղակայել մինչև 21մ բարձրությամբ սենքերի պաշտպանության համար: Ծածկից 25-600մմ ցածր տեղակայվելու

դեպքում ազդասարքի օպտիկական առանցքների միջև հեռավորությունը պետք է ընդունել ոչ ավելի քան 9մ, իսկ հեռավորությունը պատերից՝ ոչ ավելի քան 4.5մ:

111. Հրդեհի ծխային գծային ազդասարքերը թույլատրվում է տեղակայել ծածկից 600 մմ-ից ավելի ցածր, բայց այդ դեպքում օպտիկական առանցքների միջև հեռավորությունը պետք է ընդունել գետնից նրանց բարձրության 25%, իսկ պատերից հեռավորությունը՝ 12.5%: Բոլոր դեպքերում օպտիկական առանցքների բարձրությունը հրդեհային բեռից պետք է ընդունել ոչ պակաս քան 2.0 մ:

112. Հրդեհի ծխային գծային ազդասարքի ճառագայթիչը և ընդունիչը կամ անդրադարձիչը պետք է տեղակայվեն սենքի շինարարական կոնստրուկցիաների վրա այնպես, որ շահագործման ընթացքում հրդեհի ազդասարքի հայտնաբերման գոտում չհայտնվեն տարբեր օբյեկտներ: Ճառագայթիչի և ընդունիչի կամ անդրադարձիչի միջև հեռավորությունը, ինչպես նաև օպտիկական առանցքների միջև և օպտիկական առանցքների և պատի, շրջապատող առարկաների միջև որոշվում է հրդեհի ազդասարքի տեխնիկական բնութագրով:

113. Շինարարական կոնստրուկցիաները, որոնց վրա տեղակայվում են հրդեհի ծխային գծային ազդասարքի ճառագայթիչը, ընդունիչը կամ անդրադարձիչը, պետք է լինեն կոշտ, առանց թրթռոցի, ապահովեն ազդասարքի օպտիկական կայուն կապը: Արգելվում է այս ազդասարքերի տեղակայումը սենդվիչ-պանելների վրա:

114. Սենքի տարածքը կամ սարքավորանքը հրդեհի բոցի ազդասարքերով հսկելու դեպքում դրանց դիրքը պետք է որոշել ելնելով սարքի տեխնիկական բնութագրերում նշված դիտարկման անկյունից, առավելագույն թույլատրելի հեռավորությունից և զգայունության դասից:

115. Հրդեհի բոցի ազդասարքերից հակահրդեհային համակարգերի գործարկման ազդանշանի ձևավորման հավաստիությունն ապահովելու նպատակով պաշտպանվող հրդեհային գոտի պետք է վերահսկվի տարբեր ուղղություններից դիտարկող և տարբեր շլեյֆներին միացված հրդեհի բոցի 2 ազդասարքերով ու կիրառվի C ալգորիթմը:

116. Տեսապատկերով հրդեհի հայտնաբերման ազդասարքերը պետք է տեղակայել.

- 1) բոցի հայտնաբերմամբ ազդասարքերը (A դասի՝ ըստ ԳՕՍՏ 34698-2020)- հրդեհի բոցի կետային ազդասարքերի նման և նրանց ՏՓ-ին համաձայն,
- 2) ծխի հայտնաբերմամբ, ինչպես նաև համակցված՝ բոցի ու ծխի հայտնաբերմամբ

ազդասարքերը (համապատասխանաբար B և C դասերի՝ ըստ ԳՕՍՍ 34698-2020) - նրանց ՏՓ-ին համաձայն:

117. Հրդեհի ծխի ասպիրացիոն ազդասարքերը պետք է կիրառել բարձր, մեծ մակերեսներով սենքերի պաշտպանության համար՝ ատրիումներ, արտադրամասեր, պահեստներ, առևտրի դահլիճներ, ուղևորասրահներ, սպորտային դահլիճներ, կրկեսներ, ցուցասրահներ, ճեմասրահներ և այլն:

118. Էլեկտրոնային տեխնիկայի մեծ կենտրոնացում ունեցող սենյակներում՝ կոմունիկացիոն, սերվերային, տվյալների կենտրոնի սենքերում խորհուրդ է տրվում տեղակայել A դասից ոչ ցածր ասպիրացիոն ազդասարքեր, ընդ որում օդահավաք անցքերը, ներառյալ մազախողովակների կիրառմամբ, պետք է տեղակայել հնարավորինս մոտիկ այդ սարքավորումներին, կամ անմիջապես նրանց վրա:

119. Հրդեհի ասպիրացիոն ազդասարքերի զգայունության համապատասխանությունը A, B, կամ C դասին օդահավաք խողովակաշարի կոնկրետ ձևի դեպքում որոշվում է ըստ նրա ՏՓ-ի և Աղյուսակ 6-ի:

Աղյուսակ 6. Հրդեհի ասպիրացիոն ազդասարքերի տեղակայումը

Հ/Հ	Զգայունության դասը ըստ ԳՕՍՍ 34698-2020	Հսկվող սենքի առավելագույն բարձրությունը, մ	Մեկ օդահավաք անցքով հսկվող գոտու շառավիղը ($\pm 5\%$), մ
1.	A (գերզգայուն)	30	6.35
2.	B (զգայուն)	18	6.35
3.	C (սովորական)	12	6.35

120. Թույլատրվում է հրդեհի ասպիրացիոն ազդասարքերը կիրառել բարձր դարակաշարերով՝ մինչև 40մ բարձրությամբ պահեստներում, և այդ դեպքում օդահավաք խողովակները պետք է տեղակայել 2 մակարդակներում (պահեստի բարձրությունն ընդունվում է ըստ ծածկի վերին կետի)։

1) A կամ B դասի զգայունության ազդասարքեր՝ դարակաշարքի վերին մասում, ոչ ավելի քան 30 մ բարձրության վրա,

2) A դասի զգայունության ազդասարքեր՝ ոչ ավելի քան 40 մ բարձրության վրա, ծածկի տակ:

121. Հրդեհի գազային ազդասարքերը տեղակայվում են ըստ նրանց ՏՓ-ի և կետային կամ ասպիրացիոն ծխային ազդասարքերի պահանջներով:

122. Հրդեհի ինքնավար ազդասարքերը տեղակայվում են նրանց ՏՓ-ի և կետային ազդասարքերի պահանջներով: Այս ազդասարքերը ցանցային հնարավորություններ ունենալու դեպքում պետք է բնակարանի կամ բնակելի տան սահմաններում համատեղվեն մեկ ցանցում:

123. Հրդեհի ձեռքի ազդասարքերը պետք է տեղակայել օբյեկտից տարիանման ճանապարհների ու ելքերի մոտ, ճեմասրահներում, միջանցքներում:

124. Հրդեհի ձեռքի ազդասարքերը չպետք է տեղակայել աստիճանավանդակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք գտնվում են հրդեհի ազդանշանման այնպիսի գոտում, որից գործարկվում են հակահրդեհային ավտոմատիկայի և ճարտարագիտական համակարգեր (տես նաև 78-րդ և 82-րդ կետերը):

125. ՀԱՀ-ի նախագծման ժամանակ օբյեկտի հատակագիծը ավարտական չլինելու կամ փոփոխման հնարավորության դեպքում պետք է նախատեսել հեռավորություն օբյեկտի ցանկացած կետից մինչև մոտակա հրդեհի ձեռքի ազդասարքը ուղիղ գծով ոչ ավելի քան 30մ:

126. Օբյեկտի հատակագծի վերջնական տարբերակի դեպքում հրդեհի ձեռքի ազդասարքերի հեռավորությունները պետք է նախատեսել.

- 1) ոչ ավելի քան 0,75 մ՝ տարբեր առարկաներից, կահույքից, սարքավորումներից,
- 2) ոչ պակաս քան 45 մ՝ իրարից՝ օբյեկտի ներսում,
- 3) ոչ պակաս քան 100 մ՝ իրարից՝ օբյեկտի դրսում,
- 4) ոչ պակաս քան 30 մ՝ մինչև ցանկացած սենքից ելքը:

127. Հրդեհի ձեռքի ազդասարքերը տեղակայվում են պատերի, սյուների վրա՝ հատակի մակարդակից 1.5+/- 0,1 մ բարձրության վրա, 50 ք-ից ոչ պակաս լուսավորված տեղում:

128. Ներկառուցված հրդեհի ձեռքի ազդասարքերը պետք է ընդհանուր մակերեսից դուրս լինեն առնվազն 15 մմ այնպես, որ ապահովվի դրանց սպասարկումը:

129. Հրդեհի սատելիտային ազդասարքի հեռավորությունը իրեն ամրակցված ոռոգիչից հորիզոնական ուղղությամբ ոչ ավելի քան 0,5մ, ուղղաձիգ ուղղությամբ չի նորմայավորվում:

130. Մագնիսով ղեկավարվող հպակի փոխարկումով հրդեհի ձեռքի ազդասարքերը

պետք է տեղակայել էլեկտրամագնիսներից, հաստատուն մագնիսներից և այլ սարքվածքներից հեռու տեղերում, բացառելու համար նրանց ազդեցության հետևանքով ազդասարքի ինքնակամ գործարկումը:

131. Հրդեհի էլեկտրահնդուկցիոն ազդասարքերը տեղակայվում են կետային ծխային ազդասարքերի նման և կիրառվում են առավելապես .

1) էլեկտրոնային տեխնիկայով հագեցած սենքերի՝ սերվերային, ԱՀԿ-երի, տվյալների մշակման և այլ սենքերի, 1 մ³ -ից ոչ ավելի ծավալով, առանց միջնապատերի և հարկադիր օդափոխության էլեկտրատեխնիկական պահարանների հրդեհային պաշտպանության համար,

2) պահեստներում, արտադրամասերում «սև» ծխի հայտնաբերման համար:

132. Հրդեհի մեկ հսկման գոտում տարբեր տիպի ազդասարքերի կիրառման դեպքում դրանցից յուրաքանչյուրը տեղակայվում է ըստ իր տիպի պահանջների:

133. Հրդեհի համակցված ազդասարքերի կիրառման դեպքում դրանք տեղակայվում են հսկման գոտում հնարավոր հրդեհի գերակշռող արգասիքներին համապատասխան ազդասարքին ներկայացվող պահանջներով և հաշվառվում են որպես մեկ ազդասարք:

134. Հրդեհի ազդասարքերի մոտ օդային հոսքի 1,0մ/վրկ-ից պակաս արագությունների դեպքում հրդեհի ծխային և ջերմային կետային ազդասարքերը կարելի է տեղակայել օդափոխության արտաձման անցքից 0,5մ ոչ պակաս հեռավորության վրա:

135. Օդային հոսքի 1,0մ/վրկ-ից ավելի արագությունների դեպքում հրդեհի ծխային և ջերմային կետային ազդասարքերը պետք է տեղակայվեն.

1) օդափոխության արտաձման անցքից 1,0մ-ից հեռու՝ ծխային և ջերմային ազդասարքեր,

2) օդափոխության համակարգի արտաձման խողովակի ներսում՝ հատուկ տեղակայման հարմարանքների կիրառմամբ՝ ծխային ազդասարքեր,

3) օդափոխության համակարգի արտաձման խողովակի վրա՝ նրանց ՏՓ-ին համապատասխան խողովակի ներսում տեղակայվող և այնտեղից ազդասարքին օդի նմուշառում ապահովող խողովակների միջոցով՝ ծխային ազդասարքեր:

136. Հրդեհի ջերմային և ծխային կետային ազդասարքերի տեղակայումը օդափոխության ներաձման անցքերին 1,5 մ-ից մոտ արգելվում է:

137. Հրդեհի ասպիրացիոն ազդասարքերի դեպքում դրանց օդահավաք անցքերի

հեռավորությունը օդափոխության արտաձման անցքերից որոշվում է նրանց տեխնիկական բնութագրերում նշված օդային հոսքերի թույլատրելի արագություններով:

138. Օդային հոսանքների թույլատրելի արագությունների դեպքում հրդեհի ասպիրացիոն ազդասարքերի օդահավաք անցքերը թույլատրվում է տեղակայել.

1) սենքից, սարքավորանքից օդափոխության արտաձման անցքերի վրա,

2) մեկուսացված «տաք» միջանցքների ծածկերի տակ,

3) օդորակման կայանքների, այդ թվում՝ միջպահարանային, օդի մուտքերի վրա: Այս դեպքերում ցանցերի ամեն 0,4մ² համար պետք է նախատեսել մեկ օդահավաք անցք:

139. Հրդեհի գազային ազդասարքերի հեռավորությունը օդատարների անցքերից և լուսատուներից որոշվում է նրանց ՏՓ-ով:

140. Հրդեհի բոցի ազդասարքերի հեռավորությունը օդատարների անցքերից չի նորմալավորվում, իսկ լուսատուներից՝ որոշվում է նրանց ՏՓ-ով:

141. Մեխանիկական վնասվածքի վտանգի դեպքերում պետք է նախատեսել հրդեհի ազդասարքերի աշխատունակությունը ապահովող, հրդեհի հայտնաբերման արդյունավետությունը չնվազեցնող և ազդասարքի ՏՓ-ով նախատեսված պաշտպանիչ սարքվածք:

142. Թեք առաստաղի ամենավերևում հրդեհի ազդասարքի տեղակայման դեպքում Աղյուսակ 4-5-ում բերված հրդեհային գոտու շառավիղները թույլատրվում է ավելացնել 1% ամեն 1⁰ թեքության համար, բայց ոչ ավելի քան 25%: Ձևավոր առաստաղի դեպքում հաշվի է առնվում միջին թեքությունը:

143. Հրդեհի ազդասարքի և ծխի ու ջերմության հոսքերին խոչնդոտող օբյեկտների՝ հեծանների, ելուստների, ճարտարագիտական սարքավորանքի, լուսատուների և այլն, միջև հեռավորությունները պետք է չափել ազդասարքի կենտրոնից մինչև խոչնդոտող օբյեկտի մոտակա կետը ամենակարճ ճանապարհով, եթե այլ բան նշված չէ:

144. Ծածկից, առաստաղից մինչև 0,25մ չափով կախված շինարարական կառուցվածք-ատարներից կամ ճարտարագիտական սարքավորանքից հրդեհի ազդասարքերի եզրի նվազագույն հեռավորությունը պետք է ընդունել կախվածության չափի կրկնապատիկից ոչ պակաս, բայց ոչ մոտիկ, քան 0.1մ-ը:

145. Ծածկից, առաստաղից 0,25մ-ից ավելի չափով կախված շինարարական կառուցվածքատարներից, ճարտարագիտական սարքավորանքից կամ պատերից ու

միջնապատերից հրդեհի ազդասարքերի եզրի հեռավորությունը պետք է ընդունել ոչ պակաս քան 0,5մ:

146. Առաստաղին գծային հեծանների առկայության դեպքում տարբեր խոռոչներում գտնվող հրդեհի կետային ազդասարքերի հեռավորությունները, ու նաև հեռավորությունը մինչև պատը հեծաններին ուղղահայաց ուղղությամբ պետք է ընդունել ըստ Աղյուսակ 7-ի:

Աղյուսակ 7. Առաստաղին գծային հեծանների առկայության դեպքում հրդեհի կետային ազդասարքերի տեղակայումը

Հ/Հ	Ծածկի H բարձրությունը, մ (կլորացված)	Հեծանի բարձրությունը, մ	Տարբեր խոռոչներում գտնվող հրդեհի կետային ազդասարքերի առավելագույն հեռավորությունը իրարից (պատից) հեծաններին ուղղահայաց ուղղությամբ ($\pm 5\%$), մ	
			Ջերմային	Ծխային
1.	Ցանկացած	0,1H-ից ոչ բարձր	3,80 (1,90)	5,00 (2,50)
2.	3,0 և ցածր	0,1H-ից բարձր	1,50 (0,75)	2,30 (1,15)
3.	4,0		2,0 (1,00)	2,80 (1,40)
4.	5,0		2,30 (1,15)	3,00 (1,50)
5.	6,0 և բարձր		2,50 (1,25)	3,30 (1,65)

147. Առաստաղին գծային հեծանների առկայության դեպքում հրդեհի կետային ազդասարքերը հեծաններին զուգահեռ ուղղությամբ պետք է տեղակայել ըստ Աղյուսակներ 4-ի և 5-ի:

148. Առաստաղին խաչաձև հեծանների առկայության դեպքում հրդեհի կետային ազդասարքերը պետք է տեղակայել ըստ Աղյուսակ 8-ի:

149. Հրդեհի ազդանշանման գոտում L(մ) լայնությամբ կամ տրամագծով տեխնոլոգիական կամ այլ նշանակության հոծ, ներքին հարթությունը առաստաղից 0,4մ-ից ավելի և հատակից 1,3 մ-ից ոչ պակաս հեռավորությամբ սարքավորումների տակ պետք է լրացուցիչ տեղակայել հրդեհի ազդասարք՝ ծխային ($L \geq 2,0$ մ դեպքում) կամ ջերմային ($L \geq 1,0$ մ դեպքում):

Աղյուսակ 8. Առաստաղին խաչաձև հեծանների առկայության դեպքում հրդեհի կետային ազդասարքերի տեղակայումը

Հ/Հ	Ծածկի H բարձրությունը, մ (կլորացված)	Հեծանի h բարձրությունը, մ	Հեռավորությունը մոտակա ծխային (ջերմային) ազդասարքից ($\pm 5\%$), մ	Տեղակայումը հեծանների միջև W լայնության դեպքում	
				W ≤ 4h	W > 4h
1.	Ցանկացած	0,1H-ից ոչ բարձր	Ինչպես հարթ ծածկի դեպքում	Հեծանների ներքին հարթակին	Անմիջապես ծածկին
2.	3,0 և ցածր	0,1H-ից բարձր	4,5 (3,0)		
3.	4,0		5,5 (4,0)		
4.	5,0		6,0 (4,5)		
5.	6,0 և բարձր		6,6 (5,0)		

150. Հրդեհի ազդասարքեր պետք է տեղակայել սենքի նյութեղենի դարսակներով, դարակաշարերով, սարքավորանքով և շինարարական կոնստրուկցիաներով առաջացած յուրաքանչյուր հատվածամասում, որոնց վերին եզրի և առաստաղի միջև հեռավորությունը փոքր է 0,6 մ-ից:

151. 1,7մ-ից պակաս խորություններով կեղծ առաստաղներից վերև ու հատակներից ներքև, ինչպես նաև 3,0մ-ից պակաս լայնությամբ միջանցքներում տեղակայվող հրդեհի կետային ազդասարքերի հսկման գոտու շառավիղը կարելի է մեծացնել 1,5 անգամ:

2.2. ՀՐԴԵՀԻ ՏԵՂԵԿԱՅՄԱՆ ԵՎ ՏԱՐԿԱՆՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

2.2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

152. Հրդեհի դեպքում մարդկանց տեղեկացման և տարհանման կառավարման ձևից, օբյեկտները հրդեհի տեղեկացման գոտիների բաժանումից և այլ բնութագրերից կախված ՀՏՏԿՀ-երը բաժանվում են Աղյուսակ 9- ում նշված 5 կարգերի:

153. Օբյեկտները ՀՏՏԿՀ համակարգերով պետք է սարքավորել ըստ Աղյուսակ 10-ի պահանջների (տես նաև 154-րդ կետը), ԳՕՍՏ 34699-2020-ին համապատասխանող ազդարարիչների կիրառմամբ:

Աղյուսակ 9. Հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման համակարգերը
(+ պահանջվում է, - չի պահանջվում, • - ցանկալի է)

Հ/Հ	Հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման համակարգերի բնութագիրը	ՀՏՏԿՀ-ի տիպը				
		1	2	3	4	5
1.	Տեղեկացման ձևը. 1) շչակային՝ փոփոխական տոնայնությամբ շչակ 2) լուսային՝ կարմիր գույնի թարթող 3) շչակային և տեքստային՝ հատուկ տեքստի հաղորդմամբ ըստ նկար 9-ի և 10-ի	+	+	+		
2.	Տարհանման կառավարման ձևը 1) տեքստային՝ հատուկ տեքստի հաղորդմամբ 2) լուսային՝ ա. ԵԼՔ նշանով լուսատախտակներով բ. տարհանման ելքի ուղղությամբ լուսատախտակներով 3) տեսողական տարհանման ելքի ուղղությամբ նշաններով ա. լույսի արձակմամբ (լյումենեսցենտային) նյութերից բ. լույս չարձակող նյութերից	-	-	-	•	+
	ա. ԵԼՔ նշանով լուսատախտակներով	-	+	+	+	+
	բ. տարհանման ելքի ուղղությամբ լուսատախտակներով	-	-	•	+	+
	3) տեսողական տարհանման ելքի ուղղությամբ նշաններով					
	ա. լույսի արձակմամբ (լյումենեսցենտային) նյութերից	-	-	•	+	+
	բ. լույս չարձակող նյութերից	-	•	+	-	+
3.	Շենքի բաժանումը հրդեհի ազդարարման գոտիների	-	-	•	+	+
4.	Հրդեհային (կարգավարական) կետի և հրդեհային գոտիների միջև խոսակցական կապը	-	-	-	•	+
5.	Հրդեհի ազդարարման յուրաքանչյուր գոտուց տարհանման մեկից ավելի ուղիները	-	-	•	+	+
6.	Հրդեհային (կարգավարական) կետից տարհանման կառավարումը	-	-	-	•	+
7.	Հրդեհի ազդարարման գոտիներում և տարհանման ելքերի մոտ տեսահսկման համակարգի առկայությունը	-	-	-	•	+

154. Աղյուսակ 10-ում.

1) տարածքի մակերեսը և հարկայնությունը որոշվում են ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03-2020 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերի,

2) նախադպրոցական հաստատություններում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում և համայնքային փոքր տներում, սոցիալական բնակարանային ֆոնդի շենքերում ազդարարիչները տեղակայվում են հերթապահների սենյակում, իսկ մարդկանց ֆիզիկական վիճակից ելնելով՝ լսողական և/կամ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար, անկախ ՀՏՏԿՀ-ի տիպից, պետք է լրացուցիչ կիրառվեն նաև զգայական անհատական ազդարարիչներ (լուսային, ձայնային, վիբրացիոն) ըստ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի (ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 55149-2023):

Աղյուսակ 10. Օբյեկտները հրդեհի տեղեկացման և տարահանման կառավարման համակարգերով սարքավորելու պահանջները

Հ/Հ	Օբյեկտի նկարագրությունը	Տարբերակումը և ՀՏՏԿՀ տիպը			Նշումներ
1. Բնակելի նշանակության շենքեր և սենքեր					
1)	Անհատական բնակելի տներ, բազմաբնակարան կամ բազմաֆունկցիոնալ շենքերի բնակարաններ,	1			Անկախ հարկայնությունից և մակերեսից: Ըստ 160-163-րդ կետերի
2)	Բազմաբնակարան բնակելի շենքեր	1-3 հարկ	4-9 հարկ	10 և ավելի հարկեր	
		2	3	4	
3)	Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքեր	Տես սույն Աղյուսակի 1-ին կետի 1) – 2) - ռդ ենթակետերը:			Ըստ 160-163-րդ կետերի

2. Հասարակական նշանակության շենքեր և սենքեր					
1)	Բազմաֆունկցիոնալ շենքերում հասարակական նշանակության տարածքներ (այդ թվում՝ հյուրանոցներ, հանրակացարաններ, վարձակալության տրամադրված այլ տարածքներ)	2			Անկախ հարկանությունից և մակերեսից
2)	Հյուրանոցներ, հանրակացարաններ, հանգստյան տներ, հանգստի բազաներ, երիտասարդական ճամբարներ, զբոսաշրջային բազաներ, մոթելներ, քեմփինգներ և մարդկանց ժամանակավոր այնմանատիպ կացարաններ՝ մինչև 1500 մ ² 1501-4500 մ ² 3) 4500 մ ² -ից ավելի	1-2 հարկ	3-9 հարկ	10 հարկ և ավելի	Ըստ 160-163-րդ կետերի
		2	3	3	
		3	3	4	
		4	4	5	
3)	Նախադպրոցական հաստատությունների շենքեր, կրթական հաստատություններ, ճամբարներ և նման այլ մանկական օբյեկտներ գիշերակացով, մահճակալների քանակը՝ 1) մինչև 50 ներառյալ, 2) 50-ից ավելի	1 հարկ		2 հարկ և ավելի	Ըստ 160-163-րդ կետերի
		2		3	
		3		3	
4)	Մանկական խաղասրահներ (բացի նախադպրոցական	1 հարկ		2 հարկ և ավելի	Ըստ 160-163-րդ կետերի

	հաստատություններում գտնվողների), 1) մինչև 500 մ ² 2) 501-1500մ ² 3) 1501-2500մ ² 4) 2501մ ² և ավելի	2 3 3 4	3 3 4 5	
5)	Դպրոցական ճամբարներ և նման այլ մանկական օբյեկտներ գիշերակացով 1) մինչև 50 ներառյալ, 2) 51-ից ավելի	1 հարկ 2 3	2 հարկ և ավելի 3 3	Ըստ 160-163-րդ կետերի
6)	Դպրոցների շենքեր (տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական) 1) մինչև 1000 մ ² 2) 1001-2000 մ ² 3) 2001 մ ² և ավելի	1 հարկ 2 3 3	2 հարկ և ավելի 3 4 4	
7)	Նախնական մասնագիտական ուսումնարաններ, մասնագիտական, լրացուցիչ կրթության (այդ թվում՝ արտադպրոցական), բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ 1) մինչև 1500 մ ² 2) 1501-2500 մ ² 3) 2500 մ ² և ավելի	1-2 հարկեր 2 3 4	3 հարկ և ավելի 3 4 5	
8)	Հիվանդանոցներ, ծննդատներ, հոսպիտալներ, բնակչության	1 հարկ	2 հարկ 3 հարկ և ավելի	Ըստ 160-163-րդ կետերի

	սոցիալական պաշտպանության հաստատություններ՝ 1) մինչև 800 մ ² 2) 801-2500մ ² 3) 2500 մ ² և ավելի	2 3 4	3 3 4	4 4 5	
9)	Պոլիկլինիկաներ, առողջարաններ, պրոֆիլապտորիաներ, վերականգնողական ախտորոշման կենտրոններ, մեկ օրում հաճախումների քանակը՝ 1) մինչև 50 2) 50 և ավելի	1-2 հարկ 2 3	3 հարկ և ավելի 3 3		Ըստ 160-163-րդ կետերի
10)	Ամբուլատորիաներ, շտապ բժշկական օգնության կայաններ, կաթնային խոհանոցներ, դեղատներ	2			
11)	Գիտական, գիտահետազոտական, կոնստրուկտորական, նախագծային գործունեություն ծավալող կազմակերպություններ՝ 1) մինչև 1500 մ ² 2) 1501-3000 մ ² 3) 3000 մ ² և ավելի	1-2 հարկ 2 3 3	3-5 հարկ 3 3 4	6 հարկ և ավելի 4 4 5	
12)	Գրադարաններ, թանգարաններ, ցուցասրահներ, պատկերասրահներ, մեկ օրում հաճախորդների թիվը՝ 1) մինչև 50	1-2 հարկ 2	3-4 հարկ 3	5 հարկ և ավելի 4	

	2) 51-100	3	3	4	
	3) 101 և ավելի	3	4	5	
13)	Թատրոններ, կինոթատրոններ, հանգստի կենտրոններ, համերգային և մարզահամերգային դահլիճներ ու համալիրներ, ակումբներ, մշակույթի տներ, կրկեսներ և նման այլ շենքեր, նստատեղերի քանակը.	Մինչև 500	501-2000	2001 և ավելի	
		3	4	5	
14)	Արվեստանոցներ	2			
15)	Կինո և հեռուստատեսային նկարահանումների ստուդիաներ, ռադիո և հեռուստաընկերությունների շենքեր, 1) մինչև 1000 մ ² 2) 1000 մ ² և ավելի	1-2 հարկ		3 հարկ և ավելի	
		2	3		
		3	4		
16)	Լրատվական կենտրոններ, հրատարակչություններ, տպարաններ	Մինչև 1000 մ ²		1000 մ ² և ավելի	
17)	Բաց մարզական նշանակության շենքեր, շինություններ՝ սպորտային մարզադաշտեր (ֆուտբոլի, թենիսի դաշտեր, ձիարշավարաններ, լողավազաններ, հրաձգարաններ, ավտոարշավարանների և այլն), հանդերձարաններով և գրասենյակային տարածքներով, նստատեղերի քանակը՝	Մինչև 1000	1001 – 5000	5001 – ից ավելի	
		3	4	5	

18)	Ծածկած մարզական նշանակության շենքեր, շինություններ՝ մարզադահլիճներ, նստատեղերի քանակը՝	Մինչև 100	101 – 500	501 – ից ավելի	
		3	4	5	
19)	Գիշերային ակումբների, ատրակցիոնների և ավտոմատ խաղերի դահլիճներ, խաղատներ	Մինչև 1000 մ ²	1000 մ ² և ավելի		
		2	3		
20)	Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, վարչական հիմնարկներ, հասարակական կազմակերպություններ, տարբեր նշանակության գրասենյակներ, բացի հատուկ նշվածներից՝ 1) մինչև 1500 մ ² 2) 1501-3000 մ ² 3) 3000 մ ² -ից ավելի	1-3 հարկ	4 - 5 հարկ	6 հարկ և ավելի	
		2	3	4	
		2	3	4	
		3	4	5	
21)	Բանկեր, տարածքային դրամարկղային կենտրոններ, վարկային, ապահովագրական կազմակերպություններ, գրավատներ, փոխանակման կետեր. 1) մինչև 1500 մ ² 2) 1501-3000 մ ² 3) 3000 մ ² -ից ավելի	1-3 հարկ	4 - 5 հարկ	6 հարկ և ավելի	
		2	3	4	
		2	3	4	
		3	4	5	
22)	Առևտրի կենտրոններ, տոնավաճառներ, խանութներ, կրպակներ և տաղավարներ, փակ շուկաներ. հրդեհային հատվածամասերի չափերը՝	1 հարկ	2-3 հարկ	4 հարկ և ավելի	

	1) մինչև 500 մ ² 2) 501-3000 մ ² 3) 3000 մ ² և ավելի	2 3 3	3 3 4	4 4 5	
23)	Հասարակական սննդի կետեր՝ ռեստորաններ, բարեր, ճաշարաններ, նստատեղերը՝ 1) մինչև 50 2) 51-200 3) 201 և ավելի	1 հարկ 2 2 3	2-3 հարկ 3 3 4	4 և ավելի 4 4 5	
24)	Բաղնիքներ, սաունաներ	3			
25)	Հասարակական նշանակության այլ շենքեր՝ 1) մինչև 1500 մ ² 2) 1501-4500 մ ² 3) 4500 մ ² -ից ավելի	1-2 հարկ 2 3 4	3-9 հարկ 3 4 5	10 հարկ և ավելի 4 5	
3. Արտադրական, պահեստային, տրանսպորտի և կապի շենքեր և սենքեր					
1)	Գիտահետազոտական, արդյու- նաբերական, գյուղատնտեսա- կան կազմակերպությունների տեխնոլոգիական սարքավորում- ների շենքեր, արտադրամասեր, արհեստանոցներ, կոմբի- նատներ, լեռնահանքային ար- տադրություններ և այլն: Աշխատողների քանակը	Մինչև 100 2	101-200 3	201-և ավելի 4	
2)	Քիմիական նյութերի, դեղամի- ջոցների, ոչ ռազմական նշանա- կության զենքերի, զինամթերքի	3			

	և պայթուցիկ նյութերի պահեստներ				
3)	Ավտոկայաններ, օդանավակայաններ, երկաթուղային կայարաններ 1) մինչև 2500 մ ² 2) 2500 մ ² և ավելի	1 հարկ	2 հարկ և ավելի		
		2	3		
		3	4		
4)	Թունելներ երկաթուղային և ավտոճանապարհային	4			Տես նաև ՀՀՇՆ 32-04-2024 շինարարական նորմերը
5)	Ստորգետնյա և վերգետնյա փակ ավտոկայանատեղիներ, (բացառությամբ անհատական բնակելի տներում)	Մինչև 25	26-100	101 և ավելի	
		2	3	4	
6)	Մետրոպոլիտենի թունելներ և կայարաններ	4			Տես նաև ՀՀՇՆ 32-06-2023 շինարարական նորմը

155. ՀՏՏԿՀ-ի կարգի ընտրությունը կատարվում է նախագծման տեխնիկական առաջադրանքում օբյեկտում մարդկանց հիմնական քանակության, հոգեբանական և ֆիզիկական վիճակի ու հրդեհի ազդարարիչների ազդանշանները ընկալելու ունակության հիման վրա: Միաժամանակ պետք է բացառել խուճապային իրադրության առաջացումը, հրդեհի ազդարարիչների բացասական ազդեցությունը այդ մարդկանց առողջության և կենսապահովման սարքերի աշխատունակության վրա:

156. Բազմաֆունկցիոնալ շենքերի նախագծման ժամանակ ՀՏՏԿՀ-երի կարգը ընտրվում է նրանց կազմում գտնվող օբյեկտների համար պահանջվող ամենաբարձր կարգը:

157. Թույլատրվում է պատվիրատուի ցանկությամբ օբյեկտը սարքավորել պահանջվածից ավելի բարձր կարգի ՀՏՏԿՀ-ով:

158. Հրդեհային և պայթյունահրդեհային վտանգավորության Ա և Բ կարգի այն օբյեկտ-

ներում, որտեղ պետք է տեղակայել 4-5-րդ տիպի ՀՏՏԿՀ, ի լրումն ներսում տեղակայվածի, պետք է տեքստային ազդարարիչներ նախատեսել նաև այդ օբյեկտների դռան մոտ դրսից:

159. 3-5-րդ տիպերի ՀՏՏԿՀ-երի դեպքում թույլատրվում է տեղակայել միայն հրդեհի շչակային և լուսային ազդարարիչներ.

- 1) տեխնիկական հարկերում, ձեղնահարկերում, նկուղներում,
- 2) ավտոկայանատեղիների թեքանցումների տակի փակ սենքերում,
- 3) մարդկանց 10 հոգուց և 2 ժամից ոչ ավելի ներկայությամբ և նմանատիպ տեղերում,
- 4) առանց մշտական աշխատատեղերի մեկ հարկանի և մեկ սենքից բաղկացած

արտադրական և պահեստային սենքերում, պայմանով, որ նրանց գտնվելու ամենահեռու կետից մինչև մոտակա տարհանման ելքը ճանապահի երկարությունը չի գերազանցում 20մ:

160. Այն օբյեկտներում, որտեղ պետք է տեղեկացվեն միայն հերթապահները, ազդարարիչներ պետք է տեղակայվեն ոչ միայն հերթապահների սենյակում, այլ նաև մյուս աշխատողների մշտական կամ ժամանակավոր գտնվելու սենքերում:

161. Հիմնականում լսողական կամ տեսողական սահմանափակումներով մարդկանց ներկայությամբ օբյեկտներում պետք է կիրառել հրդեհի հատուկ ազդարարիչներ՝ համապատասխանաբար սովորականից ավելի պայծառ լուսային թարթող և ամբողջ 200-5000 Հց տիրույթում ավելի բարձր հնչեղությամբ ձայնային, ինչպես նաև ըստ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի (ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 55149-2023) անհատական (օրինակ՝ թրթռային) ազդարարիչներ:

162. Հրդեհի անհատական ազդարարիչների կիրառման դեպքում համակարգը պետք է տեխնիկապես հնարավորություն ունենա ապահովելու հերթապահ անձնակազմի տեղեկացումը բոլորին (ազդանշանի փոխանցումը բոլոր ազդարարիչներին), և տեղեկացման ստացման հաստատումը յուրաքանչյուր ծանուցվողի կողմից:


163. Ազդարարիչների ընտրությունը կատարվում է օբյեկտներում ներկա մարդկանց հոգեբանական և ֆիզիկական վիճակի ու նրանց կողմից հրդեհի ազդարարիչների ազդանշանները ընկալելու ունակության հիման վրա: Միաժամանակ պետք է բացառել խուճապային իրադրության առաջացումը, հրդեհի ազդարարիչների բացասական ազդեցությունը այդ մարդկանց առողջության և կենսապահովման սարքերի աշխատունակության վրա:

164. ՀՏՏԿՀ համակարգերում մարդկանց տեղեկացումը հրդեհի մասին իրականացվում է հրդեհի ազդարարիչներով.


- 1) շշակներով՝ նկար 8 -ում բերված աշխատաձևով շշակային ազդանշանով,
- 2) կարմիր գույնի թարթող լուսային ազդանշանով,
- 3) բարձրախոսներով (տեքստային ազդարարում),
- 4) տարհանման ուղղությունները հուշող լուսատախտակներով,
- 5) վերոգրյալ ձևերի համադրությամբ սարքերով:

165. Շշակային և տեքստային տեղեկացումների համադրման դեպքում ազդարարիչը պետք է միանա հաջարդաբար՝ «շշակ - տեքստ հայերեն - տեքստ հայերեն - շշակ» տարբերակով» (նկար 9):


166. Հյուրանոցներում, հանրակացարաններում, մոթելներում և այլ վայրերում, որտեղ հաճախակի են հյուրընկալվում արտասահմանցիներ, հաղորդագրությունը պետք է կրկնվի նաև օտար (օրինակ անգլերեն և/կամ ռուսերեն) լեզուներով «շշակ-տեքստ հայերեն - տեքստ օտար լեզվով - տեքստ օտար լեզվով - շշակ» տարբերակով (նկար 10):



Նկար 8. Շշակի աշխատաձևը հրդեհի ազդարարման դեպքում



Նկար 9. Շշակի և հայերեն տեքստային ազդարարիչի համատեղ աշխատանքը հրդեհի ազդարարման դեպքում



Նկար 10. Շջակի և հայերեն ու օտար լեզվով տեքստային ազդարարիչի համատեղ աշխատանքը հրդեհի ազդարարման դեպքում

167. 2-5-րդ տիպի ՀՏԿՀ-ի դեպքերում պարտադիր պետք է ապահովվի ինքնաշխատ կերպով՝ լարային կամ անլար եղանակով տագնապի ազդանշանի փոխանցումը հակահրդեհային պահպանության և հրշեջ-փրկարարական ծառայություն:

168. Հրդեհի մասին մարդկանց տեղեկացնելը, օբյեկտներից նրանց անվտանգ տարհանման գործընթացի կառավարումը պետք է իրականացվի հրդեհի տեղեկացման և տարհանման համակարգերի միջոցով հակահրդեհային այլ համակարգերի (հրդեհի ազդանշանման, հրդեհաշիջման, հակաձխային պաշտպանության) և միջոցառումների (անվտանգ գոտիների, տարհանման ուղիների, ներառյալ չձխահարվող աստիճանավանդակների, ծավալահատակագծային և կառուցվածքային ճիշտ լուծումների) հետ համատեղ:

169. ՀՏԿՀ-ը պետք է ինքնաշխատ կերպով միանա հրդեհի ազդանշանման կամ հրդեհաշիջման համակարգերից ստացվող ազդանշանից: Նրա հետագա աշխատանքը կարող է իրականացվել ինչպես ինքնաշխատ, այնպես էլ կիսաինքնաշխատ կերպով կամ իրականացվի պատասխանատու անձանց կողմից («ձեռքով» կառավարման գործելակարգ):

170. 4-րդ և 5-րդ տիպերի ՀՏԿՀ-երի սարքերը պետք է համարվեն 1-ին կարգի էլեկտրական սպառիչներ և նրանց էլեկտրասնուցումը իրականացվի էլեկտրասնուցման 2 տարբեր, իրարից անկախ և փոխադարձ պահուստավորող աղբյուրներից, իսկ տարհանման նշաններով լուսատախտակների էլեկտրական սնուցումը հերթապահ գործելակարգում պետք է իրականացնել աշխատանքային լուսատուների էլեկտրական սնուցումից առանձին:

171. էլեկտրական սնուցման հուսալիությամբ 1-ին և 2-րդ տիպի օբյեկտներին դասվող օբյեկտներում տարհանման նշաններով լուսատախտակները պետք է ունենան

ներկառուցված էլեկտրական մարտկոցներ՝ լուսատախտակների արտաքին սնուցման բացակայության պայմաններում նրանց աշխատունակությունը ոչ պակաս քան 1 ժամ ապահովելու համար:

172. ՀՏՏԿՀ-ի կառավարման սարքերի հետ անլար եղանակով կապված հրդեհի ազդարարիչները պետք է ունենան հիմնական և պահուստային ինքնավար սնուցման աղբյուրներ: Հերթապահ գործելակարգում հիմնական ինքնավար սնուցման աղբյուրը պետք է ապահովի ազդարարիչի աշխատանքը 2 տարի, իսկ պահուստային ինքնավար սնուցման աղբյուրը՝ ոչ պակաս քան 2 ամիս:

173. Անլար կապով աշխատող հրդեհի ազդարարիչները պետք է լինեն ինքնահսկվող, ինքնաշխատ կերպով ապահովեն ներքին անսարքությունների, ներառյալ հիմնական և պահուստային ինքնավար սնուցման աղբյուրներինը, հայտնաբերումը և կառավարման սարքին այդ մասին հաղորդումը առավելագույնը 100 վրկ-ում:

174. ՀՏՏԿՀ-ում կիրառվող մալուխներն ու հաղորդալարերը, խրոցները, նրանց միացած ազդարարիչները, այլ տեխնիկական միջոցները, ինչպես նաև դրանց տեղակայման, լարանցումների տեղերն ու ձևերը պետք է ապահովեն ՀՏՏԿՀ-ի աշխատունակությունը ինչպես հերթապահ գործելակարգում, այնպես էլ հրդեհի դեպքում մարդկանց անվտանգ տարածք տարահանման համար անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում: Հաղորդալարերի և մալուխների ընտրության ժամանակ անհրաժեշտ է պահպանել Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 768 որոշմամբ հաստատված ՄՄ ՏԿ 004/2011 կանոնակարգի (ԳՕՍՏ 31565-2012) պահանջները:

175. Շլեյֆներին մի քանի ազդարարիչների, իսկ սնուցման գծերին մի քանի սպառիչների միացման դեպքում հրդեհի գործոնների ազդեցությամբ դրանցից մեկի խափանումը չպետք է հանգեցնի մյուսների կամ ամբողջ ՀՏՏԿՀ-ի խափանմանը:

176. ՀՏՏԿՀ-ի կազմում գտնվող սարքերը իրար միացնող շլեյֆները պետք է իրականացվեն կառավարման սարքի կողմից դրանց աշխատունակության վերահսկման պայմանով:

177. Հրդեհային դիտակետում պետք է հավաքվի սարքերի, լարային և անլար շլեյֆների, կապերի, հիմնական և պահուստային սնուցման սարքերի ու աղբյուրների աշխատունակության մասին տեղեկատվությունը, և դրանք պետք է արտացոլվեն

կառավարման սարքերի, դրանց արտաքին ցուցավահանակների վրա ու գրանցվեն սարքերի էներգաանկախ հիշողություններում:

178. ՀՏՏԿՀ-ի տեխնիկական միջոցները պետք է կիրառվեն ՆՓ և ՏՓ-ի պահանջների համաձայն՝ հաշվի առնելով տեղակայման վայրում եղանակային, մեխանիկական, էլեկտրամագնիսական և այլ ազդեցությունները:

179. Պայթուցահրդեհային վտանգավորությամբ տարածքներում պետք է կիրառվեն բացառապես պայթուցահրդեհավտանգ կատարմամբ սարքեր:

180. 4-րդ տիպի ՀՏՏԿՀ-ի՝ տարհանումը տեքստային հաղորդումներով կառավարելու դեպքում (Աղյուսակ 9, 2-րդ կետ, 1)-ին ենթակետ), իսկ 5-րդ տիպի ՀՏՏԿՀ-ի դեպքում պարտադիր՝

1) ղեկավարումը պետք է իրականացվի պաշտպանվող օբյեկտի մուտքի/ելքի մոտ, իսկ հնարավորության դեպքում՝ կից շենքում կամ շինությունում գտնվող հատուկ հակահրդեհային պաշտպանության համակարգերի կառավարման համար նախատեսված, ՆՓ-ի պահանջներին բավարարող և հրդեհի վտանգավոր գործոնների ազդեցությունից մինչև տարհանման ավարտը պաշտպանված հրդեհային դիտակետից, կարգավարական կամ այլ սենքից,

2) տեղակայված տեխնիկական միջոցները պետք է հնարավորություն ընձեռեն պատասխանատուին անհրաժեշտության դեպքում հրդեհի տեղեկացման ու տարհանման գործընթացի կառավարումը հրդեհային կամ կարգավարական դիտակետից անջատելու և իր վրա վերցնելու,

3) տեղեկացման գոտիներում գտնվող մարդկանցից լրացուցիչ տեղակատվություն ստանալու, անվտանգության կամ հրշեջ ծառայության անձնակազմի հետ համագործակցելու և տարհանման գործը ավելի արդյունավետ կառավարման նպատակով հրդեհային դիտակետը պետք է տեղեկացման գոտիների հետ ունենա խոսակցական կապ: Այդ նպատակով հրդեհի ձեռքի ազդասարքերի կամ հակահրդեհային համակարգերի (հրդեհաշիջման, հակաձխային պաշտպանության, տեղեկացման, ներքին հակահրդեհային ջրմուղի) հեռավար գործարկման կոճակների մոտ պետք է տեղակայվեն խոսակցական լարային կամ անլար սարքեր: Դրանք պետք է տեղակայվեն ամեն հարկում, տարհանման ճանապարհներին, իրարից 45մ-ից ոչ ավելի հեռավորության վրա: Ուղիղ գծով օբյեկտի ցանկացած կետից հեռավորությունը մինչև մոտակա խոսակցական սարքը չպետք է

գերազանցի 30 մ-ը: Խոսակցական սարքը պետք է տեղակայվի գետնից 1.5մ բարձրության վրա և ամրացվի շինության ոչ այրելի նյութից կառուցվածքատարրին: Տեղակայման վայրը պետք է նշվի հրդեհային անվտանգության « F05» նշանով ըստ ԳՕՍՏ 12.4.026-2015-ի:

**2.2.2. ՀՐԴԵՀԻ ԴԵՊՔՈՒՄ ՁԱՅՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՔՍԱՅԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ
ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՐՀԱՆՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

181. ՀՏՏԿՀ-ի շջակային/տեքստային ազդարարիչները պետք է տեղակայվեն մշտապես կամ ժամանակավոր 95դԲԱ -ից ոչ բարձր ձայնային (ֆոնային) աղմուկ ունեցող տարածքներում (աղմկաչափի Ա տիպի ստանդարտ կշռաչափող գտիչով): ՀՏՏԿՀ նախագծման տեխնիկական առաջադրանքում պետք է նշվի պաշտպանվող սենքում/երում մշտական ձայնային աղմուկի առկա, իսկ նոր նախագծվող օբյեկտներում՝ հաշվարկային մակարդակը:

182. ՀՏՏԿՀ-ում պետք է կիրառել իրենցից 1 մ հեռավորության վրա 85-120 դԲԱ ձայնային ճնշում ստեղծող հրդեհի շջակային ազդարարիչներ և նույն հեռավորության վրա 70-120 դԲԱ ձայնային ճնշումով տեքստային ազդարարիչներ (բարձրախոսներ):

183. Կիրառվող շջակային ազդարարիչների ձայնը պետք է գտնվի 200-5000 Հց հաճախականային տիրույթում, իսկ տեքստային ազդարարիչների ձայնի հաճախականության անհավասարաչափությունը այդ նույն տիրույթում պետք է լինի ոչ ավելի քան 16 դԲ:

184. Ձայնային ազդարարիչները պետք է ապահովեն ոչ պակաս քան 15 դԲԱ ավելի ձայնային ճնշում, քան սենքում առկա ձայնային աղմուկի մակարդակն է: Ընդ որում ընդհանուր ձայնային ճնշման մակարդակը (մշտական աղմուկի և բոլոր հրդեհի ազդարարիչների) սենքի ցանկացած կետում, բայց ազդարարիչներից ոչ պակաս քան 1մ հեռավորության վրա, պետք է լինի 75-120 դԲԱ սահմաններում: Ձայնային ճնշումը պետք է չափել գետնից 1.5 մ բարձրության վրա աղմկաչափով:

185. Սենքում աղմուկի ձայնային ճնշումը 95 դԲԱ գերազանցելու դեպքում պետք է նախատեսել աղմուկի աղբյուրների անջատում կամ աղմուկի նվազեցում այնքան, որ ապահովվի 184-րդ կետի պահանջը: Աղմուկի աղբյուրի անջատումը կամ աղմուկի նվազեցումը պետք է իրականացվի մինչև շջակային/տեքստային ազդարարիչների միանալը:

186. Աղմուկի աղբյուրի անջատման և/կամ աղմուկի մակարդակի նվազեցման անհնա-

րինության դեպքերում պետք է ձայնային ազդարարիչների հետ համատեղ կիրառվեն կարմիր գույնի թարթող լուսային ազդարարիչներ:

187. Օբյեկտների ննջասենյակներում ՀՏՏԿՀ-ի ազդարարիչների ձայնի ճնշման մակարդակը պետք է պետք է լինի ոչ պակաս քան 15 դԲԱ-ով ավել, քան այնտեղ առկա ձայնային աղմուկի մակարդակն է: Ընդ որում ընդհանուր ձայնային ճնշման մակարդակը (մշտական աղմուկինը և բոլոր հրդեհի ազդարարիչներինը) սենքի ցանկացած կետում, բայց ազդարարիչներից ոչ պակաս քան 3 մ հեռավորության վրա, պետք է լինի 70 դԲԱ-ից ոչ պակաս: Ձայնային ճնշումը պետք է չափել ամենաբարձր մահճակալին քնած մարդու գլխի մակարդակում:

188. Պատի տեքստային ազդարարիչները պետք է ամրացվեն այնպես, որ նրա ստորին եզրը գտնվի գետնից ոչ պակաս քան 2.0 մ, իսկ վերին եզրը ծածկից (հիմնական կամ կեղծառաստաղից) ոչ պակաս քան 0.15 մ հեռավորությունների վրա: 2.0 մ չափը պահպանելու անհնարինության դեպքում ազդարարիչները տեղակայվում են առաստաղից ներքև 0.15 մ հեռավորության վրա:

189. Առաստաղի տեքստային ազդարարիչները պետք է ամրացվեն ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերով սահմանված հրդեհային վտանգավորության ՉԱ խմբի նյութերով և ԿՕ դասի շինարարական կառուցվածքատարրերով ծածկին (հիմնական կամ կեղծ) կամ հատուկ տեղակայման լրակազմերում:

190. Ձգվող առաստաղների, կամ 189-րդ կետում նշված պայմաններից տարբերվող կեղծ առաստաղների դեպքերում տեղակայման հատուկ լրակազմերը պետք է ամրացնել անմիջապես բետոնե ծածկին համաձայն դրանց ՏՓ-ի:

191. Աղմկապաշտպանիչ հանդերձանքով մարդկանց առկայությամբ սենքերում պարտադիր պետք է կիրառվեն նաև լուսային ազդարարիչներ:

192. Հրդեհի ազդարարիչները (չչակներ, բարձրախոսներ) պետք է տեղակայվեն այնպես, որ բացառվի շինարարական կառուցվածքատարրերից անդրադարձվող ձայնի խտացումը (ռեզոնանսը) կամ անհավասարաչափ բաշխումը (արձագանքը):

193. Հրդեհի ազդարարիչների քանակը, տեղաբաշխումը և հզորությունները պետք է որոշվեն, ելնելով մարդկանց մշտական կամ ժամանակավոր գտնվելու բոլոր վայրերում

ծայնի ճնշման անհրաժեշտ մակարդակ ապահովելու պահանջից, բացառությամբ բազմաբնակարան շենքերի բնակարանների և սույն նորմերի համաձայն այն օբյեկտների, որտեղ պետք է տեղեկացվեն միայն սպասարկող կամ հերթապահ աշխատողները: Նման դեպքերում ամեն սենքում հրդեհի ազդարարիչների տեղադրում չի պահանջվում:

194. 5-րդ տիպի ՀՏՏԿՀ-ում պարտադիր, իսկ 4-րդ տիպի դեպքում՝ տարհանումը տեքստային հաղորդումներով կառավարելու դեպքում (Աղյուսակ 9, 2-րդ կետ, 1)-ին ենթակետ) ՀՏՏԿՀ-ի աշխատանքի ալգորիթմը պետք է պարունակի հաղորդագրություններ ամեն ազդարարման գոտու համար առանձին՝ կախված յուրաքանչյուր ազդարարման գոտում հնարավոր հրդեհի առաջացման վայրից և տարհանման տարբերակներից: Յուրաքանչյուր գոտու համար հաղորդագրություններ պետք է նախատեսել այնտեղից անվտանգ տարածք մարդկանց տարհանման ելքերի քանակից առնվազն մեկ հատով ավել:

195. Տեքստային հաղորդագրությունները պետք է մշակվեն նաև հաշվի առնելով մարդկանց հոգեբանական ու ֆիզիկական վիճակը: Առաջնահերթ պետք է տեղեկացվեն տեղեկացման այն գոտու մարդիկ, որտեղ բռնկվել է հրդեհը: Տեքստային հաղորդագրությունը չպետք է պարունակի խուճապ առաջացնող ցուցումներ:

196. Տեքստային հաղորդագրությունները պետք է հաղորդվեն ինքնաշխատ կերպով ՀՏՏԿՀ-ի գործարկման պահից, կախված հրդեհի բռնկման վայրից և ծրագրված աշխատաձևից:

2.2.3. ՀՐԴԵՀ ԴԵՊՔՈՒՄ ԼՈՒՍԱՅԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ

197. Տարհանման նշաններով հրդեհի լուսային ազդարարիչները՝ լուսատախտակները, պետք է ունենան ներքին էլեկտրական լուսատուներ: Արտաքին լուսավորմամբ լուսատախտակների կիրառումն արգելվում է:

198. Տարհանման նշաններով լուսատախտակները պետք է միանան աշխատանքային լուսատուների հետ միաժամանակ, հերթապահ գործելաձևում լինեն անթարթ լուսավորված, իսկ «ՀՐԴԵՀ» ազդանշանի դեպքում պետք անցնեն թարթող գործելակարգի:

199. Կինոթատրոնների դահլիճներում և այլ նմանատիպ այլ սենքերում, որտեղ ներկայացումը կամ ցուցադրումը կատարվում է մթության պայմաններում, անկախ ՀՏՏԿՀ-ի տիպից «ԵԼՔ» լուսատախտակները պետք է լինեն ներքին էլեկտրական լուսատուներով անթարթ լուսավորված: Նման դեպքերում թույլատրվում է «ԵԼՔ» լուսատախտակներ չկիրա-

ռել վթարային լուսավորության համակարգում:

200. «ԵԼՔ» լուսատախտակները տեղակայվում են.

1) հանդիսատեսային, ցուցադրման այլ դահլիճներում՝ անկախ ներկա մարդկանց քանակից, ինչպես նաև 50 և ավելի մարդու միաժամանակյա ներկայությամբ սենքերում՝ տարհանման ելքերի դռների վերևում ներսից,

2) օբյեկտների միջանցքներում և ճեմասրահներում՝ որպես կանոն հարկից անմիջապես դեպի դուրս, դեպի տարհանման ելքեր կամ անվտանգ տեղ տանող դռների վրա:

201. Տարհանման նշաններով լուսատախտակները պետք է տեղակայվեն պատերին, գետնից ոչ պակաս քան 2մ բարձրության վրա:

202. Տարհանման ճանապարհների հորիզոնական հատվածների բարձրության չափերը առլույս 2մ-ից պակաս լինելու, ինչպես նաև անմիջապես տարհանման, կամ դեպի տարհանման ճանապարհ բացվող դռան վերևում «ԵԼՔ» լուսատախտակի ամրացման անհնարինության դեպքերում դռան բացվածքի կողքին պետք է տեղակայել համակցված լուսային ազդարարիչ, որը պետք է պարունակի «ԵԼՔ» տարհանման նշանը և լրացուցիչ տարհանման նշան բացատրագրով կամ E01 նշանը ըստ ԳՕՍՏ 12.4.026-2015-ի:

203. Դեպի տարհանման ելքերը մարդկանց ուղղորդող լուսատախտակները անհրաժեշտ է տեղակայել.

1) 20մ-ից երկար միջանցքներում՝ իրարից 10մ-ից ոչ հեռու,

2) միջանցքների պտույտներում,

3) չձխահարվող աստիճանավանդակներում,

4) նախադպրոցական, ուսումնական և բժշկական հաստատությունների, շարժման սահմանափակումներով մարդկանց մշտական ներկայությամբ (անկախ մարդկանց քանակից) սենքերում,

5) հրդեհային անվտանգության նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներով այլ սենքերում, այդ թվում՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 56-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-03-2017 - «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերի:

204. Սենքերում, որտեղ բացակայում է նորմատիվ փաստաթղթերով պահանջվող արտաձվող հակաձխային օդափոխությունը, տարհանման նշաններով լուսատախտակները

պետք է տեղակայվեն նաև գետնից ոչ ավելի քան 0.5 մ բարձրության վրա:

205. «ԵԼՔ» տարհանման նշանով լուսատախտակների փոխարինումը ցանկացած այլ տիպի նշաններով, սարքերով արգելվում է:

2.2.4. ՀՐԴԵՀԻ ՖՈՏՈԼՅՈՒՄԻՆԵՍԳԵՆՏԱՅԻՆ ԱԶԴԱՐԱՐԻՉՆԵՐ

206. Տարհանման ֆոտոլյումինեսցենտային նշանները կարող են կիրառվել Ադյուսակ 10-ով չնախատեսված դեպքերում և այնտեղ, որտեղ մարդկանց ներկայության ժամանակ լուսավորվածությունը 150 լյուքս և ավելի է:

207. Տարհանման ֆոտոլյումինեսցենտային նշանների կիրառումը թույլատրվում է հրդեհի լուսային այնպիսի ազդարարիչների փոխարեն, որոնց գույնի և պատկերի (իմաստային) փոփոխություն չի նախատեսվում ՀՏՏԿՀ-ի ոչ մի աշխատաձևերում, բացառությամբ տարհանման դռների վերևում սույն նորմերով պահանջվող «ԵԼՔ» տարհանման լուսատախտակների:

208. Տարհանման ֆոտոլյումինեսցենտային նշանների հետլուսարձակման տևողության համապատասխանությունը հրդեհային անվտանգության պահանջներին պետք է հիմնավորվի համապատասխանության գնահատման փաստաթղթով:

209. Տարհանման ֆոտոլյումինեսցենտային նշանները և գծանշումները պաշտպանվող տարածքներում պետք է տեղակայվեն ԳՕՍՏ 12.4.026-2015 և ԳՕՍՏ 34428-2018 ստանդարտներին համապատասխան:

2.3. ՀԱԿԱՐԴԵՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ.

2.3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

210. ՀԱՎՀ-երի նախագծման ժամանակ չպետք է սահմանափակվել սույն շինարարական նորմերի պահանջներով և պետք է հաշվի առնել հետևյալը.

1) օբյեկտները կարող են ունենալ յուրահատուկ առանձնահատկություններ, և կարող են կիրառվել այլ, սույն շինարարական նորմերով չնախատեսված, բայց և չհակասող ալգորիթմներ,

2) պետք է հաշվի առնվեն կոնկրետ հակահրդեհային պաշտպանության համակարգերին վերաբերվող շինարարական նորմերում նրանց նկատմամբ պահանջներն ու աշխատանքի ալգորիթմները,

3) հակահրդեհային պաշտպանության համակարգի գործարկումը և ղեկավարումը պետք է իրականացվի հրդեհի ազդանշանման կամ հրդեհաշիջման համակարգերով:

211. ՀԱՎՀ-երի հիմնական խնդիրներն են.

- 1) հրդեհային անվտանգության ապահովումը,
- 2) տեղեկատվության հավաքումն ու դրանք ինքնաշխատ կերպով մշակումը,
- 3) նախանշված ալգորիթմով հակահրդեհային պաշտպանության համակարգի տարբեր կատարողական սարքվածքների կառավարումը,
- 4) ինքնաշխատ և ձեռքի կառավարման գործելակարգերում, ճարտարագիտական և տեխնոլոգիական սարքավորանքի գործարկման համար ազդանշանների ձևավորումը:

212. ՀԱՀ-ը պետք է գործարկման ազդանշաններ ձևավորի ներքոգրյալ (նախագծով առկա) համակարգերի համար.

- 1) հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման,
- 2) հրդեհաշիջման,
- 3) հակահրդեհային ծխապաշտպանության,
- 4) ծանուցումների փոխանցման,
- 5) մուտքի հսկման և կառավարման,
- 6) օբյեկտների ինժեներական կառավարման,
- 7) տեխնոլոգիական գործընթացների ինքնաշխատ կառավարման և հակավթարային:

213. Հակահրդեհային պաշտպանության համակարգի գործարկումը ինքնաշխատ կերպով պետք է իրականացվի ՀԱՀ-ի, ինչպես նաև հրդեհաշիջման համակարգի, օրինակ՝ ջրի հոսքի տվիչների, ազդանշաններից:

214. Հակահրդեհային պաշտպանության համակարգին (օր. հարկի հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման սարքերին) գործարկման ազդանշան ձևավորող ՀԱՀ-ի գոտին պետք է ամբողջությամբ համընկնի հակահրդեհային պաշտպանության գոտու հետ (ընդգրկի այդ հարկն ամբողջությամբ) կամ գտնվի նրա մեջ (կազմի ազդանշանման գոտու մի մասը):

215. Յուրաքանչյուր միատեսակ հակահրդեհային գոտի (օրինակ 2-րդ հարկի հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման գոտին) պետք է կապվի միայն իր պաշտպանության գոտում գտնվող հրդեհի ազդանշանման գոտիների հետ (նույն 2-րդ

հարկի ընդհանուր) կամ դրանց խմբին (նույն շենքում գտնվող այլ հարկերի գոտիների հետ), և յուրաքանչյուր առանձին վերցրած հրդեհի ազդանշանման գոտի (օր. 2-րդ հարկի) պետք է կապվի միայն իր պաշտպանության գոտին ընդգրկող հակահրդեհային պաշտպանության համակարգերի հետ (օր. 2-րդ հարկի հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման գոտին): Այս կետի պահանջը չի վերաբերում միայն հերթապահ աշխատողներին տեղեկացնող հրդեհի տեղեկացման և տարհանման համակարգերին:

216. Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգից հակահրդեհային պաշտպանության այլ համակարգերի գործարկման համար հրդեհաշիջման համակարգում պետք է նույնականացված լինեն նրա առանձին հատվածամասերը, ընդ որում յուրաքանչյուր այդպիսի հատվածամաս պետք է ամբողջովին կամ մասնակի գտնվի հակահրդեհային պաշտպանության գոտիներից որևէ մեկում:

217. Մեկ հակահրդեհային պաշտպանության գոտում կարող են գտնվել հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերի մի քանի հատվածամասեր, ընդ որում հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերի ոչ մի հատվածամաս չի կարող միաժամանակ գտնվել հակահրդեհային պաշտպանության մեկից ավելի գոտիներում: Սույն պահանջը պարտադիր է հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգի ազդանշաններից գործարկվող հակահրդեհային պաշտպանության բոլոր համակարգերի համար:

218. Հրդեհաշիջման համակարգի հատվածամասերի նույնականացումը կարող է իրականացվել կառավարման հանգույցների, հոսքի տվիչների, գործարկման հսկողությամբ սարինկլերների կամ համակարգի այլ՝ հրդեհաշիջման համակարգի ազդանշանը հակահրդեհային պաշտպանության գոտու հետ միանշանակորեն նույնականացնող տեխնիկական միջոցներով:

219. Հակահրդեհային համակարգերի ձեռքով ղեկավարումը պետք է իրականացվի հրդեհի ազդանշանման ու կառավարման սարքերի վրա տեղակայված կոճակներով, ինչպես նաև այդ սարքերին միացված հեռակառավարման ձեռքի սարքվածքներով, եթե դրանց կիրառումը հակահրդեհային տվյալ համակարգի համար նախատեսված է սարքերի ՏՓ-ով:

220. Հեռակառավարման ձեռքի սարքվածքների անհրաժեշտության դեպքում դրանք պետք է նախատեսվեն յուրաքանչյուր հրդեհային պաշտպանության գոտու (հրդեհաշիջման, հակաձխային և այլն) համար առանձին:

221. Ձեռքով հեռակառավարման սարքվածքների տեղակայման բարձրության և

խորության նկատմամբ պահանջները նույնն են, ինչ հրդեհի ձեռքի ազդասարքերի տեղակայման պահանջները:

222. Համակարգերի աշխատանքի սույն շինարարական նորմերով նախատեսված ալգորիթմում տեխնոլոգիական, կամ ստուգիչ-չափիչ նպատակներով այլ սարքվածքների անհրաժեշտության դեպքում (մանոմետրեր, դիրքի տվիչներ և այլն) դրանք պետք է տեղակայվեն:

223. ՀԱՎՀ-երի նախագծման ժամանակ կառավարվող յուրաքանչյուր հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգի կամ հրդեհաշիջման գոտու համար պետք է նախատեսվի մեկանգամյա ինքնաշխատ կամ հեռավար գործարկում:

224. Հրամարիչ նյութի 100% պահուստային քանակությամբ հրդեհաշիջման համակարգերի դեպքում պահուստային քանակության թողարկումը դեպի նույն, կամ այլ հրդեհաշիջման գոտի պետք է իրականացվի միայն ձեռքի գործարկիչներով, իսկ այլ ՆՓ-ում կամ նախագծման տեխնիկական առաջադրանքում պահանջի դեպքում՝ ինքնաշխատ կերպով:

225. Հակահրդեհային ավտոմատիկայի, ներառյալ հրդեհի ազդանշանման, հակահրդեհային պաշտպանության և ճարտարագիտական համակարգերի աշխատանքի ալգորիթմը պետք է որոշվի նախագծման ընթացքում ըստ այդ համակարգերի տեղակայման, կարգաբերման և փորձարկման նորմատիվային և տեխնիկական պահանջների:

2.3.2. ՀՐԴԵՀԻ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ՏԱՐՀԱՆՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ

226. 1-ին տիպի ՀՏՏԿՀ-ը պետք է ներկառուցված լինի հրդեհի ինքնավար ազդասարքում և ազդարարի տեղում՝ ձայնային կամ լուսաձայնային ազդարարիչով:

227. 2-րդ և 3-րդ տիպերի ՀՏՏԿՀ-երը պետք է ինքնաշխատ գործարկվեն հրդեհի ազդանշանման կամ հրդեհաշիջման համակարգերի միջոցով դրանց ցանկացած գոտում հրդեհի հայտնաբերման դեպքերում:

228. 4-րդ և 5-րդ տիպերի ՀՏՏԿՀ-երը պետք է գործարկվեն ինքնաշխատ, բայց ըստ տեղեկացման և տարհանման գոտիների, որոնք նախանշվում են նախագծման և ճշտվում համակարգը շահագործման հանձնելու ժամանակ, ինչպես նաև հետագայում՝ շահագործման ժամանակ կատարվող ամեն փոփոխության դեպքում: Դրանց գործարկման ազդանշանը պետք է ինքնաշխատ կերպով փոխանցվի հրդեհի ընդունիչ-հսկիչ կամ

հրդեհաշիջման կառավարման սարքերից C ալգորիթմով «ՀՐԴԵՀ» հայտնաբերելու դեպքերում:

229. ՀՏՏԿ-ների նախանշված հերթականությամբ (տրված ալգորիթմով) տեղեկացման հերթականությունը աշխատանքի ընթացքում, կապված հրդեհի հայտնաբերման վայրից, հրդեհի ազդանշանման կամ հրդեհաշիջման գոտիներից նոր ազդանշաններ ստանալուց, կարող է ինքնաշխատ կերպով փոխվել ընդունիչ-հսկիչ կամ կառավարման սարքերի կողմից, կամ դրանց միջոցով՝ պատասխանատուների կողմից:

2.3.3. ՆԵՐՔԻՆ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԶՐՄՈՒՂԻ ԵՎ ՍՊՐԻՆԿԼԵՐԱՅԻՆ Ու ՑԱԾՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ

230. Սպրինկլերային ՀՇԻԿ-ների գործարկման համար, բացառությամբ հարկադիր գործարկմամբ համակարգերի, ՀԱՀ-ից ազդանշան չի պահանջվում:

231. Գործարկման հսկողությամբ սպրինկլերներից ստացվող ազդանշանները կարող են խմբավորվել այնպես, ինչպես հրդեհի ազդանշանման գոտիներից ստացվող ազդանշանները:

232. Մուտքային ջրագծի վրա ջրաչափի առկայության դեպքում «ՀՐԴԵՀ» ազդանշանի ձևավորման հետ մեկտեղ պետք է ազդանշան տրվի նաև այդ ջրաչափը շրջանցող փականի բացման համար:

233. ՀՇԻԿ-ի բոլոր փակող սարքվածքները պետք է ունենան դրանց լրիվ փակ և լրիվ բաց վերջնական դիրքերի ազդանշանները հրդեհի ազդանշանման ու հրդեհաշիջման կառավարման սարքին ուղարկելու հնարավորություն:

234. Հարկադիր գործարկումով սպրինկլերային և դրենչերային ՀՇԻԿ-ների գործարկումը պետք է իրականացվի այդ հրդեհաշիջման գոտում գտնվող հրդեհի ազդանշանման գոտուց ստացված ազդանշաններով:

235. Շինարարական կառուցվածքատարրերի հրակայունության ապահովման և/կամ հակահրդեհային պատնեշների ջրային դրենչերային վարագույրները կարող են գործարկվել այդ կամ հարակից հրդեհի ազդանշանման կամ հրդեհաշիջման գոտիների ազդանշաններով:

236. Հարկադիր գործարկումով սպրինկլերային ՀՇԻԿ-ների դեպքում հրդեհի ազդանշանը-

շանման գոտու չափերը և նրանում հրդեհի սատելիտային ազդասարքերի քանակը պետք է որոշել ելնելով կայանքի աշխատանքի ալգորիթմից և սույն շինարարական նորմերում հրդեհի ինքնաշխատ ազդասարքերով հրդեհի ազդանշանման գոտիներին ներկայացվող պահանջներից:

237. Զրային և ցածր ու միջին պատիկությամբ փրփրային ՀՇԻԿ-ում արտաքին ձայնային և լուսային ազդարարիչներ կարող են չտեղակայվել:

238. Ներքին հակահրդեհային ջրմուղը գործարկվում է հետևյալ դեպքերում, որոնք կարող են համատեղվել «ԵՎ» (&) աշխատաձևով ըստ անհրաժեշտության.

- 1) հրդեհային ծորակներից մեկի բացման պատճառով խողովակաշարում ջրի ճնշման անկման հետևանքով,
- 2) հրդեհային ծորակների վրա տեղակայված տվիչից՝ ծորակի բացման դեպքում ստացվող ազդանշանից,
- 3) հրդեհային պահարանում տեղակայվող ձեռքի հեռավար գործարկման կոճակի գործարկումից,
- 4) հրդեհի ազդանշանման գոտուց ստացված ազդանշանից:

2.3.4. ԳԱԶԱՅԻՆ, ՓՈՇԵ, ՓՈՇԵԳԱԶԱՅԻՆ, ՕԴԱԿԱԽՈՅԹԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ

239. Գազային, փոշե, փոշեգազային, օդակախոյթային և բարձր պատիկությամբ փրփրային ՀՇԻԿ-ները (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ նաև կայանքներ) պետք է գործարկվեն հրդեհի ազդանշանման հսկման գոտուց կամ հրդեհի հայտնաբերման սեփական միջոցներից ստացված ազդանշաններից:

240. ՀԱՀ-ի կողմից հրդեհի հայտաբերման դեպքում կառավարման ազդանշանի ձևավորումը ինքնաշխատ կերպով պետք է իրականացվի Շ ալգորիթմով:

241. Կայանքները պետք է անջատվեն ինքնաշխատ գործելաձևից «ԱՎՏՈՄԱՏԻԿԱՆ ԱՆՋԱՏՎԱԾ Է» տեքստով լուսային ցուցիչի միացմամբ (տեղակայվում է պաշտպանվող սենքի ամեն մուտքի վրա դրսից) ամեն անգամ պաշտպանվող սենքի դռների, լուսամուտների բացվելու դեպքերում: Դա պետք է իրականացվի փեղկերի դիրքի տվիչներից կամ այդ գործառույթն ապահովող այլ սարքվածքներից ստացվող ազդանշանից:

242. Ինքնաշխատ գործելակարգին համակարգը պետք է վերադառնա հետևյալ ձևե-

րից մեկով.

- 1) ինքնաշխատ՝ սենքի բացվածքի (դռան, պատուհանի) փակվելուց,
- 2) ձեռքով՝ հրդեհային ընդունիչ-հսկիչ և կառավարման սարքի վրայի միջոցներով կամ ինքնաշխատությունը վերականգնող սարքվածքներով:

243. Ինքնաշխատ գործելակարգին վերադարձի ձևը ընտրում է նախագծողը պատվիրատուի հետ համաձայնեցնելով:

244. Ձեռքով ինքնաշխատ գործելակարգը վերականգնելու ձևի ընտրության դեպքում համակարգի նախագծի բացատրական մասում և շահագործման բոլոր փաստաթղթերում պարտադիր նշվում է շահագործող կազմակերպության ղեկավարի պարտավորությունը՝ ելնելով պաշտպանվող սենք մուտքի թույլտվություն ունեցող մարդկանց քանակից և թույլտվության աստիճանից, հրամանով որոշել այդ գործողության համար պատասխանատու անձանց:

245. Հրդեհաշիջման գոտում գտնվող և պաշտպանվող յուրաքանչյուր սենք պետք է ապահովվի համապատասխան լուսային և ձայնային ազդարարիչներով (XXX-ով նշվածի փոխարեն գրվում է հրամարիչ նյութի անվանումը), այն է.

- 1) ներսի կողմից.

ա. հրդեհի ձայնային կամ լուսաձայնային ազդարարիչներով. միանում են «ՈւՇԱԴՐՈւԹՅՈւՆ» ազդանշանով (75-րդ կետ, 4-րդ ենթակետ),

բ. դռների վերևում՝ «XXX-ՀԵՌԱՑԻՐ» լուսատախտակներով. միանում են «ՀՐԴԵՀ» ազդանշանով (75-րդ կետ, 6-րդ ենթակետ),

- 2) դրսի կողմից.

ա. հրդեհի լուսաձայնային ազդարարիչներով. միանում են «ՈւՇԱԴՐՈւԹՅՈւՆ» ազդանշանով (75-րդ կետ, 4-րդ ենթակետ),

բ. «XXX-ՉՄՏՆԵԼ» լուսատախտակներով. միանում են հրամարիչ նյութի հաջող թողարկման (75-րդ կետ, 8-րդ ենթակետ) դեպքում,

գ. «ԱՎՏՈՄԱՏԻԿԱՆ ԱՆՋԱՏՎԱԾ Է» լուսատախտակներով. միանում են ինքնաշխատ գործելակարգը անջատվելու դեպքում:

246. Հրդեհաշիջման գոտում մի քանի սենքերի առկայության դեպքում ամեն սենքի ներսում և դրսում տեղակայվում են 245-րդ կետում նշված ազդարարիչները:

247. Հրդեհաշիջման կայանքով պաշտպանվող սենքին հարակից սենքերում, որոնցից

ելքը հնարավոր է միայն պաշտպանվող սենքի միջով, ներսում պետք է տեղակայվեն 246-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ազդարարիչները:

248. ՀՇԻԿ-ի արտաքին ձայնային ազդարարիչը հանդիսանում է նրա բաղկացուցիչ մասը և չի վերացնում պաշտպանվող սենքը ՀՏՏԿՀ-ով սարքավորման անհրաժեշտությունը: Միաժամանակ պետք է ապահովվեն հետևյալ պահանջները.

1) հրդեհի ձայնային ազդարարիչների տեղակայումը պետք է կատարվի 2.2.1 բաժնի պահանջների համաձայն,

2) պաշտպանվող սենքում «ՈւՇԱԴՐՈւԹՅՈւՆ» ազդանշանի հետ միաժամանակ կամ չարտոնված (կեղծ) գործարկման դեպքերում պետք է միանան օբյեկտի հրդեհային դիտակետում տեղակայված ազդարարիչը/ները, որոնց ազդանշանները կարող են փոխանցվել ինչպես անմիջականորեն, այնպես էլ օբյեկտի ընդհանուր ՀԱՀ-ի միջոցով:

249. Հրամարիչ նյութի թողարկումը պետք է արգելափակվի.

1) շլեյֆներին միացված ազդասարքերի կամ ազդարարիչների ցանկացած անսարքության դեպքում, բացառությամբ հիմնական էլեկտրական սնուցման բացակայությունը,

2) պաշտպանվող սենքի դռների, լուսամուտների բացվելու դեպքերում:

250. Տեքստային ազդարարիչների կիրառման դեպքում հրամարիչ նյութի թողարկման հապաղման ժամանակը կարող է երկարացվել և ծրագրավորվել այդ հաղորդագրության ժամանակին հավասար:

251. Հեռավար գործարկման ձեռքի կոճակները պետք է տեղակայվեն պաշտպանվող սենքի մուտքի բոլոր դռների մոտ դրսից:

252. Հեռավար կոճակով կամ հրդեհաշիջման կառավարման սարքի վրայից հրդեհաշիջման համակարգը ձեռքով գործարկման դեպքերում, անկախ սարքի աշխատաձևից (ինքնաշխատ կամ ոչ ինքնաշխատ) հրամարիչ նյութի թողարկումը պետք է իրականացվի հապաղման ժամանակից հետո:

253. Գազային հրդեհաշիջման համակարգերում հրդեհաշիջման կառավարման սարքը պետք է իրականացնի անոթներում՝ հրամարիչ գազի ճնշման կամ կշռի (հրամարիչ նյութի քանակության), դրդիչ համակարգերում՝ գազի ճնշման անընդհատ հսկողություն:

2.3.5. ՀԱԿԱԾԽԱՅԻՆ ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄԸ

254. Հակաձխային օդափոխության համակարգերը պետք է գործարկվեն իրենց կողմից պաշտպանվող գոտիներում հղեհի ազդանշանման, հրդեհաշիջման համակարգերից կամ հակաձխային օդափոխության ձեռքի հեռավար կոճակներից առաջին ազդանշանը ստանալուն պես:

255. Հակաձխային օդափոխության համակարգերում պետք է հաշվի առնել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի N 83-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերի պահանջները այդ համակարգերի համատեղ աշխատանքի և ընդհանուր լուծումների մասով:

256. Ընդհանուր օդափոխության լրիվ կամ մասնակի դադարեցումը, հակահրդեհային կափույրների բացել/փակելը պետք է իրականացվի տեխնոլոգիական, ընդհանուր ու հակաձխային օդափոխության համակարգերին ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի N 83-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերի ներկայացվող պահանջներով:

257. Այն դեպքերում, երբ հակաձխային և ընդհանուր օդափոխության համակարգերի նախագծման ընթացքում հրդեհի ազդանշանման որևէ գոտու համար չի նախատեսվել հակաձխային օդափոխության համակարգ (տվյալ գոտում ընդհանուր օդափոխության լրիվ կամ մասնակի դադարեցում, հակահրդեհային կափույրների բացել/փակել), ապա ամբողջ շենքի ցանկացած հրդեհային կամ հրդեհաշիջման գոտուց «ՀՐԴԵՀ» ազդանշանի դեպքում պետք է գործարկվի ամբողջ շենքի հակաձխային օդափոխության համակարգը:

258. Հակաձխային օդափոխության համակարգերի հեռավար գործարկման կոճակները պետք է տեղակայվեն սույն նորմերի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի N 83-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.02.01-04 - «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

259. Այն դեպքերում, երբ որևէ պաշտպանվող գոտում արդեն գործարկվել է հակաձխային օդափոխության համակարգը և ստացվում է նոր «ՀՐԴԵՀ» ազդանշան մեկ այլ գոտուց/ներից, նոր գոտիների հակաձխային օդափոխության համակարգերի գործարկումը

պետք է կատարվի միայն կառավարման սարքի վրայից ձեռքով, իսկ եթե նման դեպք նախատեսված է եղել և հաշվի է առնվել համակարգերի աշխատանքի ալգորիթմը կազմելիս, ապա այդ գոտու/ների հակաձխային օդափոխության համակարգի գործարկումը կարող է իրականացվել միայն այն դեպքերում, երբ.

1) այդ գոտիների հակաձխային օդափոխության համակարգերը տարանջատված են,

2) այդ գոտիների հակաձխային օդափոխության համակարգերը ընդհանուր են, ու համակարգի արտադրողականությունը բավարար է այդ գոտիներում միաժամանակ հակաձխային օդափոխություն ապահովելու համար՝ պայմանով, որ միաժամանակյա աշխատանքի ընթացքում բացառվի հրդեհի կամ հրդեհի արգասիքների տարածումը այլ գոտիներ:

260. Բացի հակաձխային օդափոխության սարքվածքներից, հակահրդեհային ավտոմատիկան պետք է կառավարի և հսկի նաև օդափոխության սարքվածքներին՝ հակահրդեհային կափույրներին և հակաձխային պաշտպանության այլ սարքվածքներին, օրինակ՝ հակաձխային էկրաններին, վարագույրներին և այլն:

3. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ. ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԱՍ

3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

261. Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերը նախատեսված են ըստ ԳՕՍՏ 27331-87-ի A, B և E կարգի հրդեհների տեղափակման և վերացման համար:

262. Սույն շինարարական նորմերով օբյեկտների հակահրդեհային համակարգերում ՀՇԻԿ-ի պահանջի դեպքում դրանք ներկայացվում են նախագծի «Տեխնոլոգիական մաս» բաժնում:

263. Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերի նախագծերի բացատրական մասում պարտադիր պետք է ներկայացվեն.

1) օբյեկտի բնութագիրը հրդեհային վտանգավորության իմաստով,

2) հրամարիչ նյութի ընտրության և ընդունված այլ լուծումների հիմնավորումը,

3) համակարգի հաշվարկները,


4) ընդունիչ-հսկիչ և կառավարող, այլ սարքերի և տեխնիկական միջոցների ընտրության հիմնավորումները, դրանց հիմնական տեխնիկական բնութագրերը,

5) տեղակայման, շահագործման և սպասարկման ընթացքում անհրաժեշտ պահանջ-

ները:

264. Սենքը մակերեսային հրդեհաշիջման դեպքում համարվում է հրդեհաշիջման միջոցներով լիովին պաշտպանված, եթե նրա եզրաչափերով պարփակված ամբողջ մակերեսը հորիզոնական հարթության վրա գտնվում է հրամարիչ նյութերի արտանետիչ սարքվածքների ՆՓ և ՏՓ-ով որոշված պաշտպանության գոտում (նկար 7-ի նմանակմամբ):

265. Սենքը կամ սենքում գտնվող եռաչափ հրդեհային բեռնվածքը համարվում է հրդեհաշիջման միջոցներով լիովին պաշտպանված, եթե նրա եզրաչափերը սույն նորմերի սահմանված չափով գերազանցող ամբողջ ծավալը գտնվում է հրամարիչ նյութերի արտանետիչ սարքվածքների ՆՓ և ՏՓ-ով որոշված պաշտպանության գոտում (նկար 11):



Նկար 11. փոշեշիջման մոդուլով տեխնոլոգիական սարքավորանքի պաշտպանության օրինակ

266. Բացի նախագծից, նախագծող կազմակերպությունը պետք է մշակի.

- 1) համակարգի անձնագիրը ըստ ԳՕՍՍ 2.601-2013-ի,
- 2) ընդունման և պարբերական փորձարկումների կանոնակարգերը,
- 3) պոմպային կայանքի հիդրավլիկական համակարգի գծապատկերը,
- 4) շահագործման ձեռնարկը:

267. Կայանքի շահագործման ձեռնարկը պատվիրատուի պատվերով մշակում է

նախագծող կամ տեղակայող-կարգաբերող կազմակերպությունը, որում պետք է ներկայացվեն ընդունման և պարբերական փորձարկումների կանոնակարգերը, դրանց

իրականացման ժամանակ լարումների, ճնշումների չափման հսկիչ կետերը, որոնք անհրաժեշտ են լինելու համակարգի կարգաբերման, գործարկման և ընդունման, ինչպես նաև պարբերական փորձարկումների ժամանակ:

268. Օբյեկտները ՀՇԻԿ-ներով պետք է սարքավորել ըստ Աղյուսակներ 11 - 13-ի պահանջների (տես նաև 269-րդ կետը):

269. Աղյուսակներ 11-13-ում.

1) տարածքների մակերեսները և հարկայնությունը որոշվում է ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03-2020 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերի,

2) անհրաժեշտ է հաշվի առնել նաև ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերի պահանջները և հասարակական նշանակության շենքերի միջանցքներում լրացուցիչ նախատեսել փոքր ելքով հրդեհային ծորակներ,

3) սենքերի պայթյունահրդեհային վտանգավորության կարգերը որոշվում են ըստ սույն շինարարական նորմերի 4-րդ բաժնի,

4) թույլատրվում է հրդեհաշիջումն իրականացնել մոդուլային կայանքներով՝ ապահովելով պաշտպանվող տարածքում մարդկանց տեղեկացման և անվտանգ տարահանման գործընթացը սույն շինարարական նորմերի պահանջներով:

Աղյուսակ 11. Բնակելի և հասարակական շենքերում, սենքերում հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգին ներկայացվող պահանջները

Հ/Հ.	Օբյեկտների խումբը, անվանումը	Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգը
1. Բնակելի նշանակության շենքեր և սենքեր		
1)	Անհատական բնակելի տներ	Չի նորմայավորվում, առաջարկվում է փոքր ելքով հրդեհային ծորակ
2)	Բազմաբնակարան կամ բազմաֆունկցիոնալ շենքերի բնակարաններ,	Անկախ հարկերի քանակից՝ փոքր ելքով հրդեհային ծորակ

3)	Բազմաբնակարան բնակելի շենք	10 և ավելի հարկերի դեպքում՝ ջրային ինքնաշխատ սպրինկլերներ ընդհանուր միջանցքներում՝ բնակարանների դռների մոտ, աղբատար հորերում
4)	Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքեր	Տես սույն Աղյուսակի 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը
2. Հասարակական նշանակության շենքեր և սենքեր		
1)	Բազմաֆունկցիոնալ շենքեր, ներառյալ շենքում վարձակալության տրամադրված հասարակական նշանակության տարածքները,	3 հարկ կամ 1500 մ ² և ավելի՝ ջրային ինքնաշխատ սպրինկլերային, ամբողջ տարածքում, աղբատար հորերում: Վարձակալված տարածքներում՝ շենքի պահանջներով
2)	Հյուրանոցներ, հանրակացարաններ բնակարանային տիպի՝ ա. բազմաբնակարան շենքում, բ. բազմաֆունկցիոնալ շենքում	Ըստ 1-ին կետի 2-րդ ենթակետի, Ըստ 2-րդ կետի 1-ին ենթակետի,
3)	Հանգստյան տներ, հանգստի բազաներ, երիտասարդական ճամբարներ, զբոսաշրջային բազաներ, մոթելներ, քեմփինգներ և մարդկանց ժամանակավոր բնակության այլ նմանատիպ կացարաններ	3 հարկ կամ 1500մ ² և ավելի – ջրային ինքնաշխատ
4)	Նախադպրոցական, հաստատություններ, առանձին կամ այլ շենքերում տեղակայված, մանկական խաղասրահներ (բացի նախադպրոցական հաստատություններում գտնվողների), Գ2-Գ4 խմբերի այրելիությամբ նյութերի	2 հարկ կամ 800 մ ² և ավելի՝ նրբաջրային ինքնաշխատ,

	կիրառմամբ, դպրոցներ, ճամբարներ և նման այլ մանկական օբյեկտներ գիշերակացով	
5)	Դպրոցների շենքեր (տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական)	2 հարկ կամ 2000 մ ² և ավելի՝ նրբաջրային ինքնաշխատ
6)	Նախնական մասնագիտական ուսումնարաններ, մասնագիտական, լրացուցիչ կրթության (այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության), բարձրագույն ուսումնական հաստատություններ	3 հարկ կամ 2500 մ ² և ավելի՝ ջրային ինքնաշխատ
7)	Հիվանդանոցներ, ծննդատներ, հոսպիտալներ, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ	2 հարկ կամ 800 մ ² և ավելի՝ նրբաջրային ինքնաշխատ,
8)	Պոլիկլինիկաներ, առողջարաններ, պրոֆիլակտորիաներ, վերականգնողական ախտորոշման կենտրոններ,	3 հարկ կամ 2000 մ ² և ավելի՝ ջրային ինքնաշխատ
9)	Ամբուլատորիաներ, շտապ բժշկական օգնության կայաններ, կաթնային խոհանոցներ, դեղատներ,	Չի նորմայավորվում
10)	Գիտական, գիտահետազոտական, արդյունաբերական կամ գյուղատնտեսական բնագավառի կազմակերպությունների վարչական և գրասենյակային շենքեր	3 հարկից կամ 3000 մ ² և ավելի՝ ջրային ինքնաշխատ
11)	Գրադարաններ, թանգարաններ, ցուցասրահներ, պատկերասրահներ (բացի պահոցները)	2 հարկից կամ 800մ ² ավելի՝ նրբաջրային ինքնաշխատ,
12)	Թատրոններ, կինոթատրոններ, հանգստի կենտրոններ, համերգային և մարզահամերգային դահլիճներ ու համալիրներ, ակումբներ, մշակույթի տներ, կրկեսներ և նման այլ շենքեր,	1500 մ ² և ավելի՝ ջրային ինքնաշխատ, բեմահարթակի և հանդիսատեսի դահլիճի միջև՝ ջրային վարագույր
13)	Արվեստանոցներ	100 մ ² և ավելի՝ ջրային կամ փոշե

14)	Կինո և հեռուստատեսային նկարահանումների ստուդիաներ	1000 մ ² և ավելի՝ փոշե, ջրային
15)	Լրատվական կենտրոններ, հեռուստաընկերություններ և ռադիոընկերություններ, հրատարակչություններ, տպարաններ:	3 հարկից կամ 1500մ ² ավելի՝ փոշե կամ ջրային
16)	Բաց մարզադաշտերի (ֆուտբոլի, թենիսի դաշտերի, ծիարշավարանների, լողավազանների, հրաձգարանների, ավտոարշավարանների և այլն), տրիբունաների տակ գտնվող սենքեր՝ սպորտային հանդերձարաններ, վարչական տարածքներ, միջանցքներ և այլ սենքեր	1000 մ ² և ավելի՝ ջրային կամ փոշե
17)	Սպորտային նշանակության փակ շենքեր՝ մարզադահլիճներ, դրանց հանդերձարաններ, վարչական տարածքներ, միջանցքներ և այլ սենքեր	800 մ ² և ավելի՝ ջրային ինքնաշխատ
18)	Գիշերային ակումբներ, ատրակցիոններ և ավտոմատ խաղերի դահլիճներ, խաղատներ	500 մ ² և ավելի՝ ջրային ինքնաշխատ
19)	Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, վարչական հիմնարկներ, հասարակական կազմակերպություններ, տարբեր նշանակության գրասենյակներ, բացի հատուկ նշվածներից	3 հարկից կամ 1500մ ² ավելի՝ ջրային ինքնաշխատ
20)	Կրոնական, պաշտամունքային շենքեր և համալիրներ, բացի առանձին և մեկ սենքից կազմված շինությունից	Պահեստային, բնակելի, պահոցների և այլ աշխարհիկ օբյեկտները տես համապատասխան կետերում:
21)	Բանկեր, տարածքային դրամարկղային կենտրոններ, վարկային, ապահովագրական կազմակերպություններ, գրավատներ, փոխանակման կետեր (բացի պահոցները)	3 հարկից կամ 1500 մ ² և ավելի՝ ջրային

22)	<p>Բժշկական, գիտական և այլ կազմակերպություններում տեղակայված թանկարժեք, հազվագյուտ և/կամ հատուկ սարքավորումների սենքեր, գրադարաններում, թանգարաններում, պատկերասրահներում, արխիվներում, հրատարակչություններում և այլ կազմակերպություններում նմուշների, ձեռագրերի, հաշվետվությունների, արխիվների, քարտացուցակների, ֆոտո, կինո և ձայնային ժապավենների, փաստաթղթերի, նախագծերի, էլեկտրոնային կրիչների, հատուկ արժևորության այլ ոչ նյութական արժեքների պահպանման հատուկ սենքեր (պահոցներ), բանկերի, տարածքային դրամարկղային կենտրոնների, գրավատների, փոխանակման կետերի, կանխիկ դրամի, թանկարժեք մետաղների և քարերի, նյութական այլ արժեքների պահպանման հատուկ սենքեր (պահոցներ), սերվերների, տվյալների կենտրոնների (տվյալների բազաների), չթվարկված այլ նյութական և ոչ նյութական արժեքների պահպանման հատուկ սենքեր (պահոցներ)։</p>	Գազային, փոշե կամ նրբաջրային
23)	<p>Առևտրի կենտրոններ, տոնավաճառներ, փակ շուկաներ, խանութներ, տաղավարներ և կրպակներ</p>	3 հարկ կամ 1500մ ² ավելի՝ ջրային ինքնաշխատ
24)	<p>Խանութներ, առևտրի տաղավարներ և կրպակներ այլ նշանակության շենքերում ներկառուցված (կամ կցակառուց)</p>	Ներկառուցված՝ հիմնական շենքի հետ, կցակառուց՝ 300մ ² և ավելի – ջրային, փոշե
25)	<p>Հասարակական սննդի կետեր՝ ռեստորաններ, բարեր, ճաշարաններ, սրճարաններ</p>	3 հարկ կամ 1000մ ² ավելի՝ ջրային ինքնաշխատ

26)	Հարսանյաց տներ, սգո սրահներ	800մ ² ավելի՝ ջրային ինքնաշխատ
27)	Լուսանկարչատներ, քիմիական մաքրման կետեր, կոշիկի և կարի անհատական պատվերների սրահներ, վարսավիրանոցներ, լվացքատներ, ներկատներ	1000 մ ² ավելի՝ փոշե կամ ջրային ինքնաշխատ
28)	Դյուրաբոցավառ և այրելի (բացի նավթամթերքների) հեղուկների վաճառքի մասնագիտացված առևտրի ձեռնարկություններ (բացի հրատեխնիկական)	Վարչական շենքերը՝ տես սույն Աղյուսակի 2-րդ կետի 19) - ընթացակետը: Նյութերով տարաների պահեստները՝ փրփրային, փոշե կամ գազային
29)	Այլ օբյեկտներ, որոնք նշված չեն սույն աղյուսակում, ըստ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի գործառական հրդեհային վտանգավորության Ֆ1.1, Ֆ1.2, Ֆ2.1, Ֆ3.2, Ֆ4.1 և Ֆ4.2 դասերի	3 հարկից կամ 1500մ ² ավելի՝ ջրային ինքնաշխատ
30)	Շարժական տնակներ մարդկանց ժամանակավոր բնակության համար (շինարարական կենցաղային վագոնիկներ)	Ջրային մոդուլային

Աղյուսակ 12. Արտադրական և պահեստային շենքերում, սենքերում հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգին ներկայացվող պահանջները

Հ/Հ	Օբյեկտների խումբը, անվանումը	Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգը
1.	Գիտահետազոտական, արդյունաբերական կամ գյուղատնտեսական կազմակերպությունների, լեռնահանքային կոմբինատների տեխնոլոգիական սարքավորումների շենքեր, արտադրամասեր, արհեստանոցներ և այլն, բացառությամբ ստորև նշվածների	1500մ ² և ավելի՝ ջրային, փրփրային, փոշե, օդակախույթային կամ գազային: Տեխնոլոգիական սարքավորանքը՝ ըստ անհրաժեշտության՝ ջրային, փրփրային, փոշե կամ գազային տեղային ծավալային

<p>2.</p>	<p>1) Հրդեհապայթյունավտանգավորության «Ա» և «Բ» կարգերի օբյեկտներ (բացառությամբ հացահատիկի պահպանման և վերամշակման շենքերում գտնվող և 7-րդ կետում թվարկված սենքերի), որտեղ շրջանառվում են դյուրաբոցավառ և այրելի հեղուկներ (բացի նավթամթերքների), այրելի հեղուկացված գազեր, այրելի փոշիներ և թելքեր</p> <p>2) Հրդեհապայթյունավտանգավորության «Ա» կարգի սենքեր, որտեղ շրջանառվում են միայն այրելի գազեր (բացառությամբ հեղուկացված գազերի)</p> <p>3) Հրատեխնիկական արտադրատեսակների, ոչ ռազմական նշանակության զենքերի, զինամթերքի և պայթուցիկ նյութերի, լուցկու, ակալիական մետաղների արտադրության, մշտական կամ ժամանակավոր պահպանման սենքեր</p>	<p>Նյութերով տարաների պահեստները՝ փրփրային, փոշե, գազային, փոշեգազային իմպուլսային (հատուկ տեխնիկական պայմաններով այդ նյութերի հրդեհաշիջման համար նախատեսված բաղադրությամբ)</p>
<p>3.</p>	<p>1) Կաուչուկի, ցելյուլոզի և դրանից պատրաստված արտադրատեսակների արտադրության և պահպանման սենքեր,</p> <p>2) Բրդի, մորթու, ցելյուլոզայե և դրանից պատրաստված արտադրատեսակների, $3կգ/մ^3$ -ից փոքր լցման խտությամբ այրելի նյութերի, ինչպես նաև այրելի նյութից հիմքով ֆոտո, կինո և ձայնային ժապավենների պահման սենքեր</p>	<p>Անկախ մակերեսից՝ ջրային, փոշե կամ փրփրային</p>
<p>4.</p>	<p>Հրդեհային վտանգավորության Վ1 կարգի (բացառությամբ սույն աղյուսակի 3-րդ կետում նշվածների և հացահատիկի պահպանման և վերամշակման շենքերում տեղակայված սենքերի).</p>	<p>Անկախ մակերեսից՝ ջրային, գազային, փոշե, փրփրային</p>

5.	Հրդեհային վտանգավորության Վ2-Վ3 կարգի (բացառությամբ սույն աղյուսակի 3-րդ, 6-րդ և 7-րդ կետերում նշվածների ու հացահատիկի պահպանման և վերամշակման շենքերում տեղակայված) սենքեր.	50 մ ² և ավելի՝ ջրային, գազային, փոշե, փրփրային
6.	Այլումինի փոշուց կախույթների, ռետինե սոսինձների, դյուրաբոցավառ և այրելի հիմքով լաքերի, ներկերի, սոսինձների, մածիկների և տոգորման բաղադրությունների պատրաստման սենքեր, ներկման, սինթետիկ կաուչուկի պոլիմերացման, գազատուրբինային շարժիչներով ճնշակասրահների, նավթի կրակային տաքացուցիչների, հեղուկ վառելիքով աշխատող շարժիչներով գեներատորների սենքեր	Անկախ մակերեսից՝ իմպուլսային փոշեգազային,
7.	Քիմիական նյութերի ժամանակավոր կամ մշտական պահման սենքեր	Փրփրային, փոշե, գազային, փոշեգազային իմպուլսային (հատուկ տեխնիկական պայմաններով այդ նյութերի հրդեհաշիջման համար նախատեսված բաղադրությամբ)
8.	Մխման յուղային տարաներով սենքեր	10 մ ² և ավելի՝ փոշե կամ փրփրային
9.	Չորացման խցեր, բացառությամբ ներսում 24°C-ից բարձր ջերմության դեպքում ավելի քան 60% խոնավությամբ խցերի	10 մ ³ և ավելի՝ գազային կամ փոշե
10.	Ցիկլոններ, բունկերներ՝ այրելի նյութերի հավաքման համար	25 մ ³ և ավելի՝ գազային, իմպուլսային փոշեգազային,
11.	Բարձրավոլտ փորձարկումների սրահների սենքեր, այրելի նյութերով էկրանավորված սենքեր	Անկախ մակերեսից՝ գազային կամ փոշե

12.	Հացահատիկի պահպանման և վերամշակման համար օբյեկտներ	Հացահատիկի պահպանման սենքերը՝ ջրային, փրփրային, Ալրադացներում՝ իմպուլսային փոշեգազային
13.	Հացաթխման, հացաբուլկեղենի արտադրամասեր	50 մ ² և ավելի՝ ջրային կամ փոշե
14.	Տեխնոլոգիական գործընթացների ավտոմատ կառավարման համակարգերի սարքավորումներ, որոնց խափանումը կհանգեցնի այդ գործընթացների անթույլատրելի կանգառի, ինչպես նաև կարող է վտանգ ներկայացնել մարդկանց համար:	Անկախ մակերեսից՝ գազային
15.	Հրդեհային վտանգավորության «Վ» կարգի պահեստային շենքեր. 1) մեկ հարկանի, 5,5 մետր և ավելի բարձրությամբ դարակաշարերով կամ բազմահարկ, անկախ դարակաշարերի բարձրությունից 2) 5,5 մետր և ավելի բարձրությամբ դարակաշարեր՝ այրելի նյութերի, կամ այրելի նյութերով փաթեթավորված ոչ այրելի նյութերի պահպանման համար	Անկախ մակերեսից՝ գազային, ջրային, փոշե կամ փրփրային
16.	Դյուրաբոցավառ և այրելի հեղուկների (բացի նավթի և նավթամթերքների) պահպանման համար պահեստարանների կառույցներ (տարողություններ)	100 մ ³ և ավելի՝ փրփրային
17.	Անտառանյութի ժամանակավոր կամ մշտական պահման փակ սրահներ	50 մ ² և ավելի՝ ջրային կամ փրփրային
18.	Սառնարանային խցեր մարդկանց հնարավոր ներկայությամբ՝ տեղակայված շենքերում	100 մ ³ և ավելի Գազային, փոշե կամ փրփրային
19.	Արտադրական և պահեստային սենքեր՝ հրդեհային վտանգավորության Վ4 կարգի, տեղակայված	50 մ ² և ավելի Ջրային, փոշե կամ փրփրային

	գործառական հրդեհային վտանգավորության Ֆ1.1; Ֆ1.2; Ֆ2.1; Ֆ4.1 և Ֆ4.2 դասերի շենքերում ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի	
20.	Սենքեր՝ տեղակայված գործառական հրդեհային վտանգավորության Ֆ1.1; Ֆ1.2; Ֆ2.1; Ֆ4.1 և Ֆ4.2 դասերի շենքերի ձեռնհարկերում և նկուղներում	Անկախ մակերեսից Ջրային, փոշե կամ փրփրային

Աղյուսակ 13. Տրանսպորտի և կապի ենթակառուցվածքի շենքերում, սենքերում հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգին ներկայացվող պահանջները (վարչական տարածքները՝ տես Աղյուսակ 9)

Հ/Հ	Օբյեկտների խումբը, անվանումը	Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգը
1.	Ավտոկայաններ, օդանավակայաններ, երկաթուղային կայարաններ	Ջրային ինքնաշխատ
2.	Ուղեբեռների պահման (խցերի) սենքեր	Ջրային կամ փրփրային
3.	Թունելներ երկաթուղային և ավտոճանապարհային	ՀՀՇՆ 32-04-2024 շինարարական նորմերի համաձայն
4.	Ավտոլցավորման և գազալցման կայանների լցավորման աշտարակներ	Փոշե, փրփրային
5.	Ավտոտեխսպասարկման կայաններ, նորոգման արհեստանոցներ	Անկախ մակերեսից՝ ջրային, փոշե կամ փրփրային
6.	Ստորգետնյա և վերգետնյա փակ ավտոկայանատեղիներ, (բացառությամբ անհատական բնակելի տներում)	Մինչև 10 կայանատեղ՝ նրբաջրային կամ փոշեշիջում, 11 և ավելի կայանատեղ՝ ջրային
7.	Մետրոպոլիտենի թունելներ և կայարաններ	ՀՀՇՆ 32-06-2023 շինարարական նորմերի համաձայն

8.	Օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության կառավարման հսկիչ-կարգավարական կետեր	Գազային
9.	Օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտի հաղորդումների ավտոմատացված միացումների, հեռու և մոտակա մոտեցման ռադիոկայանների և ռադիոնիշերի սենքեր	Գազային
10.	Օդային և երկաթուղային տրանսպորտային միջոցների կայանման սենքեր (անգարներ), դրանց, կամ դրանց առանձին հանգույցների արտադրության կամ նորոգման սենքեր	Զրային կամ փրփրային
11.	Հաղորդիչ և ընդունիչ ռադիոկայաններ, տիեզերական կապի անշարժ, հեռուստատեսային հաղորդիչ և վերահաղորդիչ, հեռախոսային, ռադիոռելեային միջանկյալ կայաններ, հաղորդիչ և ընդունիչ ռադիոկենտրոններ, էլեկտրոնային կապի միացումների հանգուցային կետեր	Գազային
12.	Հաղորդիչ և ընդունիչ ռադիոկայանների, տիեզերական կապի անշարժ, հեռուստատեսային հաղորդիչ և վերահաղորդիչ, հեռախոսային, ռադիոռելեային միջանկյալ կայանների, բջջային կապի հենակայանների, հաղորդիչ և ընդունիչ ռադիոկենտրոնների, էլեկտրոնային կապի միացումների հանգուցային կետերի սարքավորումների սրահներ, վերջնամասային ուժեղարար կետերի տեխնիկական արտադրամասեր, բաշխիչ սարքվածքների օդափոխման ու տրանսֆորմատորների, սենքեր	Գազային

13.	Ծանրոցների, նամակների, պարբերական հրատարակչության, ապահովագրական փոստի տեսակավորման, մշակման, պահպանման և առաքման սենքեր	Ջրային կամ փրփրային
-----	--	---------------------

270. ՀՇԻԿ-ի տիպը և հրամարիչ նյութը ընտրում է նախագծողը՝ հաշվի առնելով պաշտպանվող սենքում մարդկանց մշտապես կամ ժամանակավոր ներկայությունը, ճարտարապետական, կառուցվածքային և ծավալահատակագծային լուծումները, նյութերի, իրերի, սարքավորման մշտապես կամ ժամանակավոր գտնվելը, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները, առանձնահատկություններն ու հրդեհային վտանգավորությունը, հրամարիչ նյութերի կիրառման հնարավորություններն ու պայմանները:

271. Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերը պետք է կատարեն «ՀՐԴԵՀ» ազդանշանի ձևավորման գործառույթները, գործարկման դեպքում ազդանշան հաղորդեն ՀՏՏԿՀ-ին, ինչպես նաև կառավարման (անջատման) ազդանշան հաղորդեն տեխնոլոգիական սարքավորանքին ըստ տեխնոլոգիական կանոնակարգի կամ սույն շինարարական նորմերի պահանջների (անհրաժեշտության դեպքում՝ մինչև հրամարիչ նյութի մատուցումը), կամ սեփական, կամ ՀԱՀ-ում գտնվող տեխնիկական միջոցների միջոցով:

272. Անկախ պաշտպանվող օբյեկտում սենքերի կամ հրդեհային հատվածամասերի քանակից, ՀՇԻԿ-ների նախագծում ընդունվում է միաժամանակյա մեկ հրդեհ, եթե այլ բան նախատեսված չէ նախագծման տեխնիկական առաջադրանքում:

273. Հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերի տեխնիկական միջոցներն ու սարքվածքները պետք է ունենան համապատասխան սերտիֆիկատներ ու կիրառվեն ըստ դրանց ՏՓ-ի, գործող ստանդարտների, գերատեսչական և այլ նորմատիվ ակտերի պահանջների:

274. Կայանքների ձեռքով գործարկման սարքվածքները պետք է գտնվեն հնարավոր հրդեհի գոտուց դուրս և պաշտպանված լինեն պատահական գործարկումից (կնիքել կապարային կամ այլ տիպի կնիքով) և մեխանիկական վնասվածքներից:

275. Բացառությամբ ջրային, ցածր և միջին պատիկությամբ փրփրային հրդեհաշիջ-

ման կայանքների, ինքնաշխատ և հեռավար գործարկմամբ կայանքները պետք է ապահովեն պաշտպանվող սենք հրամարիչ նյութի թողարկման հապաղում այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է սենքերից մարդկանց տարհանման, ընդհանուր օդափոխության և, անհրաժեշտության դեպքում, օդորակման համակարգերի անջատման, կափույրների վերադիրքավորման համար, բայց ոչ պակաս, քան սենքում տարահանման մասին ազդարարման սարքվածքների միացման պահից հաշված 10 վրկ:

276. Պաշտպանվող սենքից տարհանման ժամանակը պետք է որոշել ԳՕՍՍ 12.1.004-ով: Փոքր և մուտքի թույլտվությամբ անձանց սահմանափակ քանակության դեպքերում թույլատրվում է տարհանման ժամանակը որոշել կայանքը տեղակայելուց հետո ժամանակաչափմամբ:

277. Պաշտպանվող սենքում հապաղման ժամանակը պետք է ավելի երկար լինի, քան ընդհանուր օդափոխության համակարգի կափույրների լրիվ փակման կամ, դրանց բացակայության դեպքում, օդափոխիչի կանգառի ժամանակը:

278. Հրդեհաշիջման ժամանակ, տեխնոլոգիական գործընթացների բնույթից ելնելով, թույլատրվում է չանջատել պաշտպանվող սենքում տեխնոլոգիական սարքավորանքի ջերմային անվտանգությունն ապահովող օդորակման համակարգի կայանքները:

279. Ցանկացած հիմնավորմամբ թարմ օդի մուտքը հրդեհի օջախ արգելվում է:

280. Կայանքների սարքավորանքի հողանցումն ու գրոյացումը պետք է իրականացվի ըստ ՀՀ կառավարության 2023 թ. ապրիլի 21-ի N 592-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոնները» փաստաթղթի և դրանց ՏՓ-ի պահանջներով:

281. Հրամարիչ փոշու թողարկումից հետո մինչև նրա գետնին նստելը, ինչպես նաև գազային և օդակախոյթային նյութերով հրդեհի մարումից հետո մինչև օդափոխության ավարտը և հրդեհի արգասիքների հեռացումը, պաշտպանվող սենք թույլատրվում է մտնել միայն Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի (ՀՍՍ ԳՕՍՍ Ռ 53256-2023, ՀՍՍ ԳՕՍՍ Ռ 53259-2023) պահանջներին համապատասխանող շնչառական օրգանների պաշտպանիչ միջոցներով:

282. Կայանքները և հրամարիչ նյութերը շահագործման, տեխնիկական սպասարկման փորձարկման և նորոգման ընթացքում պետք է բավարարեն բնապահպանա-

կան պահանջներին:

283. Բացառությամբ ջրային (չհաշված սպրինկլերների հարկադիր գործարկմամբ), ցածր և միջին պատիկությամբ փրփրային հրդեհաշիջման կայանքների, ինքնաշխատ և հեռավար գործարկմամբ կայանքները մինչև շահագործման հանձնելը առանց հրամարիչ նյութերի թողարկման շղթաների միացման պետք է անցնեն փորձնական շահագործման փուլ նախագծման առաջադրանքով որոշված ժամանակահատվածում, և այդ ընթացքում ինքնաշխատ սարքերով, իսկ շուրջօրյա հերթապահության դեպքում՝ հատուկ մատյանում պետք է գրանցվեն ՀՇԻԿ-ի ՀԱՀ-ի բոլոր կեղծ գործարկումները և կատարվի դրանց պատճառների վերլուծություն: Փորձարկման ընթացքում կայանքի կեղծ կամ չարտոնված գործարկումների բացակայության դեպքում կայանքն ընդունվում է շահագործման, հակառակ դեպքում այն պետք է կրկին ստուգվի և կարգաբերվի:

3.2. ԶՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

3.2.1. ԶՐՈՎ, ՑԱԾՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՈՒՐՈՎ ԿԱՅԱՆՔՆԵՐ.

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

284. Զրով, ցածր և միջին պատիկությամբ փրփուրով ՀՇԻԿ-ները (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ նաև կայանքներ) կիրառվում են մակերեսային և տեղային մակերեսային հրդեհների շիջման համար:

285. Կայանքները պետք է համապատասխանեն ԳՕՍՏ 12.3.046-91, ԳՕՍՏ 50680-94 և ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 50800-2023 պահանջներին:

286. Զրային և փրփրային ՀՇԻԿ-ը լինում են.

- 1) սպրինկլերային՝
 - ա. հարկադիր (կառավարվող) գործարկմամբ,
 - բ. գործարկման հսկողությամբ,
- 2) նրբաջրային (միայն ջրայինները),
- 3) դրենչերային,
- 4) սպրինկլեր-դրենչերային,
- 5) ռոբոտացված:

287. Զրով, ցածր և միջին պատիկությամբ փրփուրով հրդեհաշիջման կայանքներով պաշտպանման ենթակա սենքերը, արտադրություններն ու տեխնոլոգիական

գործընթացները, կապված նրանց գործառնական նշանակությունից, այրելի նյութերի հրդեհային բեռի մեծությունից ու հրդեհի զարգացման վտանգավորության աստիճանից, դասակարգվում են 8 խմբերում ըստ Աղյուսակ 14-ի, որտեղ սենքերի պայթյունահրդեհային վտանգավորության կարգերը որոշվում են ըստ սույն շինարարական նորմերի 4-րդ բաժնի:

Աղյուսակ 14. Ջրով, ցածր և միջին պատիկությամբ փրփուրով հրդեհաշիջման

կայանքներով պաշտպանման ենթակա օբյեկտների դասակարգումը

Հ/Հ.	Սենքերի, արտադրությունների ու արտադրական գործընթացների բնորոշումը	Խումբը
1.	Գրապահոցների, գրադարանների, կրկեսների, թանգարանային այրելի արժեքների, պահեստարանների, թանգարանների ու ցուցահանդեսների, պատկերասրահների, թատրոնների, համերգային ու կինոհամերգային դահլիճների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, խանութների, կառավարման շենքերի, հյուրանոցների, հիվանդանոցների սենքեր:	1
2.	Պայթյունահրդեհային և հրդեհային վտանգավորության Վ3 կարգի սենքեր՝ փայտամշակման, մանածագործվածքների, հյուսվածքեղենի, հյուսվածք-զարդեղենի, ծխախոտի, կոշիկի, կաշվի, մորթու, թաղանթաթղթային և տպագրական արտադրության, ներկման, տոգորման, ներկարարական, խառնուրդապատրաստման, յուղազերծման, պահածոյացման և ապապահածոյացման, դյուրավառ հեղուկներ և այրելի հեղուկների կիրառմամբ մասերի լվացման, բամբակի, արհեստական և թաղանթային նյութերի արտադրության, կարի արտադրության, ռետինատեխնիկական իրերի կիրառմամբ արտադրության, ավտոմոբիլների սպասարկման կազմակերպությունների, ավտոտնակների և ավտոկայանատեղիների սենքեր:	2
3.	Ռետինատեխնիկական իրերի արտադրության սենքեր:	3
4.	Պայթյունահրդեհային և հրդեհային վտանգավորության Վ2 կարգի սենքեր՝ բնական և արհեստական այրվող մանրաթելերի արտադրության սենքեր, ներկման և չորացման խցեր, ներկման և չորացման	4

	բաց տեղամասեր, դյուրաբոցավառ և այրելի հեղուկների կիրառմամբ ներկերի, լաքերի և սոսինձների պատրաստման արտադրությունների սենքեր:	
5.	Պայթյունահրդեհային և հրդեհային վտանգավորության Վ1 կարգի սենքեր՝ ճնշակասարահներ, վերականգնման, ջրածնավորման, լուծահանման կայաններ, այրվող գազերի, բենզինի, սպիրտի, եթերային նյութերի և այլ դյուրաբոցավառ և այրելի հեղուկների կիրառմամբ արտադրությունների սենքեր:	5
6.	Այրելի փաթեթավորմամբ չայրվելի նյութերի պահեստներ, դժվար այրելի նյութերի պահեստներ:	6
7.	Այրելի պինդ նյութերի, այդ թվում՝ ռետինի և ռետինատեխնիկական իրերի, կաուչուկի խեժերի պահեստներ:	7
8.	Լաքերի, ներկերի, դյուրաբոցավառ և այրելի հեղուկների պահեստներ:	8

288. Սպրինկլերային, դրենչերային և սպրինկլեր-դրենչերային կայանքների բնութագրերը պետք է ընդունել Աղյուսակներ 15-17-ից (տես նաև 290-րդ, 292-րդ և 294-րդ կետերը):

289. Դրենչերային և հարկադիր (կառավարվող) գործարկմամբ սպրինկլերային կայանքների համար Աղյուսակ 15-ը կիրառելի է միայն ջրով կամ փրփրաջրով պաշտպանվող մակերեսի ոռոգման սաստկության և ոռոգիչների միջև առավելագույն հեռավորության մասով:

290. Աղյուսակ 15-ում.

1) ոռոգման նվազագույն մակերեսը տրված է սպրինկլերային և սպրինկլեր-դրենչերային կայանքների համար,

2) թույլատրվում է ոռոգիչների միջև առավելագույն հեռավորություններն ընդունել ըստ ոռոգիչների ՏՓ-ի՝ ապահովելով 264-րդ կետի պահանջը,

3) հրդեհաշիջման այն կայանքներում, որտեղ կիրառվող ջրին ավելացված է ընդհանուր նշանակության փրփրարարի հիմքով թրջիչ, ոռոգման սաստկություննու ջրի նվազագույն ծախսը ընդունվում է 1.5 անգամ պակաս քան մաքուր ջրի կիրառման ժամանակ,

4) սպրինկլերային կայանքների համար ոռոգման նվազագույն սաստկություններն ու ջրի կամ փրփրաջրի նվազագույն ծախսերը բերված են միջև 10մ բարձրությամբ սենքերի ու մակերեսի 10%-ից ոչ ավելի լուսանցների մակերեսով սենքերի համար: Մակերեսի 10%-ից ավելի լուսանցների մակերեսով սենքերի բարձրությունը պետք է ընդունել միջև լուսանցի ծածկը,

5) 10-ից 20մ բարձրությամբ սենքերի համար կայանքների բնութագրերը պետք է ընդունել 16-րդ և 17-րդ աղյուսակներով,

6) 20-ից մինչև 30մ բարձրությունների դեպքում պետք է կիրառել համապատասխան փորձարկումներն անցած դրենչերային կամ հարկադիր գործարկմամբ սպրինկլերային կայանքներ,

7) եթե սպրինկլերային կամ սպրինկլեր-դրենչերային կայանքներով ոռոգվող փաստացի S_{ϕ} մակերեսը փոքր է ոռոգման ենթական նվազագույն S_{ψ} մակերեսից, ապա հրամարիչ նյութի անհրաժեշտ ծախսը կարող է փոքրացվել $K_s = S_{\phi} / S_{\psi}$ գործակցով,

8) դրենչերային կայանքներում հրամարիչ նյութի ծախսը հաշվելու համար անհրաժեշտ է որոշել 14-րդ աղյուսակով սենքին համապատասխանող խումբը, 15–17-րդ աղյուսակներով համապատասխան ելակետային տվյալները և կայանքով պաշտպանվող նվազագույն մակերեսի սահմաններում ոռոգիչների անհրաժեշտ քանակը,

9) աղյուսակում նշված են ընդհանուր նշանակության փրփրարով ստացված փրփրաջրով ոռոգման նվազագույն սաստկությունները, այլ նշանակության (օրինակ՝ հատուկ նշանակության) փրփրարարի կիրառման դեպքերում ոռոգման սաստկությունը պետք է ընդունել ըստ այդ կոնկրետ նյութի ՆՓ և ՏՓ-ի,

10) ցածր պատիկությամբ փրփուրով մակերեսային հրդեհաշիջման դեպքում կայանքի աշխատանքի տևողությունը պետք է ընդունել ոչ պակաս քան.

ա. 10 րոպե - Վ2 և Վ3 կարգի հրդեհային վտանգավորության սենքերում,

բ. 15 րոպե - Ա, Բ կարգի պայթյունահրդեհային և Վ1 կարգի հրդեհային վտանգավորության սենքերում,

գ. 25 րոպե – 8-րդ խմբի սենքերում:

11) Սենքերի պայթյունահրդեհավտանգավորության Ա և Բ կարգերը որոշվում են ըստ սույն շինարարական նորմերի 4-րդ բաժնի:

12) ոռոգիչների դասավորությունը (հեռավորությունը միմյանցից և պատերից) պետք է

ապահովի ոռոգման նորմատիվային սաստկությունը պաշտպանվող սենքի բոլոր կետերում՝ ապահովելով 264-րդ կետի պահանջը,

13) թեք ծածկերի տակ ոռոգիչները դասավորելիս պաշտպանվող մակերեսները պետք է դիտարկել հորիզոնական պրոյեկցիայում,

Աղյուսակ 15. Սպրինկլերային, դրենչերային և սպրինկլեր-դրենչերային կայանքների բնութագրերը

Խումբը	Ոռոգման նվազագույն սաստկությունը, i_n l/(վրկxմ ²)		Նվազագույն ծախսը*, Q_n l/վրկ		Ոռոգման նվազագույն մակերեսը, S_n մ ²	Ոռոգման տևողությունը, րոպե	Ոռոգիչների միջև առավելագույն հեռավորությունը* ($\pm 5\%$), մ
	Ջուր	փրփրաջուր	Ջուր	փրփրաջուր			
1	0,08	-	10	-	60	30	3,5
2	0,12	0,08	30	20	120	60	3,5
3	0,24	0,12	60	30	120	60	3,5
4	0,30	0,15	110	55	180	60	3,5
5	-	0,17	-	65	180	60	3
6	Ըստ Աղյուսակ 17-ի				90	60	3
7					90	60	3
8					90	-	3

291.10մ-ից բարձր և մինչև 20մ ներառյալ բարձրությամբ և 1-5-րդ խմբի սենքերում կայանքների բնութագրերը պետք է ընդունել Աղյուսակ 16-ից (տես նաև 292-րդ կետը):

292. Աղյուսակ 16-ում.

1) ջրի նվազագույն ծախսերի և ոռոգման նվազագույն սաստկությունների բնութագրերը նշված են Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵUSU 043/2017 կանոնակարգի (<US ԳՕՍՏ Ռ 51043-2023) պահանջներին համապատասխանող ընդհանուր նշանակության ոռոգիչների համար,

2) աղյուսակում նշված են S տիպի փրփրարարով ստացված փրփուրով ոռոգման

սաստկությունները: Այլ տիպի, օրինակ՝ AFFF տիպի փրփրարարի կիրառման դեպքում ոռոգման սաստկությունը պետք է որոշել ըստ նրա ՆՓ և ՏՓ-ի,

3) եթե սարինկերային, դրենչերային կամ փրփրային կայանքներով ոռոգվող փաստացի S_{ϕ} մակերեսը փոքր է ոռոգման ենթական նվազագույն S_u մակերեսից, ապա հրամարիչ նյութի անհրաժեշտ ծախսը կարող է փոքրացվել $K_s = S_{\phi} / S_u$ գործակցով:

Աղյուսակ 16. Կայանքների բնութագրերը 10մ - 20մ ներառյալ բարձրությամբ 1-5-րդ խմբերի սենքերում

Հ/Հ	Սենքի բարձրությունը, մ	Սենքերի խումբը								
		1		2		3		4		5
		Ջուր	Ջուր	փրփրաջուր	Ջուր	փրփրաջուր	Ջուր	փրփրաջուր	Ջուր	
1. Ոռոգման նվազագույն սաստկությունը, i_u լ/(վրկսմ²)										
1)	10.01 – 12.00	0,09	0,13	0,09	0,26	0,13	0,33	0,17	0,20	
2)	12.01 – 14.00	0,10	0,14	0,10	0,29	0,14	0,36	0,18	0,22	
3)	14.01 – 16.00	0,11	0,16	0,11	0,31	0,16	0,39	0,20	0,25	
4)	16.01 – 18.00	0,12	0,17	0,12	0,34	0,17	0,42	0,21	0,27	
5)	18.01 – 20.00	0,13	0,18	0,13	0,36	0,18	0,45	0,23	0,30	
2. Ջրի նվազագույն ծախսը, Q_u լ/վրկ										
1)	10.01 – 12.00	12	35	25	70	35	130	65	95	
2)	12.01 – 14.00	14	40	30	85	45	155	80	115	
3)	14.01 – 16.00	17	50	35	95	50	180	90	140	
4)	16.01 – 18.00	20	57	40	115	60	215	105	165	
5)	18.01 – 20.00	24	65	50	130	65	240	120	195	
3. Ոռոգման նվազագույն մակերեսը, S_u մ²										
1)	10.01 – 12.00	66	132	132	198	198	238	238	238	
2)	12.01 – 14.00	72	144	144	216	216	259	259	259	
3)	14.01 – 16.00	78	156	156	230	230	276	276	276	
4)	16.01 – 18.00	84	168	168	252	252	303	303	303	
5)	18.01 – 20.00	90	180	180	270	270	325	325	325	

293. Մինչև 5.5 մ ներառյալ բարձրությամբ պահեստավորմամբ, 6-8-րդ խմբերին պատկանող և մինչև 10.0մ ներառյալ բարձրությամբ սենքերում կայանքների բնութագրերը պետք է ընդունել Աղյուսակ 17-ից (տես նաև 294-րդ կետը):

294. Աղյուսակ 17-ում.

- 1) 7-րդ խմբի սենքերում ռետինի, կաուչուկի ու խեժերի հրդեհաշիջումը թույլատրվում է իրականացնել թրջիչով ջրով կամ ցածր պատիկությամբ փրփուրով,
- 2) 8-րդ խմբի սենքերում հրդեհաշիջման համար արգելվում է թրջիչների կիրառումը,
- 3) աղյուսակում նշված են S տիպի փրփրարարով ստացված փրփուրով ոռոգման սաստկությունները: Այլ տիպի, օրինակ՝ AFFF տիպի փրփրարարի կիրառման դեպքում ոռոգման սաստկությունը պետք է որոշել ըստ նրա տեխնիկական բնութագրերի,
- 4) 5.5մ-ից ոչ բարձր պահեստավորման բարձրությամբ և սենքի 10մ-ից մինչև 30մ ներառյալ բարձրությամբ 6-8-րդ խմբերի պահեստներում ոռոգման i_h սաստկությունն ու ջրի Q_h քանակը պետք է որոշել հետևյալ բանաձևերով.

$$Q_h = [1 + 0.05 \times (H - 10)] \times Q_u \quad (1)$$

$$i_h = [1 + 0.05 \times (H - 10)] \times i_u \quad (2)$$

որտեղ Q_u -ն և i_u -ը՝ – 16-րդ աղյուսակում բերված համապատասխանաբար ջրի նվազագույն քանակությունն ու ոռոգման նվազագույն սաստկությունն են, H-ը՝ 10մ-ից մինչև 30մ միջակայքում սենքի փաստացի բարձրությունն է:

295. Հարկադիր գործարկմամբ ՀՇԻԿ-ի կիրառման դեպքում ոռոգիչների դասավորությունն ընդունելիս պետք է նկատի ունենալ 3.2.5 բաժնի պահանջները:

296. Ջրային և փրփրային հրդեհաշիջման կայանքների կիրառման նպատակահարմարության գնահատումը կարելի է կատարել գիտատեխնիկական հրապարակումների մեթոդով:

297. Ջրային և փրփրային կայանքները պետք է բավարարեն համապատասխանաբար ՀՍ ԳՕՍ Ռ 50680-2023 և ՀՍ ԳՕՍ Ռ 50800-2023 պահանջներին:

298. Փրփրային հրդեհաշիջման այլ, նոր տեխնոլոգիաների կիրառման դեպքերում, օրինակ՝ ճնշումային փրփրաշիջման, այդ կայանքների հաշվարկը պետք է կատարել ըստ դրանց ՆՓ և ՏՓ-ի:

299. Սենքերում լարման տակ գտնվող չմեկուսացված էլեկտրալարերի, մալուխների, այդ թվում՝ սարքավորումների կազմում, առկայության դեպքում հրամարիչ նյութը պետք է

մատուցվի էլեկտրաէներգիայի անջատումից հետո:

Աղյուսակ 17. Մինչև 5.5 մ ներառյալ բարձրությամբ պահեստավորմամբ, 6-8-րդ խմբերին պատկանող և մինչև 10.0մ ներառյալ բարձրությամբ սենքերում կայանքների բնութագրերը

Հ/Հ	Պահեստավորման բարձրությունը, մ	Սենքերի խումբը					
		6		7		8	
		Ոռոգման նվազագույն սաստկությունը, i_b լ/(վրկսմ ²)					
		Ջուր	փրփրաջուր	Ջուր	փրփրաջուր	Ջուր	փրփրաջուր
1.	մինչև 1.00 մ	0,08	0,04	0,16	0,08	-	0,1
2.	1.01 – 2.00 մ	0,16	0,08	0,32	0,16	-	0,2
3.	2.01 – 3.00 մ	0,24	0,12	0,40	0,24	-	0,3
4.	3.01 – 4.00 մ	0,32	0,16	0,45	0,32	-	0,4
5.	4.01 – 5.50 մ	0,40	0,32	0,50	0,40	-	0,5
6.	Ջրի նվազագույն ծախսը, Q_b լ/վրկ						
7.	մինչև 1.00 մ	15	7,5	30	15	-	18
8.	1.01 – 2.00 մ	30	15,0	60	30	-	36
9.	2.01 – 3.00 մ	45	22,5	75	45	-	54
10.	3.01 – 4.00 մ	60	30,0	85	60	-	75
11.	4.01 – 5.50 մ	75	37,5	90	75	-	90

300. Թույլատրվում է հրամարիչ նյութի մատուցումը պաշտպանվող սենք առանց էլեկտրասնուցման անջատման, եթե տեխնիկական առաջադրանքով միանշանակ բացառվում է սենքում մարդկանց առկայությունը:

301. Սպրինկլերային, սպրինկլեր-դրենչերային օդալցված կամ հարկադիր գործարկմամբ կայանքներում անկախ դրանցում հատվածամասերի քանակից, կայանքում պետք է նախատեսել օդի ճնշման աղբյուր ներքոգրյալ տարբերակներից մեկով.

- 1) ճնշակ,
- 2) օդի կամ ազոտի գլանանոթ կամ գլանանոթների մարտկոց,
- 3) վերոգրյալ կետերի համադրությամբ լրակազմ:

302. Օդի մատուցումը խողովակաշար պետք է իրականացվի չորացնող զտիչների միջով աղտոտվածության 1-ին դասի օդով՝ համաձայն ԳՕՍՏ 17433-80:

303. Կայանքները, բացի սպրինկլերային և սպրինկլեր-դրենչերայիններից, պետք է ապահովեն.

1) հեռավար գործարկում՝ պաշտպանվող սենքի մուտքի մոտ տեղակայող սարքվածքներից և անհրաժեշտության դեպքում՝ հրդեհային դիտակետից,

2) տեղային գործարկում.

ա. ագրեգատային կայանքների դեպքում՝ կառավարման հանգույցի սենքում և/կամ պոմպակայանում տեղակայված սարքվածքներից,

բ. մոդուլային կայանքների դեպքում՝ հրամարիչ նյութով լիցքավորված անոթների տեղակայման սենքում տեղակայված սարքվածքներից:

304. Մի սենքում կամ կեղծ առաստաղից վերև պետք է տեղակայվեն մի տիպի, կառուցվածքի և արտադրողականության նույն գործակցով ոռոգիչներ, սպրինկլերների դեպքում՝ նաև հավասար ջերմային իներցիոնության գործակցով:

305. Մի սենքում սպրինկլերային ոռոգիչների հետ թույլատրվում է տեղակայել ջրային վարագույրի դրենչերային ոռոգիչներ բնութագրերով սպրինկլերային ոռոգիչներից տարբերվող, բայց նույն տիպի և նույն արտադրողականության գործակցով:

306. Ոռոգիչները պետք է տեղակայվեն 15-17-րդ աղյուսակների և իրենց ՏՓ-ի համաձայն (դիրքը, ջերմային իներցիոնությունը, ոռոգման սաստկությունն ու ուրվագիծը և այլն), իսկ հեղուկացիրները՝ ըստ դրանց ՏՓ-ի:

307. Ջրալցված կայանքներում սպրինկլերային ոռոգիչները կարելի է տեղակայել վարդակները դեպի վար, վեր և կողմ, իսկ օդալցվածներում՝ միայն դեպի վեր և կողմ:

308. Ոռոգիչի և հրդեհային բեռի, տեխնոլոգիական սարքավորանքի կամ շինարարական կառուցվածքատարրի վերին կետի միջև հեռավորությունը որոշվում է հաշվի առնելով հիդրավլիկական ճնշման աշխատանքային միջակայքը և դրան համապատասխան ջրի շիթերի հոսքի ուրվագիծը:

309. Կայանքները պետք է ապահովված լինեն տեղակայված յուրաքանչյուր մոդելի, տիպի կամ արտադրողականության ոռոգիչներից պահուստային ոռոգիչներով, ոչ պակաս քան.

1) մինչև 100 հատը ներառյալ՝ համապատասխանաբար 5 հատ և 1 հատ,

- 2) մինչև 1000 հատը ներառյալ՝ համապատասխանաբար 10 հատ և 2 հատ,
- 3) ավելի քան 1000 հատ՝ համապատասխանաբար 15 հատ և 3 հատ:

Պահուստային քանակությունը պետք է պահվի օբյեկտում կամ կայանքի սպասարկում իրականացնող կազմակերպությունում:

310. 1-ին խմբի սենքերի կեղծ առաստաղների վրա կարող են տեղակայվել թաքցված, խորացված կամ գաղտնի ոռոգիչներ, իսկ 2-րդ խմբի դեպքում՝ միայն խորացված:

311. Բոլոր տիպի կայանքների թելադրող ոռոգիչից 10-15 սմ առաջ պետք է տեղակայել ճնշաչափ, իսկ ոռոգիչից հետո՝ խցափակիչ կամ նորմալ փակ փական:

312. Կայանքների պարբերական փորձարկումների ժամանակ թելադրող ոռոգիչի, յուրաքանչյուր հրդեհային հատվածամասում ջրի ծախսը, այդ ընթացքում ջրի ճնշումը, ինչպես նաև պոմպերի աշխատունակությունը (բնութագրերը) ստուգելու համար բոլոր տիպի կայանքներում պետք է նախատեսվեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

313. Հրդեհի տեղորոշման նպատակով կարող են կիրառվել հրդեհի հասցեային ինքնաշխատ կամ սատելիտային ազդասարքեր, ջրի հոսքի տվիչներ, գործարկման հսկողությամբ սպրինկլերներ կամ այլ տեխնիկական միջոցներ: Տեսահսկման համակարգերը կարող են կիրառվել միայն վերոգրյալ սարքերին հավելյալ:

314. Ջրի հոսքի տվիչներից առաջ թույլատրվում է տեղակայել լրիվ բաց և լրիվ փակ դիրքերի տվիչներով փակիչ սարքվածքներ:

315. Ջրալցված կայանքների DN65-ից մեծ սնիչ և բաշխիչ խողովակներին թույլատրվում է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 80-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերի և Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 (ՀՍ ԳՕՍ Ռ 51115-2023, ՀՍ ԳՕՍ Ռ 53278-2023, ՀՍ ԳՕՍ Ռ 53331-2023, ԳՕՍ Ռ 51844-2009 և ԳՕՍ Ռ 53279-2009) կանոնակարգի պահանջներին համապատասխան միացնել ներքին հակահրդեհային ջրմուղի հրդեհային ծորակները (ներքին հակահրդեհային ջրմուղի և ջրային կայանքի համակցված համակարգ), և կայանքի պոմպերի գործարկումը իրականացնել 238-րդ կետի համաձայն:

316. Ներքին հակահրդեհային ջրմուղի աշխատանքի տևողությունը ջրային կայանքի հետ համակցված լինելու դեպքում պետք է լինի ոչ պակաս, քան նշված է աղյուսակ 15-ում,

կամ ավելի՝ եթե նշված է տեխնիկական առաջադրանքում:

3.2.2.ՍՊՐԻՆԿԼԵՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

317. Ջրային և փրփրային սպրինկլերային կայանքները (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ նաև կայանքներ), կապված սենքերում օդի ջերմաստիճանից, պետք է նախատեսել.

- 1) ջրալցված՝ 5°C և բարձր օդի նվազագույն ջերմաստիճանով սենքերի համար,
- 2) օդալցված՝ 5°C-ից ցածր օդի նվազագույն ջերմաստիճանով սենքերի համար, ինչպես նաև սույն շինարարական նորմերով նախատեսված դեպքերում:

318. Հրդեհաշիջման ու ջրային վարագույրների համար նախատեսված սպրինկլերները պետք է տեղակայվեն առավելագույնը 20 մ բարձրության վրա:

319. 20-30մ բարձրությունների դեպքում թույլատրվում է հրդեհի ազդասարքերից գործարկվող դրենչերային կամ հարկադիր գործարկմամբ կայանքների կիրառումը միայն ըստ ՆՓ և ՏՓ-ի:

320. Շենքերի կառուցվածքատարրերի, ծածկերի պաշտպանության համար սպրինկլերները կարող են տեղակայվել 20մ-ից բարձր և այդ դեպքում կայանքի բնութագրերը պետք է ընդունել 15-րդ Աղյուսակից՝ որպես 1-ին խմբի սենքեր:

321. Հրդեհաշիջման կայանքի մեկ հատվածամասում կարող են տեղակայվել առավելագույնը 800 հատ տարբեր սպրինկլերներ:

322. Եթե կայանքը կամ որևէ հրդեհաշիջման հատվածամաս բաժանված է ուղղությունների և այդ ուղղությունների նույնականացումը կատարվում է հոսքի տվիչներով կամ կիրառված են գործարկման հսկողությամբ սպրինկլերներ, ապա յուրաքանչյուր ուղղությունում կարող են տեղակայվել առավելագույնը 1200 հատ տարբեր սպրինկլերներ:

323. Սպրինկլերային կայանքներում ջրային վարագույրների աշխատանքի տևողությունը պետք է համընկնի ընդհանուր կայանքի աշխատանքի տևողության հետ:

324. Օդալցված կայանքների թելադրող սպրինկլերի գործարկումից մինչև նրանից ջրի կամ փրփուրի մատուցման ժամանակը չպետք է գերազանցի 180 վարկյանը, ներառյալ արագարարների և արտաձիչների կիրառման դեպքերում:

325. Սպրինկլերային և սպրինկլեր-դրենչերային կայանքների սնիչ և բաշխիչ խողովակաշարերում օդի առավելագույն ճնշումը պետք է ընտրել կայանքի իներցիոնությունը

180վրկ-ից ոչ ավելի ապահովելու պայմանից:

326. Օդալցված կայանքների խողովակաշարերը մինչև աշխատանքային ճնշմամբ օդով լիցքավորման ժամանակը չպետք է գերազանցի 1 ժամը:

327. Օդալցված կայանքներում ճնշման կորուստների վերականգնման օդային փոխհատուցիչի անցքի տրամագիծը պետք է ապահովի սպրինկլերի գործարկման դեպքում նրանով օդի արտահոսքից առնվազն 3 անգամ պակաս հոսք:

328. Հերթապահ գործելակարգում սպրինկլերային կայանքներում ճնշման պոմպի, ճնշակի կամ ճնշման այլ աղբյուրների միջոցով պետք է ապահովվի հաշվարկային անհրաժեշտ ճնշումից 0.1 ՄՊա-ով ոչ պակաս ճնշում:

329. Հրդեհի տեղորոշման նպատակով հեղուկի հոսքի տվիչի կիրառման դեպքում կարող է օգտագործվել միայն տվիչի հպակների մի խումբը:

330. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի համաձայն Կ0 և Կ1 հրդեհային վտանգավորության դասի հեծանային ծածկերով (վերնածածկերով) 0.3մ ավելի, իսկ մնացած դեպքերում 0.2 մ ավելի բարձրությամբ ելուստներով շենքերում, սպրինկլերային ոռոգիչները պետք է տեղակայվեն հեծանների, սալերի կողերի և ծածկի (վերնածածկի) ելուստված այլ տարրերի միջև՝ ապահովելով պաշտպանվող մակերեսի ոռոգման հավասարաչափությունը:

331. Ընդհանուր նշանակության, բացի թաքցված, խորացված և գաղտնի, սպրինկլերային ոռոգիչների ջերմազգայուն տարրի հեռավորությունը մինչև ծածկի (վերնածածկի) հարթությունը պետք է լինի 0.08-0.3 մ ներառյալ:

332. Հատուկ դեպքերում, կապված ծածկի կատուցվածքից (օրինակ՝ ելուստների առկայությունը) թույլատրվում է այդ հեռավորությունը հասցնել մինչև 0.4մ:

333. Հորիզոնական սպրինկլերային ոռոգիչների ջերմազգայուն տարրի հեռավորությունը մինչև ծածկի (վերնածածկի) հարթությունը պետք է լինի 0.07-ից մինչև 0.15մ ներառյալ:

334. Բացառիկ դեպքերում թույլատրվում է սպրինկլերային ոռոգիչները տեղակայել ավելի ցածր՝ ջերմամեկուսիչ նյութից պատրաստված էկրանների կիրառմամբ, այն է՝

- 1) ուղղաձիգ տեղակայվող սպրինկլերների էկրանները պետք է լինեն կոնաձև կամ

պրիզմայաձև, հորիզոնական ուղղությամբ հիմքի եզրագծերը ոռոգիչիջերմազգ այուն տարրից 0.40մ-ից ոչ պակաս հեռավորությամբ և առավելագույնը 0.20մ բարձրությամբ,

2) հորիզոնական սպրինկլերների համար ջերմային էկրանը կարող է լինել 1) ենթակետում նշված կոնի կամ պրիզմայի կետը՝ հովհարաձև պատին կպած,

3) ջերմային էկրանի տակ սպրինկլերային ոռոգիչի բարձրությունը որոշելիս պետք է հաշվի առնել 308-րդ կետի պահանջը, և ապահովել ջերմազգայուն տարրի դիրքը կոնի կամ պրիզմայի գագաթից ոչ ավելի քան 0.20 մ ցածր:

335. Հարկադիր գործարկմամբ սպրինկլերների դեպքում ջերմազգայուն տարրերի հեռավորությունները մինչև ծածկի (վերնածածկի) հարթությունը չի նորմայավորվում:

336. Եթե սենքերում առկա են 0.75մ լայնությամբ կամ տրամագծով և ներքևի հարթությունը գետնից 0.7մ-ից բարձր տեխնոլոգիական սարքավորանք, հորիզոնական կամ թեք օդատարներ և այլն, որոնք խանգարելու են պաշտպանվող տարածքի ոռոգմանը, ապա դրանց տակ պետք է տեղակայվեն լրացուցիչ ոռոգիչներ:

337. 30°-ից ավելի թեքություն ունեցող միալանջ և երկլանջ վերնածածկով սենքերում, հորիզոնական հեռավորությունը սպրինկլերային ոռոգիչներից մինչև պատերը և վերնածածկի գագաթնագիծը, վերնածածկի հրդեհային վտանգավորության 40 դասի դեպքում պետք է լինի 1.5մ-ից ոչ ավելի և 0.8մ-ից ոչ ավելի՝ մնացած դեպքերում:

338. Սպրինկլերային ոռոգիչների գործարկման անվանական ջերմաստիճանը, կախված նախագծման տեխնիկական առաջադրանքով դրանց տեղակայման վայրում հնարավոր առավելագույն ջերմաստիճանից, պետք է ընտրվի Աղյուսակ 18-ից:

339. Սպրինկլերի տեղակայման գոտում, որպես առավելագույն թույլատրելի աշխատանքային ջերմաստիճան, ընդունվում է հետևյալ դեպքերից.

1) տեխնոլոգիական նորմալ գործընթացի ժամանակ կամ վթարային իրավիճակում հնարավոր առավելագույն ջերմաստիճանը,

2) արևի ազդեցությամբ պաշտպանվող տարածքի ծածկի տաքացման հնարավոր առավելագույն ջերմաստիճանը:

340. Ըստ սույն շինարարական նորմերի 4-րդ բաժնի Վ1 և Վ2 կարգի պահեստային սենքերում, 10մ-ից ավելի բարձրությամբ և հիմնականում դյուրավառ և այրելի հեղուկներ պահվող սենքերում պետք է նախատեսել ըստ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017

կանոնակարգի (ՀՍ ԳՕՍ Ռ 51043-2023) պահանջներին համապատասխան 50 (մxվրկ)^{0.5} -ը չգերազանցող ջեմային իներցիոնությամբ սպրինկլերներ:

Աղյուսակ 18. Սպրինկլերային ոռոգիչների գործարկման անվանական ջերմաստիճանները

Հ/Հ	Սպրինկլերի տեղակայման վայրում հնարավոր առավելագույն ջերմաստիճանը °C, ոչ ավելի քան	Սպրինկլերայի գործարկման անվանական ջերմաստիճանը, °C
1.	38	57
2.	50	68
3.	52	72
4.	52	74
5.	58	79
6.	70	93
7.	77	100
8.	86	121
9.	100	141
10.	120	163
11.	140	182
12.	162	204
13.	185	227
14.	200	240
15.	220	260
16.	300	343

341. Այն տեղերում, որտեղ կա մեխանիկական վնասման վտանգ, սպրինկլերները պետք է պաշտպանվեն հատուկ պաշտպանիչ ցանցերով, որոնք սակայն չպետք է ազդեն ոռոգման սաստկության ու հավասարաչափության վրա:

342. Սպրինկլերային և դրենջերային ոռոգիչների ու պատերի (միջնապատերի) միջև հեռավորությունը հորիզոնական ուղղությամբ չպետք է գերազանցի ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014

«Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի համաձայն՝

1) Կ0 և Կ1 հրդեհային վտանգավորության դասի պատերի դեպքում՝ 15-րդ Աղյուսակում նշված ոռոգիչների միջև հեռավորության կեսին,

2) Կ2, Կ3 հրդեհային վտանգավորության դասի և չնորմայավորվող պատերի դեպքում՝ 1.2մ:

343. Սպրինկլերային ոռոգիչների միջև հորիզոնական պրոյեկցիայում նվազագույն հեռավորությունը՝ 1.5մ:

344. Կ0-Կ3 հրդեհային վտանգավորության դասի պատերի և սպրինկլերային և դրենչերային հեղուկացիրների միջև պետք է ընդունել ըստ դրանց կամ նրբաջրային մոդուլների ՏՓ-ի:

345. Հարկադիր գործարկմամբ սպրինկլերների միջև նվազագույն հեռավորություն չի սահմանվում:

3.2.3. ԴՐԵՆՉԵՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

346. Դրենչերային ՀՇԻԿ-ների (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ նաև կայանքներ), գործարկումը պետք է իրականացվի ներքոգրյալ տեխնիկական միջոցներից մեկի կամ դրանց ընդհանրական ազդանշանով.

- 1) ՀԱՀ-ից,
- 2) դրդիչ համակարգերից, այդ թվում՝ ճոպանային փականով,
- 3) սպրինկլեր-դրենչերային կայանքից,
- 4) տեխնոլոգիական սարքավորանքի տվիչներից:

347. Դրենչերային կայանքի բաշխիչ խողովակաշարի բարձրությունը չի նորմայավորվում:

348. Դրենչերային կայանքի ջրով կամ փրփրաջրով լցված դրդիչ խողովակաշարի բարձրությունը պետք է համապատասխանի դրենչերային ազդանշանային կափույրի ՏՓ-ի պահանջներին:

349. Դրդիչ համակարգի ջերմային փականի հեռավորությունը ծածկի կամ վերնածածկի հարթությունից պետք է ընդունել 0.08-0.30մ ներառյալ:

350. Հատուկ դեպքերում, կապված ծածկի կատուցվածքից (օրինակ՝ ելուստների առկայությունը) թույլատրվում է այդ հեռավորությունը հասցնել մինչև 0.4մ:

351.Տեխնոլոգիական սարքավորանքի պաշտպանության դեպքերում ջերմային փականը կարող է տեղակայվել անմիջապես սարքավորանքի մոտ՝ հրդեհի առաջացման ամենահավանական տեղում:

352. Դրդիչ խողովակաշարի տրամագիծը պետք է լինի ոչ պակաս քան 15մմ:

353. Դրենչերային կայանքների և ջրային վարագույրների հիդրավլիկական հաշվարկը պետք է կատարել 3.6.1-ում առաջարկվող մեթոդով:

354. Դրենչերային ջրային կայանքների (ջրային վարագույրների) աշխատանքի տևողությունը 1-ին խմբի սենքերում պետք է լինի 30 րոպերից ոչ պակաս, 2-8-րդ խմբերի սենքերում՝ 60 րոպերից ոչ պակաս:

355. Գործառույթով փոխկապակցված մի քանի ջրային վարագույրների համար, այդ թվում հարկադիր գործարկմամբ սպրինկլերների կիրառմամբ, կարող է նախատեսվել մեկ ընդհանուր կառավարման հանգույց:

356. Պետք է ապահովել դրենչերային ջրային կայանքների գործարկումը ինչպես ինքնաշխատ, այնպես էլ ձեռքով՝ հեռավար կամ տեղային:

357. Դռների, տեխնոլոգիական և այլ բացվածքների պաշտպանության նպատակով թույլատրվում է սպրինկլերային կայանքի սնիչ և բաշխիչ խողովակաշարերին միացնել ջրային դրենչերներ, վարագույրներ ինքնաշխատ կամ ձեռքի լրացուցիչ փականների միջոցով: Հրդեհի ազդանշանային համակարգից գործարկվող հարկադիր գործարկմամբ սպրինկլերների կիրառմամբ ջրային վարագույրների դեպքում լրացուցիչ փականների անհրաժեշտությունը չկա:

358. Մինչև 5մ լայնությամբ դռների, տեխնոլոգիական և այլ բացվածքների դեպքում ջրային վարագույրի ոռոգիչներով բաշխիչ խողովակն իրականացվում է 1 գծով: Ոռոգիչների միջև հեռավորությունն ընտրվում է բաշխիչ խողովակի ուղղությամբ $1/(վ \times մ)$ ոռոգման սաստկություն ապահովելու պայմանից:

359. 5մ-ից ավելի լայնությամբ դռների, տեխնոլոգիական և այլ բացվածքների դեպքում ջրային վարագույրի ոռոգիչներով բաշխիչ խողովակն իրականացվում է իրարից $(0,5 \pm 0,1)$ մ հեռավորությամբ 2 գծով: Ոռոգիչների միջև հեռավորությունն այս դեպքում ընտրվում է բաշխիչ խողովակների ուղղությամբ յուրաքանչյուր գծից $0.5/(վ \times մ)$ ոռոգման սաստկություն

ապահովելու պայմանից, դրանք տեղակայվում են շախմատային կարգով, իսկ եզրայինները՝ պատից ոչ հեռու քան 0.5մ:

360. Հեղուկացիրային դրեններն ենթակա են կայանքների կամ ջրային վարագույրների կիրառման դեպքերում պետք է ղեկավարվել դրանց ՏՓ-ում նշված բնութագրերով:

361. Սենքերը դրեններային վարագույրով բաժանելիս հրդեհային բեռից ազատ գոտին մի գծանի բաշխիչ խողովակի դեպքում պետք է կազմի 2մ ամեն կողմի վրա, և 2 գծանի բաշխիչ խողովակի դեպքում՝ 2մ ամեն գծի հակառակ կողմերի վրա:

362. Դրեններային կայանքների և վարագույրների ձեռքով միացման սարքվածքները (հեռավար կամ ձեռքի հիդրավլիկական փականները) պետք է տեղակայվեն անմիջապես բացվածքների մոտ դրսի կողմից, կամ տարհանման ճանապարհի մոտակա հատվածում:

3.2.4. ՆՐԲԱՋՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

363. Նրբաջրային ՀՇԻԿ-ները կիրառվում են ըստ ԳՕՍՏ 27331-87-ի A և B դասի մակերեսային, տեղային մակերեսային և տեղային ծավալային, ինչպես նաև կոնկրետ նրբաջրային կայանքի ՆՓ և ՏՓ-ում նշված էլեկտրական սաքավորանքներում հրդեհների շիջման համար:

364. ՆՓՋ կայանքները դասակարգվում են.

1) ըստ թելադրող հեղուկացիրի վրա կամ մոդուլի իրանի ներսում ճնշման.

ա. ցածր ճնշման կայանք՝ մինչև 2 ՄՊա ներառյալ (ՆՓՋ-ՑՃ կայանք),

բ. բարձր ճնշման կայանք՝ 2 ՄՊա-ից բարձր (ՆՓՋ-ԲՃ կայանք):

2) ըստ կառուցվածքի.

ա. մոդուլային ՆՓՋ կայանք,

բ. ագրեգատային ՆՓՋ կայանք:

365. ՆՓՋ կայանքների նախագծման ժամանակ թույլատրվում է սույն նորմերի պահանջներին ի լրացում ղեկավարվել սարքերի ՏՓ-ով:

366. Յուրաքանչյուր հեղուկացիր պետք է ունենա զտիչ կամ կառուցվածքային լուծում, ինչը կբացառի նրա թողարկման անցքի չափի 20%-ից ավելի մեծ մասնիկների մուտքը հեղուկացիր:

367. ՆՓՋ կայանքի խողովակաշարը պետք է նախատեսել աշխատանքային ճնշմանը համապատասխան ամրությամբ պողպատե ցինկապատ (ՆՓՋ-ՑՃ կայանքներում) կամ

չժանգոտվող (ՆՓՋ-ԲՃ կայանքներում) խողովակներից:

368. Թույլատրվում է օդալցված ՆՓՋ-ՑՃ կայանքի օդալցված հատվածներում նախատեսել առանց պաշտպանիչ շերտի համապատասխան ամրությամբ սովորական ածխածնային պողպատե խողովակներ և միաժամանակ կայանքի առբերիչ խողովակաշարում կամ յուրաքանչյուր առանձին սնիչ խողովակաշարի սկզբում՝ նախատեսելով հեղուկացիրների անցքի 20%-ից ոչ ավելի չափի բջիջներով զտիչներ:

369. ՆՓՋ-ՑՃ կայանքի խողովակաշարը թույլատրվում է նախատեսել պլաստմասե, կոմպոզիտային, պոլիմերային կամ այլ հրակայուն և աշխատանքային ճնշումներին համահամապատասխանող ոչ մետաղական նյութից խողովակներով: Նախագծում պետք է ներկայացվեն դրանց համապատասխան հավաստագրերը:

370. Ագրեգատային ՆՓՋ-ՑՃ կայանքների հիդրավլիկական հաշվարկը պետք է կատարել 3.6.1 բաժնում առաջարկվող մեթոդով:

371. Մոդուլային ՆՓՋ կայանքի հիդրավլիկական հաշվարկը պետք է կատարվի դրա ՏՓ-ում բերված մեթոդով:

372. Թելադրող հեղուկացիրի վրա ճնշումը, խողովակաշարերի և այլ անհրաժեշտ բնութագրերը պետք է ընդունել դրանց ՏՓ-ից:

373. Ագրեգատային ՆՓՋ կայանքների հրամարիչ նյութը պահվում է կայանքում ներկառուցած կամ կից տեղակայված ավազաններում և մատուցվում է պաշտպանվող սենք պոմպերով:

374. Հրամարիչ նյութը կայանքի աշխատանքի ժամանակ կարող է լրասնուցվել այլ աղբյուրներից:

375. Ագրեգատային ՆՓՋ կայանքների գործարկումը պետք է նախատեսել կամ ՀԱՀ-ից և/կամ հեղուկացիրի գործարկումից:

376. Մոդուլային ՆՓՋ կայանքներում հրամարիչ նյութի պահուստը և աշխատաձևը որոշվում է դրանց ՏՓ-ով:

377. Մոդուլային ՆՓՋ կայանքները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի (ՀՍ ԳՕՍ Ռ 53288-2023), ԳՕՍ 12.2.003-91, ԳՕՍ 12.2.037-78, ԳՕՍ 12.4.009-83-ի և սույն նորմերի պահանջներին:

378. Մոդուլային ՆՓՋ կայանքներում կարող են կիրառվել արտամղող գազի տեղային

կամ կենտրոնացված աղբյուրներ:

379. Մոդուլային ՆՓՋ կայանքները կարող են լինել արտամղող գազով նախօրոք լիցքավորված կամ աշխատանքի ընթացքում ներմղվող՝ կից բալոնից կամ գազ առաջացնող սարքվածքից:

380. Որպես արտամղող գազ մոդուլային ՆՓՋ կայանքներում կարող են կիրառվել միայն ածխածնի երկօքսիդը, ազոտը կամ իներտ գազերը՝ գազային կամ հեղուկացված վիճակում:

381. Ազելվում է գազ առաջացնող սարքվածքներով մոդուլային ՆՓՋ կայանքների կիրառումը պատկերասրահներում, թանգարաններում, մշակութային ժառանգության այլ օբյեկտներում:

382. Մոդուլների բնութագրերը, դրանց ու հեղուկացիրների տարածական դիրքը, տեղակայումը պետք է ապահովեն հրդեհաշիջումը պաշտպանվող ամբողջ սենքում՝ հաշվի առնելով հրամարիչ նյութի մատուցման ճանապարհին առկա արգելքները՝ սյուներ, պահարաններ և այլն:

383. ՆՓՋ կայանքների հրամարիչ նյութի պատրաստման, հսկման և պահպանման պահանջները սահմանվում են դրանց ՏՓ-ում:

384. ՆՓՋ կայանքների խողովակաշարին թույլատրվում է միացնել ներքին հակահրդեհային ջրմուղի փոքր ելքով ծորակներ, որոնց տեխնիկական բնութագրերը պետք է համապատասխանեն կայանքի տեխնիկական պահանջներին:

385. ՆՓՋ կայանքների խողովակաշարի ուղեգծերն անհրաժեշտ է նախատեսել հնարավորինս կարճ և շրջադարձերի նվազագույն քանակով: Փակուղային և օղակաձև սնիչ խողովակաշարերի վրա լվացման համար պետք է նախատեսել խցափակիչներ և փականներ:

3.2.5. ՀԱՐԿԱԴԻՐ ԳՈՐԾԱՐԿՄԱՄԲ

ՍՊՐԻՆԿԼԵՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

386. Սույն գլխի պահանջները վերաբերվում են 1-8-րդ խմբերում ընդգրկված և 30մ-ից ոչ ավելի բարձրությամբ տարբեր նշանակության սենքերում հարկադիր գործարկմամբ սպրինկլերային ՀՇԻԿ-ների (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ նաև ՀԳՍ կայանքներ), նախագծերին:

387. Սույն բաժնի պահանջներից բացի ՀԳՍ կայանքների նախագծման ժամանակ թույլատրվում է ղեկավարվել այդ կայանքների ՆՓ և ՏՓ-ով:

388. ՀԳՍ կայանքները կիրառվում են հետևյալ օբյեկտների պաշտպանության համար.

- 1) մեքենայացված ավտոկայանատեղիներ, ներառյալ բազմահարկ,
- 2) բազմամարդ շենքեր և սենքեր,
- 3) 75մ-ից բարձր բնակելի և 50մ-ից բարձր վարչական շենքեր,
- 4) 30մ-ից բարձր արտադրական շենքեր,
- 5) պատմական և մշակութային ժառանգության, շենքեր,
- 6) հասարակական կամ սոցիալական մեծ նշանակության, յուրահատուկ շենքեր,
- 7) մեծ նյութական և ոչ նյութական արժեքներով, յուրահատուկ և նման այլ շենքեր:

389. Հարկադիր գործարկմամբ, ինչպես նաև հարկադիր գործարկմամբ և գործարկման հսկողությամբ սպրինկլերային ոռոգիչները կարող են համակցվել հրդեհի ինքնաշխատ սատելիտային ազդասարքերի հետ և գործարկվել հետևյալ սարքերից միաժամանակ ստացված ազդանշաններից.

- 1) գործարկման հսկողությամբ սպրինկլերային ոռոգիչի գործարկումից և ջրի հոսքի տվիչից,
- 2) գործարկման հսկողությամբ սպրինկլերային ոռոգիչի գործարկումից և հրդեհի հասցեային ազդասարքից,
- 3) հրդեհի ինքնաշխատ սատելիտային ազդասարքերից C ալգորիթմով,
- 4) օպերատորի կողմից ձեռքով հրդեհային դիտակետից կամ կառավարման այլ կետից:

390. Կախված օբյեկտի կառուցվածքային առանձնահատկությունից կամ նշանակությունից կարող է նախատեսվել հարկադիր գործարկմամբ սպրինկլերային ոռոգիչների հատային կամ խմբային գործարկում.

- 1) հրդեհի օջախի գոտին ոռոգելու համար,
- 2) հրդեհի օջախի շուրջը (պարագծով) ոռոգվող գոտի ստեղծելու համար,
- 3) տեխնոլոգիական բացվածքներում ջրային վարագույր ստեղծելու համար,
- 4) միջանցքներով կամ պատուհանախորշերով հրդեհի տարածումը կանխելու համար,
- 5) տեխնոլոգիական սարքավորանքի և/կամ շինարարական կառուցվածքատարրերի հովացման համար:

391. ՀԳՍ կայանքների բնութագրերն ընտրվում են 15-17-րդ աղյուսակներից, իսկ հարկադիր գործարկմամբ սպրինկլերներինը՝ աղյուսակ 18-ից:

392. Հրդեհի ինքնաշխատ սատելիտային ազդասարքերով համակցված կամ հրդեհի ինքնաշխատ ազդասարքերի ազդանշանից գործարկվող հարկադիր գործարկմամբ սպրինկլերների կիրառման դեպքում.

1) 10մ-ից ավելի և մինչև 30մ ներառյալ բարձրությամբ բոլոր խմբերի սենքերի համար ոռոգման սաստկությունը, հրամարիչ նյութի ծախսը և ոռոգման նվազագույն մակերեսը պետք է ընդունել ինչպես 10մ բարձրությամբ սենքերի համար,

2) մինչև 5.5մ ներառյալ բարձրությամբ պահեստավորմամբ, 10մ-ից ավելի բարձրությամբ և 6-7 խմբերի սենքերի համար ոռոգման սաստկությունն ու հրամարիչ նյութի ծախսը պետք է ընդունել ինչպես 10մ բարձրությամբ սենքերի համար,

3) մինչև 10մ ներառյալ բարձրությամբ և 1 ու 2-րդ խմբի սենքերում ոռոգման սաստկությունն ու հրամարիչ նյութի ծախսը կարող են նվազեցվել 2 անգամ 15-րդ աղյուսակի տվյալներից:

393. Թույլատրվում է սատելիտային ազդասարքերը հարմարանքների, սարքվածքների կիրառմամբ տեղակայել անմիջապես ՀԳՍ կայանքների խողովակների վրա՝ ապահովելով նրանց և սպրինկլերի միջև անհրաժեշտ հեռավորությունն ու կայուն տարածական դիրքը:

394. Սատելիտային ազդասարքի զգայուն էլեմենտի տեղակայման պահանջները՝ բարձրությունը հրդեհային բեռից ու հեռավորությունը ծածկից, համապատասխանում են հարկադիր գործարկմամբ սպրինկլերի զգայուն էլեմենտի տեղակայման պահանջներին:

395. Թույլատրվում է հարկադիր գործարկմամբ սպրինկլերը տեղակայել ուղղաձիգից մինչև 30° շեղված, եթե պաշտպանվող սենքը հորիզոնական հարթության մեջ դիտարկելիս ամբողջովին գտնվում է պահանջվող սաստկությամբ ոռոգման տիրույթում:

396. Գործարկման հսկողությամբ, ՀԱՀ-ից գործարկվող հարկադիր գործարկմամբ, ինչպես նաև հարկադիր գործարկմամբ ու գործարկման հսկողությամբ սպրինկլերների հսկողության և կառավարման լարերը, որոնք տեղակայվում են պաշտպանվող սենքերի ծածկերի տակ կամ խողովակներին պետք է լինեն հրակայուն և պաշտպանված մեխանիկական, եղանակային, էլեկտրոնագնիսական և այլ գործոնների ազդեցությունից:

397. ՀԳՍ կայանքների հիդրավլիկական հաշվարկը պետք է կատարել ըստ 3.6.1 բաժնում ներկայացված մեթոդով:

3.2.6. ՍՊՐԻՆԿԼԵՐ-ԴՐԵՆՉԵՐԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

398. Սույն բաժնի պահանջները տարածվում են 1-6 խմբի շենքերի ու սենքերի համար նախագծվող սպրինկլեր-դրենջերային կայանքների (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ նաև ՍԴ կայանքներ) վրա:

399. ՍԴ կայանքները լինում են ջրալցված (ՍջԴ) և օդալցված (ՍօԴ):

400. Այն սենքերում, որտեղ պահանջվում է արագագործություն և թույլատրելի է հրամարիչ նյութի աննշան քանակի թողարկումը ոռոգիչների չարտոնված գործարկումների կամ վնասման պատճառով նպատակահարմար է ՍջԴ կայանքների կիրառությունը:

401. Այն սենքերում, որտեղ հնարավոր են դրական և բացասական ջերմաստիճաններ և ցանկալի չէ հրամարիչ նյութի աննշան քանակի թողարկումը ոռոգիչների չարտոնված գործարկումների կամ վնասման պատճառով հպատակահարմար է ՍօԴ(1) կայանքների կիրառությունը:

402. Այն սենքերում, որտեղ հնարավոր են դրական և բացասական ջերմաստիճաններ և պետք է բացառվի հրամարիչ նյութի նույնիսկ աննշան քանակի թողարկումը ոռոգիչների չարտոնված գործարկումների կամ վնասման պատճառով նպատակահարմար է ՍօԴ(2) կայանքների կիրառությունը:

403. ՍԴ կայանքների հիդրավլիկական հաշվարկը պետք է կատարել ըստ 3.6.1բաժնում ներկայացված մեթոդով:

404. ՍօԴ կայանքների արագագործության հաշվարկում պետք է ներառել համակարգում օդի ճնշման անկման (մինչև հրամարիչ նյութի մատուցման հնարավորության պահը) ժամանակահատվածը:

405. ՍօԴ կայանքների Նախագծման ժամանակ պետք է հաշվի առնել 3.2.2 և 3. 2.3 բաժինների պահանջները:

406. ՍօԴ(1) կայանքներում օդաճնշիչի անջատման կամ ցանկացած այլ աղբյուրից օդի մատուցման դադարեցման համար ազդանշանը պետք է տրվի հրդեհի ինքնաշխատ կամ ձեռքի ազդասարքից, կամ էլ՝ սպրինկլերից ցանկացածի գործարկման դեպքերում:

407. ՍօԴ(2) կայանքներում օդաճնշիչի անջատման կամ ցանկացած այլ աղբյուրից օդի մատուցման դադարեցման համար ազդանշանը պետք է տրվի հրդեհի ինքնաշխատ կամ ձեռքի ազդասարքի և սպրինկլերի համատեղ գործարկման դեպքերում:

408. ՄԴ կայանքներում հրդեհի ջերմային ինքնաշխատ ազդասարքերի նախատեսման դեպքում դրանց գործարկման ջերմաստիճանը և ջերմային իներցիոնության գործակիցը չպետք է բարձր լինեն նախատեսվող սպրինկլերների ջերմազգայուն տարրի գործարկման ջերմաստիճանից և ջերմային իներցիոնության գործակցից:

409. ՄԴ կայանքներում այլ տիպի հրդեհի ազդասարքերի նախատեսման դեպքում դրանք պետք է լինեն ավելի արագագործ, քան նախատեսվող սպրինկլերների ջերմազգայուն տարրերը:

3.2.7. ՋՐՈՎ, ՑԱԾՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՈՒՐՈՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

410. Պողպատե խողովակաշարերը (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ նաև խողովակաշարեր), բացի սույն նորմերի պահանջներից պետք է բավարարեն նաև ԳՕՍՏ 32388-2013 և ՍՆԻՊ 3.05.05-84 պահանջներին:

411. Խողովակաշարերը պետք է ապահովեն.

- 1) մարդկանց պաշտպանություն ստատիկ էլեկտրականությունից, տարածվող և թափառող հոսանքներից,
- 2) հաշվարկային թողունակություն և ճնշում,
- 3) դրանց հսկման և փորձարկման աշխատանքների հնարավորություն,
- 4) դրանց զննումը, լվացումն ու փչահրումը:

412. Ջրային ինքնաշխատ և ներքին հակահրդեհային, արտադրական և խմելու-տնտեսական ջրմուղների խողովակաշարերը կարող են լինել ընդհանուր միայն մինչև հրդեհային պոմպերը: Հրդեհային պոմպերից հետո արգելվում է դրանց ընդհանրությունը նույնիսկ հակադարձ կափույրների կիրառմամբ:

413. Ստորգետնյա խողովակաշարերը կարող են նախատեսվել ինչպես մետաղական, այնպես էլ ոչ մետաղական խողովակներից՝ պոլիմերային, կոմպոզիտային, մետաղապլաստիկ և այլ նյութերից:

414. Թույլատրվում է մինչև 3 կառավարման հանգույցների դեպքում ներքին և արտաքին առբերիչ խողովակաշարերը նախատեսել փակուղային, մինչև 100մ երկարությամբ:

415. Սենքի ներքին տեսքի նկատմամբ բարձր պահանջների դեպքում խողովակաշա-

րերը կարող են տեղադրվել թաքցված, ըստ սույն շինարարական նորմերի և այդ խողովակների ՏՓ-ի պահանջների:

416. Խողովակաշարերի անցուղիների խորությունը պետք է ընդունել (DN+400) մմ, բայց ոչ պակաս, քան պահանջվում է եղանակային պայմաններով, ընդհանուր լայնությունը՝ (DN+100) մմ, իսկ կցվանքների հատվածում՝ (DN+600)մմ, որտեղ DN-ը խողովակի պայմանական տրամագիծն է: Երկու տարբեր տրամագծերով խողովակների կցվանքի տեղում անցուղու լայնությունը որոշվում է մեծ խողովակի տրամագծով:

417. Խողովակների կցվանքները չպետք է գտնվեն պատերի, միջնապատերի կամ այլ կառուցվածքային տարրերի մեջ:

418. Հոծ կեղծ առաստաղներից վեր, փակ անցուղիներում կամ այլ նմանատիպ դեպքերում խողովակների կցումը, որպես կանոն, պետք է իրականացնել եռակցմամբ: Բացառիկ և հիմնավորված դեպքերում թույլատրվում է կցումը իրականացնել այլ ձևով (ոչ եռակցմամբ)՝ կցվանքի հատվածում նախատեսելով հսկողական դիտանցք:

419. Խողովակները պետք է հուսալի ամրացվեն շենքի կառուցվածքատարրերին դրանց համար նախատեսված հենարանների, կախիչների, բարձակների, պնդողակների և այլ սարքվածքների (այսուհետ՝ կապիչներ) կիրառմամբ:

420. Խողովակների կապիչները կարող են լինել ճկուն (շարժական), որոնք թույլատրում են խողովակների չափավոր շարժը առանցքի ուղղությամբ, և կոշտ (անշարժ)՝ այդպիսի շարժը բացառող:

421. Ճկուն և կոշտ կապիչների տիպը և տեղերը պետք է որոշվեն նախագծով՝ ելնելով խողովակների ծանրությունից, սեյսմիկ վտանգներից և ջերմային ձևափոխություններից:

422. Կապիչները պետք է լինեն պողպատե և հակակորոզիոն ծածկույթով (ներկված, ցինկապատ և այլ): Բարձր խոնավությամբ կամ քիմիապես ակտիվ միջավայրերում պողպատե պրոֆիլից պատրաստվածները պետք է ունենան մետաղի առնվազն 1.5մմ հաստություն:

423. Կապիչները պետք է ամրացվեն անմիջապես շենքի կառուցվածքատարրերին: Բացառության կարգով թույլատրվում է դրանց ամրակցումը տեխնոլոգիական կամ ճարտարագիտական այլ սարքավորանքի կառուցվածքատարրերին, եթե դա թույլատրելի է այդ սարքավորանքի ՏՓ-ով՝ որպես հաշվարկային բեռ ընդունելով փաստացի բեռի կրկնապատիկը:

424. Խողովակները սարքավորանքին պետք է միանան միայն սարքավորանքի վեջնական ամրացումից հետո: Անշարժ կապիչներն ամրացվում են կառուցվածքատարրերին միայն խողովակները սարքավորանքին միացնելուց հետո:

425. Սատելիտային ազդասարքերով կայանքներում թույլատրվում է մալուխները տեղակայել համակարգի խողովակաշարերին այնպես, որ բացառվի խոնավության պատճառով խափանումների հնարավորությունը և դրանց ջրցողումը ոռոգիչի/ների աշխատանքի ընթացքում:

426. Փակուղային և օղակաձև առբերիչ, սնիչ և բաշխիչ խողովակաշարերի վրա վազման համար պետք է նախատեսել խցափակիչներ, կցաշուրթեր կամ DN 50 չափից ոչ փոքր, իսկ խողովակի չափը դրանից փոքր լինելու դեպքում՝ խողովակի տրամագծի չափով փականներ, որոնք փակուղային խողովակաշարի դեպքում պետք է տեղակայվեն խողովակի վերջում, իսկ օղակաձևի դեպքում՝ մուտքից առավելագույնս հեռու:

427. Հեծանների շրջանցման նպատակով խողովակաշարերի ծովաձքներից ջրի հեռացման համար պետք է նախատեսել ցամաքուրդային ծորակներ:

428. Սնիչ խողովակաշարերի վրա ազդանշանիչներով փակիչ սարքվածքներ թույլատրվում է տեղակայել սպրինկլերային ազդանշանային կափույրից հետո ինչպես նաև յուրաքանչյուր ուղղության բաշխիչ խողովակաշարի սկզբում՝ հոսքի տվիչից առաջ:

429. Ճնշաչափերը պետք է տեղակայվեն փակիչների վրա (ճնշաչափերի ապամոնտաժումը հեշտացնելու նպատակով), բաշխիչ խողովակաշարերի մուտքին և խողովակաշարերի վերին կետերում՝ օդի թողարկման համար:


430. Խողովակաշարերի վերին կետերում օդի թողարկման համար կարող են կիրառվել նաև ինքնաշխատ օդազատիչներ:

431. Սպրինկլերային, դրենձերային, սպրինկլեր-դրենձերային օդալցված հրդեհաշիջման համակարգերի սնիչ և բաշխիչ խողովակաշարերը պետք է տեղակայվեն այնպես, որ փորձարկումներից կամ գործարկումներից հետո հրամարիչ նյութը ինքնահոս կերպով հեռացվի և խողովակաշարը չորացվի փչահարմամբ:

432. Խողովակաշարերից հրամարիչ նյութի դատարկման նպատակով խողովակաշարերը պետք է տեղակայվեն դեպի պոմպերը հետևյալ թեքություններով.

- 1) DN 50-ից փոքր խողովակները՝ 0.01,
- 2) DN 50 և ավելի խողովակները՝ 0.005:

433. Պոմպերում օդի խցանումներից խուսափելու համար պոմպերի մուտքին տեղակայվող անցումները պետք է լինեն ոչ համառանցք (նկար 12):



Նկար 12. Ոչ համառանցք անցումները պոմպերի մուտքին

434. Խողովակները պետք է տեղակայվեն պատուհանախորշերի վերին եզրից 0.5մ բարձր:

435. Տարբեր տրամագծերի խողովակների համատեղ տեղակայման դեպքում կապիչների միջև հեռավորությունը պետք է ընտրել ըստ փոքր տրամագծի:

436. Խողովակաշարերի և սարքավորման ամրակապումը պետք է իրականացնել ըստ ԳՕՍՏ 32388-2013 և ՍՆԻՊ 3.05.05-84-ի պահանջների:

437. Բաշխիչ խողովակաշարի վրա ամենավերջին ոռոգիչի հեռավորությունը կապիչից չպետք է գերազանցի 0.9մ:

438. Բաշխիչ խողովակաշարի 0.9մ-ից ավելի երկար ճյուղերը պետք է ամրակապվեն: Ճյուղի վերջին կապիչի հեռավորությունը վերջին ոռոգիչից ոչ ավելի քան 0.25մ:

439. Արգելվում է խողովակների ցանկացած տիպի կցվանքը կոր հատվածներում, կապիչների տակ, շենքի պատերով անցման հատվածներում: Կոշտ կցվանքը պետք է հեռու լինի կապիչի եզրից առնվազն 0.5մ, ճկուն կցվանքը՝ 0.25մ:

440. Շենքի ներսում խողովակները հատակագծում պետք է տեղակայվեն նախագրծվածից ± 5 մմ ոչ ավելի շեղումով:

441. Փորձարկումներից կամ իրական հրդեհից հետո ջրահեռացման համար պետք է նախատեսվեն ցամաքուրդային խողովակաշարեր: Ջրահեռացումը կարող է իրականացվել դեպի կոյուղի:

442. Խողովակների ուղղության փոփոխությունը պետք է իրականացվի ստանդարտ դետալներով, իսկ անկար խողովակների դեպքում նաև թույլատրելի շառավղից ոչ փոքր շառավղով բուն խողովակի կորացումով մասնագիտացված սարքավորանքի միջոցով:

443. Պատերի և դրանց միջով անցնող խողովակների միջև պետք է պահպանել բացակ

ոչ պակաս քան 2 սմ մի կողմում: Բացակը պետք է խցանվի ձայնաջերմամեկուսիչ, իսկ կից սենքերից թեկուզ մեկի հրդեհավտանգ կամ պայթյունավտանգ լինելու դեպքում՝ հրակայուն խցանյութով:

444. ՀՇԻԿ-ների և ներքին հակահրդեհային ջրմուղի խողովակների, դրանց կցամասերի տրամագծերը պետք է ընտրել ապահովելով ջրի հոսքի արագությունը.

1) ներածման հատվածամասում ոչ ավելի քան 2.8 մ/վրկ, իսկ եթե հակահրդեհային ջրամբարում ջրի մակարդակը պոմպի առանցքից ցածր է՝ 1.5 մ/վրկ,

2) պոմպերից հետո ոչ ավելի քան 10 մ/վրկ:

445. Խողովակաշարը պետք է փորձարկվի հիդրոստատիկ կամ ճնշաչափային մեթոդով:

446. Համակարգը և միացված բոլոր սարքավորումները 20°C-ում 5 րոպեի ընթացքում պետք է ապահովեն հերմետիկություն և դիմանան.

1) մինչև 1.2 ՄՊա ներառյալ աշխատանքային ճնշման դեպքում՝ այն 1.5 անգամ գերազանցող ճնշմանը (բայց ոչ պակաս քան 1.0 ՄՊա),

2) 1.2 ՄՊա-ից ավելի աշխատանքային ճնշման դեպքում՝ այն 1.25 անգամ գերազանցող ճնշմանը:

447. 5°C-ից ցածր ջերմաստիճանի դեպքում, բարձր խոնավությամբ սենքերում և արտաքին դարպասների մոտ գտնվող խողովակները պետք է ջերմամեկուսացվեն, իսկ ջրալցված կայանքներում հիմնավորված անհրաժեշտության դեպքում ջրին կարող են ավելացվել չսառող հավելանյութեր (անտիֆրիզ) կամ էլ խողովակները պետք է պաշտպանել ցրտից:

448. Օղակաձև առբերիչ խողովակաշարերը անհրաժեշտ է բաժանել նորոգման հատվածների փակիչ սարքվածքներով: Յուրաքանչյուր հատվածում, ինչպես նաև փակուղային մեկ առբերիչ խողովակի վրա, թույլատրվում է տեղակայել մինչև երեք կառավարման հանգույց, իսկ հիդրավլիկական հաշվարկում օղակաձևությունը հաշվի չի առնվում և ընդունվում է որպես մեկ և միևնույն տրամագծով խողովակ:

449. Հրշեջ ծորակները թույլատրվում է միացնել ջրալցված կայանքների սնիչ և բաշխիչ, իսկ օդալցվածների դեպքում՝ առբերիչ խողովակներին, որոնց տրամագծերը պետք լինեն DN 65 և ավելի:

3.2.8. ՄԵՏԱՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ

450. Ջրային կայանքներում, որպես կանոն, պետք է կիրառել պողպատե խողովակներ էլեկտրատեղակայված ուղղակար ըստ ԳՕՍՏ 10704-91-ի՝ եռակցվող կցամասերով և կցաշուրթերով, ջրագազամուղ ըստ ԳՕՍՏ 3262-75-ի, անկար ըստ ԳՕՍՏ 32528-2013 և ԳՕՍՏ 32678-2014-ի՝ պարուրակային, եռակցվող կցամասերով ու կցաշուրթերով, ինչպես նաև խողովակաշարային բաժանվող կցորդիչներով ըստ ՀՍ ԳՕՍՏ Ռ 51737-2023 (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ նաև խողովակներ): Թույլատրվում է այլ պողպատե խողովակների կիրառումը, եթե դրանք տեխնիկական բնութագրերով չեն զիջում վերոգրյալ խողովակներին:

451. ՆՓՋ կայանքների խողովակաշարերը պետք է բավարարեն 367–369-րդ կետերի պահանջները:

452. Թույլատրվում է ճկուն մետաղական, հրակայուն ոչ մետաղական, տարբեր միջադիրների ու կցամասերի կիրառումը ղեկավարվելով դրանց ՏՓ-ով:

453. Արտադրական շենքերում կայանքների խողովակաշարերը կարող են տեղակայվել բաց եղանակով սյուների, ֆերմաների, պատերի վրա և ծածկերի ու հատակի տակ, նկուղներում և տեխնիկական հարկերում ջեռուցման ու տաք ջրամատակարարման խողովակների հետ:

454. Թույլատրվում է խողովակաշարերի համատեղ տեղակայումը այլ նշանակության խողովակների հետ միասին ընդհանուր անցուղում, բացառությամբ դյուրաբոցավառ, այրելի կամ թունավոր հեղուկներ և գազեր տեղափոխող խողովակների:

455. Պոմպակայանում խողովակաշարերը, ինչպես նաև պոմպակայանից դուրս ներածման խողովակաշարերը որպես կանոն պետք է լինեն պողպատե, միացումները՝ եռակցված կամ կցաշուրթերի կիրառմամբ:

456. Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի պայթյունահրդեհային վտանգավորության Ա և Բ կարգի սենքերում խողովակների, ինչպես նաև հիդրավլիկական սարքավորանքի միացումները պետք է նախատեսել միայն քանդվող (պարուրակային, կցաշուրթային):

457. Խողովակային քանդվող կցորդիչները կարող են կիրառվել միայն մինչև ներառյալ

DN 200 խողովակների համար:

458. Լարման տակ գտնվող սարքավորանքի հրդեհաշիջման համակարգի մետաղական խողովակաշարը պետք է հողանցվի: Հողանցման տեղն ու նշանը ըստ ՀՀ կառավարության 2023 թ. ապրիլի 21-ի N 592-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոնների» և Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 768 որոշմամբ հաստատված ՄՄ ՏԿ 004/2011 կանոնակարգի (ԳՕՍՏ 21130-75):

459. Մեկ արտադրական, պահեստային տնտեսության սահմաններում պողպատե խողովակաշարերը պետք է միացնել հողանցման հաղորդաշղթային ոչ պակաս քան 2 իրարից հեռու կետերում: Հրդեհային կամ պայթյունահրդեհային վտանգավոր սենքեր մտնող խողովակաշարերը պետք է հողանցվեն անմիջապես սենք մտնելուց առաջ:

460. Խողովակների ամրակապումը անհրաժեշտ է իրականացնել ըստ Աղյուսակ 19-ի և 435- 443-րդ կետերի պահանջների:

461. Պետք է ապահովել հասանելիություն խողովակաշարերի կցվանքներին:

462. Ոչ մետաղական խողովակների և մետաղական ճկուն խողովակների կիրառմամբ հակահրդեհային խողովակաշարերի նախագծումը պետք է իրականացնել դրանց ՏՓ-ով:

Աղյուսակ 19. Խողովակների ամրակապումը

1.	Խողովակի տրամագիծը, DN, մմ	25	32	40	50	65-125	150	200-300
2.	Կապիչների առավելագույն հեռավորությունը միմյանցից, մ	3	3,5	4	5	6	7	8

3.2.9. ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ

463. Ոչ մետաղական սնիչ խողովակաշարի տեղակայումը պետք է իրականացնել թաքնված՝ բետոնապատ, խրամուղներում, հորաններում, անցուղիներում և այլն՝ պաշտպանելով հրդեհի առաջացրած բարձր ջերմասիճանի ազդեցությունից: Պաշտպանիչ կառուցվածքատարրերի հրակայունությունը պետք է լինի ոչ պակաս քան EI 30:

464. Արգելվում է ոչ մետաղական խողովակների տեղակայումը ուլտրամանուշակագույն ճառագայթման կամ արևի ուղիղ ազդեցության վայրերում, մեխանիկական կամ քիմիական հնարավոր ներգործության տեղերում:

465. Ոչ մետաղական խողովակները պետք է տեղակայվեն և ամրացվեն հորիզոնական ու ուղղաձիգ հատվածներում ըստ կոնկրետ խողովակի ՏՓ-ի:

466. Ոչ մետաղական խողովակները յուրաքանչյուր ոռոգիչից առավելագույնը 10 սմ հեռավորության վրա պետք է ամրակապվեն, ապահովելու համար ոռոգիչի տարածական դիրքը:

467. Բաշխիչ ոչ մետաղական խողովակի կամ նրա ճյուղի վերջին ոռոգիչի ու կապիչի միջև հեռավորությունը, չամրակապվող ճյուղի առավելագույն երկարությունը ընդունվում են համաձայն ոչ մետաղական խողովակի ՏՓ-ի:

468. Ոչ մետաղական խողովակները կարող են տեղակայվել հենարանների վրա այլ խողովակների հետ համատեղ, եթե այդ խողովակների արտաքին մակերևույթի ջերմաստիճանը չի գերազանցում ոչ մետաղական խողովակի շահագործման առավելագույն թույլատրելի ջերմաստիճանը:

469. Ջեռուցման և տաք այլ խողովակների ու հակահրդեհային ոչ մետաղական խողովակների միջև առկա հեռավորությունները պետք է պահպանել ըստ դրանց ՏՓ-ի, բայց ոչ պակաս, քան 50 մմ՝ փոխհատման դեպքում, և 100 մմ՝ զուգահեռ տեղակայման դեպքում: Զուգահեռ տեղակայման դեպքում ոչ մետաղական խողովակաշարը պետք է տեղակայվի տաք խողովակաշարից ներքև:

470. Ոչ մետաղական խողովակները թույլատրելի ջերմաստիճանից բարձր արտաքին մակերևույթի ջերմաստիճանով այլ խողովակների հետ ստիպված տեղակայելու դեպքերում պետք է նախատեսել ոչ մետաղական խողովակների ջերմամեկուսացում (ջերմային էկրաններով, ջերմամեկուսիչ նյութերով), իսկ անհնարինության դեպքում՝ մեծացնել դրանց միջև հեռավորությունները:

471. Ջերմության և ճնշման, ինչպես նաև սեյսմիկ երևույթների հետևանքով ձևափոխումների փոխհատուցումը անհրաժեշտ է ապահովել անշարժ և շարժական, կոշտ և ճկուն կապիչների, հատուկ այդ նպատակով սարքվածքների կամ այդ խողովակների ՏՓ-ով նախատեսված այլ միջոցների կիրառմամբ:

3.2.10. ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՆԵՐԿՈՒՄՆ ՈՒ ՄԱԿՆՇՈՒՄԸ

472. Պողպատե խողովակաշարը ամրության և հերմետիկության փորձարկումներից հետո պետք է ներկվի պաշտպանիչ և տարբերակման ներկերով:

473. Տարբերակման ներկի գույնը կամ թվային մակագրությունները պետք է համապատասխանեն ԳՕՍՏ 12.4.026-2015 և ԳՕՍՏ 14202-69-ի պահանջներին.

- 1) ջրալցված կայանքների և ներքին հակահրդեհային ջրմուղի խողովակաշարերը՝ կանաչ գույն և/կամ «1» թվանշանը,
- 2) օդալցված կայանքների և ներքին հակահրդեհային ջրմուղի խողովակաշարերը՝ երկնագույն և/կամ «3» թվանշանը,
- 3) դրենջերային և ներքին հակահրդեհային ջրմուղի դատարկ խողովակաշարը՝ կապույտ գույն և/կամ «3C» նշանը,
- 4) միայն փրփրարարի մատուցման համար նախատեսված խողովակաշարը՝ դարչնագույն և/կամ «9» թվանշանը,
- 5) փրփրաջրի մատուցման համար նախատեսված խողովակաշարը՝ կանաչ գույն, որի վրա 1-3մ հեռավորությամբ և 50-100մմ լայնությամբ դարչնագույն օղակներ և/կամ «9K» նշանը:

474. Ոչ մետաղական խողովակների գույնը որոշվում է նրանց ՏՓ-ով:

475. Խողովակների կամ ցուցանակների վրա հիմնական գույնից ցայտուն կերպով տարբերվող գույնի սլաքներով պետք է նշվի հրամարիչ նյութի շարժման ուղղությունը: Օղակաձև հատվածներում այդ ուղղությունը նշվում է երկկողմանի սլաքներով:

476. Խողովակների վրա կամ ցուցանակներում նշանների նկատմամբ պահանջները ըստ ԳՕՍՏ 14202-69.

477. Արտաքինից ցինկապատ կամ չժանգոտվող պողպատից խողովակները թույլատրվում է ներկել ոչ ամբողջ երկարությամբ, այլ միայն սարքավորանքի հետ միացման հատվածներում, կցաշութի հետ միասին (դրա առկայության դեպքում) համապատասխան գույնով, 50-200 մմ երկարության վրա:

478. Պատվիրատուի պահանջով, բացառությամբ պահեստային և արտադրական սենքերի, թույլատրվում է խողովակաշարը ներկել այլ գույներով, բայց պարտադիր մակնշմամբ ըստ 473-րդ կետի:

479. Ագրեսիվ միջավայրով սենքերում մետաղական խողովակները սկզբում պետք է ներկել համապատասխան պաշտպանիչ ներկով:

480. Ջերմամեկուսացված կամ չերևացող խողովակները կարող են ներկվել միայն ցանկացած գույնի պաշտպանիչ ներկով:

481. Խողովակների վրա ցուցանակներն ու նշաններն անհրաժեշտ է նշել խողովակաշարերի պատասխանատու հատվածներում՝ պոմպերի, բաժանման հանգույցների, փակիչ սարքվածքների մոտ, առբերիչ, սնիչ և բաշխիչ խողովակաշարերի վրա, պատերով անցումների մոտ երկու կողմերից և այլ տեղերում, որտեղ անհրաժեշտ է տարբերակել հակահրդեհային խողովակաշարը:

3.2.11. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ

482. Ջրային կայանքների կառավարման հանգույցները նախագծելիս անհրաժեշտ է ղեկավարվել Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի (ՀՍ ԳՕՍ Ռ 51052-2023), ԳՕՍ 50680-94 և ՀՍ ԳՕՍ Ռ 50800-2023 -ի պահանջներով:

483. Ջրային կայանքների կառավարման հանգույցները անհրաժեշտ է տեղակայվել 5°C-ից բարձր օդի ջերմաստիճանով և կայանքները սպասարկողների ազատ մուտքով պոմպակայաններում, հրդեհային դիտակետերում և պաշտպանվող սենքերում:

484. Կառավարման հանգույցները պաշտպանվող սենքերում տեղակայելիս պետք է բաժանվեն այդ սենքերից 1-ին տիպի հակահրդեհային պատերով, 3-րդ տիպի հակահրդեհային ծածկերով և EI 30 հրակայունությամբ դռներով:

485. Կառավարման հանգույցները պետք է ապահովվեն .

- 1) հրամարիչ նյութով խողովակաշարի լցվելն ու դրա մատուցումը հրդեհի օջախ,
- 2) հեթապահ գործելակարգում կայանքների հիդրավլիկական համակարգից հրամարիչ նյութի արտահոսքի փոխհատուցումը,
- 3) ազդանշանային կափույրի բացման ազդանշանումը,
- 4) ճնշման հսկողությունը կառավարման հանգույցի մուտքին և ելքին,
- 5) կառավարման հանգույցի աշխատունակության և ազդանշանման ստուգումը,
- 6) սնիչ և բաշխիչ խողովակաշարից հրամարիչ նյութի հիմնական քանակության դատարկումը:

486. Ջրալցված կայանքներում ազդանշանային կափույրի կեղծ գործարկումները բացառելու նպատակով թույլատրվում է կառավարման հանգույցում հապաղման խցիկների կամ էլեկտրական սարքվածքների կիրառումը:

487. Կառավարման հանգույցի ազդանշանային կափույրից ազդանշանի փոխարեն

հոսքի տվիչի ազդանշանով հրդեհային պոմպերի միացման դեպքում անհրաժեշտ է նախատեսել 3-5 վրկ հապաղում, և պետք է զուգահեռ միացված լինեն տվիչի հպակների ոչ պակաս քան 2 խումբ:

488. Բոլոր տիպի կայանքների կառավարման հանգույցներում ազդանշանիչներով փակիչ սարքվածքներ (սողնակային, սկավառակային) պետք է տեղակայել ազդանշանային կափույրից առաջ և հետո, իսկ հրդեհաշիջման ուղղություններում հոսքի տվիչի կիրառման դեպքերում՝ հոսքի տվիչից առաջ:

489. Սպասարկման և կառավարման նպատակով սարքավորանքների, էլեկտրոշարժիչների, փակիչ սարքերի բռնակները պետք է տեղակայել դեպի սպասարկողը՝ գետնից մինչև 1,75 մ բարձրության վրա: Ավելի բարձր տեղակայելու դեպքերում անհրաժեշտ է նախատեսել հարթակներ կամ կամրջակներ:

490. Հիդրավլիկական և այլ սարքավորանքի տեղակայումը հարթակների և կամրջակների տակ թույլատրվում է, եթե դրանց նեքևի կառուցվածքատարրերի (ելուստների) և հատակի միջև կա 1,8 մ-ից ոչ պակաս հեռավորություն, և այդ սարքավորանքի վերևում հարթակների և կամրջակների ծածկը հանովի է:

491. Կայանքների կառուցվածքը պետք է հնարավորություն տա առանց կայանքի աշխատանքի ընդմիջման ապատեղակայել չափիչ սարքերը՝ դրա համար կիրառելով համապատասխան չափերի փականներ:

492. Կայանքների բոլոր սարքերը, բացառությամբ խողովակաշարերի, ոռոգիչների և չափիչ սարքերի, պետք է ներկված լինեն կարմիր գույնով ըստ ԳՕՍՍ 12.4.009-83, ԳՕՍՍ 12.4.026-2015, ՀՍՍ ԳՕՍՍ Ռ-50680-2023 և ՀՍՍ ԳՕՍՍ Ռ-50800-2023:

3.2.12. ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

493. Ջրային կայանքների (բացառությամբ ագրեգատային ՆՓՋ-ԲՃ կայանքների) ջրամատակարարումը անհրաժեշտ է ապահովել օբյեկտներում նախատեսվող հակահրդեհային հատուկ կամ արտադրական և խմելու-տնտեսական ընդհանուր ջրամբարից, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 103-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.02-2020 շինարարական նորմերի համաձայն բնակավայրերում, արդյունաբերական օբյեկտներում առկա անհրաժեշտ ջրաքանակ ապահովող արտաքին հակահրդեհային ջրմուղներից, այլ տարբեր ջրագծերից,

բաց ջրամբարներից:

494. Ջրամատակարարումը անհրաժեշտ է իրականացնել 1-ին կարգի հուսալիությամբ:

495. Ջրային և փրփրային կայանքներում անհրաժեշտ ջրաքանակի և ճնշման ապահովման նպատակով կարող են կիրառվել հրդեհային պոմպեր (այդ թվում ընկղմվող և մոդուլային), ինքնաշխատ և օժանդակ ջրասնիչներ:

496. Ջրային բոլոր տեսակի կայանքներում անհրաժեշտ է նախատեսել առանց պահուստայինի ներքոգրյալ ինքնաշխատ ջրասնիչներից մեկը.

1) ճնշումային անոթ՝ 1 մ^3 -ից ոչ պակաս ծավալով, լցված $0,5 \pm 0,1 \text{ մ}^3$ ջրով և սեղմված օդով,

2) ճնշումային պոմպ և միջանկյալ 40լ-ից ոչ պակաս ծավալով մեմբրանային անոթ՝ լցված տարողության 50-60% -ով,

3) այլ ջրագծեր, որոնք աստիճանաբար են առնվազն ճնշումային պոմպի հաշվարկային ջրաքանակն ու ճնշումը:

497. Հիմնական պոմպերի միացման դեպքում ինքնաշխատ և օժանդակ ջրասնիչները պետք է անջատվեն:

498. 1 մ^3 -ից ոչ պակաս ծավալով ճնշումային անոթ-ինքնաշխատ ջրասնիչը պետք է ունենա ճնշաչափ, ճնշման ազդարարիչ, ջրի մակարդակի տեսողական և հեռավար ցուցիչ և ապահովիչ-կափույր:

499. Ճնշումային պոմպ-ինքնաշխատ ջրասնիչը պետք է ունենա ճնշաչափ և ճնշման ազդարարիչ, կամ համատեղված էլեկտրահպակային ճնշաչափ:

500. Օժանդակ ջրասնիչ անհրաժեշտ է նախատեսել այն դեպքերում, երբ ջրալցված կայանքների հրդեհային պոմպի աշխատանքային գործելակարգին հասնելու ժամանակը գերազանցում է 30 վրկ-ը:

501. Օդաջրային օժանդակ ջրասնիչը պետք է ունենա 2 ճնշաչափեր, ջրի մակարդակի տեսողական և հեռավար ցուցիչ, ապահովիչ-կափույր և, հերթապահ գործելակարգում՝ ճնշումը, իսկ հրդեհային պոմպի աշխատանքային գործելակարգի հասնելու ժամանակահատվածում՝ ջրաքանակը ապահովող ինքնաշխատ համակարգ:

502. 30մ-ից ավելի բարձրությամբ շենքերում օժանդակ ջրասնիչը նպատակահարմար է տեղադրել վերին տեխնիկական հարկերում (դրանց առկայության դեպքերում):

503. Արտաքին ջրագծերից պոմպերի մուտքին առնվազն 0,05ՄՊա ճնշում և պահանջվող ջրաքանակ չապահովելու դեպքերում պոմպերից առաջ անհրաժեշտ է նախատեսել հակահրդեհային ջրամբար, որի ծավալը անհրաժեշտ է որոշել կայանքի հիդրավլիկական հաշվարկով, ընդ որում խմելու և տնտեսական նպատակներով ևս ջրօգտագործման դեպքում պետք է միջոցներ ձեռարկվեն հրդեհաշիջման համար անհրաժեշտ ջրաքանակը այլ նպատակներով օգտագործումը բացառելու համար:

504. Հակահրդեհային ջրամբարը պետք է լցվի իր ծավալի 95%-ից ոչ ավելի ծավալով:

505. Ջրային հրդեհաշիջման կայանքների համար ջրամբարների ծավալները որոշելիս թույլատրվում է հաշվի առնել հրդեհաշիջման ամբողջ ժամանակահատվածում ինքնաշխատ կերպով ջրամբարներ լցվող ջրի քանակությունը: Այդ նույն հաշվարկի ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև ջրամբարում մնացորդային ջրի այն քանակությունը, որը չի կարող մղվել պոմպերի կողմից տարբեր պատճառներով:

506. Մինչև 200մ³ քանակությամբ անհրաժեշտ ջուրը թույլատրվում է պահել մեկ ջրամբարում, իսկ 200մ³ և ավելիի դեպքում՝ մի քանի ջրամբարներում հավասար, բայց ոչ ավելի քան 200մ³ քանակությամբ:

507. Մի քանի ջրամբարների դեպքում դրանք պետք է կապված լինեն ներածման խողովակաշարով, որի վրա յուրաքանչյուր ջրամբարից ելնող հատվածում անհրաժեշտ է նախատեսել ազդանշանիչներով փակիչ սարքվածք:

508. Ներածման խողովակաշարը պետք է ապահովի փոխկապակցված ջրամբարներից ջրի միաժամանակյա և հավասարաչափ մատակարարումը բոլոր պոմպերին կայանքի աշխատանքի ժամանակ, ջրառը կատարվի ամենահեռու ջրամբարներից և այդ նպատակով անհրաժեշտության դեպքում լինի օղակաձև:

509. Հրդեհային ջրամբարները պետք է մակնշվեն ըստ ԳՕՍՏ 12.4.009-83-ի:

510. Փրփրային հրդեհաշիջման կայանքների համար օգտագործվող ջրի որակը պետք է բավարարի կիրառվող փրփրարարի ՏՓ-ի պահանջներին: Խմելու ջրի խողովակաշարից ջրառը թույլատրվում է բացառապես ջուրը վերցնելու պահին ջրի շիթի (հոսքի) խզումը ապահովող (խմելու ջրին փրփրաջրի խառնվելը բացառող) հատուկ սարքվածքի առկայության դեպքում:

511. Փրփրային հրդեհաշիջման կայանքներում կիրառվող փրփրարարները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի

հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի (ԳՕՍՍ Ռ-50588-2012), ԳՕՍՍ Ռ-53280.1-2010 և ԳՕՍՍ Ռ-53280.2-2010 պահանջներին:

512. Փրփրային կայանքներում փրփրարարի անհրաժեշտ քանակի հաշվարկում անհրաժեշտ է հաշվի առնել կայանքի խողովակների ծավալը:

513. Փրփրային կայանքների դեպքում բացի փրփրարարի հաշվարկային քանակությունից, անհրաժեշտ է նախատեսել նաև 100% պահուստային քանակություն:

514. Պահուստային փրփրարարը պետք է պահվի առանձին տարայում և մատուցվի ինքնաշխատ կերպով հիմնական քանակության մատուցման անհնարինության դեպքում:

515. Փրփրային կայանքներում, ջրայինի հետ համեմատ, անհրաժեշտ է լրացուցիչ նախատեսել.

1) փրփրարարի հիմնական և պահուստային քանակությունների պահման համար անոթներ դրանց մեջ փրփրարարի մակարդակի տեսողական և/կամ հեռավար հսկման հնարավորությամբ սարքերով,

2) տրանսպորտային անոթներից հիմնական և պահուստային անոթներ փրփրարարի դատարկման սարքվածքներ,

3) փրփրարարի բաժնավորման հանգույց (բաք-բաժնավորիչ, բաժնավորման մոդուլ խողովակային կապվածքով),

4) պահման անոթում փրփրարարի խառնիչ, եթե պարբերական խառնումը փրփրարարի պահպանման պայմաններից է ըստ դրա ՏՓ-ի,

5) պահման անոթից փրփրարարի, խողովակաշարերից փրփրաջրի դատարկման սարքվածքներ:

516. Անհրաժեշտ հարաբերությամբ փրփրարարի և ջրի խառնելու համար կարող են նախատեսվել.

1) արտարկման (էժեկտորային) տիպի բաժնավորիչներ,

2) բաք-բաժնավորիչներ,

3) ինքնաշխատ հավասարակշռող բաժնավորիչներ,

4) հիդրոշարժաբերով բաժնավորիչներ,

5) ծրագրային ղեկավարմամբ բաժնավորման համակարգեր:

517. Փրփրային հրդեհաշիջման համակարգերում թույլատրվում է կիրառել հատուկ այդ նպատակի համար նախատեսված և 2000 ժամից ավելի աշխատանքի ընթացքում 0.99-ից

ոչ պակաս անխափան աշխատանքի հավանականությամբ բաժնավորիչներ (բաժնավորիչ համակարգեր):

518. Հերթապահ գործելակարգում, անկախ փրփրարարի հաշվարկային քանակությունից, բաք-բաժնավորիչները պետք է լիցքավորված լինեն անվանական ծավալով:

519. Փրփրաջրային սպրինկլերային կայանքներում բաժնավորիչը պետք է ապահովի անհրաժեշտ խտությամբ փրփրաջրի ստացումը մեկ ոռոգիչի գործարկումից մինչև հաշվարկային առավելագույն քանակությամբ ոռոգիչների գործարկում:

520. Արգելվում է փրփրարարի և ջրի նախօրոք խառնելը և պահելը փրփրային կայանքներում: Այն պետք է իրականացվի միայն հրդեհի դեպքում կայանքի գործարկումով ըստ ՀՍ ԳՕՍ Ռ 53252-2023-ի փրփրախառնիչների կիրառմամբ:

521. Փրփրարարի ՏՓ-ով նախատեսված պահման պահանջներից ելնելով և մեռյալ գոտիների առաջացումը բացառելու նպատակով անհրաժեշտ է ապահովել պահման անոթում փրփրարարի խառնումը և այդ նպատակով թույլատրվում է անոթի պարագծով նախատեսել ծակոտկեն խողովակ:

522. Հրդեհից հետո հրամարիչ նյութի և/կամ դրանց բաղադրամասերի պաշարի վերականգնման ժամանակը չպետք է գերազանցի.

1) 96 ժամը՝ ջրի և տեղական արտադրության հրամարիչ նյութի և/կամ դրանց բաղադրամասերի համար,

2) 2 շաբաթը՝ արտասահմանյան արտադրության նյութի և/կամ դրանց բաղադրամասերի համար:

523. Օբյեկտների նախագծերի համապատասխան բաժիններում անհրաժեշտ է միջոցներ նախատեսել ջրային և փրփրային կայանքների գործարկումից հետո հրամարիչ նյութերի հեռացման համար:

3.2.13. ՊՈՄՊԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ, ՊՈՄՊԱԿԱՅԱՆՆԵՐ

524. Հրդեհային պոմպակայանները՝ որպես սպառողներ ըստ ՀՀ կառավարության 2023 թ. ապրիլի 21-ի N 592-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոնները» փաստաթղթի դասվում են էլեկտրամատակարարման հուսալիության 1-ին կարգին, իսկ ջրամատակարարման ապահովման մասով՝ ըստ ՀՀ

քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 103-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.02-2020 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերի.

1. 1-ին կարգին, եթե նախատեսված չէ առանձին հակահրդեհային ջրավազան և այդ նպատակով ջրառը նախատեսվում է անմիջապես արտաքին ջրամատակարարման ցանցերից,

2. 2-րդ կարգին, եթե առկա է առանձին հակահրդեհային ջրավազան:

525. Հրդեհային պոմպերի տիպը և քանակը անհրաժեշտ է ընտրել նրանց համատեղ աշխատանքի հնարավորության և ջրի անհրաժեշտ ճնշումն ու ծախսը ապահովելու պայմանից:

526. Կապված ջրի անհրաժեշտ ճնշումից և ծախսից, կարող են կիրառվել մեկ կամ մի քանի հիմնական պոմպեր:

527. Անկախ հիմնական պոմպերի քանակից, անհրաժեշտ է նախատեսել առնվազն մեկ պահուստային պոմպ, որը պետք է ունենա հիմնական պոմպերից ամենաարտադրողական պոմպի բնութագրերից ոչ պակաս բնութագրեր՝ առավելագույն ճնշում և արտադրողականություն, իսկ եթե ընտրված հիմնական պոմպերը նույնն են, ապա պահուստային պոմպը նույնպես ընդունվում է նույնը:

528. Պոմպերի էլեկտրական շարժիչները պետք է հողանցվեն ՀՀ կառավարության 2023 թ. ապրիլի 21-ի N 592-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոնների» և ԳՕՍՏ 21130-75-ի պահանջներով: Գերբեռնվածությունից և ջերմային պաշտպանություն պետք է նախատեսել միայն հիմնական պոմպերի համար: Պահուստային պոմպը պետք է ինքնաշխատ կերպով գործարկվի հիմնական պոմպերից ցանկացածի խափանման դեպքում՝ 500-րդ կետով որոշված ժամանակում անհրաժեշտ ճնշման բացակայության կամ վթարային անջատման դեպքերում, և նրա համար չպետք է նախատեսել գերբեռնվածությունից և ջերմային պաշտպանություն:

529. Ջրասնիչներում կարող են նախատեսվել ինչպես էլեկտրական, այնպես էլ ներքին այրման շարժիչով պոմպեր:

530. Եթե տեղական պայմաններից ելնելով հնարավոր չէ հրդեհային էլեկտրական շարժիչով պոմպերի սնուցումն իրականացնել երկու անկախ էլեկտրամատակարարման աղբյուրներից, թույլատրվում է այն իրականացնել մեկ աղբյուրից՝ միացնելով 0,4 կՎ

լարումով հոսանքի տարբեր գծերին, որոնք սնվում են երկտրանսֆորմատորային ենթակայանի տարբեր տրանսֆորմատորներից կամ երկու մոտակա մեկտրանսֆորմատորանի ենթակայաններից (պահուստի ավտոմատ միացման սարքավորումներով):

531. Որպես երկրորդ անկախ էլեկտրասնուցման աղբյուր թույլատրվում է նախատեսել ներքին այրման շարժիչով գեներատորներ:

532. Ներքին այրման շարժիչով պոմպերը և էլեկտրական գեներատորները չի թույլատրվում տեղակայել նկուղային հարկում:

533. Տրանսֆորմատորային ենթակայաններից սնվող էլեկտրական շարժիչով պոմպերը պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի պահանջներին և աշխատանքային գործելակարգին հասնեն առավելագույնը 15 վարկյանում:

534. Ներքին այրման շարժիչով պոմպերը և էլեկտրական գեներատորներից սնվող էլեկտրական շարժիչով պոմպերը աշխատանքային գործելակարգին պետք է հասնեն առավելագույնը 1 րոպեում և այդ ընթացքում ջրասնուցումը պետք է կատարվի օժանդակ ջրասնիչից:

535. Պոմպակայաններն անհրաժեշտ է տեղակայել առանձին շենքում, կցակառուցում կամ էլ պաշտպանվող շենքի առաջին, կիսանկուղային կամ 1-ին ստորգետնյա հարկում:

536. Բարձրահարկ շենքերում թույլատրվում է պոմպակայանների տեղակայումը վերգետնյա մեկ կամ ըստ անհրաժեշտության մի քանի միջանկյալ տեխնիկական հարկերում պայմանով, որ պոմպակայանին կից սենքերում աղմուկի գումարային մակարդակը չգերազանցի 30 դԲԱ:

537. Պոմպակայանները տեղակայելիս անհրաժեշտ է հաշվի առնել ներքոգրյալ պարտադիր պահանջներից մեկը.

1) առաջին, կիսանկուղային կամ նկուղային հարկերում տեղակայվելիս.

ա. անմիջական ելք դեպի դուրս,

բ. ելք դեպի աստիճանավանդակ կամ սրահ, որոնք ունեն անմիջական ելք դեպի դուրս,

գ. ելք դեպի միջանցք, որն անմիջականորեն տանում է դեպի դուրս անմիջական ելք ունեցող աստիճանավանդակ կամ սրահ,

2) երկրորդ և վերին հարկերում տեղակայվելիս.

ա. ելք դեպի աստիճանավանդակ կամ 3-րդ տիպի աստիճաններ ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի,

բ. ելք դեպի միջանցք, որն անմիջականորեն տանում է դեպի աստիճանավանդակ կամ 3-րդ տիպի աստիճաններ,

գ. ելք դեպի սրահ, որն ունի անմիջական ելք դեպի աստիճանավանդակ կամ 3-րդ տիպի աստիճաններ,

դ. ելք դեպի շահագործվող տանիքածածկ կամ նրա հատուկ նախատեսված մի հատված, որն ունի ելք դեպի 3-րդ տիպի աստիճաններ:

538. Պոմպակայանը.

1) առանձին շենքում տեղակայվելու և ներքին այրման շարժիչների բացակայության դեպքում այդ շենքի հրակայունության աստիճանը պետք է լինի IV աստիճանից ոչ ցածր ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի,

2) ցանկացած շենքում տեղակայվելու և ներքին այրման շարժիչների առկայության դեպքում այդ շենքի հրակայունության աստիճանը պետք է լինի I աստիճանի,

3) պետք է առանձնացված լինի այլ սենքերից 1-ին տիպի հակահրդեհային պատերով և 2-րդ տիպի ծածկերով ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի:

539. Պոմպակայանի սենքում օդի ջերմաստիճանը պետք է լինի 5°C -ից մինչև 35°C, օդի հարաբերական խոնավությունը՝ 80% ոչ ավելի 25°C դեպքում:

540. Աշխատանքային և վթարային լուսավորությունը պետք է լինի ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 56-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերի:

541. Պոմպակայանը հրդեհային դիտակետի հետ պետք է կապված լինի հեռախոսային կամ այլ օպերատիվ կապով:

542. Պոմպակայանի մուտքի մոտ պետք է լինի վթարային լուսավորությամբ լուսատախտակ՝ «ՀՐՇԵՋ ՊՈՄՊԱԿԱՅԱՆ» մակագրությամբ:

543. Պոմպակայանի մակերեսը որոշելիս անհրաժեշտ է ապահովել կայանքի սարքավորանքի միջև հետևյալ նվազագույն հեռավորությունները.

1) կառավարման հանգույցների միջև, նրանց և պատերի միջև՝ 0.5մ,

2) պոմպերի միջև՝ 0.7մ,

3) պոմպերի, մոդուլային պոմպակայանքների և պատերի միջև՝ 1.0մ, բայց այնքան, որ հնարավոր լինի էլեկտրոշարժիչների ռոտորների ապամոնտաժումն ու տեղափոխումը,

4) այլ սարքավորանքի ելուստված անշարժ մասերի և պատերի միջև՝ 0.7մ,

5) էլեկտրական վահանակների առջև՝ 2.0մ:

544. Մինչև ներառյալ DN 100 մղման կարճախողովակով պոմպերը թույլատրվում է տեղակայել.

1) պատերի մոտ կամ բարձակների վրա,

2) մեկ հիմքի վրա 2 պոմպ, ապահովելով նրանց ելուստված մասերի միջև ոչ պակաս քան 0.5մ, իսկ պատերի միջև՝ 0.7մ հեռավորություն:

545. 543-րդ և 544-րդ կետերում նշված հեռավորությունները պետք է լրացուցիչ ճշտել սարքավորանքի ՏՓ-ով:

546. Պոմպերը պետք է տեղադրել նրանց ՏՓ-ի պահանջներին համապատասխան հիմքերի վրա: Այդ տվյալների բացակայության դեպքերում պետք է նախատեսել պոմպերի զանգվածը 4 անգամ գերազանցող և նրանց եզրագծերից առնվազն 0.1մ դուրս եկող երկաթբետոնե հիմք:

547. Միաժամանակ երկուսից ոչ պակաս շարժական հակահրդեհային տեխնիկան կայանքին դրսից միակցելու համար անհրաժեշտ է նախատեսել DN80 և ավելի տրամագծով կարճախողովակներով դուրս բերված և Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգին (ԳՕՍՏ Ռ 53279-2009) համապատասխանող միացման գլխիկներ: Դրանց տրամագիծն ու քանակը պետք է ապահովեն հրդեհաշիջման կայանքի թելադրող հատվածամասի առավելագույն հաշվարկային ծախսը: Գլխիկները հակադարձ փականներով, նորմալ բաց փականով պետք է միակցվեն կայանքի առբերիչ խողովակին:

548. Միացման գլխիկներով կարճախողովակները դրսի պատին պետք է տեղակայել

շարժական հակահրդեհային տեխնիկայի մոտեցման համար հարմար վայրում, դրսի պատի վրա՝ խորշում, մետաղական արկղի մեջ, գլխիկի առանցքը գետնից 1.50 ± 0.15 մ բարձրության վրա և արտաքին հակահրդեհային ջրմուղի մոտակա ջրածորանին հնարավորինս մոտիկ: Արկղի դռան վրա անհրաժեշտ է նախատեսել համապատասխան մակնշում՝ F08 ըստ ԳՕՍՏ 12.4.026-2015:

549. Հրդեհային հիմնական կամ պահուստային պոմպերը միանալիս հակահրդեհային ջրավազանին միացած մնացած պոմպերը, ներառյալ ճնշումայինը, պետք է անջատվեն:

550. Պոմպերը պետք է տեղակայվեն, որպես կանոն, ճնշումային հանգույցները ջրալցված, համաձայն պոմպերի ՏՓ-ի:

551. Գետնի մակարդակից ցածր գտնվող պոմպակայաններում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել պոմպերի, փականների կամ խողովակաշարի վթարների դեպքում հնարավոր ջրահոսքերը հեռացնելու համար, մասնավորապես.

- 1) պոմպերը տեղակայել գետնից առնվազն 0.5մ բարձրությամբ հիմքի վրա,
- 2) նախատեսել բետոնապատ պատերով ցամաքուրդային փոսորակ $0,8մ \times 0,8մ$ չափերով և առնվազն 0,8մ խորությամբ,
- 3) պոմպակայանի հատակին ապահովել թեքություն դեպի կոյուղու հոսակ՝ ջրի ինքնահոս հեռացման համար և դեպի ցամաքուրդային փոսորակ:
- 4) կիսանկուղային և նկուղային հարկերում պետք է նախատեսել 2 հատ ինքնաշխատ ցամաքուրդային պոմպեր 1-ին կարգի հուսալիությամբ էլեկտրամատակարարումով, որոնցից յուրաքանչյուրի բնութագրերը պետք է ապահովեն պոմպակայանի ամբողջ մակերեսին 0.5մ բարձրությամբ ջրի հեռացումը 30 րոպեի ընթացքում,

552. Հրդեհային վտանգավորության ԿՕ դասի շինարարական կառուցվածքատարրեր և REI 150 հրակայունության սահմանով պատեր ունեցող սենքերում տեղակայված ներքին այրման շարժիչով էլեկտրական գեներատորների կամ պոմպերի հետ թույլատրվում է տեղակայել հեղուկ վառելիքով ծախսային անոթներ, բենզին՝ ոչ ավելի քան 125լ, դիզելային վառելիք՝ ոչ ավելի քան 250լ:

553. Թույլատրվում է հրդեհային պոմպերը տեղակայել առանց թրթռամեկուսացնող հիմքի, մուտքային և ելքային կարճախողովակներին ներածող և առբերիչ խողովակաշարերի միացումն իրականացնելով համապատասխան ճնշման համար նախատեսված ռետինե փոխհատուցիչներով:

554. Պոմպային կայանքի ներածման խողովակաշարը, անկախ պոմպերի քանակից, պետք է ունենա առնվազն 2 մուտք: Մի խողովակաշարի փակման դեպքում մյուսները պետք է ապահովեն ջրի ամբողջ հաշվարկային քանակության անցումը:

555. Պոմպային կայանքի ներածման ճնշումային խողովակաշարը, անկախ պոմպերի քանակից, պետք է ունենա առնվազն 2 մուտք: Մի ճնշումային խողովակաշարի փակման դեպքում մյուսները պետք է ապահովեն ջրի ամբողջ հաշվարկային քանակության անցումը: Մինչև 3 կառավարման հանգույցով և մինչև 12-ը ներառյալ հրշեջ ծորակներով համակարգերում պոմպային կայանքների ներածման ճնշումային խողովակաշարը կարելի է նախատեսել 1 հատ:

556. Ներածման խողովակաշարը պետք է ունենա 0,005-ից ոչ պակաս անընդհատ վերելք դեպքի պոմպը, իսկ տրամագծերի փոփոխման դեպքում անհրաժեշտ է կիրառել ապակենտրոն անցումներ (նկար 12):

557. Պոմպերի ներածման խողովակաշարին, ըստ հեղուկի հոսքի ուղղության, անհրաժեշտ է նախատեսել փակիչ սարքվածք դիրքերի տվիչով, ռետինե փոխհատուցիչ և ճնշաչափ (ներածման ճնշումային խողովակաշարի դեպքում), իսկ ճնշումային (առբերիչ) խողովակաշարի վրա՝ ռետինե փոխհատուցիչ, հակադարձ կափույր, ճնշաչափ և փակիչ սարքվածք դիրքերի տվիչով:

558. Տեղակայման միջադիրների անհրաժեշտության դեպքում դրանք տեղակայվում են հակադարձ կափույրի և փակիչ սարքվածքի միջև:

559. Ջրավազանը սնուցող խողովակաշարի փակիչ սարքվածքները անհրաժեշտ է տեղակայել պոմպակայանում կամ ջրաչափի սենքում:

560. Ինքնաշխատ կամ հեռավար գործարկման ազդանշանը պետք է տրվի պոմպերին ներածման խողովակում ջրի առկայությունը (ջրավազանում ջրի բավարար մակարդակը) կամ ճնշումը (ներածման ճնշումային խողովակաշարի դեպքում) ինքնաշխատ կերպով ստուգելուց հետո:

561. Պոմպային կայանքներում անհրաժեշտ է հսկողության տակ պահել յուրաքանչյուր պոմպի ելքում ճնշումը և վթարային ջրթողումը՝ ջրի առկայությունը պոմպակայանի հատակին, պոմպերի հիմքի մակարդակում:

562. Ջրամբարները ինքնաշխատ լցվելու սարքվածքի կիրառման դեպքում ջրի մակարդակի հսկողությունը՝ վթարային մակարդակների մասին հրդեհային դիտակետում և պոմ-

պակայանում ազդանշանի ձևով, պետք է իրականացվի միայն ինքնաշխատ սարքի միջոցով:

563. Պոմպային կայանքում անհրաժեշտ է նախատեսել սարքվածք սնիչ խողովակաշարով ջրի հաշվարկային ճնշման և ծախսի ստուգման համար: Այդ նպատակով պոմպի մղված ջուրը կարող է հետ վերադարձվել ջրավազան:

564. Լրիվ պատրաստի գործարանային հավաքման մոդուլային պոմպային կայանքները պետք է համապատասխանեն ԵՏՄ ՏԿ 047/2017ի պահանջներին:

3.2.14. ԲԱՐՁՐ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՐԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

565. Բարձր պատիկությամբ փրփրաշիջման կայանքները (սույն բաժնի հետագա շարարանքում՝ նաև կայանքներ), նախատեսված են ըստ ԳՕՍՏ 27331-87-ի A2 և B դասի հրդեհների մարման համար:

566. Բարձր պատիկությամբ տեղային ծավալային փրփրաշիջման կայանքները կիրառվում են առանձին սարքավորանքների հրդեհի մարման համար այն դեպքերում, երբ սենքն ամբողջությամբ պաշտպանելու համար բարձր պատիկությամբ կայանքի կիրառումը տեխնիկապես հնարավոր չէ կամ տնտեսապես նպատակահարմար չէ:

567. Բարձր պատիկությամբ փրփրաշիջման կայանքները տարբերակվում են.

1) ըստ պաշտպանվող օբյեկտների վրա ազդեցության՝ ծավալային և տեղային ծավալային կայանքներ,

2) ըստ փրփրարտադրիչների կառուցվածքի՝ օդի ներմղմամբ և արտարկչային (էժեկտորային):

568. Կայանքները պետք է համապատասխանեն ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 50800-2023-ի պահանջներին:

569. Կայանքներում պետք է նախատեսել բացառապես բարձր պատիկությամբ փրփուր ստանալու համար նախատեսված փրփրարար:

570. Ծավալային կայանքները պետք է ապահովեն պաշտպանվող սենքը կամ ծավալը 10 րոպեի ընթացքում փրփուրով լցվելը այնտեղ գտնվող սարքավորանքների ամենաբարձր կետից առնվազն 1 մ բարձր:

571. Սարքավորանքը, խողովակաշարերի երկարությունն ու տրամագծերը անհրաժեշտ է ընտրել այնպես, որ կայանքի իներցիոնությունը չգերազանցի 180 վրկ:

572. Բարձր պատիկությամբ փրփրաշիջման կայանքների արտադրողականությունը և

փրփրարարի լուծույթի քանակը որոշվում են կայանքի հաշվարկով ըստ 3.6.3 բաժնի, ելնելով պաշտպանվող սենքերի և ծավալների հաշվարկային ծավալից: Կայանքը մի քանի սենքեր կամ սարքավորանքներ պաշտպանելու դեպքում, որպես հաշվարկային ընդունվում է այն սենքը կամ սարքավորանքը, որի համար պահանջվում է ամենաշատ փրփրարարի լուծույթ:

573. Տեղային ծավալային կայանքի կիրառման դեպքում, պաշտպանվող սարքավորանքն անհրաժեշտ է ցանկապատել 5 մմ ոչ ավելի բջիջների չափ ունեցող մետաղական ցանցով: Ցանկապատի բարձրությունը պետք է լինի պաշտպանվող սարքավորանքից 1 մ բարձր և գտնվի նրանից 0.5 մ ոչ մոտիկ:

574. Տեղային ծավալային հրդեհաշիջման հաշվարկային ծավալը որոշվում է սարքավորանքը ցանկապատող կոնստրուկցիայի հիմքի մակերեսի և նրա բարձրության արտադրյալով: Պաշտպանվող ծավալում լցման ժամանակը տեղային ծավալային հրդեհաշիջման դեպքում չպետք է գերազանցի 180 վրկ:

575. Փրփրարտադրիչներից առաջ անհրաժեշտ է նախատեսել զտիչներ, որոնց զտման բջիջի չափը պետք է փոքր լինի փրփրարտադրիչի արտահոսքի անցքերից նվազագույնի չափից:

576. Փրփրարտադրիչների քանակը որոշվում է կայանքի հաշվարկով: Մի սենքում պետք է կիրառել նույն տիպի և կառուցվածքի 2-ից ոչ պակաս փրփրարտադրիչներ:

577. Անհրաժեշտության դեպքերում փրփրարտադրիչները պետք է պաշտպանել հնարավոր մեխանիկական վնասվածքներից:

578. Հաշվարկային քանակությունից բացի կայանքներում անհրաժեշտ է նախատեսել փրփրարարի 100% պահուստ:

579. Կայանքների պոմպակայանները, ջրամատակարարումը, խողովակաշարերը նախագծելիս պետք է ղեկավարվել ԳՕՍՍ 21.205-2016 և սույն շինարարական նորմերի 3.2.7-3.2.13 բաժինների պահանջներով: Խողովակաշարերը հարկավոր է նախատեսել պողպատե ջրագազային ցինկապատ խողովակներով ըստ ԳՕՍՍ 3262-78-ի: Բաժնավորման հանգույցի խողովակները, որոնք անմիջական հպման մեջ են փրփրարարի հետ, անհրաժեշտ է նախատեսել չժանգոտվող պողպատից:

580. Օդի ներմղմամբ փրփրարտադրիչներով աշխատող կայանքներում փրփրարտադրիչներն անհրաժեշտ է տեղակայել պոմպակայաններում, սենքերին կից կաույցներում կամ անմիջապես պաշտպանվող սենքերում: Առաջին երկու դեպքերում

փրփուրը պետք է պաշտպանվող սենք մատուցվի կամ անմիջապես փրփրարտադրիչի կարճախողովակից, կամ էլ համապատասխան հատուկ խուղակներով, որոնց տրամագիծը պետք է լինի փրփրարտադրիչի ելքային կարճախողովակից ոչ պակաս, իսկ երկարությունը՝ 10 մ ոչ ավելի: 10 մ-ից ավելի երկարությամբ խուղակների կիրառումը պետք է հիմնավորվի այդ երկարության դեպքում փրփուրի չքայքայման հաշվարկով կամ փորձնական եղանակով և պետք է ապահովվի թարմ օդի մատուցումը կամ էլ կիրառվեն հրդեհի արգասիքների միջավայրում փրփուրի արտադրության հնարավորությամբ փրփրարտադրիչներ:

581. Օդի ներմղմամբ փրփրարտադրիչներով աշխատող կայանքներում փրփրարտադրիչներն անմիջապես պաշտպանվող սենքերում տեղակայելու դեպքում պետք է ապահովվի թարմ օդի մատուցումը փրփրարտադրիչներին կամ էլ կիրառվեն կրակի արգասիքների միջավայրում փրփուրի ստացումն ապահովող փրփրարարներ:

582. Պաշտպանվող սենքի վերի հատվածում անհրաժեշտ է ապահովել օդի արտաթողում փրփուրի մատուցման ընթացքում, իսկ փրփուրի մատուցման խուղակները պետք է համապատասխանեն ԿՕ հրդեհային վտանգավորության դասին ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի:

583. Եթե պաշտպանվող սենքի մակերեսը գերազանցում է 400 մ², ապա փրփուրի մատուցումն անհրաժեշտ է իրականացնել սենքի հակադարձ կողմերում տեղակայված ոչ պակաս քան երկու տեղից:

584. Արտարկչային փրփրարտադրիչներով կայանքները կարող են լինեն ինչպես ծավալային, այնպես էլ տեղային ծավալային: Առաջին դեպքում փրփրարտադրիչները տեղակայվում են առաստաղի տակ այնպես, որ ապահովվի փրփուրի հավասարաչափ մատուցումը, ներառյալ ցանկապատնեշված տարածքները: Երկրորդ դեպքում փրփրարտադրիչները տեղակայվում են պաշտպանվող սարքավորանքի կամ սենքի պաշտպանվող հատվածի անմիջապես վերևում: Պետք է ապահովվի թարմ օդի մատուցումը փրփրարտադրիչներին կամ էլ կիրառվեն հրդեհի արգասիքների միջավայրում փրփուրի արտադրության հնարավորությամբ փրփրարտադրիչներ:

3.2.15. ՌՌՐՈՏԱՑՎԱԾ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

585. Ռոբոտացված հրդեհաշիջման կայանքների (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ նաև կայանքներ), նախագծման ժամանակ պետք է ղեկավարվել Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 (ՀՍ ԳՕՍ Ռ 53325-2023, ՀՍ ԳՕՍ Ռ 53326-2023), ԳՕՍ 12.2.072-98, ԳՕՍ 12.3.046-91, ՀՍ ԳՕՍ Ռ 50680-2023 և ՀՍ ԳՕՍ Ռ 51052-2023-ի, սույն շինարարական նորմերի, ինչպես նաև դրանց ՏՓ-ի պահանջներով:

586. Կայանքներում պետք է լինեն.

- 1) առնվազն 2 հրդեհային ստացիոնար ռոբոտային փողակ,
- 2) ղեկավարման համակարգ,
- 3) էլեկտրական շարժաբերով փակիչ-թողարկիչ սարքվածքներ,
- 4) տվյալների փոխանցման կապուղիներ:

587. Ռոբոտային ստացիոնար փողակները նախատեսված են հրամարիչ նյութի հոծ կամ փոշիացված շիթի ձևավորման և այն հրդեհի օջախին ուղղելու, կամ էլ տեխնոլոգիական սարքավորանքն ու շինարարական կառուցվածքատարրերը սառեցնելու համար:

588. Որպես հրամարիչ նյութ կարող են լինել ջուրը, թրջիչներով ջուրը կամ էլ փրփուրը:

589. Կայանքների աշխատանքի ընթացքում միաժամանակ ներգրավված ստացիոնար փողակների գործելու ալգորիթմը և դրանց քանակը որոշվում են պաշտպանվող սենքի ճարտարապետական և սարքավորանքի առանձնահատկություններից:

590. Կայանքները պետք է գործեն հետևյալ աշխատակարգերով.

- 1) ինքնաշխատ՝ դիրքային կամ ուրվագծային ծրագրավորված շարժում,
- 2) ձեռքի հեռակառավարում՝ հորիզոնական և ուղղաձիգ հարթություններում փողակի շարժման ղեկավարում հեռակառավարման վահանակով, կամ այդ վահանակում առկա ծրագրով,
- 3) ձեռքի տեղային կառավարում՝ հորիզոնական և ուղղաձիգ հարթություններում փողակի շարժման ղեկավարում տեղային վահանակով կամ այդ վահանակում առկա ծրագրով,
- 4) ձեռքի անմիջական ղեկավարում՝ անմիջապես փողակի վրա տեղակայված մեխանիկական սարքվածքներով:

591. Հրդեհի օջախի հայտնաբերման ու նրա ուղղությամբ փողակի նշանառման ալգո-

րիթմը պետք է համապատասխանի փողակի ՏՓ-ին և կոնկրետ պաշտպանվող օբյեկտի առանձնահատկություններին: Անհրաժեշտ է բացառել կայանքների նշանառության ինքնաշխատ ազդասարքերի համար չդիտարկվող գոտիները:

592. Պաշտպանվող սենքի յուրաքանչյուր կետ պետք է գտնվի առնվազն 2 ուրուտացված փողակների հասանելիության գոտիներում: Այս պայմանի անհնարինության դեպքում չպաշտպանված հատվածները պետք է պաշտպանել հրդեհաշիջման այլ կայանքներով:

593. Ռուրուտացված հրդեհաշիջման կայանքի ղեկավարման վահանակը (տեղային կամ հեռակառավարման) կամ ձեռքով ղեկավարվող փողակը 1 մ-ից ավելի բարձրությամբ հարթակի վրա տեղակայվելու դեպքում սպասարկող աշխատակազմի անվտանգության նպատակով այդ հարթակը պետք է ցանկապատվի:

594. Կայանքի փողակի տեղակայումը պետք է ապահովի նրա շարժը հորիզոնական և ուղղաձիգ հարթություններում՝ հաշվի առնելով նրա չափերն ու շարժի անհրաժեշտ միջակայքը:

595. Կայանքի սպասարկողների համար սարքավորումներին հասանելիությունը պետք է լինի հարմար և անվտանգ:

596. Հրդեհի օջախի հայտնաբերման նպատակով կայանքի փողակի շարժը պետք է սկսվի ընդհանուր դիտարկման հրդեհի ազդասարքի կամ տվյալ պաշտպանվող գոտու բոցի ինքնաշխատ ազդասարքի գործարկումից:

597. Հրամարիչ նյութի մատուցումն ու փողակի դիրքային կամ ուրվագծային շարժումը կրակի եզրային կորդինատներով պետք է իրականացվի փողակի վրա տեղակայված նշանառության ազդասարքի ազդանշանով կամ նախօրոք նախանշված ծրագրով:

598. Հրամարիչ նյութի ընդհանուր ծախսն ու անընդմեջ աշխատանքի տևողությունը չի կարող փոքր լինել Աղյուսակ 15-ում նշվածներից:

599. Կայանքի ջրի ընդհանուր ծախսը անհրաժեշտ է ճշտել ելնելով հրդեհաշիջման ժամանակ միաժամանակ գործող փողերի քանակից, սնիչ խողովակաշարում հիդրավլիկական կորուստներից, հրդեհային բեռի չափից և բնութագրից, օբյեկտի տեխնոլոգիական առանձնահատկություններից, սենքերի բնութագրից (1-ին, 2-րդ կամ 4-5-րդ խումբ համաձայն Աղյուսակ 15-ի):

600. Ծրագրավորված շարժման դեպքում յուրաքանչյուր փողակ, չափելով իր ելքում հրամարիչ նյութի ճնշումն ու մինչև հրդեհի օջախ հեռավորությունը, հաշվի առնելով

հրամարիչ նյութի շիթի հետագիծը, ինքնաշխատ կերպով պետք է իրականացնի ուղղաձիգ հարթության մեջ թեքության անկյան ճշտում:

601. Կայանքների խողովակաշարերը 20°C-ում 5 րոպեի ընթացքում պետք է ապահովեն ամրություն $P=1.25P_{w2h}$, բայց ոչ պակաս քան 1,25 ՄՊա ճնշմանը, և ապահովեն հերմետիկություն $P=P_{w2h}$, բայց ոչ պակաս քան 1,0 ՄՊա ճնշման դեպքում (P_{w2h} -ը առավելագույն աշխատանքային ճնշումն է):

602. Կայանքի փողակը և 24վ-ից բարձր լարումով աշխատող ղեկավարման բոլոր հանգույցները պետք է ունենան հողանցման սեղմակ, նշան և հողանցվեն ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 592-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոնների» և Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 768 որոշմամբ հաստատված ՄՄ ՏԿ 004/2011 կանոնակարգի (ԳՕՍՍ 21130-75) պահանջներով:

603. Կայանքի փողակը, կառավարման վահանակները և սարքերը, էլեկտրական շարժաբերով փակիչ-թողարկիչ սարքերը, ընդհանուր դիտարկման և գոտիական հրդեհի ազդասարքերը պետք է ներկվեն կարմիր գույնով ԳՕՍՍ Ռ-50680-84 և ՀՍՍ ԳՕՍՍ Ռ-50800-2023-ի պահանջներով:

604. Մեկ գոտու հսկողության համար մի քանի հրդեհի ազդասարքերի կիրառման դեպքում, փողակներին հրդեհի օջախի փնտրման համար ազդանշան ուղարկելու համար այդ ազդասարքերը պետք է միացված լինեն տրամաբանական ԿԱՄ սխեմայով (ալգորիթմ A):

605. Ընդհանուր դիտարկման ազդասարքի կամ տրամաբանական ԵՎ սխեմայով միացված երկու ազդասարքերի գործարկման դեպքում հրդեհային դիտակետ պետք է հաղորդվի «ՈւՇԱԴԲՈւԹՅՈւՆ» ազդանշանը (ալգորիթմ B):

606. Կապված ՌՀԿ-ի գործելու ընտրված ալգորիթմից, հրդեհային պոմպի, էլեկտրական շարժաբերով փակիչ-թողարկիչ սարքվածքների, ձայնային և լուսային ազդարարիչների գործարկումը, հրշեջ ծառայությանը և հրդեհային դիտակետ «ՀՐԴԵՀ» ազդանշանի ուղարկելը, տեխնոլոգիական, ընդհանուր և հակաձխային օդափոխության և այլ համակարգերին գործարկման ազդանշան ուղարկելը պետք է իրականացվի ՀԱՀ-ի կողմից հրդեհի փաստի հաստատումից կամ նշանառության հրդեհի ազդասարքերից որևէ մեկի կողմից հրդեհի հայտնաբերումից հետո:

3.3. ԳԱԶԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

3.3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

607. Գազային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքները (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ նաև Գ-ՀՇԻԿ), կիրառվում են ըստ ԳՕՍՏ 27331-87-ի A և B դասի, ու նաև հրամարիչ նյութի ՏՓ-ում նշվածից ոչ ավելի բարձր լարման տակ գտնվող էլեկտրասարքավորանքի հրդեհների մարման համար:

608. Գ-ՀՇԻԿ-ները չպետք է կիրառվեն հետևյալ հրդեհների մարման համար.

- 1) թելավոր, սորուն, ծակոտկեն և այլ այրվող նյութերի, որոնք հակված են նյութի ծավալի ներսում ինքնաբոցավառման և/կամ մարմրման (փայտի թեփ, բամբակ, ծղոտ և այլն),
- 2) քիմիական նյութերի և դրանց խառնուրդների, առանց օդի ներկայության մարմրման և այրման հակված պոլիմերային նյութերի,
- 3) մետաղների հիդրիտների և հրակիր նյութերի,
- 4) մետաղների (նատրիում, կալիում, մագնիում, տիտան և այլն) փոշիների:

609. Գ-ՀՇԻԿ-ը տարբերակվում են.

- 1) ըստ հրդեհաշիջման ձևի՝
 - ա. ծավալային կայանքներ,
 - բ. տեղային ծավալային կայանքներ,
- 2) ըստ հրամարիչ գազի պահպանման՝
 - ա. կենտրոնացված կայանքներ,
 - բ. մոդուլային կայանքներ,
- 3) ըստ գործարկման ձևի՝
 - ա. էլեկտրական,
 - բ. օդով,
 - գ. մեխանիկական (ձեռքով),
 - դ. համատեղված:

610. Որպես հրամարիչ նյութեր կիրառվում են Աղյուսակ 20-ում նշված գազերը.

611. Հեղուկ գազերի դեպքում, որպես արտամղիչ գազ, պետք է կիրառել ԳՕՍՏ 9293-74-ին համապատասխան ազոտ:

612. Արգելվում է ածխաթթվային ծավալային Գ-ՀՇԻԿ-ի կիրառումը այն սենքերում, որտեղ.

- 1) մարդիկ չեն կարող լքել տարածքը մինչև կայանքի գործարկումը,
- 2) հնարավոր է 50 և ավելի մարդկանց ներկայությունը:

Աղյուսակ 20. Հրդեհաշիջման նպատակով օգտագործվող նյութերը

Հ/Հ	Կիրառվող հրամարիչ նյութերը
1. Հեղուկներ և հեղուկացված գազեր	
1)	Ածխածնի երկօքսիդ (CO_2)
2)	Ֆրեոն HFC-23 (CF_3H)
3)	Ֆրեոն HFC-125 (C_2F_5H)
4)	Ֆրեոն 218 (C_7F_8)
5)	Ֆրեոն HFC-227ea (C_3F_7H)
6)	Ֆրեոն 318C (C_4F_8)
7)	SՖՄ-18 (TFM-18, TՓՄ-18, զանգվածի 90% Ֆրեոն 23, 10% յոդական մեթիլ (CH_3I))
8)	FK-5-1-12 ($CF_3CF_2C(O)CF(CF_3)_2$)
2. Սեղմված գազեր	
1)	Ազոտ (N_2) – IG100
2)	Արգոն (Ar) – IG01
3)	Իներգեն (IG541, ծավալային 52% ազոտ, 40% արգոն, 8% ածխածնի երկօքսիդ)
4)	Արգոնիտ (IG55, ծավալային 50% ազոտ, 50% արգոն)

613. Ծավալային Գ-ՀՇԻԿ-ները, բացի ազոտային Գ-ՀՇԻԿ-ներից, կիրառվում են այն սենքերի (սարքավորանքի) պաշտպանության համար, որոնք ունեն անշարժ պատող կոնստրուկցիաներ և որոնք անհերմետիկության հարաչափերով համապատասխանում են Աղյուսակ 21-ի պահանջներին: Ազոտային ծավալային Գ-ՀՇԻԿ-ները կարող են կիրառվել միայն 0.001 մ^{-1} անհերմետիկության հարաչափը չգերազանցող սենքերում:

614. Ընդհանուր ծավալը առանձին հատվածամասերի բաժանելիս (օր. կեղծ հատակ, հիմնական ծավալ և կեղծ առաստաղ), 613-րդ կետի պահանջը պետք է բավարարվի յուրաքանչյուր հատվածամասի համար:

Աղյուսակ 21. Սենքերի անհերմետիկության թույլատրելի հարաչափերը

Հ/Հ	Պաշտպանվող սենքի ծավալը, մ ³	Անհերմետիկության առավելագույն հարաչափը
1.	մինչև 10.0մ	0.044
2.	10.1-20.0	0.033
3.	20.1-30.0	0.028
4.	30.1-50.0	0.022
5.	50.1-75.0	0.018
6.	75.1-100	0.016
7.	101-150	0.014
8.	151-200	0.012
9.	201-250	0.011
10.	251-300	0.010
11.	301-400	0.009
12.	401-500	0.008
13.	501-750	0.007
14.	751-1000	0.006
15.	1001-1500	0.005
16.	1501-2000	0.0045
17.	2001-2500	0.0040
18.	2501-3000	0.0037
19.	3001-4000	0.0033
20.	4001-5000	0.0030
21.	5001-7500	0.0025
22.	7501-10000	0.0022
23.	10000-ից ավելի (միայն գազային կայանքների համար)	0.001

615. Անհերմետիկության հարաչափը որոշելիս հաշվի չեն առնվում այն բացվածքները, որոնք գտնվում են 2 կից սենքերի միջև և ուր միաժամանակ մատուցվում է հրամարիչ գազը:

616. Բոլոր Գ-ՀՇԻԿ-երի համար պետք է նախատեսել ինքնաշխատ (հիմնական) և հեռավար ձեռքով գործարկումներ:

617. Տեղային ձեռքով գործարկում կարող է նախատեսվել լրացուցիչ որոշակի պայմանների դեպքում:

618. Գ-ՀՇԻԿ-ի տեխնոլոգիական մասում թույլատրվում է կիրառել Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵՏՄ ՏԿ043/2017 կանոնակարգի (ՀՍ ՊՕՍ Ռ 53281-2023, ՀՍ ՊՕՍ Ռ 53282-2023, ՀՍ ՊՕՍ Ռ 53283-2023) և ՊՕՍ Ռ 53280.3-2009-ի պահանջներին բավարարող հրամարիչ գազ, անոթներ, խողովակաշար և գլխադիրներ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, բաշխիչ սարքվածքներ և դրդիչ համակարգեր:

619. Գ-ՀՇԻԿ-ները և նրանում կիրառվող սարքավորանքը պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի և ՀՍ ՊՕՍ Ռ 50969-2023-ի պահանջներին:

3.3.2. ԾԱՎԱԼԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

620. Գազային հրդեհաշիջման ծավալային կայանքների նախագծման համար պատվիրատուի և նախագծողի կողմից երկկողմանի հաստատված և նախագծի կազմում ներկայացվող տեխնիկական առաջադրանքում ամրագրվում են ելակետային տվյալները.

- 1) ծավալային նորմատիվային հրամարիչ խտությունը,
- 2) միաժամանակ պաշտպանության ենթակա սենքերը, հրդեհաշիջման գտիների (ուղղությունների) քանակը,
- 3) պաշտպանության ենթակա սենքերում կեղծ առաստաղների և հատակների առկայությունը,
- 4) պաշտպանության ենթակա օբյեկտի բարձրությունը ծովի մակարդակից,
- 5) սենքերի երկրաչափական բնութագրերը (երկարությունը, լայնությունը, բարձրությունը, ծավալը, գծապատկերը),

6) եզրափակող կառուցվածքատարրերի (ծածկ, պատեր, դռներ, պատուհաններ) կառուցվածքը և դրանց վրա թույլատրելի ճնշումը ըստ ՀՍ ԳՕՍՏ Ռ 12.3.047-2023 (6-րդ բաժին),

7) այլ ճարտարագիտական համակարգերի առկայությունն ու դիրքը,

8) մշտապես բաց որմնանցքների առկայությունը, դիրքը և չափերը,

9) պաշտպանվող և գազով լիցքավորված անոթների տեղակայման սենքերում օդի հնարավոր նվազագույն ջերմաստիճանը,

10) պաշտպանվող սենքում գտնվող նյութերը, առարկաները, դրանց հրդեհային վտանգավորությունը և դրանց համապատասխան հրդեհի դասը ըստ ԳՕՍՏ 27331-87,

11) հրդեհային բեռի տիպը, մեծությունն և բաշխման սխեման,

12) օդափոխության, օդորակման և ջեռուցման համակարգերի առկայությունն ու բնութագրերը,

13) առկա տեխնոլոգիական սարքավորանքն ու դրանց բնութագրերը,

14) սենքերի պայթյունահրդեհային և հրդեհային վտանգավորության կարգը ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի,

15) մարդկանց հնարավոր ներկայությունն ու նրանց տարհանման ճանապարհների առկայությունը:

621. Գ-ՀՇԻԿ-ների տեխնոլոգիական մասի նախագծման ժամանակ կատարվում և նախագծի բացատրական մասում ներկայացվում են հետևյալ հաշվարկները.

1) հրդեհաշիջման կայանքում հրամարիչ նյութի զանգվածի հաշվարկը,

2) կայանքի հիդրավլիկական հաշվարկը, որի արդյունքում որոշվում են.

ա. խողովակաշարի տրամագծերը,

բ. գլխադիրների տիպը, քանակը և անցքերի տրամագծերը,

գ. հրամարիչ նյութի մատուցման ժամանակը,

3) հրամարիչ նյութի մատուցման ժամանակ ավելցուկային ճնշման արտաթողման բացվածքի մակերեսը:

622. Կայանքում հրամարիչ նյութի հաշվարկային քանակությունը (զանգվածը) պետք է բավարար լինի հրդեհաշիջման գոտում (պաշտպանվող սենքում կամ միաժամանակ

պաշտպանվող սենքերի խմբում) նրա հրդեհաշիջման նորմատիվային խտությունը ապահովելու համար:

623. Կենտրոնացված Գ-ՀՇԻԿ-ները, բացի հրամարիչ նյութի հաշվարկային քանակից, պետք է ունենան դրա 100 % պահուստ:

624. Մոդուլային Գ-ՀՇԻԿ-ները, բացի հաշվարկային քանակությամբ հրամարիչ նյութով լիցքավորված և տեղակայված աշխատանքային մոդուլներից, պետք է ունենան նույն մոդելի, չափի, քանակության և նույն քանակությամբ լիցքավորված պահուստային մոդուլներ:

625. Թույլատրվում է հրամարիչ նյութի հաշվարկային և պահուստային քանակությունները համատեղ պահել Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի (ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 53282-2023) պահանջներին համապատասխան հավասարաջերմային հեղուկամբարում, պայմանով, որ հեղուկամբարը սարքավորված լինի դարձափոխիչային փակիչ-թողարկիչով և նրա հեռակառավարման տեխնիկական միջոցներով:

626. Կազմակերպությունում մի քանի մոդուլային կայանքների առկայության դեպքում, պահուստային մոդուլները պետք է նախատեսվեն օբյեկտի ցանկացած պաշտպանվող սենքում գործարկված կայանքի աշխատունակության վերականգնման համար բավարար քանակությամբ:

627. Կազմակերպությունում տարբեր մոդուլային կայանքներում նույն մոդելի, չափի և նույն քանակությամբ լիցքավորված մոդուլների կիրառման դեպքում թույլատրվում է դրանց համար նախատեսել պահուստային մոդուլների մեկ լրակազմ:

628. Մոդուլային կայանքի գործարկումից հետո 36 ժամվա ընթացքում դատարկված անոթները նույն հրամարիչ նյութով և քանակությամբ վերալիցքավորման հնարավորության դեպքում թույլատրվում է պահուստային մոդուլներ չնախատեսել:

629. Պահուստային մոդուլները կամ հրամարիչ նյութերը պետք է պահվեն օբյեկտի կամ Գ-ՀՇԻԿ-ի սպասարկումն իրականացնող կազմակերպության պահեստում:

630. Բարձր ռիսկայնության և հատուկ կարևորության օբյեկտները Գ-ՀՇԻԿ-ներով պաշտպանության ժամանակ պարտադիր կերպով.

1) հեղուկացված ածխածնի երկօքսիդ հրամարիչ նյութի հաշվարկային և պահուստային քանակությունները պահվում են համատեղ հեռակառավարմամբ դարձափոխիչային փակիչ-թողարկիչ սարքվածով հավասարաջերմային հեղուկամբարում, և պահուստային

քանակությունը թողարկվում է հիմնական քանակության թողարկումից հետո ինչ-ինչ պատճառներով հրդեհի կրկնակի բռնման դեպքում,

2) բացի 1)-ին ենթակետում նշված հրամարիչ նյութից, մնացած հրամարիչ նյութերի պահուստային քանակություններով լիցքավորված մոդուլները տեղակայվում են հիմնական մոդուլների հետ համատեղ մեկ ընդհանուր հավաքիչի վրա հակադարձ կափույրների կիրառմամբ և գործարկվում են ինքնաշխատ, հեռավար, կամ, պաշտպանվող սենքից դուրս տեղակայման դեպքում՝ տեղային (ձեռքով), հիմնական մոդուլների չգործարկման կամ էլ հիմնական քանակության թողարկումից հետո ինչ-ինչ պատճառներով հրդեհի կրկնակի բռնման դեպքում:

631. Գ-ՀՇԻԿ-ների փորձարկումը թույլատրվում է իրականացնել ինչպես իրական, այնպես էլ նմանակման եղանակով:

632. Գ-ՀՇԻԿ-ի իրական փորձարկման անհրաժեշտության դեպքում, փորձարկման համար անհրաժեշտ հրամարիչ նյութի լրացուցիչ քանակությունն ընդունվում է ելնելով նվազագույն ծավալով սենքի պաշտպանության պայմանից և փորձարկումն իրականացվում է այդ սենքի ուղղությամբ, եթե չկան այլ պահանջներ:

633. Գ-ՀՇԻԿ-ի նմանակման եղանակով փորձարկման դեպքում փորձարկվում է ամբողջ համակարգը ընդհուպ մինչև թողարկիչի, կամ նրա փոխարեն էլեկտրական շղթային միացված և թողարկչի նույն էլեկտրական բնութագրերով նմանակի գործարկումը (հնարավորության դեպքում նույն թողարկիչից կամ էլեկտրական լամպ):

3.3.3. ՀՐԱՄԱՐԻՉ ՆՅՈՒԹԻ ՔԱՆԱԿԸ, ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ

ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

634. Հրդեհաշիջման մի ուղղության համար նախատեսված բոլոր փակիչ-թողարկիչ սարքերը, ինքնաշխատ թե ձեռքով գործարկելից, պետք է գործարկվեն 2 վրկ-ի ընթացքում:

635. Կայանքի իներցիոնությունը չպետք է գերազանցի 15 վրկ-ը, չհաշված հրամարիչ նյութի թողարկման հապաղման ժամանակը:

636. Կայանքը, հրամարիչ նյութով անոթը 20°C-ի դեպքում պետք է ապահովի պաշտպանվող սենք գազային հրամարիչ նյութի հաշվարկային զանգվածի 95%-ից ոչ պակաս մատուցում:

1) 10 վրկ-ի ընթացքում՝ հեղուկացված գազերով (բացի ածխածնի երկօքսիդից)

մոդուլային կայանքների համար,

2) 15 վրկ-ի ընթացքում՝ հեղուկացված գազերով (բացի ածխածնի երկօքսիդից) կենտրոնացված կայանքների համար,

3) 60 վրկ-ի ընթացքում՝ ածխածնի երկօքսիդով կամ սեղմված գազերով մոդուլային և կենտրոնացված կայանքների համար:

3.3.4. ՀՐԱՄԱՐԻՉ ԳԱԶԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ԱՆՈՒԹՆԵՐ

637. Գ-ՀՇԻԿ-ներում կիրառվում են հրդեհաշիջման.

- 1) մոդուլներ,
- 2) մոդուլներից հավաքված մարտկոցներ,
- 3) հավասարաջերմային հեղուկամբարներ:

638. Կենտրոնացված կայանքների դեպքում անոթները և բաշխիչ սարքվածքները տեղակայվում են հրդեհաշիջման կայաններում:

639. Մոդուլային կայանքների դեպքում մոդուլները կարող են տեղակայվել ինչպես պաշտպանվող սենքի ներսում՝ ջերմության աղբյուրներին 1 մ-ից ոչ մոտիկ, կամ մոտիկ, բայց ջերմային էկրանով պաշտպանված, այնպես էլ դրսում՝ պաշտպանվող սենքերին հնարավորինս մոտ:

640. Անոթները դրսում տեղակայելիս անհրաժեշտ է բացառել այնպիսի տեղերը, որտեղ նրանք կարող են ենթարկվել հրդեհի (պայթյունի) ազդեցության վտանգավոր գործոններին, մեխանիկական, քիմիական կամ այլ վնասման, արևի ճառագայթների անմիջական ազդեցությանը, ինչպես նաև հաշվի առնել դրանց աշխատանքային ջերմաստիճանը՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով արտաքինից դրանց լրացուցիչ տաքացումը կամ հովացումը:

641. Անկախ կայանքի տեսակից ու տեղակայման վայրից, ԳՀ կայանքները տեղակայելիս պետք է ապահովել սպասարկման առավելագույն դյուրինություն:

642. Հրդեհաշիջման մեկ ուղղության համար նախատեսված և ընդհանուր հավաքիչին միացված մոդուլները պետք է լինեն նույն մոդելի, նույն տարողության և.

- 1) նույն լիցքով ու արտանետիչ գազի ճնշմամբ՝ հեղուկացված գազերի դեպքում,
- 2) նույն լիցքով՝ առանց արտանետիչ գազի հեղուկացված գազերի դեպքում,
- 3) նույն ճնշմամբ՝ սեղմված գազերի դեպքում,

643. Մոդուլների միացումը հավաքիչի հետ պետք է կատարվի հակադարձ կափույրների միջոցով: Եթե կայանքի աշխատանքի գործելակարգով նախատեսված է ընդհանուր հավաքիչին միացված բոլոր մոդուլներից հրամարիչ նյութի միաժամանակյա թողարկում, կամ մոդուլների փակիչ-թողարկիչ սարքվածքների կառուցվածքը ապահովում է հակադարձ կափույրի գործառույթը, ապա թույլատրվում է նրանց միացնել հավաքիչին առանց հակադարձ կափույրների: Այդ դեպքում մոդուլների անջատման ժամանակ անվտանգության նպատակով հավաքիչի համար անհրաժեշտ է նախատեսել խցափակիչներ:

644. Կայանքներում մոդուլները անհրաժեշտ է ամրակապել նրանց ՏՓ-ով նախատեսված 2 ամրակապիչներով՝ մոդուլի գլանային հատվածի վերին եզրից ներքև և ներքին եզրից վերև 150-250մմ հեռավորությունների վրա:

645. Հրամարիչ նյութի քանակի և արտանետիչ գազի ճնշման հսկման տեխնիկական միջոցները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի (ՀՍ ԳՕՍ Ռ 53281-2023) պահանջներին:

646. Առանց արտամղիչ գազերի կիրառման հեղուկացված հրամարիչ գազերով կայանքներում (օրինակ՝ ֆրեոն 23 կամ CO2) վերջիններս պետք է ունենան հրամարիչ նյութի զանգվածի կամ նրա հեղուկ վիճակի մակարդակի հսկողության սարքվածքներ, որոնք պետք է ազդանշան տան մոդուլում հրամարիչ նյութի քանակի ամենաշատը 5% նվազման դեպքում:

647. Սեղմված գազերով կայանքները պետք է ունենան ճնշաչափեր, որոնք պետք է ազդանշան տան մոդուլում ճնշման, հետևաբար և հրամարիչ նյութի քանակի ամենաշատը 5% նվազման դեպքում:

648. Արտամղիչ գազերի կիրառմամբ հեղուկացված հրամարիչ գազերով կայանքները պետք է ունենան ճնշաչափեր, որոնք պետք է ազդանշան տան մոդուլում ճնշման ամենաշատը 10% նվազման դեպքում: Այս մոդուլներում հրամարիչ նյութի քանակի հսկողությունն իրականացվում է մոդուլի ՏՓ-ում նշված պարբերականությամբ լիցքավորված մոդուլի կշռմամբ և նրա քաշի թույլատրելի նվազումը չպետք է գերազանցի 5%-ը:

649. Թողարկիչ անոթներում ճնշման հսկողությունը պետք է իրականացվի ճնշաչափերով անընդհատ, և ճնշման նվազումը չպետք է գերազանցի նրա ՏՓ-ում նշված քանակությունը, իսկ նշված չլինելու դեպքում՝ 5%-ը:

3.3.5. ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐ, ԴՐԴԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ԳԼԽԱԴԻՐՆԵՐ

650. Գ-ՀՇԻԿ-ների հրամարիչ նյութի թողարկման խողովակաշարերը հարկավոր է իրականացնել անկար սովորական, ցինկապատ կամ չժանգոտվող պողպատե խողովակներով: Դրդիչ խողովակները հարկավոր է իրականացնել պողպատե կամ արույրե խողովակներով: Խողովակների պարուրակավոր միացումների համար անհրաժեշտ է կիրառել նույն նյութից կցամասեր:

651. Թույլատրվում է կարող խողովակների և կռելի թուջից կցամասերի կիրառումը՝ համապատասխան ճնշման տակ փորձարկման հավաստագրերի ներկայացման դեպքում:

652. Հրդեհաշիջման կայանքներում խողովակաշարերի միացումները պետք է լինեն եռակցված, պարուրակավոր կամ զողված:

653. Խողովակաշարերում պետք է ապահովվի նրա փչամաքրման և ջրի դատարկման հնարավորությունը հիդրավլիկ փորձարկումից հետո:

654. Խողովակաշարերն անհրաժեշտ է հուսալիորեն ամրակապել. պատի և խողովակաշարի միջև բացակը պետք է լինի 2 սմ ոչ պակաս:

655. Խողովակաշարերը և նրանց միացումները մոդուլների և բաշխիչ սարքվածքների միջակայքում պետք է ապահովեն ամրություն և հերմետիկություն $1.5 P_{w2ju}$, իսկ մնացած հատվածներում՝ $1.25 P_{w2ju}$ ճնշման դեպքում 5 րոպեի ընթացքում, որտեղ P_{w2ju} -ը՝ հերթապահ գործելակարգում անոթում առավելագույն ճնշումն է:

656. Ցածր ճնշման ածխաթթվային Գ-ՀՇԻԿ-ներում խողովակաշարերի ամրությունն ու հերմետիկությունը ստուգվում է $2P_{w2ju}$, բայց ոչ պակաս քան 4 ՄՊա ճնշման դեպքում 5 րոպեի ընթացքում:

657. Գ-ՀՇԻԿ-ների խողովակաշարերը անհրաժեշտ է ներկել ըստ ԳՕՍՏ 12.4.026 կամ էլ ըստ պաշտպանվող սենքին ներկայացվող գունային պահանջների:

658. Թույլատրվում է չներկել ցինկապատ կամ չժանգոտվող պողպատից խողովակաշարերն ու կցամասերը:

659. Արգելվում է ներկել գլխադիրներն ու դրդիչ համակարգերի ջերմազգայուն տարրերը:

660. Կայանքների խողովակաշարերն անհրաժեշտ է հողակցել (գրոյացնել): Հողանցման նշանն ու տեղը պետք է համապատասխանեն Մաքսային միության

հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 768 որոշմամբ հաստատված ՄՄ ՏԿ 004/2011(ԳՕՍՏ 21130-75) պահանջներին:

661. Խողովակաշարերը մողուլների հետ միացնելու համար թույլատրվում է կիրառել ճկուն միակցիչներ, օրինակ՝ բարձր ճնշման ճկախողովակ կամ պղնձե խողովակ, որոնք պետք է դիմանան $1.5 P_{աշխ}$. ոչ պակաս ճնշմանը:

662. Բաշխիչ խողովակաշարն անհրաժեշտ է նախատեսել առավելապես հայելային: Թույլատրվում է նախատեսել ոչ հայելային խողովակաշարեր՝ ապահովելով 675-րդ կետի պահանջը:

663. Հեղուկացված գազերի հոսքի բաժանումը անհրաժեշտ է նախատեսել բացառապես 2 մասի, եռաբաշխիչներով, հորիզոնական հարթության մեջ, իսկ բաժանումների և/կամ հոսքի ուղղության փոփոխությունների ցանկացած 2 կետեր պետք է լինեն առնվազն $10D_{խող}$ հեռավորության վրա: Բաժանվող հոսքերի թույլատրելի համամասնությունը որոշվում է կիրառվող հրամարիչ նյութի ՏՓ-ով:

664. Հեղուկացված գազերի կիրառմամբ Գ-ՀՇԻԿ-ում եռաբաշխիչից դուրս եկող խողովակների անցքերի ընդհանուր մակերեսը պետք է փոքր կամ հավասար լինի մտնող խողովակի անցքի մակերեսից: Հեղուկ գազերի դեպքում սույն կետի պահանջը որոշվում է կիրառվող հրամարիչ նյութի ՏՓ-ով:

665. Խողովակաշարերի ներքին ծավալը չպետք է գերազանցի 20°C ջերմաստիճանում գազային հրամարիչ նյութի հաշվարկային քանակության հեղուկ վիճակում ծավալի 80%:

666. Դրդիչ համակարգերի ջերմազգայուն տարրերի դիրքը անհրաժեշտ է նախատեսել ըստ 330 – 338-րդ կետերի պահանջների:

667. Դրդիչ խողովակաշարի տրամագիծը պետք բավարար լինի Գ-ՀՇԻԿ-ի գործարկման համար:

668. Դրդիչ խողովակաշարը կցամասերով պետք է ապահովի ամրություն և հերմետիկություն $1,25P_{աշխ}$ ճնշման տակ 5 րոպեի ընթացքում, որտեղ $P_{աշխ}$ -ը դրդիչ համակարգում գազի (օդի) կամ հեղուկի առավելագույն ճնշումն է:

669. Դրդիչ համակարգում ճնշումը պետք է հսկվի անընդհատ Գ-ՀՇԻԿ-ի հրդեհի ազդանշանման և հրդեհաշիջման կառավարման սարքի միջոցով և ազդանշանվի թույլատրելից ներքև իջնելու դեպքում:

670. Դրդիչ համակարգերին ներկայացվող մյուս պահանջները պետք է բավարարեն հակահրդեհային համանման սարքավորանքին ներկայացվող պահանջներին:

671. Գլխադիրների տեսակի ընտրությունը կատարվում է կոնկրետ գազային հրամարիչ նյութի համար՝ նրանց տեխնիկական բնութագրերով:

672. Պաշտպանվող սենքում գլխադիրները պետք է տեղաբաշխվեն հաշվի առնելով դրանց ՏՓ-ում նշված հրամարիչ նյութի մատուցման ուրվագիծը, սենքի հատակագիծն ու ապահովեն հրամարիչ նյութի տարածումը սենքի ամբողջ ծավալում նորմատիվային խտությունից ոչ պակաս խտությամբ:

673. Օդից ծանր հրամարիչ գազերի մատուցման համար նախատեսված գլխադիրները պետք է տեղակայվեն կայանքի ՏՓ-ի պահանջներով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ առաստաղից 0.3մ-ից ոչ ցածր:

674. Բացառիկ դեպքերում, կապված առաստաղին մինչև 1.0մ շինարարական ելուստների, հեծանների առկայության հետ, թույլատրվում է գլխադիրները տեղակայել դրանց մակարդակում պայմանով, որ նրա պաշտպանվող գոտում հրդեհային բեռը գտնվում է գլխադիրներից ներքև, իսկ վերևում բացակայում է որևէ էլեկտրալար:

675. Պաշտպանվող մեկ գոտում (ուղղությունում) գտնվող սենքերում (ներառյալ կեղծ հատակներն ու առաստաղները) տեղակայված գլխադիրների վրա ճնշումների տարբերությունը չպետք է գերազանցի 20%-ը:

676. Գլխադիրների մուտքի անցքի տրամագիծը պետք է մեծ լինի 3.0մմ-ից:

677. Մեկ Գ-ՀՇԻԿ-ում պետք է նախատեսել մի տիպի գլխադիրներ:

678. Գլխադիրների ամրությունը պետք է ապահովվի $1.25P_{աշխ}$ ճնշման դեպքում, որտեղ $P_{աշխ}$ -ը գլխադիրի վրա առավելագույն հաշվարկային ճնշումն է հրդեհաշիջման ընթացքում, և դրանք պետք է պատրաստվեն կոռոզիակայուն մետաղներից (չժանգոտվող պողպատից, արույրից, ալյումինի համաձուլվածքներից, բացառությամբ դուրալյումինից) կամ ունենան պաշտպանիչ ծածկույթ:

679. Գլխադիրների թողարկիչ անցքերը չպետք է ուղղորդված լինեն անմիջապես դեպի մշտապես բաց որմնանցքները:

680. Սովորական պայմաններում (20°C ջերմաստիճան և 760 մմ սնդիկի սյան մթնոլորտային ճնշում) հեղուկ վիճակում գտնվող հրամարիչ նյութերի մատուցման համար անհրաժեշտ է կիրառել գլխադիրներ, որոնք պաշտպանվող սենքում առկա ջերմաստիճանի

պայմաններում ապահովում են հեղուկի գոլորշիացումը մինչև նրա հասնելը հոծ մակերեսներին: Գլխադիրից մինչև հոծ մակերեսներ հեռավորության նվազագույն չափը պետք է ընդունել հրամարիչ նյութի տեխնիկական բնութագրերից, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ոչ պակաս քան 1.25 մ:

681. Այն տեղերում, որտեղ կա գլխադիրների մեխանիկական վնասման վտանգ, դրանք պետք է պաշտպանվեն հատուկ պաշտպանիչ ցանցերով, որոնք սակայն չպետք է ազդեն հրամարիչ նյութի արտանետման ու սփռման ուրվագծի վրա:

3.3.6. ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ, ՏԵՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՍԱՐՔԵՐ

682. Գազային հրդեհաշիջման կայանները (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ նաև կայաներ) պետք է բաժանված լինեն այլ սենքերից ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի 1-ին տիպի միջնապատերով և 3-րդ տիպի ծածկերով:

683. Կայանները չի թույլատրվում տեղակայել ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի Ա և Բ կարգի սենքերի տակ կամ վրա:

684. Կայաններն անհրաժեշտ է տեղակայել շենքերի նկուղում, կիսանկուղում կամ առաջին հարկում: Հրդեհաշիջման կայանի տեղադրումն առաջին հարկից վեր թույլատրվում է, եթե շենքում ապահովվում են սարքավորանքի ներս բերելը տեղադրման վայր, տեղակայման ու շահագործման աշխատանքների իրականացումը:

685. Ելքը կայանից պետք է նախատեսել անմիջապես դեպի շենքից դուրս, դեպի դուրս ելք ունեցող աստիճանավանդակ, նախասրահ կամ միջանցք, պայմանով, որ հեռավորությունը կայանի ելքից մինչև աստիճանավանդակ չի գերազանցում 25 մ և դեպի այդ միջանցք չկան ելքեր ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի Ա և Բ կարգի սենքերից:

686. Կայանը կարող է տեղակայվել գործարանային արտադրության առանձին բլոկ-բոքսում, դրսում կամ էլ ներսում, եթե նրա իրանը 1-ին աստիճանի հրակայուն է և դուռը բաց-

վում է անմիջապես դեպի դուրս:

687. Հավասարաջերմ հեղուկամբարները կարելի է տեղակայել շենքերից դուրս, տեղումներից և արևից պաշտպանիչ ծածկով, ցանկապատված հարթակում համաձայն ԳՕՍՍ 15150-69-ի պահանջների: Ընդ որում անհրաժեշտ է.

1) մոդուլի տեղակայման վայրը ապահովել վթարային լուսավորությամբ,

2) միջոցներ ձեռնարկել մարդկանց չարտոնված մուտքը այդ տարածք, մոդուլին, դրա գործարկիչներին և բաշխիչ սարքվածքներին հասանելիությունը արգելելու նպատակով,

3) նախատեսել մոդուլին մոտեցող ավտոմոբիլային ճանապարհ:

688. Այն կայանքների համար, որտեղ օգտագործվում են մոդուլներ և մարտկոցներ, կայանի սենքի բարձրությունը պետք է լինի 2.5 մ ոչ պակաս:

689. Հավասարաջերմ հեղուկամբարի տեղակայման սենքի նվազագույն բարձրությունը որոշվում է հեղուկամբարի բարձրությամբ՝ նրանից մինչև առաստաղը ապահովելով 1 մ ոչ պակաս հեռավորություն:

690. Հրդեհաշիջման կայանների սենքերում պետք է լինի 5-ից մինչև 35°C ջերմաստիճան, օդի հարաբերական խոնավությունը 25°C դեպքում՝ 80%-ից ոչ ավելի:

691. Հրդեհաշիջման կայանում աշխատանքային և վթարային լուսավորությունը պետք է ապահովել համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 56-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերի:

692. Հրդեհաշիջման կայանում պետք է նախատեսել ոչ պակաս քան կրկնապատիկ օդափոխանակությամբ ներհոս-արտահոս օդափոխություն, ինչպես նաև կապի միջոցներ՝ շուրջօրյա հերթապահությամբ սենքի (առկայության դեպքում) կամ պատասխանատու աշխատողների հետ:

693. Հրդեհաշիջման կայանի մուտքի դռան վերևում պետք է տեղակայել վթարային լուսավորությանը միացված լուսատախտակ՝ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆ գրությամբ, իսկ դուրսը սարքավորել մուտքի հսկման համակարգով:

694. Պաշտպանվող սենքի ներսում տեղակայված մոդուլային կայանքների տեղային ձեռքով գործարկումը պետք է բացառվի:

695. Անհրաժեշտության դեպքում պաշտպանվող սենքից դուրս տեղակայված մոդուլային կայանքներում ձեռքով տեղային գործարկում կարող է նախատեսվել եթե գործ-

արկվող սարքվածքները.

1) դասավորվեն պաշտպանվող սենքից դուրս՝ հրդեհի գործոնների ազդեցությունից անվտանգ գոտում,

2) լինեն պաշտպանված չարտոնված գործարկումները բացառելու համար,

3) ապահովվեն կայանքի գործարկման բոլոր մոդուլների միաժամանակյա գործարկումը:

696. Հրդեհաշիջման կայանքի սարքավորանքը մի քանի մակարդակներում տեղակայված լինելու դեպքում ձեռքի տեղային գործարկման, ինչպես նաև բաշխման սարքվածքները պետք է տեղակայվեն հրդեհաշիջման կայանի մուտքի մակարդակում, հատակից 1.7մ-ից ոչ բարձր, արագ մոտեցման տեսակետից հարմար տեղում:

697. ԳՀ կայանքները մի քանի գոտիների համար նախատեսված լինելու դեպքում ձեռքի գործարկման յուրաքանչյուր սարքվածք պետք է ունենա հուշատախտակ պաշտպանվող ուղղության (սենքի) անվանումով:

3.3.7. ՊԱՇՏՊԱՆՎՈՂ ՍԵՆՔԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

698. Պաշտպանվող սենքերը պետք է բավարարեն 613-615-րդ կետերի պահանջներին, ունենան հաշվարկային ավելցուկային ճնշմանը դիմակայող պատեր, դռներ և պատուհաններ:

699. Սենքերում ըստ անհրաժեշտության պետք է նախատեսել սարքվածքներ (կամ ընդհուպ բաց որմնախորշեր) թույլատրելի ճնշումը գերազանցող ավելցուկային ճնշումը արտանետելու համար:

700. Անհրաժեշտ է բացառել տեխնոլոգիապես չհիմնավորված որմնախորշերը, հերմետիկացնել մալուխային անցումները, դռների վրա տեղակայել ինքնափակիչներ:

701. Օդային ջեռուցման, օդորակման, ընդհանուր և հակաձխային օդափոխության, ինչպես նաև գազաձխահեռացման համակարգերը պետք է բավարարեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի N 83-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմերի պահանջներին: Ընդ որում, եթե վերոգրյալ համակարգերի օդատարներում նախատեսված չեն կափույրներ, ապա սենքի եզրափակող կառուցվածքատարրերի վրա գտնվող օդափոխության անցքերը պետք է դիտարկել որպես

բաց որմնախորշեր, իսկ ըստ ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 53301-2023-ի կափույրներ նախատեսված լինելու դեպքում՝ օդատարների ծավալները մինչև այդ կափույրներ՝ ներառել սենքի հաշվարկային ծավալում:

702. Սենքի մուտքի մոտ անհրաժեշտ է նախատեսել ազդանշանում ըստ ԳՕՍՏ 12.4.009-83 և ԳՕՍՏ 12.3.046-91 պահանջների:

703. Հրդեհաշիջումից հետո գազերի և ծխի հեռացումը անհրաժեշտ է իրականացնել գազաձխահեռացման առանձնացված համակարգով: Թույլատրվում է ձխահեռացումն իրականացնել շարժական ձխաքարշերով կամ շենքի ընդհանուր օդափոխության համակարգով, պայմանով, որ բացառվի գազերի և ծխի լցվելը այլ սենքեր ու միջանցքեր:

3.3.8. ՏԵՂԱՅԻՆ ԾԱՎԱԼԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

704. Տեղային ծավալային ԳՀ կայանքները կիրառվում են առանձին սարքավորանքների հրդեհի մարման համար այն դեպքերում, երբ սենքն ամբողջությամբ պաշտպանելու համար կայանքի կիրառումը տեխնիկապես հնարավոր չէ կամ տնտեսապես նպատակահարմար չէ:

705. Տեղային ծավալային հրդեհաշիջման հաշվարկային ծավալը որոշվում է պաշտպանվող սարքավորանքի բարձրության և հատակի վրա նրա պրոյեկցիայի մակերեսի արտադրյալով, ընդ որում, սարքավորանքի հաշվարկային եզրաչափերը (երկարություն, լայնություն և բարձրություն) պետք է մեծացվեն 1 մ-ով:

706. Տեղային ծավալային հրդեհաշիջման համար որպես հրամարիչ նյութ հարկավոր է օգտագործել ածխածնի երկօքսիդ՝ նորմատիվային զանգվածային հրամարիչ խտությունը ընդունելով 6 կգ/մ³, իսկ մատուցման առավելագույն ժամանակը՝ 30 վրկ: Այն կարող է մեծացվել՝ կրկնակի բռնկումը կանխելու նպատակով:

3.3.9. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

707. Սույն շինարարական նորմերով թույլատրելի գազային հրամարիչ նյութերի կիրառմամբ կայանքներ նախագծելիս անհրաժեշտ է ստուգել նախատեսվող հրամարիչ նյութի կիրառման թույլատրելիությունը կապված բնապահպանական պահանջներով:

708. Գ-ՀՇԻԿ-ի նախագծումը հարկավոր է կատարել հաշվի առնելով կայանքի հավաքակցման, կարգավորման, ընդունման և շահագործման ընթացքում անվտանգության

պահանջների ապահովման հնարավորությունները՝ ըստ տվյալ տեսակի կայանքի ՆՓ-ի:

709. Գ-ՀՇԻԿ-ների հրամարիչ նյութվածքներն անհրաժեշտ է տեղակայել այնպես, որ նրանց ճնշման ապահովիչ սարքվածքների գործարկման դեպքում բացառվի մարդկանց վնասումը:

710. Հավասարաջերմ հեղուկամբարի ապահովիչ սարքվածքների գործարկման հանգույցներին հարկավոր է միացնել ցամաքուրդային խողովակաշարեր՝ գազերն անվտանգ գոտի հեռացնելու համար:

711. Կայանքների խողովակաշարերի այն հատվածներում, որտեղ կափույրների միջև հնարավոր է հեղուկ հրամարիչ նյութերի համար փակ խոռոչների առաջացում (օրինակ, հակադարձ կափույրի և բաշխիչ սարքվածքի միջև՝ վերջինիս խափանման դեպքում), հարկավոր է նախատեսել ապահովիչ սարքվածքներ հրամարիչ նյութի անվտանգ արտանետման համար:

712. Հավասարաջերմ հեղուկամբարը նկուղային հարկում տեղակայելու դեպքում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել վերին հարկերի ջրամատակարարման կամ ջեռուցման համակարգերի վթարների ժամանակ նրա աշխատունակությունն ապահովող սարքավորանքը ջրաձածկելուց:

713. Գազային հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքները մինչև շահագործման հանձնելը պետք է փորձնական շահագործվեն 282-րդ և 283-րդ կետերի համաձայն:

3.4. ՄՈՂՈՒԼԱՅԻՆ ՏԻՊԻ ՓՈՇԵ ԵՎ ՓՈՇԵԳԱԶԱՅԻՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

3.4.1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

714. Մողուլային տիպի փոշե և փոշեգազային կայանքները (սույն բաժնի հետագա շարադրանքում՝ կայանքներ), կիրառվում են ըստ ԳՕՍՏ 27331-87-ի A և B դասի, ու նաև հրամարիչ նյութի ՏՓ-ում նշվածից ոչ ավելի բարձր լարման տակ գտնվող էլեկտրասարքավորանքի հրդեհների մարման համար:

715. Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի Ա և Բ կարգի պայթյունահրդեհավտանգ և պայթյունավտանգ գոտիներում թույլատրվում է նախատեսել միայն այնպիսի կայանքներ, որոնցում բացառապես կիրառվում են պայթյունանվտանգության անհրաժեշտ մակարդակի

հավաստագրերով էլեկտրասարքավորումներ:

716. Փոշեշիջման և փոշեգազաշիջման կայանքները կարող են կիրառվել պաշտպանվող ամբողջ մակերեսի, ծավալի, ինչպես նաև մակերեսի կամ ծավալի տեղային հրդեհների մարման համար՝ պահպանելով սույն շինարարական նորմերի պահանջները:

717. Արգելվում է այս կայանքների կիրառումը այնպիսի սենքերում, որտեղ.

1) գտնվող մարդիկ, անկախ նրանց քանակից, չեն հասցնի լքել այն մինչև հրամարիչ փոշու թողարկումը,

2) հնարավոր է, թեկուզ ժամանակավոր, ավելի քան 50 հոգու ներկայությունը,

3) հնարավոր է, թեկուզ ժամանակավոր, հետևյալ նյութերի առկայությունը.

ա. նյութի ծավալի ներսում մարմնմանն ու ինքնաբռնկմանը հակված դյուրավառ նյութեր,

բ. առանց օդի մուտքի մարմնմանն ու այրմանը հակված քիմիական նյութեր, դրանց խառնուրդներ, հրակիր ու պոլիմերային նյութեր:

718. Բացառիկ դեպքերում ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի Գ5.1 և Գ5.2 գործառնական հրդեհային վտանգավորության դասի սենքերում ԳՕՍՏ 27331-87-ի համաձայն B դասի հրդեհային բեռի առկայության դեպքում թույլատրվում է նախատեսել փոշեգազային հրդեհաշիջման կայանք պայմանով, որ կայանքի նախագծում և շահագործման բոլոր փաստաթղթերում նշվի, որ այդ սենքերում աշխատակազմը պետք է հրահանգավորվի մարդու համար փոշե և գազային հրամարիչ նյութերի վտանգավորության մասին ու անցնի պարբերական ուսուցողական վարժանքներ համաձայն ՀՀ ՏԿԱԻՆ նախարարի 18.06.2015թ. 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների»:

719. Փոշե և փոշեգազային կայանքները կայանքները մինչև շահագործման հանձնելը պետք է փորձնական շահագործվեն 282-րդ և 283-րդ կետերի համաձայն:

3.4.2. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

720. Հրամարիչ փոշիները, փոշեշիջման և փոշեգազաշիջման մոդուլները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵՍՍՄ 043/2017 կանոնակարգի (ԳՕՍՏ Ռ

53280.4, ՀՍ ԳՕՍ Ռ 53286-2023 և ՀՍ ԳՕՍ Ռ 56028-2023) և ՀՍ ԳՕՍ Ռ 53280.5-2022 պահանջներին, ընդ որում փոշեշիջման և փոշեգազային շիջման իմպուլսային մոդուլների համար ծակող էլեկտրական լարումները հաշվի չեն առնվում:

721. Փոշեշիջման և փոշեգազաշիջման կայանքների նախագծային փաստաթղթերում պետք է նշվեն կայանքի բնութագրերը ըստ ՀՍ ԳՕՍ Ռ 51091-2023 և ՀՍ ԳՕՍ Ռ 56028-2023-ի:

722. Փոշեշիջման և փոշեգազաշիջման մոդուլների կառուցվածքից կախված կայանքները կարող են լինել բաշխիչ խողովակաշարով կամ առանց դրա:

723. Մոդուլների խումբը կարող է միացվել խողովակային հավաքիչին, կազմելով մարտկոցներ:

724. Մոդուլների միացումը խողովակաշարին կարող է իրականացվել ճկուն միացումներով, որոնք պետք է ապահովեն ամրություն $1,5P_{աշխ}$ ճնշման տակ ($P_{աշխ}$ -մոդուլում առավելագույն աշխատանքային ճնշումն է):

725. Կապված մոդուլում արտամղիչ գազի պահման ձևից, կայանքները տարբերակվում են.

- 1) ներփչված,
- 2) գազ առաջացնող տարրով,
- 3) սեղմված կամ հեղուկացված գազի անոթով:

726. Որպես արտամղիչ գազ պետք է կիրառել չորացված գազեր՝ օդ (մինուս 40°C -ից ոչ բարձր ցողի կետով), ազոտ, իներտ գազեր և դրանց խառնուրդներ:

727. Սենքը պաշտպանող բոլոր մոդուլները պետք է գործարկվեն 3 վրկ-ի ընթացքում: Մոդուլները պաշտպանվող սենքի ներսում տեղակայելու դեպքում արգելվում է նախատեսել տեղային ձեռքի գործարկման սարքեր:

728. Առանձին արտադրական գոտիների, հատվածամասերի, սարքավորանքի տեղային պաշտպանությունը կարող է իրականացվել ՏՓ-ում նշված արագությունից ոչ ավելի արագությամբ օդային հոսանքների դեպքում, իսկ նշված չլինելու դեպքում՝ $1,5$ մ/վրկ-ից ոչ ավել:

729. Պաշտպանվող սենքի ծավալը հաշվելիս նվազեցվում են միայն հոծ, անթափանց շինարարական կառուցվածքատարրերի ծավալները (սյուներ, հեծաններ, միջնապատեր, սարքավորանքի հիմքեր):

730. Որպես հրդեհաշիջման հաշվարկային գոտի է ընդունվում.

- 1) մակերեսների դեպքում՝ 10%-ով ավելի մեծ մակերեսը,
- 2) ծավալների դեպքում՝ 15%-ով ավելի մեծ ծավալը:

731. Սենքի ամբողջ ծավալում թույլատրվում է իրականացնել հրդեհաշիջում մոդուլի ՏՓ-ում նշված, իսկ դրա բացակայության դեպքում՝ սենքի անհերմետիկության 1,5 % -ից ոչ ավելի աստիճանի դեպքում:

732. 400մ² և ավելի մակերեսով սենքերում հրդեհաշիջումը նպատակահարմար է նախատեսել տեղային՝ մակերեսային կամ ծավալային:

733. Մոդուլերի բաշխիչ խողովակաշարերի առավելագույն երկարությունը որոշվում է մոդուլների տեխնիկական բնութագրերով:

734. Խողովակների միացումը պետք է նախատեսել եռակցված, կցաշուրթով կամ պարուրակային, իսկ խողովակները՝ պողպատե ըստ ԳՕՍՏ 8732-78, ԳՕՍՏ 8734-75 կամ համարժեք:

735. Խողովակաշարերն ու կցամասերը պետք է դիմանան 1,25 P_{աշխ} փորձարկման ճնշմանը, որտեղ P_{աշխ}-ը մոդուլի ներսի ճնշումն է հերթապահ գործելակարգում կամ դրա գործարկման ընթացքում:

736. Մոդուլներն ու գլխադիրները պետք է տեղակայվեն պաշտպանվող սենքում դրանց ՏՓ-ի պահանջներին համապատասխան: Անհրաժեշտության դեպքերում պետք է նախատեսել դրանց պաշտպանությունը հնարավոր վնասումներից:

737. Հրդեհաշիջման մոդուլները պետք է տեղակայվեն հաշվի առնելով շահագործման եղանակային պայմանները:

738. Բաշխիչ խողովակաշարով մոդուլները թույլատրվում է տեղակայել ինչպես պաշտպանվող սենքի ներսում, կրակի ենթադրյալ օջախից հեռու, այնպես էլ դրսում, սենքին անմիջապես մոտ վայրում, արկղի կամ հատուկ որմնախորշի մեջ:

739. Մոդուլների և խողովակաշարերի տեղակայման համար նախատեսված կառուցվածքատարրերը պետք է դիմանան տեղակայված սարքավորանքի քաշի հնգապատիկ բեռին ուղղաձիգ, և կրկնապատիկ բեռին՝ հորիզոնական ուղղությամբ ու ապահովեն նրանց պատահական վնասումներից:

740. Նախագծում անհրաժեշտ է հաշվի առնել մոդուլների ՏՓ-ի պահանջները բաշխիչ խողովակաշարերի ու գլխադիրների խցանումը բացառելու համար:

741. Կազմակերպությունում, որտեղ գտնվում են պաշտպանվող սենքերը, գոտիները, կամ կայանքների սպասարկումն իրականացնող կազմակերպությունում, պետք է պահվեն ամենամեծ սենքի կամ գոտու համար նախատեսված չլիցքավորվող մոդուլների, իսկ լիցքավորվող մոդուլների դեպքում՝ հրամարիչ փոշու, համալրող այլ դետալների ու նյութերի 100% պահուստ:

742. Եթե մի օբյեկտում կիրառվում են տարբեր չափերի մոդուլներ, ապա պահուստը պետք է բավարարի բոլոր անհրաժեշտ չափերի մոդուլների աշխատունակությունը վերականգնելու համար:

743. Մոդուլների տեղակայումն ու հրամարիչ փոշու մատուցման բնութագրերը պետք է ապահովեն հրդեհաշիջումը պաշտպանվող ամբողջ սենքում, հաշվի առնելով հրամարիչ նյութի մատուցման ճանապարհին առկա արգելքները՝ սյուներ, պահարաններ և այլն:

744. Հրդեհաշիջման համար անհրաժեշտ մոդուլների քանակի հաշվարկի ժամանակ անհրաժեշտ է ղեկավարվել 730-րդ կետի պահանջով և մոդուլների ՏՓ-ում բերված բնութագրերով՝ պաշտպանվող մակերեսին կամ ծավալում փոշու ցրման ուրվագծերով, կապված հրդեհի օջախի մոդելի կարգից ըստ ԳՕՍՏ Ռ 51057-2001-ի:

745. Գլխադիրների տեղակայումն անհրաժեշտ է նախատեսել դրանց ՏՓ-ի պահանջներով: Եթե պաշտպանվող սենքի բարձրությունը գերազանցում է գլխադիրների տեղակայման առավելագույն բարձրությունը, ապա դրանք պետք է տեղակայել մի քանի մակարդակներում՝ հաշվի առնելով փոշու ցրման ուրվագծերը:

746. Հիմնավորված կամ տեխնիկական առաջադրանքով պահանջված դեպքերում նախագծով կարող է նախատեսվել մոդուլների պահուստավորում դրանց հաշվարկային քանակության կրկնապատկմամբ: Պահուստի գործարկումը թույլատրվում է նախատեսել հեռահար՝ ըստ նախագծով նախատեսված աշխատակարգի:

747. Փոշե և փոշեգազային հրդեհաշիջման կայանքներով սարքավորված սենքերը պետք է ունենան այդ մասին զգուշացնող ցուցատախտակներ: Այդ սենքերի մուտքերի մոտ պետք տեղակայվեն ազդարարիչներ ըստ ԳՕՍՏ 12.4.009-83, ԳՕՍՏ 12.3.046-91 և սույն շինարարական նորմերի:

748. Անհերմետիկության աստիճանը ծավալային հրդեհաշիջման դեպքում չպետք է գերազանցի մոդուլի ՆՓ և ՏՓ-ում նշված թույլատրելի արժեքը: Այդ նպատակով անհրաժեշտ է բացառել տեխնոլոգիապես չհիմնավորված որմնախորշերը, հերմետիկացնել մալուխային

անցումները, դռների վրա տեղակայել ինքնափակիչներ:

749. Մոդուլների ՏՓ-ում պետք է նշված լինի հաշվարկների համար անհրաժեշտ անհերմետիկության աստիճանը: Դրա բացակայության դեպքում գործակիցն ընդունվում է ըստ կետ 731-ի:

750. Պաշտպանվող սենքում կայանքի գործարկումից հետո օդում հրդեհի արգասիքների և փոշու հեռացման համար թույլատրվում է կիրառել շարժական օդափոխիչ սարքեր, իսկ մակերեսներին նստած փոշին հեռացվում է փոշեկուլներով և խոնավ մաքրմամբ:

751. Կայանքների անվտանգության պահանջները պետք է բավարարեն ԳՕՍՏ 12.1.019-2017, ԳՕՍՏ 12.3.046-91 ԳՕՍՏ 12.2.003-91, ԳՕՍՏ 12.4.009-83, ԳՕՍՏ 12.1.005-88 և սույն շինարարական նորմերի պահանջներին:

3.5. ՕԴԱԿԱԽՈՒՅԹԱՅԻՆ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐ

3.5.1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

752. Օդակախույթային հրդեհաշիջման կայանքները կիրառվում են ըստ ԳՕՍՏ 27331-87-ի A2 ենթադասի և B դասի հրդեհների ծավալային եղանակով շիջման համար, 10 մ-ից ոչ ավելի բարձրությամբ, մինչև 10000 մ³ ծավալով, աղյուսակ 21-ում նշված անհերմետիկության հարաչափը չգերազանցող սենքերում: Այդ սենքերում կարող են գտնվել նյութեր, որոնց այրումը դասվում է A1 ենթադասին, այնպիսի քանակությամբ, որ հրդեհը կարելի է հանգցնել Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգին (ԳՕՍՏ Ռ 51057-2001) համապատասխանող ձեռքի հաստիքային միջոցներով:

753. Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի Ա և Բ կարգի պայթյունահրդեհավտանգ և պայթյունավտանգ գոտիներում հրամարիչ օդակախույթների արտադրիչների կիրառումը թույլատրվում է, եթե.

1) դրանք ունեն պայթապաշտպանության վկայական և դրանց էլեկտրական հատվածների պատյանի պայթապաշտպանության անհրաժեշտ մակարդակ կամ պաշտպանության անհրաժեշտ աստիճան,

2) հրամարիչ նյութը մատուցվում է համապատասխան խողովակաշարով և միջաթաղանթով,

3) դրանց կառուցվածքը բացառում է պաշտպանվող սենքում առկա պայթյունավտանգ խառնուրդի բոցավառումը նրա գործարկման ժամանակ:

754. Օդակախույթային կայանքների նախագծման ժամանակ անհրաժեշտ է բացառել օդակախույթի արտադրիչների կիրառման հետևանքով պաշտպանվող սենքում հրդեհի նոր օջախի առաջացումը նրա ՏՓ-ում նշված բոցավառման գոտում այրելի իրերի և նյութերի առկայության հետևանքով:

755. Թույլատրվում է օդակախույթային կայանքների կիրառումը մինչև 0.001 մ⁻¹ անհերմետիկության հարաչափով, մինչև 3000 մ³ ծավալով և 10մ բարձրությամբ մալուխային սենքերի (հավաքիչներ, հորաններ, կիսահարկեր) պաշտպանության համար:

756. Լարման տակ գտնվող մալուխներով և էլեկտրասարքավորանքով սենքերում օդակախույթային կայանքների կիրառումը թույլատրելի է, եթե այդ լարումը չի գերազանցում կոնկրետ օդակախույթի արտադրիչների ՏՓ-ով թույլատրելի լարումը:

757. Օդակախույթային կայանքները չպետք է կիրառվեն հետևյալ հրդեհների մարման համար.

1) թելավոր, սորուն, ծակոտկեն և այլ այրվող նյութերի, որոնք հակված են նյութի ծավալի ներսում ինքնաբոցավառման և/կամ մարմրման (փայտի թեփ, բամբակ, ծղոտ և այլն),

2) քիմիական նյութերի և դրանց խառնուրդների, առանց օդի ներկայության մարմրման և այրման հակված պոլիմերային նյութերի,

3) մետաղների հիդրիտների և հրակիր նյութերի,

4) մետաղների (մագնիում, տիտան, ցիրկոնիում) փոշիների:

758. Օդակախույթային կայանքների կիրառումն արգելվում է.

1) այն սենքերում, որտեղ մարդիկ չեն կարող լքել տարածքը մինչև կայանքի գործարկումը,

2) այն սենքերում, որտեղ հնարավոր է թեկուզ ժամանակավոր 50 և ավելի մարդկանց ներկայությունը,

3) III-V աստիճանի հրակայունության շենքերի սենքերում, եթե օդակախույթի արտադրիչները կամ հրամարիչ նյութի մատակարարման խողովակները իրենց արտաքին մակերևույթից 150 մմ հեռավորության վրա ստեղծում են 400°C-ից բարձր ջերմաստիճան

4) փոփոխվող հատակագծով կամ ծավալով (փոփոխվող միջնապատերով) սենքերում,

5) այն սենքերում, որտեղ պահվում են արժեքավոր իրեր, նյութեր և սարքավորանք, որոնց կարող է վնաս պատճառվել օդակախույթի արտադրիչների աշխատանքից,

6) ճարտարապետական կամ պատմական արժեք ներկայացնող շենքերում և սենքերում, թանգարանների, գրադարանների, պատկերասրահների, արվեստի ստեղծագործությունների և եզակի արժեքների, արխիվների, բանկերի և նյութական այլ արժեքների պահոցներում,

7) տվյալների մշակման կենտրոնների, հեռահաղորդակցական հանգույցների, արխիվների սենքերում, ինչպես նաև այդ սենքերի կեղծ հատակների տակի և առաստաղների վերևի տարածություններում:

759. Օդակախույթային կայանքները մինչև շահագործման հանձնելը պետք է փորձնական շահագործվեն 282-րդ և 283-րդ կետերի համաձայն:

3.5.2 ՆԱԽԱԳԾՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

760. Օդակախույթների արտադրիչները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի N 40 որոշմամբ հաստատված ԵԱՏՄ 043/2017 կանոնակարգի (ԳՕՍՏ 34635-2020) պահանջներին:

761. Օդակախույթի արտադրիչները անհրաժեշտ է տեղակայել պաշտպանվող սենքի ներսում:

762. Հիմնավորված դեպքերում թույլատրվում է օդակախույթի արտադրիչները տեղակայել պաշտպանվող սենքից դուրս (հեռագործ արտադրիչներ), հրամարիչ օդակախույթը մատուցելով արտադրիչին ամրակցված անհրաժեշտ սարքվածքներով, այդ թվում պաշտպանիչ թաղանթներով և խողովակաշարով, պաշտպանվող սենքում ապահովելով հրամարիչ նյութի անհրաժեշտ բնութագրերը:

763. Կայանքներում անհրաժեշտ է նախատեսել ինքնաշխատ և հեռավար գործարկումներ: Արգելվում է կայանքի կազմում օգտագործել համակցված գործարկմամբ օդակախույթային արտադրիչներ: Կայանքների տեղային գործարկում չի թույլատրվում: Օդակախույթի արտադրիչների գործարկումը պետք է իրականացվի էլեկտրական թողարկիչով:

1) միաժամանակ (մի խմբով),

2) հաջորդաբար (մի քանի խմբով), նպատակ ունենալով նվազեցնել սենքի ներսում առաջացող ավելցուկային ճնշումը:

764. Օդակախույթային կայանքների կազմում պետք է նախատեսել.

1) կայանքի և նրա տարրերի հսկողության և կառավարման սարքեր ու սարքվածքներ,

2) կայանքի էլեկտրասնումն ապահովող սարքեր,

3) հրամարիչ օդակախույթի արտադրիչներ,

4) պաշտպանվող սենքում օդափոխության, օդի լավորակման, օդային ջեռուցման և տեխնոլոգիական սարքավորանքի անջատման, հակահրդեհային կափույրների, օդափոխության խողովակների և այլնի փակման համար անհրաժեշտ ազդանշաններ ձևավորող և արձակող սարքվածքներ,

5) պաշտպանվող սենքում դռների բացման ժամանակ կայանքի ինքնաշխատ գործարկումը արգելափակող սարքվածքներ՝ արգելափակող դրոյության ցուցանշմամբ,

6) կայանքի գործարկման և սենքում հրամարիչ օդակախույթի առկայության մասին լուսային և ձայնային ազդանշանման և ազդարարման սարքվածքներ:

765. Օդակախույթային կայանքների նախագծման համար ելակետային տվյալներն են.

1) պաշտպանվող սենքի նշանակությունը, սենքը եզրափակող կառուցվածքատարրերի հրակայունության սահմանը և հրդեհային վտանգավորության դասը,

2) պաշտպանվող սենքի չափերը (ծավալը),

3) մշտապես բաց որմնանցքների առկայությունը, դիրքը և չափերը,

4) ապակեպատ պատերի առկայությունն ու բնութագիրը,

5) օդափոխության, օդի լավորակման և օդային ջեռուցման համակարգերի առկայությունն ու բնութագիրը,

6) պաշտպանվող սենքում առկա կամ շրջանառվող ապրանքների և նյութերի հրդեհային վտանգավորությունը ըստ ԳՕՍՏ 12.1.044-2018 և դրանց համապատասխան հրդեհի դասն ու ենթադասը ըստ ԳՕՍՏ 27331-87,

7) հրդեհային բեռի բնույթը, մեծությունն ու տեղաբաշխումը,

8) տեխնոլոգիական սարքավորանքի տեղաբաշխումն ու բնութագիրը,

9) սենքերի պայթյունահրդեհային և հրդեհային վտանգավորության կարգը և առանձին գոտիների հրդեհային վտանգավորության դասը ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի

2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի,

10) պաշտպանվող սենքում աշխատանքային խոնավությունը, ու ճնշումը, ինչպես նաև առավելագույն թույլատրելի ջերմաստիճանն ու ճնշումը ըստ ՀՍՏ ԳՕՍՍ Ռ 12.3.047-2023,

11) մարդկանց հնարավոր առավելագույն քանակը և մինչև հրամարիչ նյութի թողարկումը նրանց տարհանման հնարավորությունը,

12) օդակախույթի ընտրված արտադրիչների, այդ թվում հեռագործ, նորմատիվային հրամարիչ հնարավորությունը որոշվում է ըստ ԳՕՍՍ 34635-2020-ի, հաշվարկի համար ընտրվում է սենքում առկա հրավտանգ նյութերի նկատմամբ հրամարիչ հնարավորության առավելագույն արժեքը), նրանց այլ բնութագրերը (բարձր ջերմաստիճանային գոտիները, իներցիոնությունը, թողարկման ժամանակահատվածն ու աշխատանքի ժամանակը):

766. Պաշտպանվող սենքում կամ նրանից դուրս օդակախույթի արտադրիչների տեղակայման դեպքերում պետք է բացառվեն նրանց ջերմային գոտում հետևյալ ջերմաստիճանները.

1) պաշտպանվող սենքում մշտապես կամ ժամանակավոր գտնվող անձանց դեպքում (կեղծ կամ չարտոնված գործարկումների դեպքերում)՝ 75°C-ից բարձր,

2) պաշտպանվող սենքում մշտապես կամ ժամանակավոր գտնվող այրելի նյութերի և առարկաների, ինչպես նաև սարքավորանքի առկայության դեպքերում՝ 200°C-ից բարձր,

3) 400°C-ից բարձր, այլ սարքավորանքի դեպքերում:

767. Օդակախույթի արտադրիչների բարձր ջերմաստիճանային գոտիների մասին տվյալներն անհրաժեշտ է ճշտել դրանց ՏՓ-ից:

768. Անհրաժեշտության դեպքում պետք է նախատեսել համապատասխան կառուցվածքով միջոցներ (պաշտպանիչ էկրաններ, պաշտպանակներ և այլն) բացառելու համար մարդկանց, այրելի նյութերի, առարկաների և սարքավորանքի հպումը օդակախույթի արտադրիչների բարձր ջերմաստիճանային հատվածներին: Այդ միջոցները պետք է նախագծվեն կիրառվող օդակախույթի արտադրիչների արտադրողների առաջարկներով ու դրանց նախագծերը պետք է ներառվեն օդակախույթային կայանքների նախագծում:

769. Օդակախույթային հրամարիչ նյութի մատուցման նախագծային սաստկությունը և օդակախույթի արտադրիչների ընտրված քանակն ու տեղակայման դիրքերը պետք է

ապահովեն պաշտպանվող ողջ ծավալում դրանց նորմատիվայինից ոչ ցածր հրամարիչ ունակություն ըստ ԳՕՍՍ 34635-2020 հաշվի առնելով 766, 770, 771, 776 և 778-րդ կետերի պահանջները:

770. Օդակախույթի արտադրիչները, օդակախույթի հավասարաչափ սփռման նպատակով, կարող են տեղակայվել մի քանի մակարդակներում: Դրանց դիրքը պետք է բացառի օդակախույթի շիթի ուղղությունը դեպի պաշտպանվող սենքի եզրափակող կառուցվածքատարրերի մշտական բացվածքները:

771. Օդակախույթային կայանքները պետք է ապահովեն հրամարիչ նյութի մատուցման հապաղումը ըստ 275-րդ կետի պահանջի:

772. Օդակախույթի արտադրիչները և նրանց խողովակաշարերը, անկախ տեղակայման վայրից, պետք է տեղակայվեն ոչ այրելի նյութից պատրաստված եզրափակող կառուցվածքատարրերի, հենարանների, սյուների, հատուկ կանգնակների վրա, կամ էլ 766-րդ կետով պահանջվող անվտանգությունն ապահովող սարքվածքների կիրառմամբ:

773. Օդակախույթի արտադրիչների տեղակայումը պետք է ապահովի դրանց իրանի, կնիքների, գործարկման շղթաներում սեղմակների անխախտելիության տեսողական ստուգումը և խափանվածների փոխարինումը նորով:

774. Օդակախույթային կայանքների խողովակաշարերը, դրանց առկայության դեպքում, պետք է ունենան հողանցման սեղմակ, նշան և հողանցվեն ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 592-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոնների» և ԳՕՍՍ 21130-75 ստանդարտի պահանջներով:

775. Հրդեհի ընդունիչ-հսկիչ ու կառավարման սարքերից մինչև օդակախույթային կայանքներ ընկած հատվածում գործարկման շղթաները պետք է նախատեսել մետաղական ճկուն կամ կոշտ, հողանցված խողովակներում:

776. Օդակախույթային կայանքներով սարքավորված սենքերը.

- 1) պետք է ունենան այդ մասին զգուշացնող ցուցանակներ,
- 2) ներսում և դրանց մուտքի մոտ անհրաժեշտ է նախատեսել ազդանշանում ըստ ԳՕՍՍ 12.4.009-83, ԳՕՍՍ 12.3.046-91 և սույն շինարարական նորմերի,
- 3) սարքավորված լինեն ավելցուկային ճնշման հեռացման սարքվածքներով:

777. Ընդհանուր օդափոխության, տեղային արտաձման, օդային ջեռուցման և օդորակման ու հակաձխային օդափոխության համակարգերը պետք է համապատասխանեն

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի N 83-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» և սույն շինարարական նորմերի պահանջներին:

778. Հրդեհի դեպքում, մինչև օդակախույթային կայանքների գործարկումը, անհրաժեշտ է ինքնաշխատ կերպով անջատել ընդհանուր օդափոխության, տեղային արտաձման, օդային ջեռուցման և օդորակման ու հակաձխային օդափոխության համակարգերը, փակել այդ համակարերում առկա բոլոր կափույրները:

779. Կայանքի գործարկումից հետո պաշտպանվող սենքում օդում հրդեհի արգասիքների և հրամարիչ նյութի հեռացման համար թույլատրվում է կիրառել շարժական օդափոխիչ սարքեր, իսկ մակերեսներին նստած փոշին հեռացվում է փոշեկուլներով և խոնավ մաքրմամբ:

780. Օդակախույթային կայանքների նախագծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ընտրված արտադրիչների և սարքվածքների ՏՓ-ի, ԳՕՍՏ 2.601-2013, ԳՕՍՏ 12.0.001-82-ի, սույն շինարարական նորմերի և այլ գործող ՆՓ-ի պահանջները անվտանգության վերաբերյալ, և դրանք ներկայացնել նախագծերի բացատրական մասում:

781. Կայանքների նախագծային և շահագործման փաստաղթերում պետք է միջոցներ նախատեսվեն բացառելու համար կայանքների կեղծ և չարտոնված գործարկումները, օդակախույթի արտադրիչների աշխատանքի վտանգավոր գործոնների ազդեցությունը մարդկանց վրա (օդակախույթի թունավորությունը, դրա շիթի և արտադրիչի իրանի բարձր ջերմաստիճանը, տեսնելիության լրիվ բացակայության պայմաններում մարդու վնասվելը նրա շարժման հետևանքով):

782. Օդակախույթային կայանքների փորձարկման և նորոգման վայրերում պետք է տեղակայվեն զգուշացնող նշաններ ՈւՇԱԴՐՈւԹՅՈւՆ, ԱՅԼ ՎՏԱՆԳՆԵՐ, ՓՈՐՁԱՐԿՈւՄՆԵՐ կամ ՆՈՐՈԳՈւՄ գրություններով ըստ ԳՕՍՏ 12.4.026-2015:

783. Օդակախույթային հրամարիչ նյութի թողարկումից հետո մինչև սենքում գազաձխահեռացման և օդափոխության ավարտը թույլատրվում է մտնել սենք միայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 878 որոշմամբ հաստատված ՄՄ ՏԿ 019/2011 կանոնակարգի (ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 53256-2023, ՀՍՏ ԳՕՍՏ Ռ 53259-2023) պահանջներին համապատասխանող շնչառական օրգանների պաշտպանիչ միջոցներով:

784. Կայանքի համալիր ստուգման ժամանակ նրա փորձարկումը պետք է իրականացվի ՏՓ-ում ներկայացված սարքավորանքների հսկիչ կետերում ազդանշանների ստուգմամբ:

785. Վերջում ամբողջ կայանքը փորձարկվում է նմանակման եղանակով, որի դեպքում գործարկվում է ամբողջ համակարգը ընդհուպ մինչև օդակախույթի արտադրիչի գործարկումը, որի փոխարեն էլեկտրական շղթային միացվում է արտադրիչի էլեկտրական նույն բնութագրերով նմանակ:

3.6. ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

3.6.1. ԶՐՈՎ ԵՎ ՑԱԾԻ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՈՒՐՈՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

786. Զրով և ցածր պատիկությամբ փրփուրով հրդեհաշիջման կայանքների հաշվարկն իրականացվում է ներքոգրյալ մեթոդով, ինչի արդյունքում որոշվում են հրդեհային պոմպի անհրաժեշտ բնութագրերը՝ ճնշումը ($P_{պոմպ}$, ՄՊա) և ջրի ծախսը ($Q_{պոմպ}$, լ/վրկ), ինչպես նաև խողովակաշարերի բոլոր հատվածների տրամագծերը.

1) ընտրվում է հրամարիչ նյութը՝ ջրային կամ փրփրային, կախված պաշտպանվող շենքում առկա նյութերից, առարկաներից, սարքավորանքից, մարդկանց առկայությունից ու տարհանման հնարավորություններից, հնարավոր հրդեհի բնութագրերից,

2) ընտրվում է կայանքի տիպը՝ սպրինկլերային, դրենչերային, ագրեգատային թե մոդուլային, և այլն,

3) ընտրվում է կայանքի տիպը՝ օդալցված թե ջրային,

4) ընտրվում է սպրինկլերների գործարկման ջերմաստիճանը՝ կախված նրանց տեղակայման վայրի ջերմաստիճանից,

5) ընտրվում է ոռոգիչների տիպը՝ կախված պաշտպանվող սենքերի ճարտարապետական-հատակագծային լուծումներից,

6) պաշտպանվող շենքի, սենքերի հատակագծերի վրա տեղակայվում են ոռոգիչները՝ հաշվի առնելով ոռոգման ուրվագծերը, առաստաղների ու սենքերում տեղակայված սարքավորանքի առանձնահատկությունները, այնուհետև ուղեգծվում են խողովակաշարերը՝ ոռոգիչները ճյուղերով միացնելով բաշխիչ ու սնիչ խողովակներին,

7) կազմվում է կայանքի հաշվարկային տարածական սխեման՝ ջրասնիչից ու պոմպերից մինչև թելադրող ոռոգիչ (պարտադիր չէ մասշտաբով), համարակալվում են բոլոր բնորոշ կետերը սկսած ջրասնիչից մինչև թելադրող ոռոգիչ (օրինակ՝ նկար 13),

8) որոշվում է պաշտպանվող շենքի/սենքերի խումբը (Աղյուսակ 14), և ըստ դրա Աղյուսակներ 15-17-ից որոշվում են ոռոգման նվազագույն սաստկությունը (i_u), հրամարիչ նյութի ծախսը (Q_u), ոռոգման մակերեսը (S_u) ու տևողությունը, ոռոգիչների միջև առավելագույն հեռավորությունը,

9) որոշվում է թելադրող ոռոգիչը, ուրվագծվում է ոռոգման նվազագույն մակերեսը և որոշվում է ոռոգիչների այն նվազագույն քանակը, որը պետք է ապահովի այդ մակերեսում հրդեհաշիջումը,

10) կազմվում է աղյուսակ, որում պետք է լրացվեն հիդրավիկական հաշվարկին առնչվող տեղեկություններ և հաշվարկի արդյունքները,

11) միայն թելադրող ոռոգիչի համար ընդունվում է ոռոգման նվազագույն սաստկությունը՝ i_u , $l/(վրկxմ^2)$ և ոռոգիչի տեխնիկական բնութագրերում բերված «Ոռոգման սաստկություն-ճնշում ոռոգիչի վրա» կորագծից որոշվում է դրա համար թելադրող ոռոգիչի վրա անհրաժեշտ $P_{թո}$ (ՄՊա) ճնշումը (օրինակ 1-ին խմբի սենքի համար նկար 14-ում),

12) որոշվում է թելադրող ոռոգիչից ջրի ծախսը, $q_{թո}$ ($l/(վրկ)$).

$$q_{թո} = 10 \times K \times P_{թո}^{0.5} \quad (3)$$


որտեղ K -ն՝ ոռոգիչի արտադրողականության գործակիցն է ($l/(վրկxբար^{0.5})$),

13) ոռոգիչների բնութագրերում «Ոռոգման սաստկություն-ճնշում ոռոգիչի վրա» կորագծի բացակայության դեպքում թելադրող ոռոգիչից նվազագույն ոռոգման սաստկությունն ապահովող ջրի մոտավոր ծախսը, $q_{թո}$ ($l/(վրկ)$)


$$q_{թո} = (1.3-1.5) * i_u * S \quad (4)$$

որտեղ S -ը ընտրված ոռոգիչի պաշտպանող մակերեսն է (շրջանաձև՝ ուղղաձիգ տեղակայվող ոռոգիչների և այլ ուրվագծով՝ հորիզոնական ոռոգիչների դեպքում) ըստ նրա $S\Phi$ -ի, ($մ^2$) որից հետո որոշվում է թելադրող ոռոգիչի վրա այդ ջրի ծախսն ապահովող ճնշումը $P_{թո}$ (ՄՊա).

$$P_{թո} = P_{1վերջ} = [q_{թո} / (10K)]^2 \quad (5)$$



Նկար 13. Կայանքի հաշվարկային տարածական սխեմայի օրինակ ջրասնիչից ու պոմպերից մինչև թելադրող ոռոգիչ.



Նկար 14. Ոռոգիչի «Ոռոգման սաստկություն - Ճնշում ոռոգիչի վրա» տեխնիկական բնութագրի կորագծի օրինակ (0.08 վ/վրկսմ² սաստկության համար ոռոգիչի վրա անհրաժեշտ է 0.1 ՄՊա ճնշում)

14) յուրաքանչյուր հատվածում որոշվում է նախորդ ոռոգիչից (կամ հոսքերի բաժանման կետից) մինչև թելադրող (հաջորդ) ոռոգիչ խողովակի անհրաժեշտ տրամագիծը՝ ելնելով ջրի թույլատրելի արագությունից

$$d \geq [(4000 \times q) / (\pi \times V_p)] \text{ մմ} \tag{6}$$

որտեղ q-ն՝ տվյալ հատվածամասում ջրի ծախսն է, վ/վրկ, V_p -ն՝ ջրի թույլատրելի արագությունը, մ/վրկ (տես 444-րդ կետը):

15) Խողովակների տրամագծերը ընտրելիս կարելի է դեկավարվել Աղյուսակ 22-ով, դրանք ստուգելով հետագա հաշվարկներում.

16) Ունենալով յուրաքանչյուր i-րդ հատվածի վերջում (հաշվարկի սկզբում՝ թելադրող ոռոգիչի վրա) անհրաժեշտ ճնշումը՝ $P_{iվերջ}$, ՄՊա, այդ հատվածում խողովակի անվանական տրամագիծն ու ջրի ծախսը՝ q_i , վ/վրկ, որոշվում է ճնշման անկումը տվյալ հատվածի 1 մ երկարության վրա՝ ΔP_i -ն (7) բանաձևով.

$$\Delta P_i = q_i^2 / (100 K_{\text{լս}}) \tag{7}$$

որտեղ $K_{\text{լս}}$ -ն խողովակի տեսակարար բնութագիրն է և ընդունվում է Աղյուսակ 23-ից,

Աղյուսակ 22.

Հ/Հ	Խողովակի անվանական տրամագիծը, DN, մմ	20	25	32	40	50	70	80	100	125	150
1.	Ոռոգիչների առավելագույն քանակը 0.5 ՄՊա և ավելի ճնշման դեպքում	1	3	5	9	18	28	46	80	150	>150
2.	Ոռոգիչների առավելագույն քանակը քանակը մինչև 0.5 ՄՊա ճնշման դեպքում	-	2	3	5	10	20	36	75	140	>150

Աղյուսակ 23. Պողպատե խողովակների դիմադրության բնույթերը

Հ/Հ	Անվանական տրամագիծը DN, մմ	Արտաքին տրամագիծը, մմ	Պատի հաստությունը, մմ	K _բ գործակիցը, լ ² /վրկ ²
1. Պողպատե էլեկտրատեղակայված (ԳՕՍՏ 10704)				
1)	15	18,0	2,0	0,0755
2)	20	25,0	2,0	0,75
3)	25	32,0	2,2	3,44
4)	32	40,0	2,2	13,97
5)	40	45,0	2,2	28,7
6)	50	57,0	2,5	110
7)	65	76,0	2,8	572
8)	80	89,0	2,8	1 429
9)	100	108,0	2,8	4 322
10)	100	108,0	3,0	4 231
11)	100	114,0	2,8	5 872
12)	100	114,0	3,0	5 757
13)	125	133,0	3,2	13 530

14)	125	133,0	3,5	13 190
15)	125	140,0	3,2	18 070
16)	150	152,0	3,2	28 690
17)	150	159,0	3,2	36 920
18)	150	159,0	4,0	34 880
19)	200	219,0	4,0	209 900
20)	250	273,0	4,0	711 300
21)	300	325,0	4,0	1 856 000
22)	350	377,0	5,0	4 062 000
2. Պողպատե ջրագազամուղ (ԳՕՍՏ 3262)				
1)	15	21,3	2,5	0,18
2)	20	26,8	2,5	0,926
3)	25	33,5	2,8	3,65
4)	32	42,3	2,8	16,5
5)	40	48,0	3,0	34,5
6)	50	60,0	3,0	135
7)	65	75,5	3,2	517
8)	80	88,5	3,5	1 262
9)	90	101,0	3,5	2 725
10)	100	114,0	4,0	5 205
11)	125	140,0	4,0	16 940
12)	150	165,0	4,0	43 000

17) Պատվիրատուի պահանջով, տեխնիկական առաջադրանքում նշված լինելու դեպքում, ճնշման անկումը կարող է որոշվել նաև Հեյզեն-Վիլյամսի (8) բանաձևով.

$$\Delta P_i = 6.05 \times (q_i / C_i)^{1.85} / d_i^{4.87} \tag{8}$$

որտեղ q_i -ն ջրի հոսքն է լրրպետ, C_i – ն և d_i – ն համապատասխանաբար տվյալ հատվածում խողովակի շփման կորուստների գործակիցն ու ներքին տրամագիծն են, որոնք որոշվում են Հեյզեն-Վիլյամսի բանաձևի վրա հիմնված հաշվարկների միջազգային կարգավորող

որևէ փաստաթղթից (Տես նաև 24) կետի բ. ենթակետը),

18) ճնշումը L_i մ երկարությամբ հատվածամասի սկզբում՝ $P_{iսկիզբ}$, (ՄՊա).

$$P_{iսկիզբ} = P_{iվերջ} + \Delta P_i \times L_i \quad (9)$$

որտեղ ΔP_i -ը ճնշման անկումն է հատվածի 1մ երկարության վրա, (ՄՊա):

19) նմանապես հաջորդաբար հաշվվում են ոռոգման նվազագույն մակերեսի վրա գտնվող և հրդեհի պատճառով գործարկված բոլոր սպրինկլերներից յուրաքանչյուրի վրա ընկնող ճնշումն ու ջրի ծախսը, որոնք մեծանում են թելադրող ոռոգիչից հեռանալու հետ.

20) մի քանի ուղղությունների հաշվարկով դրանց ընդհանուր կետում տարբեր $P_{հաշվ}$ հաշվարկային ճնշումներ ստացվելու դեպքում կատարվում է այդ ուղղություններում ջրի ծախսերի վերահաշվարկ ըստ այդ կետում ստացված $P_{բճ}$ առավելագույն ճնշման.

$$Q_{ճշտ} = Q_{հաշվ} \times (P_{բճ} / P_{հաշվ})^{0.5} \quad (10)$$

21) ճնշման կորուստների հաշվարկը մինչև նվազագույն մակերեսի վրա գտնվող վերջին ոռոգիչը և այնուհետև դեպի բաշխիչ և սնիչ խողովակաշարեր, սպրինկլերային կառավարման հանգույց, առբերիչ խողովակաշարեր և հրդեհային պոմպեր կատարվում է 13) - 20)-րդ ենթակետերի կրկնությամբ.

22) նվազագույն մակերեսի վրա գտնվող ոռոգիչներից ջրի ընդհանուր ծախսը չպետք է պակաս լինի Աղյուսակ 15-ում նշված ջրի Q_n նվազագույն ծախսից: Պակաս լինելու դեպքում հաշվարկը շարունակվում է նվազագույն մակերեսից դուրս գտնվող սպրինկլերների համար մինչև բավարարվի այդ պայմանը:

23) ընդունված ստանդարտով հաշվարկները կատարվում են դրանցից հետևյալ տարբերություններով.

ա. օղակաձև բաշխիչ խողովակաշարի վրա փակիչ սարքվածքներ չնախատեսելու դեպքում ճնշման անկումը յուրաքանչյուր կիսաօղակում պետք է հաշվել առանձին, անհրաժեշտ ընդհանուր հոսքը բաժանելով կիսաօղակների մեջ այնպես, որ օղակաձև հատվածի մուտքին՝ կիսաօղակների ընդհանուր կետում (նկար 13, 50-րդ կետ), ճնշումները լինեն հավասար,

բ. բոլոր հարկերում հավասար ճնշում ապահովելու նպատակով հարկի մուտքերում ճնշման կարգավորիչներ չնախատեսելու, կամ ճնշաչափեր չտեղադրելու և դրանց ազդանշանով ղեկավարվող հրդեհային պոմպեր չնախատեսելու դեպքում, ամենավերին հարկի մուտքին (նկար 13, 40-րդ կետ) անհրաժեշտ ջրի ծախսը՝ $Q_{վ.հ}$ ու ճնշումը՝ $P_{վ.հ}$ որոշելուց

հետո, պետք է որոշել ամենաստորին հարկի մուտքին (նկար 13, 10-րդ կետ) առաջացող $P_{u,h}$ ճնշումը (վերին հարկի ճնշմանը գումարվում է ջրի սյան հիդրոստատիկ ճնշումը) և այդ ճնշման տակ ստորին հարկում հրդեհի դեպքում ջրի փաստացի $Q_{u,h}$ ծախսը, այն ընդունելով որպես պոմպի ծախսային բնութագիր, $Q_{պոմպ}, l/vրկ$.

$$Q_{պոմպ} = Q_{u,h} = Q_{վ,h} \times (P_{u,h} / P_{վ,h})^{0.5} \quad (11)$$

24) կցամասերում, կառավարման հանգույցներում տեղային հիդրավլիկական կորուստները հաշվի են առնվում ըստ ընտրված ստանդարտի՝

ա. 7-րդ բանաձևով հաշվելիս՝ պոմպի մուտքին հաշվարկային ճնշումը ավելացնելով 20%-ով,


բ. 8-րդ բանաձևով հաշվելիս՝ յուրաքանչյուր հատվածամասի L_i երկարությանը ավելացնելով հատվածամասի սկզբում առկա կցամասին (անկյուն, ծունկ, եռաբաշխիկ, քառաբաշխիկ կամ անցում) համարժեք երկարություն, որոնց չափը պետք է ընդունել այդ բանաձևի վրա հիմնված հաշվարկների միջազգային կարգավորող որևէ փաստաթղթից:

Վերջնարդյունքում որոշվում է հրդեհային պոմպերից պահանջվող ջրի ճնշումը՝ $P_{պոմպ}$, (ՄՊա), որը չպետք է գերազանցի ընտրված համակարգի համար թույլատրելի ճնշումը::

25) աղյուսակ 15-ով որոշված ժամանակահատվածից ելնելով որոշվում է հրդեհաշիջման ամբողջ ժամանակահատվածի համար անհրաժեշտ ջրի (և փրփրարարի) ծավալը,

26) Վերոգրյալ հերթականությամբ իրականացվում են նաև դրենչերային, սպրինկլեր-դրենչերային կայանքների հիդրավլիկական հաշվարկները:

787. Սույն նորմերով նախատեսված կարգով հրդեհաշիջման ինքնաշխատ ջրային համակարգի սնիչ և բաշխիչ խողովակներին ներքին հակահրդեհային ջրմուղի միացման դեպքում հաշվարկային սխեմայում ներառում են նաև հրդեհային ծորակները իրենց դիրքերով և բարձրություններով, ու հիդրավլիկական հաշվարկով պոմպերի բնութագրերը որոշելիս հաշվի են առնում նաև ոռոգիչների աշխատանքի հետ միաժամանակ այդ համակարգից ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 80-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերին համապատասխան ջրի ծախսն ու դրա հետևանքով լրացուցիչ ճնշման անհրաժեշտությունը: Արգելվում է երկու համակարգերի համար անհրաժեշտ ծախսերի մեխանիկական գումարումը: Թույլատրվում է հրշեջ ծորակներում դիաֆրագմաների կիրառումը, որոնցում անցքի տրամագիծը պետք է որոշել նկար 15-ի նոմոգրամից:



Նկար 15. Հրշեջ ծորակներում դիաֆրագմաների տրամագծի որոշումը (օրինակ $P=0.45$ ՄՊա-ից անհրաժեշտ է նվազեցնել մինչև 0.1 ՄՊա, $\Delta P=0.35$ ՄՊա, $q=5.2$ /վրկ, DN50 ծորակում՝ $d=18.5$ մմ, DN65 ծորակում՝ $d=19.4$ մմ)

788. Փրփրարարի մինչև 10% խտությամբ փրփրային կայանքներում փրփրաջրի մածուցիկությունը հաշվի չի առնվում:

789. Հաշվարկներն ամփոփվում են Աղյուսակներում (տես նկար 13-ի կայանքի հաշվարկի արդյունքները Աղյուսակ 24 - ում):

790. Նրբաջրային և ոչ մետաղական խողովակներով ինքնաշխատ հրդեհաշիջման կայանքների հաշվարկներն իրականացվում են այդ կայանքների համար հատուկ մշակված և իրավասու մարմինների կողմից հաստատված ՆՓ և ՏՓ-ի:

**3.6.2. ՄԻՋԻՆ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՈՒՐՈՎ
ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ**

791. Միջին պատիկությամբ փրփուրով հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքների հրամարիչ նյութի քանակի հաշվարկի համար ելակետային տվյալ է համարվում հնարավոր հրդեհի օջախի հավարկային ծավալը՝ V_0 , մ³, որը որոշվում է սենքի մակերեսի և հրդեհային բեռի բարձրության արտադրյալով հանած այդ ծավալում առկա շինարարական հոծ կառուցվածքատարրերի ծավալը.

1) որոշվում է փրփրաջրի հաշվարկային քանակը, մ³.

$$V_h = a \times V_0 / K \tag{12}$$

որտեղ a -ն փրփուրի քայքայման գործակիցն է ըստ 26-րդ Աղյուսակի, իսկ K -ն՝ փրփուրի պատիկությունն է:

2) ընտրվում են նույն տիպի, մոդելի միջին պատիկության փրփրարտադրիչներ և ըստ տեխնիկական բնութագրերի որոշվում է նրանց արտադրողականությունը ըստ փրփրաջրի՝ q , մ³/րոպե,

3) որոշվում է միաժամանակ աշխատող փրփրարտադրիչների հաշվարկային քանակը՝ n , հատ.

$$n = V_h / (q \times T) \tag{13}$$

ստացված թիվը կլորացվում է մինչև մոտակա մեծ ամբողջ թիվը՝ N :

4) որոշվում է փրփրաջրի անհրաժեշտ քանակը՝ V_w , մ³, հաշվի առնելով նաև խողովակաշարերում մնացորդային քանակությունը՝ $V_{լս}$, մ³.

$$V_w = N \times q \times T + V_{լս} \tag{14}$$

Աղյուսակ 24. Նկար 13-ի կայանքի հաշվարկը.

Օբյեկտի անվանումը				Ոռոգման գործակիցը	Թելարրոլ ոռոգիչի ճնշումը	Թելարրոլ ոռոգիչի ելքը, լ/վրկ	Ոռոգման մակերեսը, մ ²	Ոռոգման շառավիղը, մ	Ճնշման անկման հաշվարկը (7)-րդ բանաձևով				
				0.420	0.1	1.328	12	1.95					
Հ/Հ	Հատվածի Սկիզբը վերջը	Հատվածի երկարությունը, L մ	Նիշերի տարբերությունը, ΔH մ	Հատվածի անվանական տրամագիծը, DN մմ	Հատվածի ներքին տրամագիծը, մմ	Դիմարության գործակիցը, Km	Ճնշումը հատվածի սկզբում, P _{սկիզբ} ՄՊա	Հոսքը հատվածում Q (լ/վրկ)	Արագությունը հատվածում, մ/վ	Ճնշման անկումը 1մ-ի վրա, ΔP ₁ ՄՊա	Ճնշման անկումը հատվածում ΔP ՄՊա	Ճնշումը հատվածի վերջում, P _{վերջ} ՄՊա	
1	Ճյուղ 170-175 թելարրոլ ոռոգիչ 175												
2	170	175	0.48	-0.48	25	27.9	3.65	0.09752	1.328	2.17	0.00483288	0.00232	0.10000
3	160	170	2.50		25	27.9	3.65	0.10960	1.328	2.17	0.00483288	0.01208	0.09752
4	160-165 ճյուղով հոսքի ճշտում ըստ 160 կետում ճնշման												
5	160	165	0.48	-0.48	25	27.9	3.65	0.10960	1.408	2.30	0.00543164	0.00261	0.11179
6	130	160	1.25		32	36.7	16.5	0.11527	2.736	2.59	0.00453741	0.00567	0.10960
7	140-155 ճյուղից անվանական հոսքը												
8	140	155	2.48	-0.48	25	27.9	3.65	0.10719	1.328	2.17	0.00483288	0.01199	0.10000
9	140-145 ճյուղով հոսքի ճշտում ըստ 140 կետում ճնշման												
10	140	145	0.48	-0.48	25	27.9	3.65	0.10719	1.392	2.28	0.00531189	0.00255	0.10944
11	130	140	1.00		32	36.7	16.5	0.11167	2.721	2.57	0.00448579	0.00449	0.10719

12	130-140 ճյուղով հոսքի ճշտում ըստ 130 կետում ճնշման												
13	130	140	1.00		32	36.7	16.5	0.11527	2.764	2.61	0.00463050	0.00463	0.11064
14	120	130	3.10		65	70.4	562	0.11694	5.500	1.41	0.00053831	0.00167	0.11527
15	120 կետից սնվող 2 ճյուղերով հոսքի ճշտում ըստ 120 կետում ճնշման												
16	120							0.11694	5.540				
17	90	120	4.00		65	70.4	562	0.12562	11.040	2.84	0.00216882	0.00868	0.11694
18	110-115 ճյուղից անվանական հոսքը												
19	110	115	1.35	-0.48	25	27.9	3.65	0.10172	1.328	2.17	0.00483288	0.00652	0.10000
20	100	110	2.50		25	27.9	3.65	0.11381	1.328	2.17	0.00483288	0.01208	0.10172
21	100-105 հոսքի ճշտում ըստ 100 կետում ճնշման												
22	100	105	0.48	-0.48	25	27.9	3.65	0.11381	1.405	2.30	0.00540690	0.00260	0.11601
23	90	100	1.25		32	36.7	16.5	0.11947	2.733	2.58	0.00452676	0.00566	0.11381
24	90-100 ճյուղի հոսքի ճշտում ըստ 100 կետում ճնշման												
25	90	100	1.25		32	36.7	16.5	0.12562	2.802	2.65	0.00475990	0.00595	0.11967
26	70	90	2.42		65	70.4	562	0.13755	16.645	4.28	0.00492995	0.01193	0.12562
27	Աջ կիսաօղակով												
28	80	70	3.50		80	83.4	1429	0.13924	8.323	1.52	0.00048471	0.00170	0.13755
29	85 հրշեջ ծորակ DN50 անվանական բնութագրերը P=0.1ՄՊա, Q=2,6լ/վրկ												
30	80	85	4.50	-1.85	50	54.0	135	0.08375	2.600	1.14	0.00050074	0.00225	0.10000
31	80-85 հոսքի ճշտում ըստ 80 կետում ճնշման												

32	80	85	4.50	-1.85	50	54.0	135	0.13924	3.352	1.46	0.00083251	0.00375	0.15400
33	50	80	62.00		80	83.4	1429	0.19838	11.675	2.14	0.00095386	0.05914	0.13924
34	Ձախ կիսաօղակով												
35	60	70	15.50		80	83.4	1429	0.14506	8.323	1.52	0.00048471	0.00751	0.13755
36	65 հրշեջ ծորակ DN50 անվանական բնութագրերը P=0.1ՄՊա, Q=2,6լ/վրկ												
37	60	65	3.45	-1.85	50	54.0	135	0.08323	2.600	1.14	0.00050074	0.00173	0.10000
38	60-65 հոսքի ճշտում ըստ 60 կետում ճնշման												
39	60	65	3.45	-1.85	50	54.0	135	0.14506	3.433	1.75	0.00087277	0.00301	0.16055
40	50	60	62.00		80	83.4	1429	0.20501	11.755	2.15	0.00096699	0.05995	0.14506
41	Ճնշումների հավասարեցում 40 կետում												
42	Աջ կիսաօղակով												
43	80	70	3.50		80	83.4	1429	0.13937	8.614	1.58	0.00051919	0.00182	0.13755
44	85 հրշեջ ծորակ DN50 անվանական բնութագրերը P=0.1ՄՊա, Q=2,6լ/վրկ												
45	80	85	4.50	-1.85	50	54.0	135	0.08375	2.600	1.14	0.00050074	0.00225	0.10000
46	80-85 հոսքի ճշտում ըստ 80 կետում ճնշման												
47	80	85	4.50	-1.85	50	54.0	135	0.13937	3.354	1.46	0.00083323	0.00375	0.15412
48	50	80	62.00		80	83.4	1429	0.20150	11.967	2.19	0.00100223	0.06214	0.13937
49	Ձախ կիսաօղակով												
50	60	70	15.50		80	83.4	1429	0.14455	8.032	1.47	0.00045142	0.00700	0.13755
51	65 հրշեջ ծորակ DN50 անվանական բնութագրերը P=0.1ՄՊա, Q=2,6լ/վրկ												

52	60	65	3.45	-1.85	50	54.0	135	0.08323	2.600	1.14	0.00050074	0.00173	0.10000
53	60-65 հոսքի ճշտում ըստ 60 կետում ճնշման												
54	60	65	3.45	-1.85	50	54.0	135	0.14455	3.426	1.50	0.00086966	0.00300	0.16004
55	50	60	62.00		80	83.4	1429	0.20151	11.458	2.10	0.00091875	0.05696	0.14455
56	40	50	8.70		80	83.4	1429	0.23492	23.426	4.29	0.00384014	0.03341	0.20151
57	30	40	4.25	4.00	80	83.4	1429	0.29124	23.426	4.29	0.00384014	0.01632	0.23492
58	20	30	5.80	4.00	80	83.4	1429	0.35351	23.426	4.29	0.00384014	0.02227	0.29124
59	10	20	6.70	5.40	80	83.4	1429	0.43324	23.426	4.29	0.00384014	0.02573	0.35351
60	Ստորին հարկում հոսքի ճշտում ըստ 10 կետում ճնշման												
61								0.43324	31.812				
62	5	10	5.00		80	83.4	1429	0.46865	31.812	5.82	0.00708207	0.03541	0.43324
63	1	5	3.00		80	83.4	1429	0.48990	31.812	5.82	0.00708207	0.02125	0.46865

Աղյուսակ 25. Նկար 13-ի կայանքի հաշվարկի արդյունքները.

Անհրաժեշտ ճնշումը պոմպի ելքում, չհաշված տեղական կորուստները, ՄՊԱ	Տեղական կորուստները՝ կցամասերում, կառավարման հանգույցում, փականներում և այլ դետալներում (20%), ՄՊԱ	Պահանջվող ճնշումը պոմպի ելքում, ներառյալ տեղական կորուստները, ՄՊԱ	Ջրի անհրաժեշտ ծախսը, լ/վրկ	Պահանջվող ջրի ծավալը 30 րոպեում, մ3
31.812	0.09798	0.588	31.8	57.3

Աղյուսակ 26. Փրփուրի քայքայման գործակիցները

Հ/Հ	Պաշտպանվող սենքում այրելի նյութերը	Փրփուրի քայքայման գործակիցը, a	Կայանքի աշխատանքի նվազագույն տևողությունը, T
1.	Պինդ	3	25 րոպե
2.	Հեղուկ	4	15 րոպե

5) որոշվում են փրփրարարի և ջրի անհրաժեշտ քանակությունները՝ $V_{\text{փ}}$ և $V_{\text{ջ}}$, մ³

$$V_{\text{փ}} = V_{\text{ա}} \times C\% / 100 \quad (15)$$

$$V_{\text{ջ}} = V_{\text{ա}} \times (100 - C\%) / 100 \quad (16)$$

որտեղ C%-ը ընտրված փրփրարարի խտությունն է ստացված փրփրաջրում:

6) կատարվում է կայանքի խողովակաշարերի հիդրավլիկական հաշվարկ 3.6.1-ում առաջարկվող մեթոդով:

3.6.3. ԲԱՐՁՐ ՊԱՏԻԿՈՒԹՅԱՄԲ ՓՐՓՈՒՐՈՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

792. Բարձր պատիկությամբ փրփուրով ՀՇԻԿ-ների հրամարիչ նյութի քանակի հաշվարկի համար ելակետային տվյալ է համարվում պաշտպանվող սենքի (ծավալային հրդեհաշիջում) կամ սարքավորանքի (տեղային ծավալային հրդեհաշիջում) հաշվարկային ծավալը ըստ 573 - 574-րդ կետերի՝ $V_{\text{ս}}$ հանած այդ ծավալում առկա շինարարական հոծ կառուցվածքատարրերի ծավալը.

1) որոշվում է փրփրաջրի հաշվարկային քանակը, մ³.

$$V_{\text{հ}} = a \times V_{\text{ս}} / K \quad (17)$$

որտեղ.

K-ն փրփուրի պատիկությունն է, a-ն փրփուրի քայքայման գործակիցն է.

$$a = a_1 \times a_2 \times a_3 \quad (18)$$

a_1 - ը հաշվի է առնում փրփուրի նստումը, ընդունվում է 1.2՝ մինչև 4մ և 1.5՝ մինչև 10մ սենքի բարձրության դեպքում, իսկ ավելի բարձրների դեպքում՝ պետք է որոշվի փորձնական,

a_2 - ը հաշվի է առնում փրփուրի կորուստները, ընդունվում է 1.2՝ բացվածքների բացա-

կայության դեպքում և պետք է որոշվի փորձնական,

a_3 - ը հաշվի է առնում ծխի ազդեցությունը փրփուրի քայքայման վրա և ընդունվում է 1.5՝ ածխաջրածնային հեղուկների այրման դեպքում ու պետք է որոշվի փորձնական՝ այլ նյութերի դեպքերում: Պաշտպանվող սենքի դրսից օդի ներմղմամբ փրփրարտադրիչների կիրառման դեպքերում $a_3 = 1$:

2) ընտրվում են նույն տիպի, մոդելի բարձր պատիկության փրփրարտադրիչներ և ըստ տեխնիկական բնութագրերի որոշվում է նրանց արտադրողականությունը ըստ փրփրաջրի՝ q , մ³/րոպե,

3) որոշվում է միաժամանակ աշխատող փրփրարտադրիչների հաշվարկային քանակը՝

n , և ստացված թիվը կլորացվում է մինչև մոտակա մեծ ամբողջ թիվը՝ N

$$n = V_h / (q \times T) \quad (19)$$

որտեղ T -ն հաշվարկային ծավալը փրփուրով լցնելու նորմատիվային առավելագույն ժամանակն է,

4) որոշվում է փրփրաջրի անհրաժեշտ քանակը՝ V_w , մ³, հաշվի առնելով նաև խողովակաշարերում մնացորդային քանակությունը՝ $V_{խ}$, մ³

$$V_w = N \times q \times T + V_{խ} \quad (20)$$

5) որոշվում են փրփրարարի և ջրի անհրաժեշտ քանակությունները՝ $V_{փ}$ և $V_{ջ}$, մ³

$$V_{փ} = V_w \times C\% / 100 \quad (21)$$

$$V_{ջ} = V_w \times (100 - C\%) / 100 \quad (22)$$

6) կատարվում է կայանքի խողովակաշարերի հիդրավլիկական հաշվարկ 3.6.1-ում առաջարկվող մեթոդով:

3.6.4. ԳԱԶԱՅԻՆ, ՓՈՇԵ, ՓՈՇԵԳԱԶԱՅԻՆ ԵՎ ՕԴԱԿԱՆՈՒՅԹԱՅԻՆ

ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

793. Գազային հրդեհաշիջման կայանքների հաշվարկը, ըստ 621-րդ կետի պահանջների, անհրաժեշտ է կատարել միջազգային կարգավորող փաստաթղթերից որևէ մեկում բերված մեթոդով, իսկ հիդրավլիկական հաշվարկները՝ կայանքներն արտադրող ընկերությունների կողմից հատուկ մշակված համակարգչային ծրագրերով:

794. Փոշեշիջման կայանքների հաշվարկներն անհրաժեշտ է կատարել միջազգային

կարգավորող փաստաթղթերից որևէ մեկում բերված մեթոդով, իսկ հիդրավլիկական հաշվարկները՝ կայանքներն արտադրող ընկերությունների կողմից հատուկ մշակված համակարգչային ծրագրերով:

795. Օդակախույթային հրդեհաշիջման կայանքների հաշվարկներն անհրաժեշտ է կատարել միջազգային կարգավորող փաստաթղթերից որևէ մեկում բերված մեթոդով:

4. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՍԵՆՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՅԹՅՈՒՆԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ

796. Արտադրական և պահեստային շենքերը կախված շենքի սենքերում գտնվող (շրջանառվող) նյութերի քանակից ու պայթյունահրդեհային և հրդեհային վտանգավորություններից, հաշվի առած դրանցում տեղաբաշխված արտադրությունների տեխնոլոգիական գործընթացները, դասակարգվում են Ա, Բ, Վ, Գ և Դ կարգերի համաձայն Աղյուսակ 27-ի:

797. Աղյուսակ 27-ում նշված պայթյունավտանգ օդազազագոլորշային խառնուրդների բռնկման և դրան հետևող պայթյունի ժամանակ առաջացող հաշվարկային ավելցուկային ճնշումը որոշվում է պաշտոնական տեղեկատուներից և գիտատեխնիկական հրապարակումներից:

Աղյուսակ 27. Արտադրական և պահեստային շենքերի դասակարգումը

Հ/Հ	Շենքի կարգը	Շենքերում և սենքերում գտնվող նյութերի բնութագիրը
1.	«Ա» պայթյունահրդեհավտանգ	Մինչև 28° C բռնկման ջերմաստիճան ունեցող այրվող գազեր, դյուրավառ հեղուկներ՝ այն քանակությամբ, որ կարող են ստեղծել պայթյունավտանգ օդազազագոլորշային խառնուրդներ, որոնց բռնկման ժամանակ առաջանում է պայթյունի 5 ԿՊա-ը գերազանցող հաշվարկային ավելցուկային ճնշում: Ջրի, օդի, թթվածնի և միմյանց հետ փոխազդելիս պայթելու և այրվելու ընդունակ նյութեր՝ այն քանակությամբ, երբ առաջանում է պայթյունի 5 ԿՊա-ը գերազանցող հաշվարկային ավելցուկային ճնշում:

2.	«Բ» պայթյունահրդեհավտանգ	28 ⁰ C-ից ավելի բռնկման ջերմաստիճան ունեցող այրվող փոշիներ կամ մանրաթելեր, այրվող հեղուկներ՝ այն քանակությամբ, որ կարող են ստեղծել պայթյունավտանգ փոշետոբային կամ օդագոլորշային խառնուրդներ, որոնց բռնկման ժամանակ առաջանում է պայթյունի 5 ԿՊա-ը գերազանցող հաշվարկային ավելցուկային ճնշում:
3.	«Վ» հրդեհավտանգ	Դյուրավառ, այրվող և դժվար այրվող հեղուկներ, կոշտ այրվող և դժվար այրվող նյութեր: Նյութեր, որոնք ընդունակ են այրվել միայն ջրի, օդի թթվածնի կամ միմյանց հետ փոխազդելիս՝ պայմանով, որ շենքը չի պատկանում «Ա» կամ «Բ» կարգերին:
4.	Գ Չափավոր հրդեհային վտանգավորություն	Տաք, շիկացած կամ հալված վիճակում գտնվող չայրվող նյութեր, որոնց մշակումն ուղեկցվում է ճառագայթային ջերմության, կայծի և բոցի անջատմամբ: Այրվող գազեր, հեղուկներ և կոշտ նյութեր, որոնք օգտագործվում են, որպես վառելանյութ:
5.	Դ Նվազ հրդեհային վտանգավորություն	Սառը վիճակում գտնվող չայրվող նյութեր:

798. Արտադրական և պահեստային շենքերում գտնվող սենքերը ըստ պայթյունահրդեհային և հրդեհային վտանգավորության ստորաբաժանվում են Ա, Բ, Վ1, Վ2, Վ3, Վ4, Գ և Դ կարգերի: Ա, Բ, Գ և Դ կարգերի բնութագրերը համընկնում են շենքերի համար Աղյուսակ 27-ում բերված բնութագրերին:

799. Վ1-Վ4 կարգերին սենքի համապատասխանությունը որոշվում է աղյուսակ 28-ում բերված տեսակարար հրդեհային բեռնվածքի արժեքի հետ սենքում տեսակարար հրդեհային բեռնվածքի առավելագույն արժեքի (այսուհետ՝ հրդեհային տեսակարար բեռնվածք) համեմատությամբ և հրդեհային վտանգավորության բեռների տեղակայմամբ:

800. Հրդեհային տեսակարար բեռնվածքը.

$$g = Q / S \tag{23}$$

որտեղ g -ն հրդեհային տեսակարար բեռնվածքն է, ՄՋ/մ², իսկ S -ը՝ հրդեհային բեռնվածքի տեղակայման մակերեսն է, մ² (բայց ոչ պակաս քան 10 մ²):

Աղյուսակ 28. Սենքերի դասակարգումը Վ1-Վ4 կարգերի

Հ/Հ	Կարգը	Տարածքում հրդեհային տեսակարար բեռը՝ g (մՋ x մ ²)	Տեղակայումը
1.	Վ1	2200-ից ավելի	Չի նորմայավորվում
2.	Վ2	1401 – 2200	Ըստ Աղյուսակ 30-ի
3.	Վ3	181 - 1400	Ըստ Աղյուսակ 30-ի
4.	Վ4	1 - 180	Սենքի հատակի ցանկացած հատվածում յուրաքանչյուր հրդեհային վտանգավոր տեղամասի մակերեսը ոչ ավելի քան 10 մ ² , հրդեհային բեռի տեղամասերի տեղաբաշխումը համաձայն աղյուսակ 30-ի:

801. Հրդեհային բեռը.

$$Q = m \times Q_{H^P} \tag{24}$$

որտեղ m-ը՝ այրելի նյութի քանակն է, կգ, իսկ Q_{H^P}-ն՝ այդ նյութի նվազագույն այրման ջերմությունը ՄՋ/կգ ըստ Աղյուսակ 29-ի կամ այլ պաշտոնական տեղեկատուների և գիտատեխնիկական հրապարակումների:

Աղյուսակ 29. Որոշ այրելի նյութերի նվազագույն այրման ջերմությունները

Հ/Հ	Նյութ	Նվազագույն այրման ջերմությունը, ՄՋ/կգ
1.	Բենզին	41,87
2.	Կերոսին	42,9-43,12
3.	Թուղթ	13,4
4.	Փայտանյութ	13,8
5.	Բնական կաուչուկ	44,73-44,8
6.	Լինոլեում պոլիվինիլքլորիդային	14,31
7.	Ռետին	33,52
8.	Արհեստական նրբաթել (բրդի կամ բամբակի խառնուրդով)	13,8

9.	Պոլիէթիլեն	47,14
10.	Պոլիստիրոլ	39
11.	Բամբակ փափկեցրած	15,7
12.	Կալցիում (տաշեղներ)	15,8
13.	Կանիֆոլ	30,4
14.	Կինոժապավեն եռացետատ	18,8
15.	Կապրոն	31,09
16.	Կարբոլիտային առարկաներ	26,9
17.	Կաուչուկ բուտադիեն-ստիրոլային	
18.	Կաուչուկ բնական	44,73
19.	Կաուչուկ քլորոպրենային	27,99

802. Եթե սենքում առկա են տարբեր նյութեր, ապա դիտարկվող սենքում հրդեհային բեռը հավասար է այդ նյութերի բեռերի գումարին .

$$Q = \sum_{i=1}^n m_i \times Q_{Hi}^P \quad (25)$$

որտեղ m_i -ն՝ i -րդ տեղամասի այրելի նյութի քանակն է, կգ, իսկ Q_{Hi}^P -ն՝ այդ նյութի նվազագույն այրման ջերմությունը՝ ՄՋ/կգ:

803. Պայթյունահրդեհային և հրդեհային վտանգավորության Վ1-Վ3 կարգի սենքերում թույլատրվում է պինդ այրելի և դժվար այրելի նյութերից հրդեհային բեռի մի քանի տեղամասերի միաժամանակյա առկայություն, որոնց միջև նվազագույն հեռավորությունը, կախված նրանց այրելիության հատկությունից, բերված է աղյուսակ 30-ում:

Աղյուսակ 30. Հրդեհային բեռի մի քանի տեղամասերի միաժամանակյա առկայության դեպքում դրանց միջև նվազագույն հեռավորությունները,

$q_{կր} \text{ կՎտ} \times \text{մ}^2$	< 5	5-ից մինչև 10	10-ից մինչև 15	15-ից մինչև 20	20-ից մինչև 25	25-ից մինչև 30	30-ից մինչև 40	40-ից մինչև 50
L_{min}	12	8	6	5	4	3,8	3,2	2,8

804. Այրելիության հատկությունը բնութագրվում է $q_{կր} \text{ կՎտ} \times \text{մ}^2$ մեծությամբ՝ նյութի վրա ճառագայթային հոսքի կրիտիկական խտությունից (միավոր մակերեսի վրա ընկնող ճառա-

գայթապյին էներգիայի քանակությունից), ինչը հանգեցնում է նյութի բռնկմանը:

805. Աղյուսակ 30-ում տվյալները բերված են $H > 11$ մ պայմանի դեպքում, որտեղ H -ը հրդեհային բեռի վերին մակերևույթից մինչև ծածկ (ֆերմայի ներքևի գոտին) ընկած հեռավորությունն է: Եթե $H < 11$ մ-ից, ապա նվազագույն հեռավորությունը պետք է ընդունել.

$$L = L_{\min} + (11 - H) \text{ մ} \tag{26}$$

806. Որոշ նյութերի ճառագայթային ընկնող հոսքերի կրիտիկական խտությունները պետք է ընդունել Աղյուսակ 31-ից կամ այլ գիտատեխնիկական հրապարակումներից:

Աղյուսակ 31. Որոշ նյութերի ճառագայթային ընկնող հոսքերի կրիտիկական խտությունները

Հ/Հ	Նյութը	$q_{\text{կր}} \text{ կՎտ} \times \text{մ}^2$
1.	Փայտանյութ (12% խոնավությամբ սոճի)	13,9
2.	Փայտա-տաշեղային վահանակներ (417 կգ/մ ³ խտությամբ)	8,3
3.	Տորֆ բրիկետային	13,2
4.	Տորֆ կտորներով	9,8
5.	Բամբակ թելային	7,5
6.	Շերտավոր պլաստմաս	15,4
7.	Ապակեպլաստմաս	15,3
8.	Պերգամին	17,4
9.	Ռետին	14,8
10.	Ածուխ	35,0
11.	Փաթթոցային տանիքանյութ	17,4
12.	Խոտ, ծղոտ (նավազագույնը 8% խոնավության դեպքում)	7,0
13.	Ալյուր	10
14.	Շաքար	10
15.	Փայտանյութ, թուղթ	10
16.	Նեյլոն	10
17.	ՊՎՔ վահանակային	17
18.	ՊՎՔ թերթային	15
19.	Մետաղապլաստ	24-27

20.	Փայտաթելային վահանակ (ДВП)	13
21.	Կաշի արհեստական	17.9
22.	Ներկված և լաքապատ մակերեսներ	25
23.	ՊՎՔ լվացվող թղթե հիմքով պաստառներ	12
24.	ՊՎՔ լինոլեում	10-12
25.	Ալկաիդային լինոլեում	10
26.	Հեշտ բռնկվող, այրելի և դժվար այրելի հեղուկներ, ըստ հնքնաբռնկման ջերմաստիճանի՝ 1) 300° C 2) 350° C 3) 400° C 4) 500° C և բարձր	12.1 15.5 19.9 28 և ավելի

807. Առարկաների և նյութերի հրդեհավտանգավորության հատկությունները որոշվում են փորձարկումներով կամ ստանդարտ մեթոդաբանությամբ հաշվարկներով: Թույլատրվում է օգտագործել այդ հատկությունների վերաբերյալ տվյալները պաշտոնական տեղեկատուներից և գիտատեխնիկական հրապարակումներից:

808. Նյութերի և առարկաների խառնուրդների համար որպես հրդեհավտանգավորության ցուցանիշ պետք է ընդունել դրանցում առկա ամենավտանգավոր բաղադրիչի ցուցանիշը:

809. Սենքերի կարգը, և դրանից ելնելով՝ շենքերի կարգը կախված է նրանց ծավալահատակագծային լուծումներից, նրանցում գտնվող այրելի նյութերի և առարկաներից, դրանց քանակությունից և փոխադարձ դիրքից, հրդեհավտանգավորության հատկություններից, ինչպես նաև տեխնոլոգիական գործընթացներից:

810. Շենքի պայթյունահրդեհային և հրդեհային վտանգավորության կարգը որոշվում է նրանում այս կամ այն կարգի սենքերի մակերեսների մասնաբաժնի և գումարային տարածքի հիման վրա:

811. Շենքը պատկանում է Ա կարգին, եթե նրա տարածքում գտնվող Ա կարգի սենքերի գումարային մակերեսը գերազանցում է շենքի ընդհանուր մակերեսի 5%-ը կամ 150 մ²:

812. Շենքը չի պատկանում Ա կարգին, եթե նրա տարածքում գտնվող Ա կարգի սենքերի

գումարային մակերեսը չի գերազանցում է շենքի ընդհանուր մակերեսի 25%-ը բայց ոչ ավելի քան 750 մ², և դրանցում առկա են հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ:

813. Շենքը պատկանում է Բ կարգին, եթե միաժամանակ առկա են հետևյալ պայմանները.

1) շենքը չի պատկանում Ա կարգին,

2) նրա տարածքում գտնվող Ա և Բ կարգի սենքերի գումարային մակերեսը գերազանցում է շենքի ընդհանուր մակերեսի 5%-ը կամ 150 մ²:

814. Շենքը չի պատկանում Բ կարգին, եթե նրա տարածքում գտնվող Ա և Բ կարգի սենքերի գումարային մակերեսը չի գերազանցում է շենքի ընդհանուր մակերեսի 25%-ը բայց ոչ ավելի քան 750 մ², և դրանցում առկա են հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ:

815. Շենքը պատկանում է Վ կարգին, եթե միաժամանակ առկա են հետևյալ պայմանները.

1) շենքը չի պատկանում Ա կամ Բ կարգերին,

2) նրա տարածքում գտնվող Ա, Բ, Վ1, Վ2 և Վ3 կարգի սենքերի գումարային մակերեսը գերազանցում է շենքի ընդհանուր մակերեսի 5%-ը, իսկ շենքում Ա և Բ կարգի սենքերի բացակայության դեպքում՝ 10%-ը:

816. Շենքը չի պատկանում Վ կարգին, եթե նրա տարածքում գտնվող Ա, Բ, Վ1, Վ2 և Վ3 կարգի սենքերի գումարային մակերեսը չի գերազանցում է շենքի ընդհանուր մակերեսի 25%-ը բայց ոչ ավելի քան 2500 մ², և դրանցում առկա են հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ:

817. Շենքը պատկանում է Գ կարգին, եթե միաժամանակ առկա են հետևյալ պայմանները.

1) շենքը չի պատկանում Ա և Բ կամ Վ կարգերին,

2) նրա տարածքում գտնվող Ա, Բ, Վ1, Վ2, Վ3 և Գ կարգի սենքերի գումարային մակերեսը գերազանցում է շենքի ընդհանուր մակերեսի 5%-ը:

818. Շենքը չի պատկանում Գ կարգին, եթե նրա տարածքում գտնվող Ա, Բ, Վ1, Վ2, Վ3 և Գ կարգի սենքերի գումարային մակերեսը չի գերազանցում շենքի ընդհանուր մակերեսի 25%-ը բայց ոչ ավելի քան 3500 մ², և Ա, Բ, Վ1, Վ2, Վ3 կարգի սենքերում առկա են հրդեհաշիջման ինքնաշխատ կայանքներ:

819. Շենքը պատկանում է Դ կարգին, եթե այն չի պատկանում Ա, Բ, Վ կամ Գ կարգե-

րին:

820. Արտաքին տեխնոլոգիական կայանքների կարգը կախված է դրանցում առկա այրելի նյութերից և առարկաներից, դրանց քանակությունից և հրդեհավտանգավորության հատկություններից, ինչպես նաև տեխնոլոգիական գործընթացներից:

821.Արտաքին տեխնոլոգիական կայանքները դասակարգվում են հրդեհային վտանգավորության ԱԱ, ԲԱ, ՎԱ, ԳԱ և ԴԱ կարգերի ըստ Աղյուսակ 32-ի:

Աղյուսակ 32. Արտաքին տեխնոլոգիական կայանքների դասակարգումը

Հ/Հ	Արտաքին կայանքի կարգը	Արաքին կայանքի հրդեհային վտանգավորության կարգի որոշման չափանիշները
1.	<p style="text-align: center;">ԱԱ</p> <p style="text-align: center;">Բարձր պայթյունահրդեհային վտանգավորություն</p>	<p>Կայանքը դասվում է ԱԱ կարգին, եթե նրանում առկա են, պահվում են, մշակվում կամ փոխադրվում են այրելի գազեր, 28° C ջերմաստիճան և ցածր բռնկման ջերմաստիճանով դյուրաբոցավառ հեղուկներ, ջրի, օդում թթվածնի կամ միմյանց հետ հետ փոխազդեցությունից վառվող նյութեր, պայմանով, որ կայանքից 25 մ հեռավորության վրա ճնշման ալիքի առաջացմամբ նշված նյութերի հնարավոր այրման հրդեհային ռիսկը մեկ տարվա ընթացքում գերազանցում է 1,0 միլիոնը</p>
2.	<p style="text-align: center;">ԲԱ</p> <p style="text-align: center;">Պայթյունահրդեհային վտանգավորություն</p>	<p>Կայանքը դասվում է ԲԱ կարգին, եթե նրանում առկա են, պահվում են, մշակվում կամ փոխադրվում են այրելի փոշիներ և/կամ թելեր, 28° C ջերմաստիճանից բարձր բռնկման ջերմաստիճանով դյուրաբոցավառ հեղուկներ, այրելի հեղուկներ պայմանով, որ կայանքից 25 մ հեռավորության վրա ճնշման ալիքի առաջացմամբ փոշիների և/կամ թելերի, հեղուկների գոլորշիների օդախառնուրդների հնարավոր այրման հրդեհային ռիսկը մեկ տարվա ընթացքում գերազանցում է 1,0 միլիոնը</p>

3.	<p>ՎԱ Հրդեհային վտանգավորություն</p>	<p>Կայանքը դասվում է ՎԱ կարգին, եթե նրանում առկա են, պահվում են, մշակվում կամ փոխադրվում են այրելի և/կամ դժվար այրելի հեղուկներ, այրելի և/կամ դժվար այրելի կոշտ նյութեր, այդ թվում փոշիներ և/կամ թելեր, ջրի, օդում թթվածնի կամ միմյանց հետ հետ փոխազդեցությունից վառվող նյութեր, պայմանով, որ կայանքը չի դասվում ԱԱ կամ ԲԱ կարգին և կայանքից 25 մ հեռավորության վրա նշված նյութերի հնարավոր այրման հրդեհային ռիսկը մեկ տարվա ընթացքում գերազանցում է 1,0 միլիոնը</p>
4.	<p>ԳԱ Չափավոր հրդեհային վտանգավորություն</p>	<p>Կայանքը դասվում է ԳԱ կարգին, եթե նրանում առկա են, պահվում են, մշակվում կամ փոխադրվում են չայրելի նյութեր տաք, շիկացած կամ հալված վիճակում, որոնց մշակումն ուղեկցվում է ճառագայթային ջերմությամբ, կայծերով կամ բոցով, ինչպես նաև որպես վառելիք վառվող կամ օգտահանվող այրելի գազեր, հեղուկներ և/կամ կոշտ նյութեր:</p>
5.	<p>ԴԱ Նվազ հրդեհային վտանգավորություն</p>	<p>Կայանքը դասվում է ԴԱ կարգին, եթե նրանում առկա են, պահվում են, մշակվում կամ փոխադրվում են հիմնականում սառը վիճակում չայրելի նյութեր և վերոգրյալ բնութագրերով չի դասվում ԱԱ, ԲԱ, ՎԱ և ԳԱ կարգերից որևէ մեկին:</p>

822. Արտաքին կայանքների դասակարգումը պետք է իրականացնել ստուգելով դրանց համապատասխանությունը աղյուսակ 32-ում բերված ամենավտանգավոր ԱԱ կարգից դեպի նվազ վտանգավոր ԴԱ կարգը:

823. Տվյալների բացակայության պատճառով հրդեհային ռիսկի հաշվարկի անհնարինության դեպքում թույլատրվում է ղեկավարվել հետևյալ չափանիշներով.

1) ԱԱ և ԲԱ կարգերի դեպքում՝ ըստ ԳՕՍՏ 12.1.044-2018-ի բոցի տարածման խտության ներքին սահմանից բարձր խտությամբ գազերի, գոլորշիների և օդի խառնուրդի գոտու հորիզոնական չափը գերազանցում է 25 մ-ը այրելի գազերի և գոլորշիների դեպքում

և /կամ գազերի, գոլորշիների կամ փոշու օդային խառնուրդների այրման դեպքում կայանքից 25 մ հեռավորության վրա հաշվարկային ավելցուկային ճնշումը գերազանցում է 5 կՊա,

2) ՎԱ կարգի դեպքում՝ այդ կարգի համար աղյուսակ 32-ում նշված նյութերի այրման ժամանակ կայանքից 25 մ հեռավորության վրա ջերմային ճառագայթման սաստկությունը գերազանցում է 4 կՎտ/մ²:

824. Բոցի տարածման խտության ներքին սահմանից բարձր խտությամբ գազերի, գոլորշիների և օդի խառնուրդի գոտին պարփակող հորիզոնական չափը, ինչպես նաև հրդեհի օջախից ջերմային ճառագայթման սաստկությունը թույլատրվում է որոշել գիտատեխնիկական հրապարակումներից: